

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս գրքում նկարագրված արկածները մեծ մասամբ իրական դեպքեր են: Մի ֆանիսը կապված են հենց ինձ հետ, մյուսները՝ իմ դպրոցական ընկերների: Հե՛ք Ֆինն իրոք գոյություն է ունեցել, Քոմ Սոյերը՝ նույնպես, բայց ոչ որպես անհատ: Քոմը ինձ ծանոթ երեք տղաների միավորումն է և այդ իսկ պատճառով՝ նարտարապետական մի բարդ միասնություն:

Այստեղ նշված բոլոր սնոտիապաշտություններն էլ, իհարկե, գոյություն ունեին արևմուտքի ստրուկների ու երեխաների մոտ՝ այս պատմությանը վերաբերող ժամանակաշրջանում, երեսուն կամ քառասուն տարի առաջ:

Քե՛ն գիրքս նախատեսել եմ հիմնականում պատանիների ու աղջիկների համար, սակայն, հույս ունեմ, որ այն շի խրճեցնի նաև հասուն տղամարդկանց ու կանանց: Իմ հանելի պարտն է նիշեցնել չափահասներին, թե ինչպիսին են ճրանք եղել անցյալում, ինչեր են զգացել, մտածել ու խոսել և թե ինչ տարօրինակ արկածներ են երբեմն ունեցել:

ՀԵՂԻՆԱԿ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

— Թո՛մ:

Պատասխան չկա:

— Թո՛մ:

Պատասխան չկա:

— Էլի ի՞նչ պատահեց այդ տղային: Թո՛մ...

Մեր լեդին ակնոցն իջեցրեց մինչև քթի ծայրը, ապակիների վերևից նայեց իր շուրջը, հետո բարձրացրեց ու նայեց ապակիների տակից: Լեդին հազվադեպ էր օգտվում ակնոցից, միայն այն ժամանակ, երբ հարկավոր էր որոնել մի այնպիսի մանրուք, ինչպիսին տղան էր, քանի որ դա նրա տոնական ակնոցն էր, նրա հպարտությունը: Լեդին դա կրում էր ավելի շուտ պատկառանք ներշնչելու համար: Գործ անելիս նրան ակնոց պետք չէր: Նույն հաջողությամբ նա կարող էր նայել թեկուզ վառարանի խողովակների միջով: Լեդին շփոթված մի պահ շուրջը նայեց և ասաց ոչ այնքան բարձրաձայն, բայց այնպես, որ գոնե կահ-կարասիները կարողանան լսել.

— Լա՛վ... Սպասի՛ր, թե որ բռնե՛մ...

Խոսքը չավարտած, նա կռացավ և ծանր շնչելով, որովհետև օդը չէր բավարարում, խողանակը շարժեց մահճակալի տակ: Այնտեղ, բացի կատվից, ուրիշ բան չկար:

— Ի՛նչ երեխա է... Կյանքումս դրա նմանը տեսած չկամ...

Նա գնաց դեպի բաց դուռը, կանգնեց շեմին և ղննող հայացքով նայեց բանջարանոցը, որտեղ պոմիդորի թփերը խեղդվում էին մուխսոտերի մեջ: Թոմն այնտեղ էլ չկար: Հետո լեդին ձայնը բարձրացրեց, որպեսզի ավելի հեռուն լսվի, և կանչեց.

— Հե՛յ, Թո՛մ:

Հետևից մի թույլ խշշոց լսվեց: Լեդին անմիջապես շրջվեց ու հաջորդ պահին, բաճկոնի փեշից բռնելով, բարձրացրեց մի փոքրիկ տղայի, որն ուզում էր ծլկել:

— Ինչպե՞ս էի մոռացել պահարանում նայել: Ի՞նչ էիք անում այնտեղ:

— Ոչինչ:

— Ոչի՞նչ: Մի տեսեք սրա ձեռներն ու բերանը: Իսկ դնչիդ ի՞նչ է քսվել:

— Չգիտեմ, մորաքույր:

— Իսկ ես գիտեմ: Մուրաբա: Քառասուն անգամ եմ ասել, որ չհամարձակվես մուրաբային ձեռք տալ, թե չէ կաշիդ կթերթեմ: Մի տո՛ւր տեսնեմ ճիպոտը...

Ճիպոտն օդում շաշեց: Վտանգն անխուսափելի էր:

— Վա՛յ, մորաքո՛ւյր: Այդ ի՞նչ է ձեր մեջքին:

Լեդին վախեցած շրջվեց ու փնշերն շտապով հավաքեց, որպեսզի խուսափի անավոր դժբախտությունից: Իսկ տղան նույն վայրկյանին փախավ, մազլցելով անցավ բարձր ցանկապատն ու անհետացավ: Մորաքույր Պոլին մի պահ շըշմած կանգնեց, ապա բարեհոգությամբ ծիծաղեց.

— Ա՛յ քեզ տղա: Փամանակն է, որ վարժվեմ սրա օյիններին: Գլխիս քի՛չ խաղ է խաղացել: Գոնե այս անգամ պետք է մի քիչ խելոք լինեի: Բայց, ինչպես երևում է, չկա ավելի մեծ հիմար, քան ես՝ ցնդածս... Իզուր չեն ասում, թե՛ «պառավ շանը նոր բաների չես վարժեցնի»: Բայց, աստված իմ, այդ տղայի օյիններն էլ միշտ տարբեր են լինում: Այսօր մի բան, վաղը՝ մի ուրիշ... Կարո՞ղ ես գուշակել, թե ինչ կա նրա գլխում: Նա կարծես գիտի, թե որքան պիտի տանջի մինչև հոգիս հանելը, գիտի նաև, որ բավական է շեղի ուշադրությունս կամ ծիծաղեցնի, անմիջապես թևաթափ եմ լինում, և ճիպոտով ծեծելու ուժ էլ չի մնում: Աստված թող ների ինձ... Ինչ որ ճիշտ է, ճիշտ է. պարտքս նրա նկատմամբ չեմ կատարում: Սուրբ գիրքն ասում է, որ առանց ճիպոտի յուր գնացողը կփշացնի երեխային: Իսկ ես նրան երես եմ տալիս, մեղա՛, մեղա՛: Դրա համար էլ այն աշխարհում երկուսս էլ կտանջվենք: Գիտեմ, թե ինչ սատանան է, բայց բան ասել չեմ կարող: Ախր, հանգուցյալ բրոջս որդին է: Խե՛ղճ երեխա: Ձեռքս չի գնում, թե որբին ծեծեմ: Ամեն անգամ, երբ ձեռ-

բիցս դուրս է պրծնում, խիղճս ինձ այնպես է տանջում, որ ասել չեմ կարող: Իսկ ծեծելիս էլ մաշված սիրտս է կտորկտոր լինում: Սուրբ գրքում ճիշտ է ասված. «Կարճ է կյանքը մարդու և լի վշտերով»: Շատ ճիշտ է, խոսք չկա: Իսկ նա, երևի, այսօր դպրոցից կփախչի, մինչև իրիկուն թրև կգա, և ես ստիպված կլինեմ պատժել նրան: Կատիպեմ, որ վաղն ամբողջ օրն աշխատի: Նա, իհարկե, չի սիրում աշխատել շաբաթ օրը, այն ժամանակ, երբ բոլոր տղաները խաղում են: Բայց ուրիշ կերպ վարվել չեմ կարող: Նա ամենից շատ ատում է աշխատանքը: Իսկ ես պետք է պարտքս կատարեմ, թե չէ տղայի կործանման պատճառը կդառնամ:

Իսկապես, Թոմը դասերից փախավ: Եվ ամբողջ օրն էլ հիանալի անցկացրեց: Նա հագիվ կարողացավ ժամանակին տուն հասնել, որպեսզի օգնի փոքրիկ նեգր Ջիմին, որ հաջորդ օրվա համար փայտ էր շարդելու: Կամ, ավելի ճիշտ, մինչև Ջիմը կկատարեր այդ աշխատանքի երեք քառորդ մասը, նա պատմեց իր արկածները: Թոմի փոքր (խորթ) եղբայրը՝ Սիդը, արդեն ավարտել էր իր գործը՝ տաշեղներ հավաքելու: Նա խելոք տղա էր և միշտ խուսափում էր արկածներից ու անախորժություններից:

Մինչ Թոմն ընթրում էր և, օգտվելով հարմար առիթից, շաբար գողանում, մորաքույր Պոլին խորամանկ ու խորաթափանց հարցեր էր տալիս: Նա հույս ուներ, որ Թոմը թակարդը կընկնի և ստիպված ամեն ինչ կխոստովանի: Բոլոր բարեհոգի մարդկանց պես, մորաքույր Պոլին իրեն համարում էր հմուտ դիվանագետ ու իր պարզամիտ դիտավորությունների մեջ տեսնում նուրբ խորամանկություն: Նա ասաց.

— Թոմ, այսօր դպրոցում բավական շոգ էր, այնպես չէ՞:

— Այո, մորաքույր:

— Շատ շոգ էր, այնպես չէ՞:

— Այո, մորաքույր:

— Իսկ լողանալու ցանկություն չունեցա՞ր, Թոմ:

Թոմի մարմնով անախորժ սարսուռ անցավ: Նրան տիրեց վախի ու կասկածի տհաճ մի զգացում: Նա աչքի տակով նայեց մորաքույր Պոլիին, որի դեմքը ոչինչ չէր արտահայտում, և ասաց.

— Ոչ, մորաքույր, այնքան էլ չէ:

Սեր լեդին ձեռքը մեկնեց, շոշափեց Թոմի շապիկն ու ասաց.

— Չես էլ քրտնել:

Նա հպարտությամբ մտածեց, թե ինքը կարողացավ ըստուգել, որ Թոմի շապիկը չոր է ու ոչ ոք էլ գլխի շրնկավ, թե ինչ խորամանկ բան էր մտածել ինքը: Բայց Թոմն իսկույն կռահեց, թե քամին որտեղից է փչում: Եվ փորձեց կանխել հարցաքննության հետագա ընթացքը:

— Թարմանալու համար գլուխներս ծորակի տակ դրեցինք: Մազերս դեռ թաց են, տեսնո՞ւմ եք:

Մորաքույր Պոլին ակոսուսաց, որ մի այդպիսի կարևոր հանգամանք աչքաթող է արել: Բայց անմիջապես նրա գլխում մի նոր միտք ծնվեց.

— Թոմ, միայն գլուխդ թրջելու համար դու ստիպված չէիր լինի շապիկդ օձիքը քանդել: Հապա, արձակիր բաճկոնիդ կոճակները, տեսնեմ՝ կարածս մնո՞ւմ է, թե ոչ:

Թոմի դեմքից անհանգստության ստվերը շքացավ: Նա բացեց բաճկոնը: Շապիկի օձիքը ամուր կարված էր:

— Դե, լավ, լավ... Քեզանից գլուխ շեմ կարող հանել: Ես համոզված էի, որ դու դպրոցից փախել ես և լողանալու գնացել: Բայց ոչինչ... Չեմ բարկանում: Չնայած դու իսկական սուտիկ ես, բայց այս անգամ էլ պրծար:

Լեդին փոքր-ինչ վշտացավ, որ իր խորամանկությունն ապարդյուն անցավ, բայց միևնույն ժամանակ գոհ էր, որ գոնե այս անգամ Թոմն իրեն լավ էր պահել:

Բայց այստեղ մեջ ընկավ Սիդը:

— Որքան հիշում եմ,— ասաց նա,— դուք Թոմի օձիքը ճերմակ թելով կարեցիք, իսկ հիմա, տեսե՞ք՝ թելը սև է:

— Այո, իհարկե, ճերմակով եմ կարել: Թո՞մ...

Բայց Թոմը միտք շունեի շարունակությանն սպասելու: Սենյակից դուրս փախչելիս կամաց ասաց.

— Սի՛դ, դրա համար լավ ծեծ կուտես:

Ասպհով մի տեղ թաքնվելով, Թոմը զննեց բաճկոնի օձիքին ներսի կողմից խրած երկու մեծ ասեղները, որոնցից մեկը թելած էր ճերմակ, մյուսը՝ սև թելով:

— Եթե Սիդը չլիներ, մորաքույրը երբեք չէր նկատի: Գրողը տանի: Նա մեկ ճերմակով է կարում, մեկ էլ՝ սևով:

Ի՞նչ կլինե՞ր, եթե միշտ միևնույն գույնով կարեր, ես էլ այդպես չէի շփոթվի... Իսկ Սիդին ես անպայման կծեծեմ: Լավ դաս կլինի նրա համար:

Թոմն օրինակելի տղա չէր, որով ամբողջ քաղաքը կարող էր հպարտանալ: Բայց շատ լավ գիտեր, թե ով է օրինակելին, և ատում էր նրան:

Չանցած երկու րոպե (գուցե ավելի քիչ) Թոմի գլխից թռան բոլոր անախորժությունները: Պատճառն այն չէր, որ նույնիսկ մեծերին տանջող անախորժությունները Թոմի համար ավելի թեթև էին ու տանելի, այլ այն, որ այդ պահին Թոմին համակեց մի նոր ու զորեղ ցանկություն, և այդ ցանկությունը նրա գլխից դուրս բռեց բոլոր տազնապաները: Նույն Լերպ էլ մեծերն են ընդունակ մոռանալ իրենց բոլոր վշտեքը, հենց որ նրանց հրապուրում է որևէ նոր գործ: Թոմի այդ թանկագին նորույթը սուվելու նոր ձևն էր, որ սովորել էր մի ծանոթ նեգրից և վաղուց ի վեր առիթ էր որոնում այդ արժեստում կատարելագործվել միայնության մեջ, որ խանգարող շիներ: Նեգրը սուլում էր թռչունի պես: Կարճ դադարներով մի գեղգեղանք էր այդ, որի համար անհրաժեշտ էր զգուն հաճախակի կայցնել քիմքին: Ընթերցողը հավանաբար է՛իշի, թե ինչպես է այդ արվում, եթե իհարկե, Լերպէ նա եղել է Թոմի տարիքին: Համառությունն ու ջանքերը Թոմին օգնեցին, որ նա շատ շուտ տիրապետի սուվելու վարպետությանը: Նա ուրախ քայլում էր փողոցով, և նրա բերանը լի էր քաղցր երաժշտությամբ, իսկ հոգին՝ անհուն զոհունակությամբ: Նա իրեն զգում էր այնպես, ինչպես երկնքում մի նոր մայրակ հայտնագործած աստղաբաշխը, միայն թե օդայի ուրախությունն ավելի անմիջական էր, ավելի անկեղծ ու խոր:

Աճառն երեկոները երկար են լինում: Չորս կողմը դեռ լույս էր: Հանկարծ Թոմը դադարեց սուվել: Նրա առջև կանգնած էր իրենից մի բիշ մեծ ինչ-որ անծանոթ տղա: Սանկտ-Պետերբուրգ՝ բնակիչների ուշադրությունը միշտ էլ գրավում

Աճառի օգնեցին հաճախ իրենց մանր քաղաքները մայրաքաղաքների հետևից էին կոչում: Այնտեղ մի քանի Փարիզներ կան, շորս թե հինգ հարյուր հասանդեպոլիս և այլն: Այս գրքում նկարագրվող քաղաքը արդ չէ՛ Եսապասանի այն ժամանակվա մայրաքաղաքի անունով:

էր որևէ նորեկի հայտնվելը այդ փոքրիկ քաղաքում, անկախ անծանոթի տարիքից և սեռից: Բացի դրանից, անծանոթ տղան շատ լավ էր հագնված, այն էլ այդ լի օրը: Դա ցնցող բան էր: Հրաշալի գլխարկ, խնամքով կոճկած կապույտ բաճկոն, որը նոր էր ու շատ մաքուր, և նույնպիսի տաքատ: Նա հրաշալի կոշիկներ էր հագել, այն էլ ուրբաթ օրը: Տղան նույնիսկ փողկապ էր կապել: Ծվ, ընդհանրապես, քաղաքային պճնամոլի տեսք ուներ: Դա կատաղեցրեց Թոմին: Որքան Թոմը նայում էր նրա հրաշք-հագուստներին, այնքան հին ու մաշված էին թվում սեփական հագուստները, այնքան նա ցցում էր քիթը, կամենալով հասկացնել, որ իր համար անտանելի են այդ զիզի-պիզի շորերը: Տղաները լուռնայում էին իրար: Բավական էր, որ մեկը մի քայլ աներ, նույնը կրկնում էր նաև մյուսը, բայց միայն մի կողմի վրա, շրջանաձև: Դեմք-դեմքի մոտեցրած, իրար աչքերի մեջ նայելով, նրանք այդպես պտտվեցին բավական երկար ժամանակ: Վերջապես Թոմն ասաց.

— Ուզո՞ւմ ես դնգստեմ:

— Փօրձիր:

— Առացի՞ կդնգստեմ:

— Առտւմ եմ՝ շես կարող:

— Կդնգստեմ:

— Չես կարող:

— Կարող եմ:

— Չես կարող:

— Կարող եմ:

— Չես կարող:

Տիրեց ծանր լուսթյուն: Հետո Թոմն ասաց.

— Անունդ ի՞նչ է:

— Քո ի՞նչ գործն է:

— Ես ցույց կտամ՝ իմ ինչ գործն է:

— Յուլյց տուր: Ինչո՞ւ ես կանգնել:

— Եթե երկու խոսք էլ ասես, ցույց կտամ:

— Երկու խոսք: Երկու խոսք: Երկու խոսք: Դե՞, ասելը

ի՞նչ է:

— Եթե ասես ինչ խելոքն է: Ախր, որ ուղեմ, քեզ մի ձեռքով է կռիւթեմ, թեկուզ մյուս ձեռու կապեն մեջքիս:

— էլ ինչո՞ւ չես դնգատում, եթե կարող ես:

— Որ գլուխս շատ տանես, կդնգատեմ:

— Հա, հա՛: Քեզնեմաններին շատ եմ տեսել:

— Կարծում ես, որ այդպես զուգվել, զարդարվել ես, մեծ բան է: Մի սրա գլխարկի՛ն նայեք...

— Չե՞ս հավանում: Փորձիր ձեռք տալ: Մի տես ո՞նց կհասցնեմ:

— Փշում ես:

— Դու ես փշում:

— Միայն պտպտալ գիտես, իսկ ինքդ վախկոտ ես:

— Դե լավ, ճամփադ գնա:

— էյ, լսիր, թե լեզուդ քեզ չքաշես, գլուխդ կջարդեմ:

— Ոնց չէ, կջարդես: Ես էլ վախեցա...

— Եվ կջարդեմ:

— էլ ի՞նչ ես կանգնել: Ահ ես տալիս, բայց տեղիցդ չես էլ շարժվում: Ուրեմն վախենում ես:

— Չե՛մ վախենում:

— Վախենո՞ւմ ես:

— Չե՛մ վախենում:

— Վախենո՞ւմ ես:

Նորից լռութուն: Նրանք աչքերով իրար կերան, դոփեցին կանգնած տեղում ու մի անգամ էլ պտտվեցին: Վերջո՞վ ես կանգնեցին ուս-ուսի: Թոմն ասաց.

— Կորի՛ր այստեղից:

— Ի՛նքդ կորիր:

— Չեմ ուզում:

— Ես էլ չեմ ուզում:

Ոտները լայն բացած՝ կանգնել են դեմ-դիմաց: Ատելու-թշմաբ իրար նայելով, նրանք որքան ուժ ունեին, սկսեցին հեկ իրար: Բայց ոչ մեկը կարողացավ հաղթել, ոչ մյուսը: Նրանք ժամանակ հրում էին իրար: Տաքացած ու կարմրած, նրանք մի փոքր թուլացրին իրենց համառ պայքարը, բայց մեկը մեկին չզիջեց: Այդ ժամանակ Թոմն ասաց.

— Դու վախկոտի ու լակոտի մեկն ես: Մեծ եղբորս կրեքե՛մ, մի ճկույթով կջարդի քեզ: Որ ասեմ, քեզ կջարդի:

— Քո մեծ եղբորից էլ չեմ վախենում: Ես էլ եղբայր

ունեմ, և ավելի մեծ: Նա քո եղբորը կարող է ցանկապատից
այն կողմ նետել: (Ծրկու եղբայրներն էլ մտաշածին էին):

— Փշո՞ւմ ես:

— Ինչ ուզում ես կարծիր:

Թոմը ոտի բթամատով փոշու վրա մի գիծ քաշեց ու ասաց.

— Փորձիր այս գծից անցնել: Այնպես կդնգստեմ, որ տե-
ղիցդ էլ վեր չես կենա: Վա՛յ նրան, ով անցավ այս գիծը:
Անծանոթ տղան անմիջապես շտապեց անցնել գիծը:

— Տեսնեմ ո՞նց ես դնգստելու:

— Ետ քաշվիր: Ասում եմ՝ լավ կլինի ետ քաշվես:

— Ասացիր, թե կդնգստես: Դե հիմա դնգստիր տեսնեմ:

— Սատանան ինձ տանի, եթե երկու սենթով քեզ չքո-
թակեմ:

Անծանոթ տղան գրպանից երկու մեծ պղնձադրամ հա-
նեց և հեզնանքով մեկնեց Թոմին:

Թոմը դարկեց նրա ուսին, և պղնձադրամները թափվեցին
գետնին: Հաջորդ վայրկյանին կատուների պես իրար ճան-
կած, տղաները թավալվեցին փոշու մեջ: Քաշեցին իրար
մազերը, բաճկոնի փեշերը, տաբատները, ճանկոտեցին և
ձգեցին միմյանց քիթը, իրենց պսակեցին փոշով ու փառ-
քով: Վերջապես, գետնին թավալվող այդ անորոշ զանգվածը
ընդունեց որոշակի կերպարանք, ոազմաճակատի փոշու և
մշուշի մեջ պարզվեց, որ Թոմը նստած է թշնամու մեջքին և
նրան հարվածում է բռունցքով:

— Ներողություն խնդրիր,— պահանջեց նա:

Բայց տղան, կատաղությունից լաց լինելով, ջանում էր
դուրս պրծնել նրա տակից:

— Ներողություն խնդրիր,— ու ջարդը շարունակվեց:

Վերջապես անծանոթ տղան թնկթնկաց. «Դե լավ, ներո-
ղություն»: Թոմը, նրան բաց թողնելով, ասաց.

— Այս քեզ մի լավ դաս: Մյուս անգամ իմացիր, թե ում
հետ գործ ունես:

Անծանոթ տղան հեռացավ՝ շորերը թափ տալով, հեծկը-
տալով, քիթը վեր քաշելով ու ժամանակ առ ժամանակ շրջ-
վելով, գլուխն օրորելով և սպառնալով Թոմին, թե՛ «Մյուս
անգամ կբռնեմ, չէ՛... հախիցդ կգամ»: Թոմը ինչպես պետքն
էր ծաղրեց նրան և, իր հաղթանակից փքված, տուն գնաց:

Բայց հազիվ էր Թումը շրջվել, երբ անծանոթ տղան քարով խփեց նրա մեջքին, թիակների արանքը, և շտապեց փախչել անտիրուպից էլ արագ: Թումը ընկավ այդ դավաճանի հետևից մինչև տուն և այդպիսով իմացավ, թե որտեղ է ապրում: Թումը մի քիչ կանգնեց բակի դռան առջև՝ թշնամուն մարտի կանչելով, բայց նա պատուհանից միայն ծամածուծյուններ էր անում, իսկ դուրս գալու միտք էլ չունեց: Ի վերջո հայտնվեց թշնամու մայրիկը, Թումին անվանեց «վատ, փշացած, կոպիտ» և պահանջեց, որ նա կորչի ուր ուզում է: Թումը հեռացավ, բայց հեռանալիս սպառնաց, որ ինքը մոտերքում կթափառի այնքան, մինչև նրա բալիկը տնից դուրս գա:

Նա շատ ուշ տուն վերադարձավ և, զգուշորեն պատուհանից ներս սողոսկելով, նկատեց, որ ծուղակի մեջ է ընկել. երա առջև կանգնած էր մորաքույրը: Ու երբ մորաքույր Պոլին տեսավ, թե Թումի շորերն ինչ ողբալի վիճակում են, նրա այն որոշումը, որ սղայի տոնական օրը վերածելու է տաժանակիր աշխատանքի, ազամանդի պես կարծրացավ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Իացվեց շաբաթ օրվա առավոտը: Ամառվա բնությունը չնշում էր թարմությամբ, շողշողում էր և կյանքով եռում: Ջրեկն սրտում երաժշտություն էր հնչում, իսկ եթե դա երիտասարդ սիրտ էր, ապա երգը հոսում էր ինքն իրեն: Բերկբանք կար ամեն դեմքի վրա, և գարուն՝ ամեն մեկի քայլաժամբ: Սպիտակ ակացիաները փարթամորեն ծաղկել էին, և օդում ծփում էր անուշահոտությունը:

Կարդիֆ բլուրը, որն ամեն տեղից երևում էր, ամբողջովին զանաչել էր: Հեռվից թվում էր Ավետյաց երկիր՝ խաղաղ ու ածաբբ, հրաշալի:

Թումը դուրս եկավ փողոց՝ մի ձեռքին կրով լի դուլը, մյուս ձեռքին՝ մի երկար վրձին: Տղան նայեց ցանկապատին, և երբ սրտից դուրս թռավ ամեն ուրախություն: Խոր թափած իջավ տղայի հոգուն: Ինը ստնաչափ բարձրություն և

երեսուն յարդ¹ հրկարութիւն ունեցող մի ցանկապատ: Կյանքը նրան անիմաստ, հիմար բան թվաց, գոյութիւնը՝ բեռ: Հառաչելով՝ նա վրձինը թաթախեց կրի մեջ և քսեց վերևի տախտակին: Նորից մի քանի անգամ քսեց, ապա սպիտակ գուշնով ներկված այդ աննշան մասը համեմատեց շներկված տախտակների հետ ու հուսահատ նստեց տակառի վրա: Զրթ թիթեղե գուլլը ձեռքին, «Բուֆֆալոյի աղջկերբը» երգելով՝ դարպասից դուրս եկավ Զիմը: Քաղաքային ջրամբարից ջուր բերելը մինչ այդ Թոմի համար ատելի աշխատանք էր եղել, բայց այժմ դա այնքան էլ վատ չթվաց: Նա հիշեց և որ ջրհորի մոտ միշտ մեծ բաղմութիւն է հավաքվում: Այնտեղ միշտ լինում էին սպիտակ, խառնածին և նեղր տղաներ ու աղջիկներ, որոնք, իրենց հերթին սպասելով, հանգրտանում էին, խաղալիքների առևտուր անում, կատակում, կովում, թեթևաոլիկութիւններ անում: Եվ նա հիշեց, որ թեև ջրհորը հազիվ հարյուր հիսուն յարդ հեռավորութեան վրա էր բայց Զիմը մի գուլլ ջուրը երբևէ մի ժամից շուտ չէր բերում, երբեմն նույնիսկ պետք էր լինում նրա հետևից գնալ ու կանչել:

— Լսի՛ր, Զիմ, — ասաց Թոմը, — ես ջուրը կբերեմ, եթե դու իմ փոխարեն մի քիչ սպիտակեցնես:

Զիմը գլուխն օրորեց և ասաց.

— Չեմ կարող, միստր Թոմ: Մեր տիկինն ինձ ասել է ջուրը բերել առանց կանգ առնելու և որևէ մեկի հետ խոսելու: Նա ասաց. «Ծնթաղրում եմ, որ միստր Թոմը քեզ կառաջարկի ցանկապատն սպիտակեցնել», և ասաց. «Դու քո ճամփան շարունակիր և գործիդ նայիր»: Նա ասաց. «Ծն կգամ ու նրա սպիտակեցնելուն կնայեմ»:

— Է՛, նրա ասածին ուշադրութիւն մի դարձրու, Զիմ: Նա միշտ այդպես է ասում: Տուր ինձ գուլլը, ես մի վայրկյանից կգամ: Նա իսկի չի էլ իմանա:

— Օ՛հ, չեմ կարող, միստր Թոմ: Մեր տիկինը դրա համար գլուխս կթոցնի, հավատա, կթոցնի:

— Նա՞... Նա ոչ ոքի չի ծեծում, նա միայն իր մատնոցով գլխին թխկացնում է, իսկ դա ի՞նչ է որ, ո՞վ է դրան ուշադրութիւն դարձնում: Նա միայն սարսափելի բաներ կասի:

¹ Յարդ — հրկարութեան անգլիական չափ, հավասար է 0,91 մետր:

բայց խոսքը, բոլոր դեպքերում, ցավ չի պատճառում, եթե միայն լաց չլինի: Զիմ, ես քեզ մարմարե գնդիկ կտամ, սպիտակ գնդիկ կտամ:

Զիմն սկսեց տատանվել:

— Սպիտակ գնդիկը, Զիմ, դատարկ բան չէ:

— Ո՛ւյ, հրաշալի բան է, ճիշտ է, բայց, միտոր թոմ, ես սարսափելի վախենում եմ ծեր տիկնոջից:

— Եվ բացի դրանից, եթե ուզում ես, ցույց կտամ նաև իմ ոտքի վիրավոր մատը:

Զիմը պարզապես մարդ էր և այդ մեծ գայթակղությանը չէր կարող դիմանալ: Նա դույլը դրեց գետնին, վերցրեց սպիտակ գնդիկը և մեծ հետաքրքրությամբ սկսեց նայել, մինչ թոմը քանդում էր վիրավոր մատի կապը: Մի բույն հետո գույլը ձեռքին Զիմը արդեն վազում էր փողոցով: Թոմը մեծ եռանդով սպիտակեցնում էր ցանկապատը, իսկ մորաքույր Պելին հեռանում էր հողաթափը ձեռքին և հաղթական արտասույտով աշքերում:

Բայց թոմի եռանդը երկար չտևեց: Նա սկսեց մտածել այդ օրվա համար իր ծրագրած ուրախությունների մասին, և ցավերը բազմապատկվեցին: Շուտով տղաները կգնան տարքա: Հետաքրքիր տեղեր և աշխարհով մեկ թոմին կծաղրեն, և ապա փախած է եղել աշխատել: Այդ միտքը կրակի պես այրում էր հրան: Նա հանեց իր բոլոր աշխարհիկ գանձերն և սկսեց ձուլել դրանց մեջ կային ջարդված խաղալիքներ, մարմարե գնդիկներ և ամեն տեսակի իրեր: Դրանք բավական էին փոխանակելու համար, բայց չէր կարելի գոնե կես ժամվա լրիվ ազատություն գնել: Նա գրպանը դրեց իր աղքատիկ հարստությանը և հրաժարվեց տղաներին կաշառելու մտքից: Այդ ծանր և անհուսալի պահին նրա մեջ հանկարծ ոգևորություն եղավ: Մի մեծ, հրաշալի ներշնչանք: Նա վերցրեց վրձինը և արագ հանգիստ աշխատել: Այդ պահին երևաց Բեն Ռոջերսը: Հենց այն տղան, որի ծաղրանքներից թոմը բոլորից շատ էր վախենում: Բենը ոչ թե քայլում, այլ թռչկոտում էր, ի սրտում այն բանի, որ սիրտը թեթև էր և մեծ հեռանկարներ ուներ այդ օրը: Նա խնձոր էր ուտում և ժամանակ առ ժամանակ երկար, մեղրդիկ սուլում, որին հաջորդում էր ցանկալի-տանկ-տանկ, տինկ-տունկ-տունկ»-ը, որովհետև

նա իրեն շոգենավ էր պատկերացնում: Մոտենալով, նա քայլերը հանդարտեցրեց, կանգնեց փողոցի մեջտեղում և սկսեց կամաց, զգուշությամբ ու նկատելի ճիգով շուռ գալ, որովհետև այդ պահին նա «Մեծ Միսսուրին» էր, ինը ոտնաչափ խորությամբ ջրի մեջ նստած: Նա միաժամանակ և՛ նավ էր, և՛ նավապետ, և՛ ազդանշանի զանգ. այնպես որ, նա իրեն պետք է պատկերացներ սեփական տախտակամածին կանգնած, ինքն իրեն հրամաններ արձակելիս և կատարելիս:

— Կա՛նգ առ: Տինկ-ալին-լին:

Մեքենան կանգ առավ և դանդաղ մոտեցավ մայթին:

— Ծ՛տ: Տինկ-ալին-լին:

Նրա թևերը իջան և ձգվեցին կողերին:

— Ետ շարժվիր, դեպի աջ: Տին-ա-լին-լին: Չոու-չոու-չոու:

Նրա աջ ձեռքը մեծ շրջանակներ էր գծում, որովհետև ներկայացնում էր քառասուն ոտնաչափ անիվ:

— Ձախ կողմը թեքիր: Տին-ա-լին-լին: Չոու-չոու-ոու:

Այժմ նա ձախ ձեռքով էր շրջանակներ գծում:

— Կա՛նգ առ: Տին-ա-լին-լին: Կանգ առ: Շուռ արի: Քիթը առաջ: Պարանը զցիր: Ի՞նչ ես կանգնել: Բռնիր պարանը: Օղակը ցցին զցիր: Բաց թող: Մեքենան կանգնեց, սրբ: Տին-ալին-լին: Շտ, շտ, շտ:— Նա ձայնը նմանեցրեց ծորակից դուրս եկող շոգու ձայնի:

Թոմը շարունակում էր սպիտակեցնել և ուշադրություն չէր դարձնում շոգենավին: Բենը մի պահ նայեց, ապա ասաց.

— Հի՛, հի՛: Կոճղին ես կապված, հա՞:

Ոչ մի պատասխան: Թոմը արվեստագետի աչքով նայեց իր ներկածին, վրձինը մի թեթև քսեց և ետ գնաց ավելի լավ նայելու: Բենը, նավարկելով, մոտեցավ նրան: Թոմի բերանի ջուրը գնաց խնձորի համար, բայց շարունակեց իր աշխատանքը: Բենն ասաց.

— Հը՛, մեր աղա, գործի են լծել, հա՞:

— Ախ, այդ դո՞ւ ես, Բեն, չնկատեցի:

— Լսիր, ես գնում եմ լողանալու: Դու չե՞ս ուզում: Բայց չէ, դու գործ ունես: Պետք է աշխատես:

Թոմը մի պահ նայեց նրան և ասաց.

— Դու ի՞նչն ես աշխատանք համարում:

— Մի՞թե դա աշխատանք չէ:

Թոմը շարունակեց սպիտակեցնել և անփուլթ ասաց.

— Գուցե աշխատանք է, գուցեև ոչ: Ես միայն այն գիտեմ, որ դա Թոմ Սոյերի սրտին մոտ է:

— Է՛հ, վերջ տուր: Հո չե՞ս ուզում ասել, որ դա նույնիսկ քեզ դուր է գալիս:

Վրձինը շարունակեց շարժվել:

— Դո՞ւր գալ: Իսկ ինչո՞ւ պիտի դուր չգա: Հո ամեն օր տղաներին չի հաջողվում ցանկապատ ներկել:

Գրանից հետո գործը այլ ընթացք ստացավ: Բենն ընդձատեց խնձոր կրծելը: Թոմը վրձինը թեթևակի ետ ու առաջ էր տանում, ետ գնում ու նայում արդյունքին, տեղ-տեղ վերջինի հարված տալիս և նորից քննադատաբար նայում. Բենը, որ հետևում էր նրա յուրաքանչյուր շարժմանը, գնալով ավելի էր հետաքրքրվում, ավելի հմայվում: Ի վերջո ասաց.

— Լսիր, Թո՛մ, տուր մի քիչ էլ ես ներկեմ:

Թոմը մտածեց, ձևացրեց թե համաձայնում է, բայց միտքը փոխեց:

— Ո՛չ, ո՛չ, Բեն, չի կարելի: Մորաքույր Պոլին շատ պանշկոտ է հատկապես հենց այս ցանկապատի նկատմամբ, և ավհետև փողոցի վրա է, գիտե՞ս. եթե հեռևի կողմի ցանկապատը լինեք, ուրիշ բան, նա չէր էլ մտածի: Այո, նա շատ անշկոտ է այս ցանկապատի նկատմամբ, շատ մեծ խրճիթով պետք է կատարվի: Ես համոզված եմ, որ հազար, երեսե երկու հազար տղայից մեկն էլ չկարողանա այնպես անել, ինչպես հարկն է:

— Մի՞թե, դե լավ, թույլ տուր գոնե փորձեմ: Մի քիչ փորձ էթե ես քո տեղը լինեի, թույլ կտայի:

— Բեն, ես սիրով կթողնեի, ազնիվ խոսք, բայց մորաքույր Պոլին... Զիմն էլ ուզեց անել, բայց նա շթողեց: Միդն էլ փորձեց ներկել, բայց էլի չթողեց: Չե՞ս տեսնում ինչքան բարձր եմ, իսկ եթե թողնեմ ու մի բան պատահի՞ ցանկապատին...

— Չէ, չէ, ես շատ զգույշ կլինեմ: Թույլ տուր մի անգամ փորձեմ: Լսիր, խնձորիս միջուկը քեզ կտամ:

— Դե լավ, վերցրու: Չէ, Բեն, չէ, մի արա, վախենում եմ:

— Ամբողջ խնձորը կտամ:

Թոմը վրձինը տվեց նրան դժգոհ արտահայտությամբ, բայց սրտում գոհ էր: Եվ մինչ նախկին «Մեծ Միասուրի» շոգենազն աշխատում ու քրտնում էր արևի տակ, պաշտոնաթող արվեստագետը մոտակա ստվերում, տակաւի վրա նստած՝ ոտքելին էր օրորում, խնձորը ծամում և նոր անմեղների համար ծուղակ պատրաստում: Զոհերն անպակաս էին: Իրար ետևից տղաներ էին գալիս. նրանք մոտենում էին Թոմին՝ ծաղրելու մտադրությամբ, բայց հետո խնդրում ցանկապատը սպիտակեցնել: Երբ Բենը հոգնեց, նրա փոխարեն թղթի մի նոր օղապարիկի դիմաց ներկելը շարունակեց Բիլլի Ֆիշերը, իսկ երբ սա էլ հոգնեց, սատկած մկով, որի ոտքից պարան էր կապված, Զոնի Միլլերը Թոմից գնեց աշխատանքը, և այսպես շարունակվեց մի քանի ժամ:

Իսկ երբ կեսօրն անցավ, առավոտվա աղքատ Թոմը օւղղակի լողում էր հարստության մեջ: Բացի վերոհիշյալ գանձերից, նա ուներ տասներկու մարմարե գնդիկ, կապույտ ապակու կտոր, որի միջով կարելի էր նայել, փայտե թնդանոթ, ոչ մի բան չբացող մի բանալի, մի կտոր կավիճ, ջրաճանի ապակե խցան, մի թիթեղե զինվոր, մի զույգ շերեփուկ, միաշքանի կատվի ձագ, պղնձե բռնակ, մի շան վզնոց՝ առանց շան, դանակի մի կոթ, նարնջի շոր կեղև ու լուսամասի մի հին, կոտրած շրջանակ: Ոչինչ չանելով, Թոմը շատ լավ մամանակ անցկացրեց, իսկ ցանկապատն արդեն ծածկվիլ էր երեք շերտ ներկով: Եթե ներկը չսպառվեր, նա քաղաքի բոլոր տղաներին կանանկացներ:

Թոմը մտածեց, որ աշխարհը, ի վերջո, այնքան էլ գատարկ չէ: Նա, առանց իմանալու, հայտնաբերել էր մարդկային գործողության մի մեծ օրենք՝ որպեսզի երեխան կամ հասակն առած մարդը մի բանի ձգտի, անհրաժեշտ է պարզապես այնպես անել, որ նա դրան դժվարությամբ հասնի: Եթե Թոմը մեծ և իմաստուն փիլիսոփա լիներ, ինչպես այս Կրքի հեղինակը, նա կհասկանար, որ աշխատանքն այն է, ինչ մարդ ստիպված է անել, իսկ խաղը այն է, ինչ մարդ ստիպված չէ անել: Եվ դա կօգներ նրան հասկանալու, թե ինչու արհեստական ծաղիկ սարքելը աշխատանք է, մինչդեռ Մոնբլանի գագաթը բարձրանալը՝ բավականություն: Անպլիայում կան հարուստ ջենտլմեններ, որոնք ամուսն օրերին

ճանապարհորդական քառածի կառքը իրենք են վարում օրական քսան կամ երեսուն մղոն, որովհետև այդ բանը նրանց վրա զգալի գումար է նստում, բայց եթե այդ ծառայութեան համար ոռճիկ առաջարկեին, դա կփոխվեր աշխատանքի, և նրանք կհրաժարվեին:

Որոշ ժամանակ էլ Քոմը մտածեց այդ փոփոխութեան մասին, որը կատարվել էր իր հետ, ապա հարստութունը վերցրեց և ուղղվեց դեպի տուն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

Քոմը ներկայացավ մորաքույր Պոլիին, որը նստել էր մի հարմարավետ սենյակի բաց լուսամտի առաջ. այդ սենյակը միաժամանակ ննջարան էր, ճաշասենյակ, հյուրասենյակ և գրադարան: Ամառային թարմ օդը, անդորրը, ծաղիկների բույրն ու մեղունների քնաբեր տղզոցն իրենց ազդեցութունն էին ունեցել, և պառավը ննջում էր ձեռքի կարի վրա, որովհետև մտքը ոչ ոք չկար, բացի կատվից, որն իր հերթին քնել էր նրա գոգին: Ակնոցը, ապահովութեան համար, բարձրացրել էր ալեհեր գլխի վրա: Նա կարծում էր, թե Քոմը վաղուց արդեն փախած կլինի. դրա համար էր զարմացավ, որ Քոմն այդպես անվեհեր կերպով իր ձեռքն ընկավ:

Քոմն ասաց.

— Մորաքույր, հիմա կարո՞ղ եմ գնալ խաղալու:

— Ի՞նչ, արդեն վերջացրի՞ր: Իսկ ինչքա՞ն ես արել:

— Ամբողջ գործն արված է, մորաքույր:

— Քոմ, մի ստիր, չեմ կարող տանել:

— Չեմ ստում, մորաքույր, ամբողջ գործն արված է:

Մորաքույր Պոլին քիչ էր հավատում նման խոսքերին: Նա քիչ անձամբ տեսնելու և գոհ կլիներ, եթե Քոմի ասածի բանհինգ տոկոսը գոնե ճիշտ լիներ: Նա տեսավ, որ ամբողջ քանակապատը սպիտակեցված է, և ոչ միայն սպիտակեցված, այլև մեծ խնամքով ծեփված է, և նույնիսկ մի տախտակ էլ ավելացված: Նա ասաց.

— Դե, էլ ասելիք չունեմ, Քոմ: Ուրեմն, գուցե կարող ես աշխատել, եթե մտքիդ դնես:— Բայց անմիջապես մեղ-

մեց գովեստը:— Բայց պետք է ասեմ, որ խիստ սակավ է պատահում, երբ դու աշխատելու ցանկություն ևս ունենում: Լա՛վ, զնա խաղա, բայց ժամանակին տուն արի, թե չէ ծեծ կուտես:

Նա այնքան հիացած էր Թոմի աշխատանքով, որ տղային տարավ մառան և ընտրելով ամենալավ խնձորը, տվեց, միաժամանակ խրատ կարգալույ, թե ինչքան թանկ ու հաճելի է լինում նվերը, երբ ձեռք է բերվում ազնվորեն, առանց մեղք գործելու: Մինչ նա իր խոսքը կավարտեր Սուրբ գրքից բերված մեջբերումով, Թոմը մի շաքարահաց թըռցրեց:

Հետո սենյակից փախավ ու տեսավ, որ Սիդը բարձրանում է երկրորդ հարկի ետևի սենյակը տանող արտաքին սանդուղքով. հողակոշտերն ամենից հարմար էին, և մի ակընթարթում օդը լցվեց զրանցով: Սիդի շուրջը կարկուտի պես տեղացին հողակոշտեր, ու մինչ մորաքույր Պոլին ուշքի կգար և օգնության կհասներ, վեց թե յոթ հողակոշտեր արդեն հասել էին իրենց նպատակին, իսկ Թոմը ցանկապատի վրայով արդեն փախել էր: Ցանկապատը, անշուշտ, դուռ ուներ, բայց Թոմը, որպես կանոն, միշտ ժամանակ չէր ունենում զրանից օգտվելու: Այժմ, երբ հաշիվը արդեն մաքրել էր Սիդի հետ՝ սև թելի մասին մորաքրոջը հիշեցնելու և իրեն գըլխացավանք պատճառելու համար, Թոմի սիրտը հանգըստացավ:

Թոմը տան ետևով անցավ իրենց թաղամասը և դուրս եկավ մի ցեխոտ փողոց, որն անցնում էր մորաքրոջ դռմի մոտով: Այլևս ազատ էր բռնվելու և պատժվելու վտանգից. նա զնաց դեպի ավանի հրապարակը, որտեղ տղաների երկու «ռազմական» խմբեր նախնական համաձայնությամբ հավաքվել էին կովելու համար. Թոմը այս բանակներից մեկի հրամանատարն էր, Ջո Հարպրը՝ նրա մտերիմ ընկերը, մյուսի: Այս երկու մեծ հրամանատարներն իրենց թույլ չէին տալիս անձամբ իրար հետ կովելու. դա ավելի հարմար էր փոքրերին: Նրանք, մի թմբի վրա, իրար մոտ նստած, թիկնապահների միջոցով հրամաններ արձակելով, ղեկավարում էին ռազմական գործողությունները: Երկար ու ծանր պատերազմից հետո Թոմի բանակը մեծ հաղթանակ տարավ: Հե-

տո հաշվեցին սպանվածներին, գերիներ փոխանակեցին, հաջորդ հանդիպման պայմանների ու վճռական ճակատամարտի օրվա մասին համաձայնության եկան. դրանից հետո բանակները շարժվեցին ու հեռացան, և թումը գնաց տուն:

Անցնելով այն տան առջևով, ուր ապրում էր Ջեֆ Թեյլորը, նա պարտեզում մի անծանոթ աղջիկ տեսավ, մի սիրուն, կապուտաշյա արարած, դեղին մազերը երկու երկար հյուս արած, ամառային սպիտակ շորով և ասեղնագործած տաբատով: Հաղթանակով պսակված հերոսը գերի ընկավ առանց մի կրակոց արձակելու: Մի ինչ-որ էմի կոտրենս շքացավ նրա սրտից և նույնիսկ հիշատակ չթողեց: Թումը կարծում էր, թե նրան խելագարի նման էր սիրում. նրան թվում էր, թե սիրում էր պաշտելու աստիճան, բայց պարզվեց, որ դա միայն անցողիկ հրապուրանք էր: Ամիսներով հետապնդել էր նրան և միայն մի շաբաթ առաջ աղջիկը խոստովանել էր, որ սիրում է իրեն: Նա աշխարհի ամենտեքջանիկ և ամենահպարտ տղան էր միայն յոթ կարճ օրվա ընթացքում, և ահա, մի ակնթարթում: այդ աղջիկը հեռացավ թումի սրտից, ինչպես ւատահական մի օտարական, որը եկել էր ու գնացել:

Նա հեռվից հիացած, պաշտող հայացքով նայում էր այս ձոր հրեշտակին, մինչև ղզաց, որ նա էլ նկատեց իրեն: Այդ ժամանակ ձևացրեց, թե չի նկատում աղջկա ներկայությունը և սկսեց «ցուցադրել» իր ճարպկությունը, ինչպես ընդունված է տղաների մոտ, որպեսզի նրա հիացմունքը նվաճի: Երբ ժամանակ շարունակեց իր խենթությունը ու մեկ էլ նկատեց վտանգավոր ինչ-որ մտրմամարդական վարժարանի կեսին նայեց աղջկա կողմը և տեսավ, որ նա ետ է քարձել և տուն է գնում: Թումն ընկճված մտեցավ ցանկալիքին, վշտացած հենվեց, բայց հույս ունենալով, որ նա մի փոքր էլ կմնա պարտեզում: Աղջիկը մի պահ կանգնեց անզուգուրի վրա, հետո շարժվեց դեպի դուռը: Թումը ծանր հարձակվեց, երբ նա ոտը դրեց շեմքին. սակայն նրա դեմքն անմեղապես փայլեց, որովհետև ներս մտնելուց առաջ աղջիկը ցանկալիքի վրայով մի մանուշակ նետեց տղային: Թումը փառեց ու կանգ առավ ծաղկից մի բանի թայլ հետո ու, ձեռքը փնչով ձակատին, սկսեց ուշադիր նայել փողոցի կողմը. կարծես ինչ-որ առանձին հետաքրքրական բան էր կատար-

Վում այնտեղ: Հետո մի ծղոտ վերցրեց և, քթի վրա դնելով, փորձեց հավասարակշռված պահել. հետո գլուխը ետ գցած, այս ու այն կողմ շարժվելով, նա կամաց-կամաց մոտեցավ ծաղկին: Վերջապես նա իր բոբիկ ոտքը դրեց ծաղկի վրա, ճկուն մատները փակեց և մի օտի վրա թռչելով՝ իր գանձը հետը տանելով, հեռացավ ու անհետացավ անկյունում: Բայց միայն մի բոպի, այնքան, որքան պետք էր բաճկոնը բացելու և ծաղիկը պահելու՝ սրտի մոտ կամ, հավանաբար, ստամոքսի մոտ, որովհետև նա այնքան էլ ուժեղ չէր անատոմիայից և այդպիսի գործերից շատ չէր հասկանում:

Դրանից հետո վերադարձավ ցանկապատի մոտ և մինչև մութն ընկնելը այնտեղ մնաց, առաջվա պես ճիրեն ցույց տալով: Բայց աղջիկն այլևս չերևաց, թեև Թոմն իրեն մի քիչ մխիթարում էր այն հույսով, որ նա անպայման լուսամուտից տեսնում է իր տառապանքները: Ի վերջո, տուն գնաց, գլուխը ցնորքներով լիքը:

Ընթրիքի ժամանակ նա այնքան բարձր տրամադրության մեջ էր, որ մորաքույրը զարմացավ. «Ի՞նչ է պատահել այս երեխային»: Սիդի վրա հողակոշտեր նետելու համար նրան մի լավ սեղմեցին, բայց նա ոչ մի ուշադրություն չդարձրեց: Մորաքրոջ քթի տակ փորձեց շաքար գողանալ, բայց ձեռքին հարված ստացավ: Նա ասաց.

— Մորաքույր, երբ Սիդն է թռցնում, նրան իսկի չեք ծեծում:

— Սիդը, քեզ նման, մարդու չի տանջում, եթե չհակեմ, դու շաքարամանից դուրս չես գա:

Շուտով մորաքույրը գնաց խոհանոց, և Սիդը գոհ, որ անպատիժ մնաց, ձեռքը երկարեց շաքարամանին: Այդ ծաղրը անտանելի էր Թոմի համար: Բայց... շաքարամանը սահեց Սիդի ձեռքից և ընկնելով, ջարդվեց: Թոմը հրճվանքի մեջ էր, այնպիսի հրճվանքի, որ լեզուն իրեն քաշեց և լոնց: Նա որոշեց ոչ մի խոսք չասել, նույնիսկ, երբ մորաքույրը ներս մտնեք, որոշեց հանգիստ նստել, մինչև որ նա հարցնեք, թե ո՞վ է արել այդ շաքարաթափումը: Հետո կասեք: Աշխարհում ոչ մի բան այնքան հաճելի չէր կարող լինել, որքան տեսնելը, թե ինչպես է այդ «օբիեկտներն» ծեծի իր բաժինն ստանում:

Նա այնքան ուրախ էր, որ հաղիվ էր իրեն զսպում: Պառավ
չեզին վերադարձավ և կանգնեց շաքարամանի ջարդված կտոր-
ների առջև: Ակնոցի տակից ցասման կայծեր թափվեցին:
Թո՛մն ինքն իրեն ասաց. «Սկսվում է»: Մի ակնթարթ, և նա
քնկած էր գետնին: Պատժող ձեռքը բարձրացել էր նորից
խփելու, երբ Թո՛մը բղավեց.

— Սպասեք, սպասեք, ինչո՞ւ եք ինձ ծեծում: Դա չէ՞ որ
Սիզն է ջարդել:

Մորաքույր Պոլին մի պահ քարացավ, և Թո՛մն սպասում
էր, որ նա կզղշա իր արածի համար: Բայց երբ մորաքույրը
հորից կարողացավ խոսել, ասաց.

— Հը՛մ, բայց իմ կարծիքով դու դա իզուր շատացար
չե՞տա՛ն եմ, որ իմ բացակայությամբ դու էլ մի ուրիշ շարու-
թյան արած կլինես:

Հետո խիղճը տանջեց մորաքրոջը: Նա ուզում էր մի սի-
րււլիբ ու քաղցր բան ասել, բայց մտածեց, որ Թո՛մը կկարծի,
թե իրեն մեղավոր է համարում, իսկ դա անկարողություն
էր: Այնպես որ գերադասեց լռել և իր գործը շա-
քուածակեց տխուր սրտով: Թո՛մը, վիրավորված, մի անկյուն
քաշվեց: Նա գիտեր, որ սրտի խորքում մորաքույրն իր առաջ
Թո՛մն էր գալիս, և այդ գիտակցությունը տղային բավակա-
նություն էր պատճառում: Նա ձևացնում էր, թե այդ բոլորը
թե՛ անհամար: Գիտեր, որ հաճախ ներողություն խնդրող ար-
ցունքոտ հայացքներ են ընկնում իր վրա, բայց չէր ու-
զում նկատել դրանք: Նա իրեն պատկերացրեց մահամերձ
Վիճակ և մորաքրոջն՝ իր վրա կոացած, ներման խոսքի
առաջնորդ: Բայց ինքը դեմքը դեպի պատն է շուռ տալիս և
մեռնում է այդ խոսքը շասած: Այն ժամանակ մորաքույրը
խնայե՛լ կզգար իրեն: Նա պատկերացրեց, թե ինչպես իրեն
խեղճված հանում են գետից ու տուն բերում, մազերը թրջ-
ված, փոքրիկ ձեռքերը առհավատ անշարժ և հիվանդ սիրտը՝
հանգստացած: Թե մորաքույրն ինչպես է ընկնում իր դիակի
փոք, և ինչպես են արցունքները հոսում անձրևի պես: Նրա
ցրտանքները կաղոթեն աստծուն, որ իր տղային վերադարձ-
նի, և կխոստանա այլևս երբեք, երբեք չնախատել նրան:
Բայց ինքը պառկած կմնա՝ սառը և գունատ, առանց կեն-

դանութեան նշան ցույց տալու: Խեղճ փոքրիկ տառապալ, որի տանջանքներն իրենց վախճանին են հասել:

Նա այս երևակայական պատկերներից այնքան հուզվեց, որ սկսեց հեկեկալ, աչքերը լցվեցին, և արցունքները քթի ծայրից ցած հոսեցին: Թոմին այնքան հաճելի էին իր համար թափած այդ արցունքները, որ նա չէր ցանկանա աշխարհիկ որևէ ուրախութիւն խառնվելը դրան: Այդ արցունքները սուրբ էին նրա համար: Այդ պատճառով էլ, երբ իր ազգականուհի Մերին պարելով ներս մտավ, ուրախ, որ երկարատև բացակայութիւնից հետո գլուղից տուն էր վերադառնում, թեև այնտեղ մնացել էր ընդամենը մի շաբաթ, Թոմը տխուր ու մռայլ վեր կացավ և մի դռնից դուրս եկավ այն ժամանակ, երբ մյուս դռնից ներս մտավ Մերին՝ իր հետ բելլով երգ ու արև: Նա երկար թափառեց, աշխատելով հեռու մնալ այն փողոցից, որտեղ տղաներն ընդհանրապես հայտնաբերում էին, և որոնեց մռայլ տեղեր, որոնք համապատասխանում էին նրա տրամադրութեանը: Գետի մեջ մի լաստկար, որն ասես հրավիրում էր նրան: Նա նստեց լաստի ծայրին և մտքով խորասուզվեց գետի տխուր անհունութեան մեջ: Մի պահ միայն ցանկացավ խեղդվել՝ միանգամից, առանց այդ բանը գիտակցելու, առանց անցնելու բնութեան տված դժվարին ու անսովոր ուղին: Բայց անմիջապես հիշեց իր ծաղիկը: Գրպանից հանեց այդ ծաղիկը, որ ճարձվել ու քոշնել էր, և դա ավելի սուստկացրեց նրա վիշտը: Թոմն սկսեց մտածել, թե արդյոք նա կխղճա՞ր իրեն, եթե իմանար: Կարտասովե՞ր արդյոք, կգրկե՞ր և կհանգստացնե՞ր իրեն, թե սառնասրտորեն շուռ կգար, ինչպես ամբողջ դատարկ, նտարբեր աշխարհը: Այս պատկերը Թոմին այնպիսի հաճելի տառապանք պատճառեց, որ նա մտովի սկսեց պատկերացնել տարբեր ձևերով, մինչև յոգնեց: Ի վերջո, հոգոց հանելով, վեր կացավ և մթութեան մեջ հեռացավ:

Ժամը ինն անց կեսին կամ տասի մոտերքը հասավ այն փողոցը, որտեղ ապրում էր իր պաշտելի Անժանտիուհին: Մի քանի սպասեց. ամբողջովին լսողութիւն դարձած նրա ականջին ոչ մի ձայն չհասավ: Երկրորդ հարկի մեծ պատուհանի վարագույրի ետևից մոմի մի աղոտ լույս էր առկայծում: Այս սենյակն է արդյոք երջանկացած Անժանտիուհու լու-

... ներկայութեամբ: Նա մագլցեց ցանկապատը, գողի
... անցավ կանաչների ու ծաղիկների միջով, մինչև հասավ
... ամուտին: Երկար ժամանակ հուզումով վեր նայելուց
... պակեց մեջքի վրա՝ կրծքին պահելով ճմրթված ծա-
... Նա այդպես էլ պիտի մահանա. բացօթյա, սառը աշ-
... , իր գլխի վրա ապաստան չունենալով, չունենալով
... մտերմիկ մի ձեռք, որ մահվան քրտինքը ճակատից
... չունենալով սիրող մի դեմք, որ խղճալով խոնարհվի
... վրա, երբ վերջին պահը գա: Կգա երջանիկ առավոտը,
... և ազդիկը կտեսնի նրա անշունչ դիակը: Արդյոք մի կաթիլ
... կցողե՞ր իր անշունչ մարմնի վրա, մի փոքր հոգոց
... , տեսնելով մի երիտասարդ, փայլուն կյանք այդպես
... անթորեն խամրած, այդպես անժամանակ խորտակված:

Լուսամուտը բացվեց, մի սպասուհու կոպիտ ձայն խզեց
... լուսթյունը, և ջրի հեղեղը ողողեց պակած մարտիրոսի
... :

Ենդդվող հերոսը միանգամից վեր թռավ: Շուտով լսվեց
... կված քարի սուլուց, ոչ բարձր հայհոյանք, որին հա-
... շարժված ապակու զնգոցը: Մի փոքր, անորոշ սուվեր
... անցավ ցանկապատի վրայով ու կորավ մթության մեջ:

Երբ Թոմը պակեցուց առաջ ճրագի լույսի տակ ստու-
... էր թրջված հագուստները, Սիդն արթնացավ: Գուցե նա
... միտք ուներ «ակնարկներ» անելու, ավելի լավ հա-
... և իրեն հանդիստ պահել, որովհետև Թոմի աշ-
... սպանալիք կար: Թոմը պակեց առանց աղոթելու.
Միզը մտքում նշեց այդ զանցանքը ես:

ՉՈՐՐՈՐԴ

Արևը ծագեց խաղաղ երկրի վրա և անդորր գյուղաքաղա-
... վերևում շողաց որպես օրհնութուն: Նախաճաշից հե-
... մորաքույր Պոլին բոլորին հավաքեց ընտանեկան աղոթքի:
... սկսվեց Սուրբ գրքից ընտրված հատվածներով,
... իրար էին կապված ինքնահնար խոսքերի բարակ շա-
... : Այդ բոլորի վրա նա արտասանեց Մովսեսի օրեն-
... մի խրթին գլուխ, կարծես Սինա լեռան վրա լինել:

Գրանից հետո Թոմը պատրաստվեց և, այսպես ասած, սկսեց Աստվածաշնչից իր համար նշանակված հատվածները սովորել: Միդը օրեր առաջ սովորել էր իր դասը: Թոմը լարեց իր բոլոր ուժերը հինգ տուն անգիր անելու համար. նա ընտրեց Լեռան աղոթքի մի մասը, որովհետև ավելի կարճ տներ չէր գտնում: Կես ժամ հետո Թոմը տարտամ ու աղոտ գաղափար ուներ միայն իր սերտածի մասին, որովհետև մինչ նրա ուղեղը ճանապարհորդում էր մարդկային մտածողութիւն ընդարձակ դաշտում, ձեռքերը զբաղված էին ուշադրութիւնը շեղող բաներով: Մերին վերցրեց գիրքը ստուգելու համար, իսկ Թոմը փորձեց ինչ-որ կերպ դուրս գալ մշուշի միջից:

— Երանի...ի...ի...

— Հոգով:

— Այո, հոգով: Երանի հոգով...ով...ով...

— Աղքատներին:

— Երանի հոգով աղքատներին, որովհետև նր...ը...

— Նրանց:

— Որովհետև նրանց: Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանց է պատկանում երկնքի թագավորութիւնը: Երանի տանջվողներին, որովհետև նրանք...նրանք...

— Պի...

— Որովհետև նրանք պի...

— Պիտ...

— Որովհետև նրանք պիտ... է՛հ, շեմ հիշում, ի՞նչ էր:

— Պիտի:

— Հա, պիտի: Որովհետև նրանք պիտի... պիտի... ի. ի. ի... տանջվեն... ը՛... ը՛... Երանի նրանց, որ պիտի... որ պիտի... պիտի տանջվեն, որովհետև նրանք պիտի... պիտի ի՞նչ: Ինչո՞ւ չես ասում, Մերի: Ինչո՞ւ ես ինձ ծաղրում:

— Է՛հ, Թոմ, հաստազուլիս խենթուկ, ես քեզ չեմ ծաղրում: Չեմ էլ մտածում ծաղրել: Պարզապես պետք է դասդ նորից սովորես: Մի հուսահատվիր, Թոմ, դու կկարողանաս սովորել, և երբ անգիր անես, ես քեզ մի այնպիսի լավ բան կտա՛մ: Դե, սկսիր, դու շատ լավ աղա ես:

— Լավ: Բայց ի՞նչ պիտի տաս: Մերի, ասա, ի՞նչ:

— Անհոգ եղիր, Թոմ: Դու գիտես, որ երբ ասում եմ լավ բան է, ուրեմն լավ բան է:

— Մերի, դու ինձ շե՞ս խարում, չէ՞: Շատ լավ: Ես նորից
աշտնում:

— Ես նորից փորձեցի: Հետաքրքրության և խոստացված
պարգևների կրկնակի ազդեցության տակ նա այնպիսի եռանդով
աշտնացեց, որ փայլուն հաջողության հասավ:

Մերին նվիրեց նրան մի նոր փոքր դանակ, որն
առաջ տասներկու և կես սենթի թումի ուրախությանը
արժեք չկար, և նա շատ հուզվեց: Ճիշտ է, դանակը ոչ մի բան
չէր փոքրում, բայց դա ինչ-որ խաղալիք չէր, այլ Բարլո ֆիր-
մայի իսկական դանակ, որից էլ գալիս էր դրա անըմբռնելի
արժեքը. որտեղից էին արևմտյան նահանգների տղաները հը-
նարակ, թե այդ ահեղ զենքով կարելի է այնպիսի բաներ ա-
րել: Եր իսկական դանակով հնարավոր չէ. պետք է ենթա-
դրել, որ դա ընդամիշտ անհայտ կմնա: Թումը հասցրեց դանա-
կի տաշել բուֆետը և պատրաստվում էր պահարանին հաս-
նել: Երբ նրան կանչեցին հագնվելու՝ կիրակնօրյա դպրոց
ունյու համար:

Մերին նրան տվեց թիթեղե կոնքը, մի կտոր օճառ, և Թո-
մը գոնից դուրս եկավ. նա կոնքը դրեց փոքրիկ նստարանին,
օճառը մխրճեց ջրի մեջ և դրեց տեղը: Հետո թևերը քշտեց,
պոչի զգուշությամբ թափեց գետնին և, խոհանոց մտնելով,
առան ետևի սրբիչով սկսեց երեսը սրբել: Բայց Մերին սրբ-
իչը վերցրեց նրա ձեռքից և ասաց.

— Չե՞ս ամաշում, Թում: Դու այնքան վատը չպետք է
չնես: Զուրը քեզ չի վնասի:

Թումը մի քիչ շփոթվեց: Կոնքը նորից լցվեց, և այս անգամ
պոչի առաջ մի քիչ կանգնեց՝ վճռականությամբ հավաքելով
նա խոր շնչեց և սկսեց: Երբ նորից խոհանոց մտավ՝ երկու
աչքերը փակ ու ձեռքով սրբիչը փնտրելով, նրա զեմքից
օճառաջուր էր կաթում: Բայց երբ սրբիչը հեռացրեց, զեմքը
առհասարակ վիճակում չէր, որովհետև մաքուր մասը դիմակի
նման ծնոտի և երեսի ծայրերին էր հասնում: Այդ գծից այն
հարկ մնում էր շրջված մի մեծ տարածություն, որ բարձրա-
նուն էր ճակատի կողմը և իջնում վզի շուրջը: Մերին ինքն
զբաղվեց նրան լվանալու գործով, և երբ ավարտել էր, Թումը
զեմքի գույնով նման էր մարդու: Նրա թաց մազերը սանրը-
րած էին, և կարճ գանգուրները համալսափ ու հաճելի տպա-

— Մերի, դու ինձ չե՞ս խաբում, չէ՞: Շատ լավ: Ես նորից կփորձեմ:

Եվ նա նորից փորձեց: Հետաքրքրության և խոստացված նվերի կրկնակի ազդեցության տակ նա այնպիսի եռանդով աշխատեց, որ փայլուն հաջողության հասավ:

Մերին նվիրեց նրան մի նոր փոքր դանակ, որն արժեք տասներկու և կես սենթի թոմի ուրախությանը չափ չկար, և նա շատ հուզվեց: Ծիշտ է, դանակը ոչ ՚ի բան չէր կտրում, բայց դա ինչ-որ խաղալիք չէր, այլ Բարլո Ֆիրմայի իսկական դանակ, որից էլ գալիս էր դրա անըմբռնելի հմայքը. որտեղից էին արևմտյան նահանգների տղաները հրեարել, թե այդ ահեղ զենքով կարելի է այնպիսի բաներ առնել, որ իսկական դանակով հնարավոր չէ. պետք է ենթադրել, որ դա ընդմիշտ անհայտ կմնա: Թոմը հասցրեց դանակով տաշել բուֆետը և պատրաստվում էր պահարանին հասնել, երբ նրան կանչեցին հագնվելու՝ կիրակնօրյա դպրոց գնալու համար:

Մերին նրան տվեց թիթեղե կոնքը, մի կտոր օճառ, և Թոմը դռնից դուրս եկավ. նա կոնքը դրեց փոքրիկ նստարանին, օճառը մխրճեց ջրի մեջ և դրեց տեղը: Հետո թեկը քշտեց, լուրն զգուշությամբ թափեց զետնին և, խոհանոց մտնելով, գառն ետևի սրբիչով սկսեց երեսը սրբել: Բայց Մերին սրբիչը վերցրեց նրա ձեռքից և ասաց.

— Չե՞ս ամառում, Թոմ: Դու այնքան վատը չպետք է քննես: Զուրը քեզ չի վնասի:

Թոմը մի քիչ շփոթվեց: Կոնքը նորից լցվեց, և այս անգամ գոն քի առաջ մի քիչ կանգնեց՝ վճռականություն հավաքելով: Ես խոր շնչեց և սկսեց: Երբ նորից խոհանոց մտավ՝ երկու օճառը փակ ու ձեռքով սրբիչը փնտրելով, նրա զեմքից օճառաջուր էր կաթում: Բայց երբ սրբիչը հեռացրեց, զեմքը օճառացիչ վիճակում չէր, որովհետև մաքուր մասը դիմակի նման ծնոտի և երեսի ծայրերին էր հասնում: Այդ գծից այն օճառ մնում էր շրթոված մի մեծ տարածություն, որ բարձրաձև էր ճակատի կողմը և իջնում վզի շուրջը: Մերին ինքն զգուշացնելու նրան լվանալու գործով, և երբ ավարտել էր, Թոմը օճառն զույնով նման էր մարդու: Նրա թաց մազերը սանրուկի նման և կարճ գանգուրները համաչափ ու հաճելի տպա-

Վորութիւնն էին թողնում: (Թոմը գաղտնի հարթեց զանգուր-
ները և մագերը կայրեց գլխին. նա հավատացած էր, որ
գանգուրներն իրեն աղշկա տեսք էին տալիս, այդ պատճա-
ռով իրեն դժբախտ էր զգում): Հետո Մերին պահարանից
հանեց նրա այն հագուստները, որոնք երկու տարի է, ինչ
գործածվում էին միայն կիրակի օրերը և պարզապես կոշ-
վում էին «մյուս հագուստները». դրանից կարող ենք իմա-
նալ նրա հանդերձարանի հարստութիւնը: Հագնվելուց հետո
Մերին «կարգի բերեց» նրան. բաճկոնը կոճկեց մինչև վիզը.
շաւկի լայն օձիքը դարձրեց դեպի ուսերը, հագուստը խո-
զանակեց և գլխին դրեց հարդե բժավոր զլխարկը: Այժմ Թոմը
կարգին բայց տանջված տեսք ուներ և նա իսկապես տանջ-
վում էր, որովհետև մաքրութիւնն ու այդ հագուստը նեղում
էին տղային: Նա հույս ուներ, թե Մերին կմոռանա կոշիկ-
ները, բայց հույսն ի դերև ելավ: Աղշիկն, ինչպես հարկն է,
ճարպով մի լավ մաքրեց դրանք և բերեց: Թոմը համբերու-
թիւնը կորցրեց և ասաց, որ նրան միշտ անել են տալիս
այն, ինչ ինքը չի ուզում: Բայց Մերին համոզիչ տոնով
ասաց.

— Խնդրում եմ, Թոմ, դու խելոք տղա ես:

Եվ Թոմը, տրտնջալով, հագավ կոշիկները: Մերին շտապ
պատրաստվեց, և երեք երեխաները ճանապարհ ընկան դեպի
կիրակնօրյա դպրոց, մի վայր, որը Թոմն ասում էր ամբողջ
սրտով, բայց որը Սիդն ու Մերին շատ էին սիրում:

Կիրակնօրյա դպրոցը երեխաներին զբաղեցնում էր ժամը
իննից մինչև տասն անց կես. այնուհետև սկսվում էր կի-
րակնօրյա կրոնական արարողութիւնը: Երեխաներից երկու-
սը սիրով մնում էին աղոթքը լսելու, իսկ մյուսը մնում էր
ավելի լուրջ նպատակով: Եկեղեցու կոշտ նստարանները
կարող էին տեղավորել շուրջ երեք հարյուր հոգի: Շենքը
փոքր ու պարզ էր, նման փայտե աուփի, որի վրա դրել էին
սրածայր զանգակատունը: Դռան մոտ Թոմը մի քայլ ետ
ընկավ և մտտեցավ կիրակնօրյա շորեր հագած ընկերոջը:

— Լսիր, Բիլ, գեղին տոմս ունե՞ս:

— Այո:

— Ի՞նչ ես ուզում դրա դիմաց:

— Ի՞նչ կտաս:

— Մի կտոր լակրիցա¹ և ձկան կարթ:

— Ցույց տուր:

Թոմը ցույց տվեց: Ընկերը գոհ մնաց, և նրանք փոխանակեցին: Հետո Թոմը երկու սպիտակ գնդիկը փոխանակեց երեք կարմիր տոմսերի հետ և մի քանի մանր-մուր բաներ՝ երկու կապույտների հետ: Նա բռնացրեց նաև ուրիշ տղաների և ավելի քան տասը-տասնհինգ ընդհանուր շարունակ տարբեր գույնի տոմսեր գնեց: Նա եկեղեցի մտավ մաքուր հագնված և աղմկոտ տղաների ու աղջիկների հետ մոտեցավ իր աթոռին և սկսեց կովել առաջին իսկ տղայի հետ: Ուսուցիչը, մի լուրջ, տաքարյուն մարդ, միջամտեց, բայց երբ մի պահ շրջվեց, Թոմը կողքի նստարանից մի տղայի մազերից քաշեց, և էրբ սա շուռ եկավ, նա արդեն խորասուղված էր իր գրքի մեջ: Մի ուրիշ տղայի գնդասեղով ծակեց, որպեսզի լսի նրա «...» ասելը. ուսուցիչը նորից նկատողություն արեց:

Թոմենց դասարանի բոլոր երեխաներն իրար նման էին. անհանգիստ. աղմկոտ և կովարար: Երբ նրանք սկսեցին իրենց գասն արտասանել, նրանցից ոչ մեկն իր անգիրը կատարյալ չգիտեր. անհրաժեշտ էր բոլորին հուշել: Ի վերջո, մի կերպ տակից դուրս եկան, և յուրաքանչյուրն ստացավ իր գրքերը՝ մի կապույտ տոմս, վրան ինչ-որ խոսքեր Սուրբ Գրքից: Ցուրաքանչյուր կապույտ տոմս տրվում էր երկու տողի անգիր արտասանության դիմաց: Տասը կապույտ տոմսը հաճախ էր մի կարմիր տոմսի և կարող էր դրա հետ փոխանակվել: Տասը կարմիր տոմսը հավասար էր մեկ դեղինի: Տասը դեղին տոմսի դիմաց դպրոցի դիրեկտորը աշակերտին տալիս էր մի հասարակ կազմով Աստվածաշունչ (այդ երջանկափայլ ժամանակներում գիրքն արժեք քսան սենթ): Իմ ընթացողներից քանի՞սն այդքան աշխատասիրություն և հարգություն կունենան՝ անգիր անելու երկու հազար տող տանավոր, թեկուզ Դորեի² նկարներով զարդարված Աստվածաշունչ ստանալու համար: Իսկ Մերին այս ճանապարհով հասնել էր ստանալ երկու Աստվածաշունչ: Դա երկու

¹ Լակրիցա — քաղցր ու թանձր մի հյութ, որը ստանում են լակրիցայի փայտեղից:

² Գլխավոր Դորե (1833—1883) — ֆրանսիացի հայտնի նկարիչ:

տարվա համբերատար աշխատանքի արդյունքն էր. իսկ գերմանական ծագումով մի տղա շահել էր շորս կամ հինգ Աստվածաշունչ: Նա մի անգամ երեք հազար տող արտասանել էր առանց կանգ առնելու: Բայց նրա ուղեղի լարումն այնքան ծանր էր եղել, որ այդ օրվանից նա ապուշ էր դարձել: Այդ դեպքը դպրոցի համար լուրջ դժբախտություն էր, որովհետև: առաջ, հանդեսների ժամանակ, դիրեկտորը միշտ այս տղային մեջտեղ էր հանում «իրեն ցույց տալու համար» (ինչպես Քոմմն էր ասում): Միայն շափահաս աշակերտներն էին կարողանում պահել տոմսերը և իրենց համբերատար գործն այնպես շարունակել, որ Ավետարան ստանան: Այդ պատճառով էլ այս մրցանակներից որևէ մեկի հանձնումը մեծ իրադարձություն էր. հաջողակ աշակերտն այնքան էր մեծարվում ու գովաբանվում, որ յուրաքանչյուր դպրոցական այրվում էր մի քանի շաբաթ տևող փառասիրությունամբ Քոմմի մտավոր ախորժակը հավանաբար ոչ մի անգամ մրցանակների պատճառով չգրգռվեց, բայց նա, ի՞նչ խոսք, ամբողջ սրտով, մի քանի օր երազում էր այդպիսի հաղթանակ և այն ամբողջ փայլը, որ գալիս էր դրա հետ:

Մինչ այդ, դիրեկտորը կանգ առավ ամբիոնի առաջ՝ աղոթագիրքը ձեռքին, ճկույթն էջերի արանքը դրած և պահանջեց, որ ուշադիր լինեն: Կիրակնօրյա դպրոցի դիրեկտորը, երբ արտասանում է իր սովորական համառոտ ճառը, անհրաժեշտ է, որ աղոթագիրք ունենա ձեռքին, ինչպես մեներգիչը համերգում՝ նոտայի մի թերթի: Բայց թե ինչո՞ւ են «այդպես անում, պարզ չէ. ո՛չ երգարանը, ո՛չ էլ նոտայի թերթը այդ տանջվածներից որևէ մեկը երբեք չի գործածում:

Դիրեկտորը երեսունհինգ տարեկան նիհար մարդ էր, ուներ շեկ մորուք և կարճ, շեկ մազեր: Նա դնում էր ուղիղ կանգնող օձիք, որի վերևի մասը համարյա հասնում էր ականջներին, իսկ սուր ծայրերը՝ բերանի անկյուններին, մի քան, որ ստիպում էր նրան ուղիղ դիմացը նայել և ամբողջ մարմինը շուռ տալ, երբ անհրաժեշտ էր լինում հայացք զըցել որևէ կողմ: Նրա վիզը փաթաթված էր մի փողկապով, որը բանկի գրությունն նման լայն ու երկար էր և ուներ ծոպավոր ծայրեր: Նորաձև կիսակոշիկների քթերն ընդգծված ձևով դեպի վերև էին ցցված՝ դահուկների ծայրերի նման: Այդ ժա-

ճանաչվա երիտասարդները դրան հասնում էին երկու ոտ-
քայլ համբերությանը և ջանասիրությանը ժամերով պատին
ամ ամբողջ Միստր Ուոլթերսը շատ լուրջ տեսք ուներ. նա
չափ անկեղծ և ազնիվ մարդ էր: Սուրբ իրերը այնպիսի
ազդեցություններ էր բռնում և այնպես էր առանձնացնում
ամբողջիկ բաներից, որ, անկախ իր կամքից, կիրականորյա
տեսքում մինչև անգամ խոսում էր ուրիշ ձայնով, ոչ այն-
պես. ինչպես մյուս օրերը: Իր ճառը նա այսպես սկսեց.

— Իսկ այժմ, երեխաներ, ես ուզում եմ, որ դուք նստեք
ույշան հնարավոր է ուղիղ ու զեղեցիկ և մեկ կամ երկու րո-
պեք ամբողջ ուշադրությունը նվիրեք ինձ: Այդպես: Ծիշտ
ամբողջ ես պահում իրենց լավ աղջիկներն ու տղաները: Ծս
ամբողջիկ եմ տեսնում, որը լուսամուտից դուրս է նայում. ե-
րբ գալիս է, թե ես դրսում եմ, գուցե մի ծառի վրա, և
ամբողջիկ թռչունների համար ճառ եմ արտասանում: (Հավա-
տած չեմ ծիծաղ): Ուզում եմ ասել, թե ինչքան լավ եմ
գտնում, այսպիսի մի վայրում հավաքված տեսնելով շատ մա-
քառ փայլուն դեմքեր, որոնք սովորում են ճիշտ գործ անել
և ապրի լինել:

Ճշտ այսպես շարունակ: Ամբողջ ճառն այստեղ շարադրե-
լու անհրաժեշտություն չկա: Դա այնպիսին է, որը չի փոխ-
անում և շատ ծանոթ է մեզ բոլորիս:

Ճառի վերջին մասը խանգարվեց մի քանի տղաների
հարցերի և շարունակյալ պատճառով, ինչպես նաև անհանգիստ
լուսամուտներից ու փսփսոցից, որը կամաց-կամաց տարած-
վեց և հասավ այնպիսի ապառաժների, ինչպիսիք Սիդն ու
Էնդրյուն: Բայց հենց որ միստր Ուոլթերսը մի պահ լռեց,
ամբողջ շարունակյալ խաղաղվեցին ու ճառի վերջը լսեցին
ուսուցիչի արտասանությունը:

Փակասեցրեք առիթը, քիչ թե շատ, բացառիկ մի երևույթ էր.
Հասնելով լուսամուտին. ներս մտավ դատավոր Թեյլորը, որին
ամբողջում էր քառամյալ մի ծերուկ, միջին տարիքի, տպա-
կառու, ասիական մազերով մի ջենտլմեն և արժանապատ-
վածությամբ լիցան մի տիկին, որն, անկասկած, վերջինի կինն
էր: Երբ Թեյլորը բռնել էր մի աղջկա ձեռքից: Թոմը շէր կարողա-
նում ասել նույնը. նույնը էր և դրա հետ միասին խիղճը
ամբողջում էր նրան: Նա շէր կարողանում նայել էմի կողմ-

րենսի աշքերին, շէր կարողանում տանել նրա քնքուշ հայացքը: Բայց երբ տեսավ փոքրիկ նորեկին, մի վայրկյանում սիրտը երջանկությամբ լցվեց: Հաջորդ պահին ինչքան շնորհք ունենր ցույց էր տալիս. ապտակում էր տղաներին, մազերն էր քաշում, ծամածռություններ անում, մի խոսքով, գործի էր դնում իր ամբողջ արվեստը, որ կարող էր հիացնել մի աղջկա և արժանանալ նրա գովասանքին: Բայց մի բան փշացնում էր նրա ցնծությունը. իր նվաստացումը այս հրեշտակի այգում: Բայց այդ հիշողությունը շուտով ավազի նման մաքրվեց նրան տիրող երջանկության բամուջ:

Այցելուներին նստեցրին պատվո ամենաբարձր աթոռներին, և հազիվ միստր Ուոլթըրսի ճառն ավարտված, դիրեկտորը նրանց ներկայացրեց բոլորին: Պարզվեց, որ միջին տարիքի անծանոթը մի շատ պատկառելի մարդ է. ոչ ավելի, ոչ պակաս, օկրուգային դատավոր է. ամենամեծ բարձրատիճան անձնավորությունը, որին մինչ այդ տեսել էին երեխաները: Նրանք շատ էին ուզում իմանալ, թե ինչ նյութից է ստեղծված այդ մարդը: Մի կողմից ուզում էին, որ սա գոռար, մյուս կողմից վախենում էին, որ իսկապես կարող է գոռալ: Նա Կոստանդնուպոլսից¹ էր եկել, որը տասներկու մղոն հեռու էր. հետևաբար ճանապարհորդել էր և աշխարհ տեսել: Նույն այդ աշքերը նայել էին օկրուգային դատարանի շենքին, որը, ասում են, թիթեղե տանիք ունի: Տիրող լուսնունը և հարգալից նայող աշքերը ցույց էին տալիս, թե այդ մտքերը ինչ պատկառանք էին ներշնչել երեխաներին: Դա մեծ դատավոր Բեչըրն էր, փաստաբան Թեչըրի եղբայրը: Ջեֆ Թեչըր դարձրեցականը, անմիջապես առաջ անցավ այդ մեծ մարդու հետ ուցած իր ծանոթությունը ցույց տալու և աշակերտների նախանձը շարժելու համար: Եթե նա կարողանար լսել իր ետևից բարձրացող փսփսուքը, այդ նրան քաղցրը երաժշտություն կթվար:

— Մի նրան նայիր, Ջիմ, նա այնտեղ է գնում: Տե՛ս, գրնում է նրանց ձեռքը սեղմելու: Սեղմում է նրանց ձեռքը: Աստված իմ: Չէի՞ր ուզենա Ջեֆի փոխարեն լինել:

Միստր Ուոլթըրսն էլ իր հերթին «գործի» անցավ. պաշտոնական ձևով հրամաններ տվեց, կարծիքներ հայտնեց, սրան-նրան և բոլորին, հարմար առիթով կամ անառիթ, ուղ-

¹ Տե՛ս 9-րդ էջի ծանոթագրությունը:

զուխուն ցույց տվեց: Գրադարանավարը նույնպես «իրեն ցույց էր տալիս»՝ գրքերը ձեռքին այստեղ-այնտեղ վազելով, անընդհատ շատախոսելով և աղմկելով, մի բան, որ սիրում են անել փոքր հեղինակությունները: Երիտասարդ ուսուցչուհիները «իրենց ցույց էին տալիս»՝ քնքշորեն խոնարհվելով գուպի այն շար աշակերտները, որոնց այդ դեպքերում հանգիմանում էին, մատ թափ տալիս, սպառնում, իսկ բարիների ուսերը ձեռքով թփթփացնում: Երիտասարդ ուսուցիչները «իրենց ցույց էին տալիս» փոքր հանդիմանություններ անելով և ամեն կերպ հեղինակություն ցուցադրելով, իբր թե կարգուկանոնին են հետևում: Հետո ուսուցիչների մեծամասնությունը զբաղվեց ամբիոնի մոտի գրապահարանով և այդ նույն բանը կրկնվեց մի բանի անգամ (անշուշտ շատ սրտնեղությամբ): Փոքրիկ աղջիկներն «իրենց ցույց տվին» բազմաթիվ ձևերով, իսկ փոքրիկ տղաներն «իրենց ցույց տվին» ժրջանություններ, որից ոչ ոք լցվեց թղթերով, փսփսոցով ու հրմըշտությամբ: Եվ այդ բոլորի վերևում բազմել էր մեծ մարդը, ուսուցիչը դասի ղեկավար ճառագայթում էր դատավորական ժրջանում: Նա տաքանում էր իր իսկ մեծության արևով: Նա ևս տոբեն ցույց էր տալիս»: Մնում էր մի բան, որպեսզի միտոր համարի ցնծությունը դառնար կատարյալ, իսկ դա մրցաշարի վեցերորդի հանձնումը և հրաշքի ցուցադրումն էր: Երկու թիվ երեխաներ մի բանի դեղին տոմսեր ունեին, բայց ոչ մեկի մոտ այնքան չկար, ինչքան հարկավոր էր: Միտոր համարի արդեն բնեկ էր առչկում նստած մի բանի տեղաշարժերի: Նա ամբողջ աշխարհը կտար, միայն թե անհանաքի այն տղան վերագտներ իր բանականության անհանաքականությունը:

Եվ այն, ճիշտ այդ պահին, երբ հույսը մեռնում էր, ասում էր թո՛ւմ Սոյերը՝ ձեռքին մի դեղին, ինը կարմիր և ասում էր ինչպես տոմս, ու մի Ավետարան պահանջեց: Անամպտությունը այնպիսի որոտ էր դա: Ուղիքըսը թոմից այդպիսի տոմս էր սպասում գոնե առաջիկա տարվա ընթացքում: Երբ տեղաբեր էր անել այդտեղ էին վավերական տոմսերը և փոխադրվեցին էին: Թոմին կանչեցին վերև, նստեցրին և ասում էր ինչպես ընտրյալներին հավասար մի տեղ, մեծ անհավասար գաղափարներ հայտարարվեց: Դա վերջին տասը

տարվա ամենամեծ անակնկալն էր: Եվ այնքան խորն էր զարմանքը, որ նոր հերոսին բարձրացրեց, հասցրեց դատավորի աստիճանին, և կիրականօրյա դպրոցն այդ պահին մեկի փոխարեն տեսնում էր երկու հրաշք: Բոլոր տղաները նախանձից իրենց ուտում էին. բայց ամենից շատ տառապողները նրանք էին, ովքեր ուշ գլխի ընկան, որ Թոմն իրենց օգնությամբ, տոմսերի առևտուր անելով, հասավ այդ փառքին: Իրենք իրենց աչքում արհամարհելի էին, բանի որ հեշտությամբ դարձել էին խաբեության ղոհեր, գայթակղիչ օձի ղոհեր:

Գիրեկտորը մրցանակը Թոմին հանձնեց այնպիսի հանդիսավորությամբ, որ միայն այսպիսի առիթին էր արժանի, բայց այդ բոլորին պակասում էր ճշմարիտ ներշնչանքը, որովհետև խեղճ մարդու բնազդը նրան ասում էր, որ այստեղ կա մի գաղտնիք, որ հետո գուցե լույս աշխարհ գա: Պարզապես անբնական էր, որ այս տղան իր ուժերով յուրացրած լիներ Սուրբ գրքի երկու հազար տող իմաստությունը, երբ տասներկուսն էլ նրան ուժասպառ կաներ, անկասկած: Էմի Լոուրենսը հպարտ էր, ուրախ և աշխատում էր, որ Թոմը տեսնի իրեն, բայց Թոմը չէր նայում: Աղջիկը զարմացավ. նախ մի փոքր մտահոգվեց, հետո սիրտը մի փոքր կասկած մտավ ու անցավ, հետո նորից: Աղջիկն սկսեց շուրջը նայել: Մի թոուցիկ հայացք նրան շատ բան ասաց, նրա սիրտը կոտրվեց և նա խանդեց, բարկացավ, արցունքներ երևացին աչքերում, և ատեց բոլորին, բոլորից շատ՝ Թոմին:

Թոմին ներկայացրին դատավորին. բայց տղայի լեզուն կապ էր ընկել, շունչը կտրվում էր, սիրտը գողում էր, մասամբ այդ մարդու սարսափելի վեհությունից, բայց գլխավորապես այն պատճառով, որ դա նրա հայրն էր: Եթե մութ լիներ, տղան ծունկի կգար և կերկրպագեր այդ մարդուն: Դատավորը ձեռքը դրեց Թոմի գլխին և նրան անվանեց հրաշալի փոքր մարդ ու հարցրեց անունը: Սա կակազեց, հառաչեց և ի վերջո ասաց.

— Թոմ:

— Է՛, չէ՛, Թոմ չէ՛, այլ...

— Թոմաս...

— Ահա, ճիշտ է: Դա շատ ճիշտ է, բայց ես կարծում եմ, որ մի ուրիշ անուն էլ կա, որը դու պիտի ասես, չէ՞:

— Ջենտլմենին ասա քո լրիվ անուն-ազգանունը, Թոմաս: — միջամտեց Ուոլթերսը, — և խոսելիս «սըբ» ասա. մի փոքր քաղաքավարության ձևերը:

— Թոմաս Սոյեր... սըբ:

— Ճիշտ այդպես, ապրես: Հրաշալի տղա է, հրաշալի սուրբ մարդ: Երկու հազար տողը շատ-շատ է, շատ-շատ: Ի՛նչ երբեք մի զղշա այն հոգնության համար, որ կրեցիր գրածը սովորելիս: Գիտությունն ավելին արժե, քան աշխարհում եղած որևէ այլ բան: Դրա շնորհիվ են մարդիկ դառնում մեծ և լավ: Մի օր դու էլ մեծ մարդ կդառնաս, Թոմաս, և այդ բանակալ ետ կնայես քո անցած ուղուն ու կասես. «Այս բոլոր համար պարտական եմ մանկությանս ժամանակ հաճախած Վերակնօրյա դպրոցին, այս բոլորի համար պարտական եմ իմ սիրելի ուսուցիչներին, որոնք ինձ սովորեցրին, այս բոլոր համար պարտական եմ իմ բարի դիրեկտորին, որը քաղաքացի էր և հսկեց ինձ, տվեց ինձ մի գեղեցիկ Աստվածաշունչ: Մի հրաշալի, սիրուն Աստվածաշունչ, որպեսզի միշտ գրեմ և մոտս ունենամ, այդ բոլորի համար պարտական եմ լավ դաստիարակության»: Ահա թե ինչ կասես դու, Թոմաս, և ոչ մի գումարի հետ չես փոխի այդ երկու հազար սուրբը, ոչ, իսկապես չես փոխի: Իսկ այժմ բարի եղբայր եմ և այս լեղիին ասել քո սովորածներից մի քանիսը ես փորձեմ, որ կասես, որովհետև մենք հպարտանում ենք լավ սովորող երեխաներով: Անշուշտ, դու գիտես Հիսուսի սուրբ աշակերտների անունները: Առաջին երկուսի անունները մեծ սուրբ:

Թոմասը կարծում էր կոճակներից մեկը և նայում ոչխարի պես: Ես կարգից և աչքերը խոնարհեց: Միստր Ուոլթերսի սիրտը կար էկազի: Նա հավատացած էր, որ այդ տղան չէր պարտավորված ինչ-ինչ ամենապարզ հարցերին: Ի՞նչ փշեց դաստիարակության: Բայց միստր Ուոլթերսն ստիպված էր միջամտել:

— Աստիճաբար շենտլմենին, Թոմաս, մի վախեցիր: Թոմասը շատե՛ս կու՛մ էր լռել:

— Ես դիտեմ, որ ինձ կասի,— ասաց լեդին:— Առաջին երկու առաքյալների անուններն էին.

— Դավիթ և Գողիաթ¹:

Այդ տեսարանի շարունակության վրա իջեցնենք բարեսրտության վարագույրը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մոտ ժամը տասն անց կեսն էր, երբ Ղողանջեց փոքր եկեղեցու ճաքած զանգը, և ժողովուրդն սկսեց հավաքվել առավոտյան քարոզը լսելու: Կիրակնօրյա դպրոցի աշակերտները ցրվեցին աղոթարանում և իրենց ծնողների հետ տեղ գրավեցին նստարանների վրա, որպեսզի հսկողության տակ լինեն: Եկավ մորաքույր Պոլին: Թոմը, Սիդը և Մերին նստեցին նրա հետ: Թոմին տեղավորեցին եկեղեցու դասի կողմը, որպեսզի, ինչքան հնարավոր է, հեռու լինի բաց լուսամուտից և ամառային զայթակղիչ տեսարաններից: Եկեղեցին լցվեց բազմությամբ: Եկան ծեր, աղքատ փոստապետը, որ անցյալում լավ օրեր էր տեսել. քաղաքագլուխը և իր կինը, քանի որ քաղաքն ուրիշ անօգուտ բաների կողքին քաղաքագլուխ էլ ուներ. հաշտարար դատավորը, այրի տիկին Դուգլասը՝ քառասուն տարեկան մի բարի, գեղեցիկ, առատաձեռն ու հարուստ կին: Բլրի վրա գտնվող նրա տունը քաղաքի միակ հյուրընկալ պալատն էր, ուր կաղմակերպվում էին պարահանդեսներ, որոնցով Սանկտ-Պետերբուրգը կարող էր հպարտանալ: Եկան հարգարժան մայրը Ուորդը և իր տիկինը, փաստաբան Ռիվերսոնը՝ հեռվից ժամանած մի կարևոր մարդ. տեղական գեղեցկուհին, որին հետևում էին բատիստ հագած և ժապավեններով զարդարված գեղեցիկ դեռատի աղջիկներ. քաղաքի գրասենյակային երիտասարդ աշխատողներ, որոնք մինչ այդ միջանցքում կանգնած իրենց ձեռնափայտերն էին ծծում: Յուզած ու փայլեցված

¹ Իրականում, ըստ Ավետարանի, Դավիթը հովիվ էր, որ սպանեց հսկա Գողիաթին: Քրիստոսի առաջին աշակերտներն, ըստ Ավետարանի, եղիլ են Պետրոսն ու Անդրեասը:

այդ բերանբացներն սպասեցին, մինչև անցավ վերջին աղ-
ջիկը: Բոլորից հետո եկավ օրինակելի Լրեխան: Ուրիշ Ման-
ֆերսոնը, որն այնպիսի հոգածությամբ էր պահպանում
մորը, որ կարծես նա ապակուց լիներ: Այդ տղան միշտ մորն
ուղեկցում էր եկեղեցի, և մյուս մայրերը նրանով հիանում
էին: Բոլոր տղաները նրան ասում էին, որովհետև շատ բարի
էր, և մայրերը նրան միշտ օրինակ էին բերում: Նրա սպիտակ
թաշկինակը կարծես պատահաբար կախված էր հետևի զըր-
պանից, ինչպես լինում էր կիրակի օրերին: Թոմը թաշկի-
նակ շուներ և թաշկինակ ունեցող տղաներին համարում էր
պճնամուր:

Երբ արդեն բոլորը հավաքված էին, զանգը մի անգամ էլ
հնչեց, շտապեցնելով դանդաղաշարժներին ու վարանողնե-
րին. և հետո ամբողջ եկեղեցու վրա իջավ մի հանդիսավոր
լուսթյուն, որը խզվում էր միայն երգչախմբի անդամների
զուսպ ծիծաղից: Երգչախումբն ամբողջ արարողության ժա-
ժանակ շարունակ զուսպ ծիծաղում էր: Մի ժամանակ եկե-
ղեցուան մի երգչախումբ կար, որ վատ չէր դաստիարակ-
ված, բայց այժմ մոռացել եմ, թե որտեղ էր: Շատ տարիներ
ուշ էր, և ես հազիվ թե որևէ բան հիշեմ դրա մասին: Բայց
կարծեմ եմ մի ինչ-որ օտար երկրում էր:

Քարտեզին սկսեց օրհնեղությունը և կարգաց ըմբռնանե-
լով աչք. որ շատ հարգի էր երկրի այդ մասում: Նրա ձայնը
ձեռք միջին նոտաներով և աստիճանաբար բարձրացավ այն-
գե, որ հատուկ շեշտ էր դնում ամենավերջին բառերին,
ձեռք իջավ, կարծես ներքև էր ցատկում: «Մի՞թե պիտի
երևենք հառնեմ, հանգիստ առնեմ ծաղկանց զրկում, երբ
պարտեմ մաքառելով՝ ծով արյան մեջ են նավարկում»:

Քարտեզը համարվում էր հրաշալի ճարտասան: Նրան
գլխադրում էին եկեղեցու զրական հավաքություններում
բանասերություններ կարդալու: Երբ ավարտում էր, լեզու-
նեք բանասերներն էին իրենց ձեռքերը, անօգնական զցում
մեղմելով և աչքերը հառում վեր ու գլուխները օրորում, կար-
ծեմ եմ չհիշեմ թե ինչ: «Բառերը չեն կարող արտահայտել այն,
թե ինչ էր նա, զա շատ է գեղեցիկ, շատ գեղեցիկ՝ այս ան-
գլխով աչքով համար»:

Քարտեզը հետո գերապատվելի միստր Սպրեզը

շրջվեց դեպի հայտարարութիւնների տախտակը և կարդաց հավաքութեան, ընկերական հանդիպումների և ուրիշ «ծանուցումների» ցուցակներ. նա այնքան մնաց, կարծես այդ ցուցակների ընթերցումը պիտի շարունակվեր մինչև հարության ժամը: Տարօրինակ մի սովորութիւն, որը դեռևս շարունակվում է Ամերիկայում, նույնիսկ քաղաքներում, թերթերի առատութեան այս դարում: Հաճախ շատ քիչ բանով կարող ես արդարացնել մի սովորութիւն, մինչդեռ ավելի դժվար է դրանից ազատագրվել:

Իսկ այժմ քարոզիչն աղոթում էր: Դա մի լավ, մեծահոգի աղոթք էր, որը մանրամասների մեջ էր մտնում. գութ էր հայցում եկեղեցու և եկեղեցու փոքր երեխաների համար, ավանի մյուս եկեղեցիների, նահանգի, նահանգի պաշտօնյաների, Միացյալ Նահանգների, Միացյալ Նահանգների եկեղեցիների, կոնգրեսի¹, պրեզիդենտի համար, կառավարութեան անդամների համար, խեղճ ծովայինների համար, որոնք լողում են փոթորկոտ ծովերում, միլիոնավոր ճնշվածների համար, որոնք տառապում են եվրոպական միապետների և արևելյան բռնակալների կրնկի տակ. նրանց համար, ովքեր Ավետարանի լույսն ունեն, բայց չունեն աչքեր, որ տեսնեն, չունեն ականջներ, որ լսեն. հեռավոր կղզիների անհավատների համար: Նա աղոթքն ավարտեց աղերսելով, որ իր արտասանած խոսքերը հանդիպեն շնորհի ու ըմբռնման, լինեն բերրի հողի մեջ ընկած սերմեր և ժամանակին լավ բերք տան: Ամեն:

Նա, հագուստները խշխշացնելով, նստեց: Ոտքի կանգնած ժողովականները նույնպես նստեցին: Այն տղային, որի պատմութեանն է նվիրված այս գիրքը, աղոթքը դուր չէր գալիս. նա պարզապես դիմանում էր: Անգիտակցաբար մտքում կրկնում էր աղոթքի բոլոր մանրամասնութիւնները: Չէր լրսում, բայց գիտեր այդ եկեղեցականի սովորական ու հին ճանապարհը, և երբ ինչ-որ փոքր շահով նոր հարց էր մըտնում դրա մեջ, տղան ականջները սրում էր և ամբողջ էութեամբ զայրանում. հավելումները նա անարժան և երկրորդական էր համարում: Աղոթքի կեսին մի ճանճ նստել էր նրա

¹ Ամերիկայի պառլամենտը:

առջևի նստարանի թիկնակին: Ճանճը տանջում էր տղային. փոքրիկ տոտիկները հանգիստ իրար քսելով՝ ճանճը գրկում էր զլուխը և այնպես եռանդով մաքրում այն, որ կարծես մաքմանից անջատված լիներ: Երևում էր վզի բարալիկ թևը: Ծեփ ոտիկներով մաքրում, հարթում էր թևերը, ինչպես ջրակի փեշերը, որպեսզի վրան ավելի լավ նստեն: Ամբողջ աչք հարդարանքը նա կատարում էր առանց շտապելու, Լեփգոս, կարծես գիտեր, որ լրիվ ապահով վիճակում է: Թեև Թոմի ձեռքերը ճանճ բռնելու համար քոր էին գալիս, նա չէր համարձակվում. հավատում էր, որ իր հոգին անմիջապես կկործանվի, եթե այդպիսի բան աներ աղոթքի ընթացքում: Բայց եզրափակիչ նախադասության հետ Թոմի ձեռք ինքնաբերաբար առաջ գնաց. և այն պահին, երբ «աճե՛ս»-ը լավեց, ճանճն արդեն ռազմագերի էր: Մորաքույրը տեսավ այդ արարքը և ստիպեց, որ ճանճը բաց թողնի:

Փոքրզիչը կարդաց Ավետարանից մի կտոր և միօրինակ ձայնով սկսեց քարոզը: Դա այն աստիճան ձանձրալի էր, որ բազմաթիվ զլուխներ դանդաղ սկսեցին իջնել ու ննջել, թեև քոքրզիչը մեղավորներին սպառնում էր անշեջ կրակով և ծեփի կարասով, իսկ ընտրյալների թիվը, ում նա խոստանում էր հավիտենական երանություն, այնքան փոքրացավ, որ Լեփգի թե արժեր փրկել: Թոմը հաշվում էր քարոզի էջերը Եփեզացուց դուրս գալուց հետո նա միշտ գիտեր, թե քանի է քնթերցվել, բայց ուրիշ բան չէր իմանում քարոզի մասին: Այնուամենայնիվ, մի փոքր ժամանակ նա իսկապես շտապարկած էր: Քարոզիչը մեծ ու հուզիչ պատկերով նկատարեց. թե ինչպես երկրում աստծո թագավորությունն է լինելը. աչք ազգերը հավաքվելու են, թե ինչպես առյուծն ու զլուխը պիտի միասին ապրեն, և մի փոքրիկ երեխա պիտի առաջնորդի նրանց: Բայց այդ պատկերի ամբողջ վերամտածությունը, բարոյախոսությունը կորած էին տղայի համար. նա չէր յան մտածում էր բոլոր ազգերի աչքի առաջ հանդիսակալ լինելու դերակատարի մասին: Նրա դեմքը փայլում էր աչք չաչից. այնպես կուզենար, որ ինքը լիներ այդ առաջինը. թե՛ քրեկ, առյուծն ընտանի լիներ:

Թոմը ամենաձեռքները վերսկսվեցին, երբ շոր քարոզն առաջնորդեց. էջից նա հիշեց իր ունեցած գանձը և դուրս

հանեց: Դա մի խոշոր սև բզեզ էր, ուժեղ ծնոտներով մի «կծան», ինչպես անվանում էր նա: Բզեզը թանկագին տուփի մեջ էր: Առաջին գործը, որ բզեզն արեց, տղայի մատը կծելն էր: Բնական է, որ տղան բզեզը մեջքի վրա գետնին շարտեց և կծած մատը բերանը տարավ: Բզեզն ընկած տեղում հուսահատ թափահարում էր ոտքերը, բայց ուղղվել չէր կարողանում: Թոմը նայում էր և ուզում էր վերցնել, բայց ձեռքը չէր հասնում: Քարոզով շհետաքրքրվողները փրկություն գտան բզեզի մեջ և նայում էին նրան: Այդ ժամանակ ամառվա թուլացնող շոգից ծուլացած ու տխուր, գերությունից տանջված, փոփոխություն փնտրող մի թափառական շուն եկեղեցի մտավ: Նա տեսավ բզեզը, նրա կախ ընկած պոչը բարձրացավ ու ձգվեց: Նա նայեց բզեզին, շուրջը պտավեց, ապահով հեռավորությունից հոտոտեց, նորից շուրջը պտրտվեց, ավելի համարձակ դարձավ և ավելի մոտիկից հոտոտեց, ապա բացեց բերանը և փորձեց բռնել. վրիպեց, մի անգամ էլ փորձեց, մի անգամ էլ. և սկսեց հաճույք զգալ այդ փոփոխությունից: Շունը փորի վրա պառկեց, բզեզը քաշեց թաթերի արանքը և շարունակեց իր փորձերը: Ի վերջո նա ձանձրացավ, դարձավ անտարբեր և անուշադիր: Նրա գլուխը ծանրացավ, կզակը դանդաղ ցած իջավ և կպավ թըշնամուն, որը և կծեց նրան: Մի կարճ կաղկանձ լսվեց, գլխի հարվածից բզեզը մի քանի յարդ հեռու թռավ և նորից ընկավ մեջքի վրա: Մոտիկ եղածները շտկվեցին ներքին հաճույքով, բազմաթիվ դեմքեր հովհարների ու թաշկինակների ետև պահվեցին, և Թոմը լիովին երջանիկ էր: Շունը շատ հիմար տեսք ուներ և, հավանաբար, այդպիսին էլ էր, բայց վիրավորանք կար նրա սրտում և վրեժ լուծելու ծարավ: Նա դնաց ղեպի բզեզը և ղգուշությամբ վերսկսեց հարձակումը: Բոլոր կողմերից ցատկելով բզեզի վրա, առջևի թաթերը մի մատնաչափ մոտեցնում էր, մոտիկից ատամներով հարձակվում և գլուխն այնպես թափահարում, որ ականջները շարժվում էին: Որոշ ժամանակ հետո նորից ձանձրացավ. փորձեց գլխածանալ մի ճանճով, բայց դա գրավիչ չէր. քիթը գետնին կպցրած հետևեց մի մրջյունի, շուտով հոգնեց դրանից, հորանջեց, հոգոց հանեց, ամբողջովին մոռացավ բզեզը և նստեց վրան: Հետո մի վայրի կաղկանձյուն լսվեց, և շունն

սկսեց դես-դեն ընկնել: Կաղկանձյունը շարունակվեց: Շունն անցավ բեմի առջևով, դռան մոտով, նորից վերադարձավ: Ցավն այդ շարժումներից ավելանում էր: Նա սկսեց լույսի արագությամբ իր շուրջը պտտվել: Ի վերջո, գլուխը կորցրած տառապյալը թռավ տիրոջ ծնկներին: Տերը նրան լուսամուտից դուրս նետեց, և կաղկանձյունը մեղմացավ ու մարեց հեռվում:

Մինչ այդ, եկեղեցում եղածների դեմքերը կարմրել էին, նրանք զսպված ծիծաղից խեղդվում էին, և քարոզը դադարել էր: Այժմ քարոզն ամփոփվում էր, բայց կաղում էր և ընդհատվում, որովհետև տպավորություն գործելու բոլոր հնարավորություններն սպառվել էին: Ունկնդիրները, նստարանների թիկունքում թաքնված, քարոզչի ամենաազդու խոսքերին արձագանքում էին խուլ ծիծաղով, կարծես ծիծաղելի բան էր ասում: Ամբողջ համայնքի համար մեծ թեթևություն էր, երբ արարողությունն ավարտվեց և արտասանվեց օրհնությունը:

Թոմ Սոյերը տուն գնաց ուրախ, մտածելով, թե ժամերգությունն էլ երբեմն կարող է որոշ գոհունակություն պատճառել, երբ դրա մեջ մի փոքր փոփոխություն է մտնում: Միայն մի բան էր մթազնում տղայի ուրախությունը: Նա ուզում էր, որ շունը խաղար իր բզեզի հետ, բայց բզեզը դուրս տանելու ոչ մի իրավունք չուներ:

ԳԼՈՒՍ ՎԵՑԵՐՈՐԴ

Նրկուշաբթի առավոտյան Թոմն իրեն շատ դժբախտ ըզգաց. նա միշտ իրեն այդ օրը դժբախտ էր զգում, որովհետև այդ օրով էին սկսվում նոր շաբաթվա տանջանքները դպրոցում: Նա այդ օրը ցանկանում էր, որ ընդհանրապես կիրակի չլիներ. գերության մեջ լինելը դրանով ավելի ատելի էր դառնում:

Թոմը պառկած մտածում էր: Հանկարծ ցանկացավ հիվանդ լինել. այդպիսով կարող էր դպրոց չգնալ և տանը մնալ: Ինչ-որ անորոշ հնարավորություն կար, նա ինքն իրեն ստուգեց, Ոչ մի տեղը չէր ցավում: Նորից ստու-

«Խաղողը խակ է»: Տղան հեռացավ փառքից զրկված հերոսի նման:

Շուտով Թոմը հանդիպեց գյուղի շրջմուլիկ Հեքլբերի Քիննին, հարբեցողի տղային: Բոլոր մայրերն ամբողջ հոգով ատում էին Հեքլբերիին և միաժամանակ վախենում, որովհետև նա ծուլ, սանձարձակ, դոեհիկ ու վատ տղա էր, մինչդեռ բոլոր երեխաները համակրում էին նրան, սիրում նրա արգելված ընկերությունը, ցանկանում նմանվել նրան: Թոմը մյուս հարգարժան ընտանիքի տղաների նման նախանձում էր Հեքլբերիի ազատ վիճակին: Նրան ևս խստորեն պատվիրել էին չխաղալ այդ տղայի հետ: Հենց դրա համար էլ Թոմը խաղում էր նրա հետ ամեն անգամ, երբ առիթ էր ունենում: Հեքլբերին միշտ հազնում էր տարեց մարդկանց հնացած հագուստները, որոնք սովորաբար լինում էին պատառոտված և ծածկված տարբեր գույնի բծերով: Նրա զրլ-խարկը մեծ ու ճմրթված էր, որի ծայրից պոկվել, կախ էր ընկել մի մեծ կտոր: Բաճկոնը, եթե բաճկոն հազնում էր, համարյա կախվում էր մինչև կրունկները, իսկ Լուկի կոճակները տեղավորված էին լինում մեջքից ցած: Միայն մի ուսակապ էր պահում շալվարը, որի նստատեղը նույնպես կախ էր ընկնում: Շալվարի ծոպավոր ծայրերը քարշ էին գալիս ցեխի մեջ, եթե դեպի վեր շէին ծալվում:

Հեքլբերին թափառում էր ինչպես խելքին փշեր: Լավ եղանակներին քնում էր դոնների առաջ, իսկ ցուրտ օրերին՝ դատարկ տակառներում: Նա ստիպված չէր դպրոց կամ եկեղեցի գնալ, չունեի տեղ ու տնօրեն և ոչ ոքի չէր հնազանդվում: Նա կարող էր ձուկ որսալու գնալ կամ լողալ երբ և որտեղ ուզենար, մնալ այնտեղ, ինչքան ուզենար: Ոչ ոք չէր արգելում նրան կովել: Նա կարող էր ուշանալ ինչքան ուզենար: Նա միշտ առաջին տղան էր, որ գարնանը բոբիկ էր ման գալիս և վերջինը աշնանը կոշիկ հագնում: Նա երբեք պարտավոր չէր լվացվել կամ մաքուր հագուստ հագնել: Կարող էր հրաշալի հայհոյել: Մի խոսքով՝ ամեն ինչ, որ կյանքը թանկադիրն է դարձնում, այդ տղան ուներ: Այդպես էր մտածում Սանկտ-Պետերբուրգի յուրաքանչյուր հարգարժան ընտանիքի պատկանող լավ դաստիարակված տղա: Թոմը ողջունեց ռոմանտիկ թափառաշրջիկին:

գեց: Այս անգամ թվաց, թե փորացավի նշաններ կան, և նա դրանց հետ որոշակի հույս կապեց: Բայց շուտով այդ նշանները թուլացան և հետզհետե ամբողջովին անհետացան: Թոմը նորից սկսեց մտածել: Հանկարծ մի նոր բան հայտնաբերեց: Վերևի ատամներից մեկը շարժվում էր: Դա արգեն մեծ բախտ էր: Որպես սկիզբ նա ուզում էր տնքալ, երբ մըտածեց, որ եթե սկսի այդ պատճառաբանությամբ, մորաքույրն ատամը կքաշի և դա ցավ կպատճառի: Նա որոշեց ատամի ցավը պահել հետագայի համար և ուրիշ պատերժվակ փնտրել: Որոշ ժամանակ ոչ մի բան չգտավ, հետո հիշեց բժշկի պատմած մի հիվանդության մասին, որ մեկին՝ մի քանի շաբաթով անկողին էր գցել՝ միաժամանակ սպառնալով մատի կորստով: Նա վերմակի տակից հանեց ոտքը, ըսկըսեց ուսումնասիրել վիրավոր մատը: Բայց այդ հիվանդության նշանները չգիտեր: Այնուամենայնիվ, արժեք փորձել, և նա սկսեց եռանդով տնքալ:

Իսկ Սիդը շարունակում էր անտեղյակ մնալ ու քնել:

Թոմը ավելի բարձր տնքաց և նրան թվաց, որ մատն իրոք ցավում է:

Ոչ մի արձագանք Սիդի կողմից:

Մինչ այդ Թոմի շունչը կտրվեց: Նա մի փոքր հանգստացավ, ուժ հավաքեց ու տնքոցների հիանալի մի շարք արձակեց:

Սիդը շարունակում էր խռմփալ:

Թոմի համբերությունն սպառվեց: Նա կանչեց. «Սի՛դ, Սի՛դ» և եղբորը շարժեց: Դա ազդեց, և Թոմն սկսեց դարձյալ տնքալ: Սիդը հառաչեց, ձգվեց, հենվեց արմունկին և Թոմին նայեց: Թոմը շարունակում էր տնքալ: Սիդը կանչեց նրան.

— Թո՛մ, լսի՛ր, Թո՛մ:

Պատասխան չկար:

— Լսի՛ր, Թո՛մ, Ի՞նչ է պատահել, Թո՛մ:— Նա շարժեց եղբորը, մտահոգ նայելով դեմքին:

Թոմը հառաչեց.

— Թո՛ղ, Սի՛դ, հանգիստ թող ինձ:

— Ի՞նչ է պատահել, Թոմ, զնա՛մ մորաքրորը կանչեմ:

— Ո՛չ, հարկավոր չէ. գուցե կամաց-կամաց անցնի: Ոչ ոքի մի կանչիր:

— Բայց ես պարտավոր եմ: Այդպես մի՛ տնքա: Թո՛մ, սարսափելի է: Ինչքա՞ն ժամանակ է, որ դու այդ վիճակում ես:

— Ժամե՛ր, ա՛խ, օ՛ֆ, ինձ ձեռք մի տուր, Սիդ, սպանում ես:

— Թո՛մ, ինչո՞ւ ինձ ավելի շուտ շարթնացրիր: Օ՛հ, Թո՛մ, մի արա, մարմինս փշաքաղվում է: Թո՛մ, ի՞նչ է պատահել:

— Ես քեզ ամեն ինչ ներում եմ, Սիդ: (Տնքոց): Ամեն ինչ, որ արել ես ինձ: Ես էլ շեմ լինի...

— Վա՛յ, Թո՛մ, մի՛թե մեռնում ես. Թո՛մ. մի՛ մեռիր, վա՛յ, մի՛ մեռիր: Գուցե...

— Ես բոլորին ներում եմ, Սիդ: (Տնքոց): Նրանց ասա, Սիդ: Հետո, Սիդ, իմ լուսամուտի շրջանակը և միաչքանի կատուն տուր այն աղչկան, որը նոր է քաղաք եկել: Ասա նրբան...

Բայց Սիդը իր հագուստները վերցրել ու գնացել էր: Այժմ Թոմն իսկապես տառապում էր. այնպես լավ էր նրա երևակայությունը աշխատում: և այնքան բնական էին նրա տնքոցները:

Սիդը սանդուղքներից ցած թռավ և ասաց.

— Մորաքույր, արի, Թոմը մեռնում է:

— Մեռնո՞ւմ է:

— Այո, մի՛ կանգնիր, շտապիր:

— Հիմարություն է, շեմ հավատում:

Բայց և այնպես նա վազեց վերև, Սիդն ու Մերին՝ նրա հետևից: Պառավի դեմքը սպիտակել էր, շրթները դողում էին: Երբ հասավ մահճակալին, նա հագիվ կարողացավ արտասանել.

— Թո՛մ, Թո՛մ, ի՞նչ է պատահել քեզ:

— Օ՛հ, մորաքույր, ես...

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, տղաս:

— Օ՛հ, մորաքույր, իմ վիրավոր մատը թունավորված է:

Պառավ լեղին ընկավ աթոռին և ծիծաղեց, հետո լաց եղավ, հետո՝ երկուսը միաժամանակ: Այդ հանգստացրեց նրբուն, և նա ասաց.

— Թո՛՛մ, ի՞նչ խաղ խաղացիր գլխիս: Դե՛, վերջ տուր այդ հիմարութեանը, վերջացրու:

Տնքոցները դադարեցին, և ցավը մատից չբացավ: Տղան փոքր-ինչ ամաչեց և ասաց.

— Մորաքույր Պոլի, ինձ թվաց, թե թունավորվել է և այնպես ցավում էր, որ ատամիս ցավը բուրրովին մոռացա:

— Ատա՛մդ: Ի՞նչ է պատահել ատամիդ:

— Մեկը շարժվում է և սարսափելի ցավում:

— Դե՛, դե՛, հերիք է, այդ տնքոցը նորից մի՛ սկսի: Ինչ-րանք բաց: Այո, ատամդ իրոք շարժվում է, բայց դրանից չես մահանա: Մերի, մետաքսե թելը և մի խանձող բեր խոհանոցից:

Թո՛մն ասաց.

— Խնդրում եմ, մորաքույր, մի բաշիր, այլևս չի ցավում: Եթե նույնիսկ ցավի, էլ չեմ տնքա: Խնդրում եմ, մորաքույր, չեմ ուզում տանը նստել և դպրոցից բացակայել:

— Ուրեմն այդպես, հա՛: Ուրեմն ամբողջ այս աղմուկը նրա համար էր, որ դպրոց չգնայիր և ձո՛ւկ որսայիր: Թո՛՛մ, Թո՛՛մ, ես քեզ շատ եմ սիրում, իսկ դու ամեն կերպ քո շարություններով աշխատում ես իմ ծերացած սիրտը կոտրել:

Մինչ այդ ատամ քաշելու գործիքները պատրաստ էին: Մեր լեղին մետաքսե թելի մի ծայրը օղակ արեց ու պինդ անցկացրեց Թո՛մի ատամին, իսկ մյուս ծայրը կապեց մահճակալի ոտքին: Հետո վերցրեց խանձողը և համարյա կպցրեց տղայի դեմքին: Եվ ահա ատամը կախված է մահճակալի ոտքից:

Բայց բոլոր փորձությունները իրենց վարձատրությունն ունեն: Երբ Թո՛մը նախաճաշից հետո դպրոց գնաց, բոլոր տղաներն սկսեցին նախանձել, որովհետև վերևի ատամնաշարի մեջ գոյացած բացը նրան հնարավորություն էր տալիս մի նոր ու հիանալի ձևով թքել: Նա իր շուրջը հավաքեց բազմաթիվ տղաների, որոնց հետաքրքրում էր այդ երևույթը: Մի տղա, որ մատը կտրել էր ու մինչ այդ ընդհանուր ուշադրութեան և հարգանքի կենտրոնում էր գտնվում, հանկարծ իրեն զգաց համակրանքից ու փառքից զրկված: Նա շատ վշտացավ և արհամարհանքով ասաց, թե մեծ բան չէ Թո՛մ Սոյերի պես թքելը, բայց մի ուրիշ տղա պատասխանեց.

- Հելո՞, Հեթլբերի:
- Բարև քեզ, եթե ուզում ես:
- Այդ ի՞նչ է ձեռքիդ:
- Սատկած կատու:
- Մի տուր տեսնեմ, Հեթ: Տես, է՛, ի՞նչ սիրուն է: Որ-տեղի՞ց ես գտել:
- Մի տղայից գնել եմ:
- Ի՞նչ տվիր:
- Մի կապույտ տոմս և սպանդանոցում գտած մի եզան փուչիկ:
- Որտեղի՞ց ճարեցիր կապույտ տոմսը:
- Երկու շաքաթ առաջ Բեն Ռոջերսից գնեցի՝ շրջանակ քաշելու մի ձողով:
- Լսիր, ինչի՞ եմ պետք սատկած կատուները:
- Ինչի՞. գորտնուկը բուժում են:
- Հա՛: Ես ավելի լավ միջոց գիտեմ:
- Գրազ կգամ, որ չգիտես: Ի՞նչ միջոց:
- Հոտած ջուրը:
- Հոտած ջո՛ւրը: Հոտած ջուրը դատարկ բան է:
- Դատարկ բա՛ն, դատարկ բա՛ն: Փորձե՛լ ես:
- Ո՛չ, չեմ փորձել, բայց Բոբ Տանըրը փորձել է:
- Ո՛վ ասաց:
- Նա ինքն է ասել Ջեֆ Թեչըրին, իսկ Ջեֆն ասել է Ջոնի Բեքըրին, Ջոնին ասել է Ջիմ Հոլեսին, Ջիմն ասել է Բեն Ռոջերսին, Բենն ասել է մի նեգր տղայի, իսկ այդ նեգր տղան էլ ինձ է ասել: Հավատո՞ւմ ես այժմ:
- Է՛, հետո ինչ: Բոլորն էլ ստում են: Բոլորը, բացի նեգրից: Ես նրան չեմ ճանաչում, բայց չեմ տեսել մի նեգր, որ չստի: Դատարկ բան է: Այժմ ինձ ասա, թե ինչպես է արել Բոբ Տանըրը, Հեթ:
- Դե՛, մատը թաթախել է փշակում հավաքված անձրևա-ջրի մեջ:
- Ցերե՞կը:
- Անշուշտ:
- Դեմքը դեպի ժառի բո՞ւնը:
- Այո, հապա ինչպե՞ս:
- Որևէ բան ասե՞լ է:

— Չեմ կարծում, շփտեմ:

— Տեսա՞ր. էլ ինչպես կարող ես հոտած ջրով գորտնուկը բուժել այդքան սխալ ձևով: Դա ոչ մի օգուտ տալ չի կարող: Պետք է մենակ գնալ անտառ, գտնել մի տեղ, որտեղ անձրեկաջրով լցված փշակ կա և ճիշտ կեսդիշերին, մեջքդ փշակին, ձեռքդ պիտի թաթախես ջրի մեջ և ասես.

Ցորեն-գարի, ցորեն-գարի, ալյուր տուր:

Հոտած ջուր, հոտած ջուր, գորտնուկս առ:

Հետո փակ աչքերով արագ տասնմեկ քայլ պիտի հեռանաս, հետո երեք անգամ տեղումդ շուռ գաս և տուն գնաս առանց որևէ մեկի հետ խոսելու: Որովհետև, եթե խոսես, կախարդանքը կկորչի:

— Այո, երևում է, որ դա լավ ձև է, բայց Բոբ Տանըրի ասած ձևի նման չէ:

— Այո, գրադ կգամ, որ այդպես չի արել, քանի որ քաղաքի ամենաշատ գորտնուկ ունեցող տղան է: Եվ ոչ մի գորտնուկ չէր ունենա, եթե իմանար հոտած ջրով բուժվելու գաղտնիքը: Ես ձեռքիցս հազարավոր գորտնուկներ եմ հանել, Հեք: Ես այնքան շատ եմ գորտերի հետ խաղում, որ միշտ գորտնուկներ եմ ունենում: Երբեմն ես դրանք հանում եմ լոբով:

— Այո, լոբին լավ է. ես այդ արել եմ:

— Ճի՞շտ: Ինչպե՞ս:

— Վերցնում և լոբին բաժանում ես: Գորտնուկը կտրում ես այնքան, որ մի քիչ արյուն դուրս գա, հետո արյունը դնում ես լոբու մի կտորի վրա, հետո էլ, կեսգիշերին, նորած լուսնի լույսով փորում ես մի խաչմերուկ և լոբու կեսը թաղում: Մյուս կեսն այրում ես: Այն կտորը, որի վրա արյուն կա, կսկսի քաշել, քաշել, փորձելով գտնել մյուս կտորը և այսպես օգնում է, որ արյունը քաշի գորտնուկը: Շուտով գորտնուկը դուրս է գալիս:

— Այո, այդպես է, Հեք, այդպես է, բայց թաղելիս եթե ասես՝ դեռ լոբի, տար գորտնուկը, թող նա երբեք չգա ինձ մոտ, ավելի լավ կլինի: Այդպես է անում Ջո Հարպըրը, իսկ նա համարյա Կունվիլ է հասել կամ եղել համարյա ամեն տեղ: Բայց լսիր, սատկած կատվով ինչպե՞ս ես բուժում:

— Վերցնում ես քո կատուն և կեսգիշերից առաջ գնում գերեզմանատուն, երբ այնտեղ արդեն թաղված է որևէ մեծ հանցագործ: Կեսգիշերին կգա մի սատանա կամ երկուսը, կամ երեքը, բայց դու նրանց չես տեսնի. կարող ես լսել քամուներման մի ձայն կամ գուցե նրանց խոսելը, երբ այդ մարդուն տանելիս լինեն: Քո կատվին դրանց ետևից կուղարկես և կասես. սատանան հետևում է դիակին, կատուն հետևում է սատանային, գորտնուկը հետևում է կատվին, դուք այլևս ինձ պետք չեք: Դա կոչնչացնի որևէ գորտնուկ:

— Խելքի մոտ բան է: Երբևէ փորձե՞լ ես, Հեք:

— Ոչ, ինձ Հոակինս մայրիկն է պատմել:

— Ուրեմն՝ ճիշտ է, որովհետև ասում են, թե նա կախարդ է:

— Ասում են: Իսկ ես, թո՛ւմ, հաստատ գիտեմ, որ նա կախարդ է: Նա կախարդել է հորս: Հայրս ինքն է ասում: Մի անգամ տուն գալիս նա տեսել է, որ այդ կինն իրեն կախարդում է: Հայրս մի քար է վերցնում, և եթե տեղից չշարժվեր, նրան կխփեր: Եվ հենց այդ գիշեր, հայրս հարբած քնած է լինում ծածկի տակ, ընկնում ու ձեռքն է կոտրում:

— Դա սարսափելի է: Ինչպե՞ս է հայրդ իմացել, որ նա կախարդ է:

— Այ քեզ բան: Հայրս ասում է, որ դա հեշտ է: Նա ասում է, եթե քեզ նայում են չռած աչքերով: և եթե միաժամանակ փնթփնթում են, ուրեմն՝ կախարդում են: Եթե փրնթփրնթում են, նշանակում է՝ «Հայր մերը»՝ հակառակ կողմից են ասում:

— Կսիր, Հեք, ե՞րբ ես փորձելու կատուն:

— Այս գիշեր: Ես կարծում եմ, որ սատանաներն այս գիշեր ծեր Ուիլյամսի ետևից գալու են:

— Բայց նրան շաբաթ օրը թաղեցին, Հեք: Շաբաթ օրն իսկ նրան տարած չե՞ն լինի:

— Ինչե՛ր ես ասում: Ինչպե՞ս կարող էին նրան մինչև կեսգիշեր տանել, իսկ կեսգիշերից հետո արդեն կիրակի էր: Ես չեմ կարծում, որ սատանաները կիրակի օրերը շրջեն:

— Մտքովս շանցալ: Այդպես է: Հեք, թույլ կտա՞ս հետդ գամ:

1 «Հայր մեր» — աղոթքի անուն է:

— Անշուշտ, եթե շեռ վախենում:

— Վախենա՞լ, չէ՞ մի: Կմլավե՞ս:

— Այո, իսկ դու պատասխանիր մլավոցով, եթե հնարավոր լինի: Վերջին անգամ դու ինձ այնքան մլավել տվեցիր, որ ծեր Հեյսը սկսեց քարեր գցել վրաս և ասել. «Անիծվի այս կատուն»: Դրա փոխարեն աղյուսով ես նրա լուսամուտը ջարդեցի, բայց ոչ ոքի շասես:

— Չեմ ասի: Այդ գիշեր ես չկարողացա մլավել, որովհետև մորաքույրս հետևում էր ինձ, բայց այս գիշեր կմլավմ: Լսիր, Հեք, դա ի՞նչ է:

— Ոչինչ, տիպ է:

— Որտեղի՞ց ճարեցիր:

— Անտառից:

— Ի՞նչ տամ:

— Չգիտեմ: Չեմ ուզում ծախել:

— Դե լավ, այնքան էլ փոքր է:

— Է՛հ, քոնը չէ, դրա համար էլ շեռ հավանում: Ծա գո՛հ եմ: Ինձ ձեռք է տալիս:

— Անտառը լիքը տիպ է: Կարող եմ հազարներով բերել, եթե ուզեմ:

— Բա էլ ինչո՞ւ ես ուզում: Շատ լավ գիտես, որ շեռ կարող: Սա շատ սիրուն տիպ է. առաջինը, որ այս տնրի տեսել եմ:

— Լսիր, Հեք, ատամս կտամ դրա փոխարեն:

— Տուր տեսնեմ:

Թոմը մի թուղթ հանեց և զգուշութամբ բացեց: Հեքլբերին ուշադիր նայեց: Փորձությունը շատ մեծ էր: Ի վերջո, նա ասաց.

— Իսկակա՞ն է:

Թոմը բարձրացրեց շրթունքը և ցույց տվեց ատամի դատարկ տեղը:

— Դե լավ,— ասաց Հեքլբերին,— տվեցի:

Թոմը տիպը դրեց տուփի մեջ, որտեղ բզեզն էր բանտարկված, ու տղաները բաժանվեցին, լուրաբանչուրն իրեն ավելի հարուստ զգալով, քան առաջ:

Հասնելով առանձնացած դպրոցի հին շենքին, Թոմն առաջ ներս մտավ, շտապող բարեխիղճ մարդու նման: Գըլ-

խարկը մեխից կախեց և գործնական արագությամբ գնաց դեպի իր նստարանը: Ուսուցիչը իր բարձր բազկաթոռին թիկնած՝ ննջում էր դաս սերտող աշակերտների մոմոտցի տակ: Թոմի գալն արթնացրեց նրան:

— Թոմաս Սոյն՛ր:

Թոմը գիտեր, որ երբ իր անունը արտասանվում էր լրիվ, դա արդեն գլխացավանք էր:

— Լսում եմ, սրբ:

— Այստեղ եկեք: Իսկ այժմ ասացեք, սրբ, ինչո՞ւ նորից, ըստ սովորության, ուշացել եք:

Թոմն ուզում էր մի սուտ ասելով պրծնել, բայց երբ տեսավ խարտյաչ մագերի երկու հյուս՝ կախված մի մեջքի վրա, որը ճանաչեց սիրո էլեկտրական ուժով, երբ տեսավ, որ դրա կողքին էր աղջիկների շարքի միակ ազատ տեղը, բնազդաբար ասաց.

— Ես կանգնեցի շեֆրեբի Ֆինի հետ խոսելու:

Ուսուցչի շունչը կտրվեց, և նա անօգնական սառեց-մնաց: Գրաս սովորողների մոմոտցը դադարեց: Աշակերտները զարմացան. այս տղան հո խելքը չի՞ կորցրել: Ուսուցիչն ասաց.

— Դուք... դուք ի՞նչ էիք անում:

— Կանգնեցի շեֆրեբի Ֆինի հետ խոսելու:

Դժվար էր այդ բառերի իմաստը սխալ հասկանալ:

— Թոմաս Սոյեր, դա ամենազարմանալի խոստովանութունն է, որ ես երբևէ լսել եմ: Այդպիսի անպատկառության համար գավազանը բիչ է: Հանեցեք ձեր բաճկոնը:

Ուսուցչի ձեռքն այնքան աշխատեց, որ հոգնեց: Գավազանների կապուկը զգալի շափով պակասեց: Հետևեց հրամանը:

— Իսկ այժմ, սրբ, գնացեք և աղջիկների հետ նստեցեք: Եվ դա թող ձեզ խրատ լինի:

Սենյակում բարձրացած հռհռոցը կարծես տղային ամոթահար արեց, բայց իրականում շփոթության պատճառն այլ էր: Նա իր պաշտամունքի առարկայի նկատմամբ զգում էր վախ և երկյուղածություն: Տղան բախտավոր էր: Նա նստեց նստարանի ծայրին, իսկ աղջիկը գլուխը թափ տվեց և մի կողմ քաշվեց: Փսփսոցները, հրմշտոցն ու քմծիծաղներն անցան սենյակով մեկ, բայց Թոմը նստած էր հանդիստ, ձեռք

բերը երկարած, հայացքը նստարանին, կարծես գիրք էր կարդում: Աշակերտների ուշադրութիւնը հետզհետե նրանից հեռացավ, և նորից ծայր առավ դպրոցական սովորական ճամուցը: Տղան սկսեց աղջկա կողմը գողունի հայացքներ անտել: Աղջիկը նկատեց: Նա դեմքը ծամածոնեց և մի րոպեի շփ գլուխը մյուս կողմը շուռ տվեց: Երբ զգուշութեամբ դարձրւ շրջեց, իր առջև տեսավ մի դեղձ: Դեն հրեց: Թոմը նորից հանգիստ մտեցրեց: Աղջիկը նորից հեռացրեց, բայց այս անգամ՝ նվազ թշնամութեամբ: Թոմը համբերութեամբ սարդարձրեց այն իր տեղը: Աղջիկը թողեց, որ մնա: Թոմն այս գրատախտակի վրա գրեց. «Խնդրում եմ, վերցրեք, ես էլի եմ եմ»: Աղջիկը նայեց գրածին, բայց ոչ մի նշան ցույց չտուց: Տղան սկսեց մի բան գրել գրատախտակի վրա՝ ձախտակով նկարածը ծածկելով: Որոշ ժամանակ աղջիկը դառնալեց նկատել, բայց կանացի հետաքրքրասիրութիւնը իրեն չբացնել տվեց: Տղան շարունակեց աշխատել, առերևույթ աշխարհի ձեռքեր ձեռնալով: Աղջիկն ակամա շարժում արեց տեսնել, բայց տղան ցույց չտվեց, թե զգում է ի վերջո, աղջիկը տեղի տվեց և վարանելով ասաց.

— Թույլ տուր տեսնեմ:

Թոմը մասամբ բաց արեց նկարածը: Դա թեք տանիքով մի տան ծաղրանկար էր: Մխնելույզից ծուխ էր բարձրանում, տան մասն էր խցանահանի: Աղջկա հետաքրքրութիւնն սկսեց անսահման, և նա ամեն ինչ մոռացավ: Երբ նկարն ավարտված տեսնեց, աղջիկը մի պահ նայեց, հետո շշնջաց.

— Լավն է: Մի մարդ էլ նկարիր:

Գործիչը բակում մի մարդ նկարեց, որը նման էր ամբողջ մեքենայի: Նա կարող էր տան վրայով քայլել: Բայց ամբողջ խտապահանջ քննադատ չէր: Նա գոհ էր այդ հրեցից և շփաց.

— Ես գեղեցիկ մարդ է: Այժմ ինձ նկարիր նրա կող-

Պատճառով նկարեց արևի ժամացույց, վերևում լիալուսին, արևը շարժւ: Չոած մատներին մեջ դրեց մի ահագին հով- ճար Աղջիկն ասաց.

— Ինչպիսի լավ է: Ափսոս, որ նկարել չգիտեմ:

— Ես էլ եմ, — փսփսաց Թոմը, — ես քեզ կսովորեցնեմ:

- Իսկապե՞ս, ե՞րբ:
- Կեսօրին: Ճաշին տո՞ւն ես գնում:
- Չեմ գնա, եթե ուզում ես:
- Լավ, պայմանավորվեցինք: Անունդ ի՞նչ է:
- Բեքի Թեշեր: Քո՞նն ինչ է: Ասենք զիտեմ. Թոմաս Սոյեր է:

— Դա այն անունն է, որով ինձ ծեծում են: Ես Բոմ եմ կոչվում, երբ լավն եմ: Դու ինձ Թոմ անվանիր, լա՞վ:

— Լավ:

Թոմը նորից սկսեց դրատախտակի վրա ինչ-որ բան գրոտել, բառերը աղջկանից թաքցնելով: Բայց այժմ աղջկին այլևս մի կողմ չէր քաշվում: Նա խնդրեց ցույց տալ: Թոմն ասաց.

— Է՛, կարևոր բան չէ:

— Ոչ, ցույց տուր:

— Չէ, դու չես ուզենա տեսնել:

— Ուզում եմ, իսկապես ուզում եմ: Խնդրում եմ, ցույց տուր:

— Ուրիշներին կասես:

— Չէ, չեմ ասի. իսկապես, իսկապես, կրկնակի իսկապես, չեմ ասի:

— Ոչ ոքի չե՞ս ասելու. մինչև մահդ չե՞ս ասի:

— Ոչ, երբեք ոչ ոքի չեմ ասի: Չէ, ցույց տուր:

— Բայց ախր նայելու բան չէ:

— Որ այդպես ես անում, կնայեմ, Թոմ:— Եվ նա իր փոքր ձեռքը դրեց նրա ձեռքին, և կարճատև սլայքար տեղի ունեցավ. Թոմը ձևացնում էր, թե իբր դիմադրում է, բայց թողնում էր, որ իր ձեռքը աստիճանաբար սահի, մինչև հետևյալ բառերը երևացին. «Ես ձեզ սիրում եմ»:

— Ա՛խ, ինչ զզվելին ես,— և նա պինդ խփեց Թոմի ձեռքին, բայց կարմրեց և այնուամենայնիվ իրեն շոյված զգաց: Ծիշտ այդ պահին տղան զգաց, որ մի զորավոր ձեռք բռնում է իր ականջից և դանդաղ վեր բարձրացնում: Ուսուցիչն այդ ձևով, երեխաների հոճոցի կրակի տակ, նրան դասարանի միջով տարավ նախկին տեղը: Ուսուցիչը նրա զլխավերևը կանոնեց մի քանի սարսափելի բոպե և ի վերջո

շահակեց զնպի իր գահը՝ առանց որևէ խոսք ասելու: Թոմի
սքանչն այրվում էր, բայր սիրտը ցնծում էր:

Երբ դասարանը հանդարտվեց, Թոմը ազնվորեն ճիգ գործ
ույց պարապելու, բայց նրա ներքին հուզումը շատ մեծ էր:
Նշարցանության դասի ժամանակ նա բռները իրար խոս-
ույց աշխարհագրության դասին լճերը վերածեց լեռների,
լեռները՝ գետերի, իսկ գետերը՝ ցամաքամասերի, մինչև աշ-
ուստում նորից քառս տիրեց: Թելադրության դասին նա ա-
սեղանեց ամենահասարակ, անգամ երեխաներին հայտնի
առերը: Նրա ձեռքից վերցրին անագյա այն մեղալը, որը
նշարցանումը մի քանի ամիս կրում էր:

ԳԼՈՒԽ ՅՈՓԵՐՈՐԴ

Չքան եռանդով էր Թոմն իր ուշադրությունը կենտրո-
նացնում գրքի վրա, այնքան նրա մտքերը ցրվում էին: Ի
մտքում հոգոց արձակելով ու հորանջելով, գրքից ձեռ քաշեց:
Ինչ թվում էր, թե կեսօրվա դասամիջոցը երբեք չի գալու
Թոմի գրքից անհանապես մահացել էր. ոչ մի շունչ չկար: Քնա-
յուց օրերից դա ամենաքնաքերն էր: Իրենց դասը սերտող
բանասեր աշակերտների քրթմնջոցները քուն էին բե-
ռում հնչյուն մեղունների բլզոց: Հեռվում, այրող արևի տակ,
ժամանակյան բլրալանջերը ցույց էին տալիս իրենց կանաչ
տառեր որոնք հեռվում կարծես օրորվում էին ջերմության
բուրբուռով: Մի քանի թռչուն օդում ծուլորեն թափահարում
էին իրենց թևերը: Ոչ մի կենդանի շունչ-արարած, բացի մի
քանի սքանչ: Դրանք էլ քնած էին:

Թոմը արտանց ուզում էր ազատ լինել կամ որևէ հետա-
քաշում ունենալ ձանձրալի ժամանակն անցկացնելու հա-
մարտ: Ինչպե՞ս ձեռքով պրպտեց գրպանում, ու դեմքը լուսավոր-
վեց շահակեցանության փայլով, որն աղոթք էր, թեև նա այդ
քնած քանակում: Հետո ծածուկ գրպանից հանեց տուփը: Նա
տուփը քանակեց և դրեց երկար, հարթ գրասեղանին:
Տուփից արտաբերեց տիզն այդ պահին լցվեց շնորհակալության
գրություններ: Թոմը նույնպես աղոթք էր, բայց վաղաժամ,
գրությունները սկսեց մտախոհ ճանապարհորդել, Թոմը գրն-

դասեղով շուռ տվեց նրան և ստիպեց նոր ուղղութիւն վերցնել:

Թոմի կողքին նստած մտերիմ ընկերը նույնպէս ձանձրույթից տառապում էր. նա խորապէս և շնորհակալութեան զգացումով հետաքրքրվեց այդ զբաղմունքով: Այդ մտերիմ բնկերը Զո շարպըրն էր: Այդ երկու տղաները ամբողջ շաբաթն անբաժան էին, իսկ շաբաթ օրերը՝ ուղղմական թշնամիներ: Զոն նույնպէս մի գնդասեղ հանեց իր լամբակից և սկսեց օգնել նրան՝ ուղղագերուն վարժութիւններ անել տալու գործում: Բոպեապէս այդ խաղը հետաքրքրական դարձավ: Շուտով Թոմն ասաց, որ իրար խանգարում են և ոչ մէկը լիակատար հաճույք չի ստանում այդ խաղից: Նա Զոյի գրատախտակը դրեց սեղանին և դրա կենտրոնից, վերից վար, մի գիծ քաշեց:

— Լսիր,— ասաց նա,— քանի դեռ տիզը քո կողմում է, կարող ես քշել, և ես չեմ խանգարի, բայց եթե դու թույլ ես, որ անցնի իմ կողմը, էլ ձեռք չես տա այնքան ժամանակ, ինչքան ես կարողանամ պահել իմ կողմում:

— Շատ լավ, սկսիր:

Տիզը փախավ Թոմից և հասարակածն անցավ: Զոն որոշ ժամանակ հալածեց նրան, հետո տիզը նորից անցավ գիծը: Այդ անցումները հաճախակի էին: Մինչ մի տղան տիզը քշում էր լարված հետաքրքրութեամբ, մյուսը նայում էր նույնքան կլանված: Երկու տղաների գլուխներն էլ կախվել էին գրատախտակի վրա և երկուսն էլ ուրիշ ամեն ինչի նկատմամբ անտարբեր էին: Ի վերջո, բախտը վերջնականապէս անցավ Զոյի կողմը: Տիզը փորձում էր այս ու այն ուղղութեամբ գնալ և տղաների շփոխումով էր: Ամեն անգամ, երբ թվում էր, թե Թոմի կողմն էր անցնելու, Զոյի գնդասեղը ճարպկորեն միջատին իր կողմն էր դարձնում: Ի վերջո, Թոմի համբերութիւնն սպառվեց: Գայթակղութիւնը շատ ուժեղ էր. նա ձեռքը երկարեց և գնդասեղով տղի առաջը կտրեց: Զոն նույն պահին բարկացավ: Նա ասաց.

— Թոմ, հանգիստ թող:

— Ուզում եմ մի քիչ քշել, Զո՛:

— Դա անազնութիւնն է, սրբ. հանգիստ թող:

— Է՛, հո շատ երկար չեմ քշի:

— Ասում եմ, հանդիստ թող:

— Չեմ թողնելու:

— Կթողնես. նա իմ կողմում է:

— Լսիր, Ջո Հարպըր, ո՞ւմն է տիղը:

— Իմ ի՞նչ գործն է, թե ում տիղն է. իմ կողմում է ու
գու՛ ձեռք տալու իրավունք չունես:

— Իսկ ես ձեռք կտամ. իմ տիղն է և կանեմ ինչ ուզե-
նամ կամ կմեռնեմ:

Մի ուժեղ հարված իջավ Թոմի ուսերին, դրա նմանն էլ՝
Ջոյի ուսերին, և երկու ընկալ շարունակ փոշին շարունակեց
բարձրանալ երկու տղաների բաճկոններից: Ամբողջ դասու-
թանը վայելում էր այդ տեսարանը: Տղաները շատ էին զբաղ-
ված և չէին զգում, թե ինչ լուսթյուն էր հաստատվել, մինչ
ուսուցիչը ոտքի մատները վրա եկել ու կանգնել էր նրանց
գլխավերևում: Նա բավական երկար դիտեց այդ խաղը,
մինչև ինքն էլ մասնակցեց և խաղի մեջ փոփոխություն
մտցրեց:

Երբ կեսօրին դասամիջոց եղավ, Թոմը վազեց Բեքի Թե-
չբրի մոտ և նրա ախանջին շշնջաց.

— Գլխարկդ դիր և այնպես ձևացրու, թե տուն ես գնում,
եթե անկյունը հասնես, մյուսները թող գնան, իսկ ինքդ թևք-
վիր և նրբանցքով այստեղ վերադարձիր: Ես ուրիշ ճանա-
գարճով կգնամ և նույն տեղը կվերադառնամ:

Այսպիսով, մեկը մի խմբի հետ դուրս եկավ դպրոցից,
մյուսը՝ մի այլ խմբի հետ: Քիչ անց երկուսը հանդիպեցին
մտրգագետնում, և երբ հասան դպրոց, մենակ էին: Նրանք
միասին նստեցին, գրատախտակը դրեցին իրենց առաջ. ու
Թոմը Բեքիին մի մատիտ տալով բռնեց նրա ձեռքը, ուղղու-
թյուն տվեց և մի ուրիշ զարմանալի տուն էլ նկարեց: Երբ
արվեստի նկատմամբ հետաքրքրությունն սպառվեց, երկու-
սով սկսեցին զրուցել: Թոմը լողում էր երջանկության մեջ:
Նա ասաց.

— Առնետներ սիրո՞ւմ ես:

— Ոչ, ատում եմ:

— Դե, ես էլ եմ ատում կենդանի առնետներին: Բայց ես
խոսում եմ սատկածների մասին. կարելի է դրանց վզից
թե՛ կապել և զլխի շուրջը պտտեցնել:

— Ոչ, ես առնեսաներ առհասարակ չեմ սիրում: Ես ծաման եմ շատ սիրում:

— Այո, ես էլ եմ սիրում, ափսոս ծամոն չունեմ:

— Ճիշտն ասած, ես մի քիչ ունեմ: Թույլ կտամ, որ ծամես, բայց պիտի վերագարձնես:

Դա հրաշալի էր. նրանք սկսեցին հերթով ծամել և բավականութունից ոտքերը օրորել:

— Երբեք կրկեսում եղե՞լ ես,— ասաց Թոմը:

— Այո, հայրիկը խոստացել է նորից տանել, եթե խելոք լինեմ:

— Ես երեք-չորս անգամ եմ կրկեսում եղել, բազմաթիվ անգամներ: Եկեղեցին կրկեսի հետ շափվել չի կարող: Կրկեսում միշտ նոր բաներ են լինում: Երբ մեծանամ, կրկեսի ծաղրածու եմ դառնալու:

— Ճի՞շտ: Դա լավ է: Նրանք այնքա՛ն նախշված են լինում:

— Այո, այդպես է: Եվ շատ փող են աշխատում: Բեն Ռոջերսը ասում է՝ օրական մեկ դոլար: Լսիր, Բեթի, երբեք նշանվե՞լ ես:

— Դա ի՞նչ բան է:

— Նշանված, ամուսնանալու համար խոսք սված:

— Ո՛չ:

— Իսկ կուզեի՞ր:

— Չգիտեմ. ինչպե՞ս է դա լինում:

— Ինչպե՞ս: Դա ոչ մի բանի նման չէ: Դու պարզապես մի տղայի ասում ես, որ երբեք ուրիշ ոչ ոքի հետ չես ամուսնանա, բացի նրանից. երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք. հետո համբուրում ես, և ամբողջն այդ է: Որևէ մեկը կարող է այդ անել:

— Համբուրե՞լ, ինչո՞ւ համբուրել:

— Դե, նրա համար, որ... չգիտեմ, միշտ այդպես են անում:

— Բոլո՞րը:

— Այո, բոլոր սիրահարվածները: Հիշո՞ւմ ես, թե ես ինչ էի գրել գրատախտակի վրա:

— Ա... այո:

— Ի՞նչ էի գրել:

— Զեմ ասի:

— Բւզո՞ւմ ես, որ ասեմ:

— Ա... այո, բայց մի ուրիշ անգամ:

— Զէ՛, հիմա:

— Ո՛չ, ո՛չ այսօր, վաղը:

— Զէ՛, չէ՛, հիմա: Խնդրում եմ, Բեքի. ես կշնջամ, ես

~~չ~~ ցածր կփսփսամ:

Բեքին վարանում էր. նրա լուսթյունը համաձայնություն համարելով, Թոմը թևն անցկացրեց նրա վզով և ասաց շատ մեղմ, շրթունքները նրա ականջին մոտիկ: Հետո ավելացրեց.

— Այժմ դու ինձ շնջա. ճիշտ նույն ձևով:

Աղջիկը մի պահ հիմադրեց, հետո ասաց.

— Դեմքդ շուռ տուր, որ չկարողանաս տեսնել, հետո կասեմ: Բայց երբեք ոչ մեկին չպետք է ասես, համաձայն ես, Թոմ: Զես ասելու, չէ՞:

— Ո՛չ, երբե՛ք, երբե՛ք չեմ ասի: Դե՛, Բեքի:

Նա դեմքը շուռ տվեց: Աղջիկը միամտորեն նայեց շուրջը, և նրա շունչը ցնցեց տղայի գանգուրները. նա շնջացա՞ծիրում... եմ... քեզ»:

Հետո վեր թռավ, սկսեց վազել նստարանների միջով, Թոմը նրա ետևից և ի վերջո ասպաստանեց մի անկյուն, դեմքը ծածկելով սպիտակ գոգնոցով: Թոմը բռնեց նրա պարանոցը և խնդրեց.

— Այժմ, Բեքի, ամեն ինչ արված է, ամեն ինչ, բացի համբույրից: Դրանից մի վախեցիր, դա հասարակ բան է: Խնդրում եմ, Բեքի:— Եվ նա քաշում էր աղջկա գոգնոցն ու ձեռքերը:

Կամաց-կամաց Բեքին տեղի տվեց և ձեռքերն իջեցրեց, զայրարից կարմրած նրա դեմքը դուրս եկավ գոգնոցի տակից ու հնազանդվեց: Թոմը համբուրեց կարմիր շուրթերը և ասաց.

— Այժմ ամեն ինչ արված է, Բեքի: Սրանից հետո, բացի ինձնից, դու ոչ մեկին չես սիրի և ոչ ոքի հետ չես ամուսնանա, բացի ինձնից, երբեք, երբեք, հավիտյան: Համաձայն ես:

— Այո, քեզնից բացի, ես ոչ ոքի չեմ սիրի, Թոմ, և ոչ

որի հետ շեմ ամուսնանա, բացի քեզնից, դու էլ, ինձնից բացի, ոչ ոքի հետ չես ամուսնանա:

— Իհարկե, դա պայմանի մեջ է: Եվ միշտ, դպրոց գլխի կամ տուն գնալիս, դու ինձ հետ ես քայլելու, երբ նա յողմեր չկան, խաղերի ժամանակ դու միշտ ինձ ես ընտրելու, ես էլ քեզ, որովհետև նշանվածներն այդպես են առում:

— Ինչ լավ է. երբեք այդ մասին չեմ լսել:

— Դա շատ հաճելի բան է. ես ու էմի Լոուրենսը...

Աղջկա լայն բացված աչքերից թումն զգաց իր սխալը և կանգնեց շփոթված:

— Օ՛հ, թո՛մ, ուրեմն ես առաջինը չեմ, որի հետ դու նշանվել ես:

Աղջիկն սկսեց լաց լինել: Թումն ասաց.

— Լաց մի լինի, Բեքի, ես այլևս նրան չեմ սիրում:

— Սիրում ես, թո՛մ, ինքդ գիտես, որ սիրում ես:

Թումը փորձեց գրկել նրա վիզը, բայց աղջիկը նրան հեռացրեց, դեմքը պատին դարձրեց ու շարունակեց լաց լինել: Թումը նորից փորձեց փաղաքշական խոսքեր ասել, բայց նորից ետ մղվեց: Այդ ժամանակ նրա հպարտութունն արթնացավ, և նա վիրավորված դուրս եկավ: Նա կանգնեց, անհանգիստ, ժամանակ առ ժամանակ դռանը նայելով, հույս ունենալով, որ աղջիկը կզղջա ու կգա իրեն գտնելու, բայց նա չեկավ: Հետո տղան իրեն վատ զգաց և վախեցավ, թե ինքն է մեղավոր: Մասն քայքայր էր տեղի սննենում նրա մեջ, որպեսզի հաշտվելու առաջին քայլն անի, բայց նա հաղթահարեց այդ զգացումը և ներս մտավ: Աղջիկը դեռևս կանգնած էր անկյունում, դեմքը պատին դարձրած՝ լաց լինելով: Թումի սիրտը փափկեց: Նա մոտեցավ և մի պահ կանգնեց, չիմանալով, թե ինչպես եկսի: Հետո ասաց տատանվելով.

— Բեքի, ես քեզնից բացի ոչ ոքի չեմ սիրում:

Ոչ մի պատասխան, միայն արցունք:

— Բեքի, — աղերսանքով: — Բեքի, մի բան չե՞ս ասելու: Արցունքներն այլևի շատացան:

Թումը գրպանից հանեց իր ամենաթանկ ապրանքը՝ թիզ

թեղի փոքրիկ գնդակը, և աղջկա աչքի առաջ խաղաղանելով, ասաց.

— Խնդրում եմ, Բեքի, չե՞ս ուզում:

Աղջիկը խփեց ու գետին զցեց այն: Այդ ժամանակ Թոմը դպրոցից դուրս եկավ, գնաց դեպի բլուրները և ավելի հեռու, որոշելով այդ օրը այլևս դպրոց չվերադառնալ: Բեքին այդպես էլ կասկածեց. նա վաղեց դեպի դուռը: Տղան չէր երևում: Վազեց դեպի խաղաղաշտը: Թոմն այնտեղ էլ չէր: Հետո կանչեց.

— Թոմ, վերադարձիր, Թոմ:

Բեքին ուշադիր լսեց, բայց պատասխան չկար: Նրա շուրջը լուսթյուն և մենակություն էր: Նա նստեց նորից լաց լինելու: Մինչ այդ, դպրոցականներն սկսեցին վերադառնալ, ու աղջիկն ստիպված էր վիշտը թաքցնել, հանգստացնել կոտրված սիրտը և անցկացնել երկար, ձանձրալի, ցավ պատճառող հետմիջօրեն, շունենալով ոչ մեկը այդ օտարների մեջ, որի հետ կարողանար վիշտը կիսել:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Թոմը մերթ աջ ու մերթ ձախ թեքվելով քայլեց խուլ նըրբանքներով, մինչև հեռացավ այն փողոցից, որով դպրոցականները վերադառնում էին, այնուհետև սկսեց վազել: Երկու կամ երեք անգամ նա անցավ փոքր գետակը, որովհետև պատանեկան տարիներին, հատուկ սնահավատության համաձայն, գետն անցնելով մարդ խուսափում է հետապնդողներից: Կես ժամ հետո նա Դուզլասի տան ետևում էր՝ Քարտիֆ բլրի գագաթին, որտեղից դպրոցը՝ ներքևի հովտում, հազիվ էր նշմարվում: Նա մտավ մի խիտ անտառ, առանց արահետ որոնելու գնաց մինչև անտառի խորքը և նստեց մի մեծ կաղնու տակ: Նույնիսկ զեփյուռը չէր փչում այդտեղ, կեսօրվա անշարժ շոգը կաշկանդել էր նույնիսկ թռչունների երգը: Բնությունը նիրհում էր, և նրա բունը խանգարվում էր միայն հեռվից լավող փայտփորիկի թխկոցից, որը տիրող լուսթյունն ու մենակության զգացումն ավելի էր խորացնում: Տղան ընկավ մելամաղձության մեջ. նրա զգա-

ցումները ներդաշնակում էին շրջապատին: Արմունկները ծնկներին և կզակը ձեռքերին հենած՝ նա երկար նստեց և տարվեց մտքերով: Նրան թվաց, թե կյանքը, լավագույն դեպքում, միայն տհաճություն է և համարյա նախանձեց Ջիմի Հոջսին, որը վերջերս էր մեռել: Պետք է որ լավ բան լինի պառկելն ու հավիտյան երազելը, մտածեց նա, երբ բամին ծառերի արանքից շշնջում ու շոյում է գերեզմանիչ բարն ու ծաղիկները, և դու այլևս ոչինչ չունես տեսնելու և ցավելու համար: Եթե կիրակնօրյա դպրոցի լավ վկայական ունենար, ապա կուղենար մեռնել և ամեն ինչ վերջացնել: Ահա, հենց այս աղջիկը: Ի՞նչ էր ինքն արել: Ոչինչ: Աշխարհի ամենալավ բաներն էր ցանկացել նրան, իսկ իր հետ վարվել էին ինչպես շան, իսկական շան հետ: Մի օր աղջիկը կղզա, բայց գուցե այն ժամանակ, երբ շատ ուշ կլինի: Ահ, եթե միայն կարողանար ժամանակավորապես մահանալ:

Բայց երիտասարդի սիրտը հնարավոր չէ երկար ժամանակ սեղմած պահել նույն կաղապարի մեջ: Շուտով Թոմն սկսեց զբաղվել այս կյանքի հարցերով: Ի՞նչ կլիներ, եթե ինքը շուտ գար հիմա և խորհրդավոր կերպով անհայտանար: Ի՞նչ կլիներ, եթե հեռանար, զնար շատ հեռուները, ծովերից այն կողմ գտնվող անհայտ երկրները և այլևս ետ չգար: Այն ժամանակ իրեն ինչպե՞ս կզգար աղջիկը: Մաղրածու լինելու միտքը այժմ նրան լցրեց զզվանքով, որովհետև թեթևամտությունը, կատակները և արտասովոր կապերը վիրավորանք էին, երբ խառնվում էին մի ոգու հետ, որը թևեր էր առել ողմանտիկայի անորոշ մեծության դիմաց: Ոչ, նա գինվոր է դառնալու և երկար տարիներ հետո վերադառնալու է պատերազմից հոգնած ու նշանավոր դարձած: Ոչ, ավելի լավ է, որ նա միանա ամերիկյան հեղիկներին և գոմեշ որսա, զնա լեռների ռազմական ճանապարհով, հեռավոր արևմուտքի անճանապարհ հարթավայրերը, հեռու ապագայում վերադառնա որպես մեծ առաջնորդ՝ փետուրներով զարդարված սարսափելի տեսքով, ներկված, ամառային մի խաղաղ առավոտ հարձակվի կիրակնօրյա դպրոցի վրա և արյունարբու ռազմական մի կանչով զարմացնի, աչքերը լայնլայն բացի իր ընկերների առաջ, որոնք սոսկալի կնախան:

ձեն իրեն, Բայց ոչ, դրանից ավելի մեծ բան կա: Նա ծովահենն է դառնալու: Այդ է: Այժմ իր ապագան արդեն պարզ պատկերացնում է՝ անասելի փառքով լուսավորված: Ինչպե՞ս իր անունը կթնդա ամբողջ աշխարհում և մարդկանց կողողացնի: Ի՞նչ փառահեղ տեսքով ինքը կակոսի փոթորկալից ծովերն իր երկար, սև «Փոթորկի ոգի» նավով, որի կայմի վրա կծածանվի սև դրոշակը: Եվ փառքի զագաթնակետին ինչպես հանկարծ կհայտնվի իրենց քաղաքում և կքայլի դեպի եկեղեցի՝ ամբողջովին սևացած, քամահար, սև թավշյա կամզոլով ու բաճկոնով, երկարաճիտ կոշիկներով, կարմիր ժապավենն ուսին զցած, ատրճանակները գոտու տակ խրած, թափած արյունից ժանգոտած դաշույնը գոտուց կախ, ծածանվող փետուրներով փափուկ զբխարկը գլխին, զանգով ու խաշաձև ոսկորներով զարդարված սև դրոշակը բացած և կլսի ղմայլանքի շշնջոցներ. «Մովահեն Թոմ Սոյերն է, Իսպանական ծովի սև վրիժառուն»: Այո, վճռված է. նրա կյանքի ուղին որոշված է: Նա պիտի տնից փախչի և մտնի մի նոր կյանք: Հաջորդ օրվա առավոտվանից պետք է սկսել: Ուրեմն պետք է պատրաստվել: Պետք է հավաքել ունեցած ամբողջ հարստությունը:

Նա գնաց ծառի մի փտած գերանի մոտ և սկսեց դրա տակը փորել իր լայնաբերան դանակով: Շուտով դեմ առավ մի փայտե իրի, որը դատարկ ձայն հանեց: Ջեռքը մտցրեց այդտեղ և ազդու ձայնով արտասանեց կախարդանքի խոսքերը.

«Ինչ շկա այստեղ, թող հայտնվի, ինչ այստեղ է, թող մնա տեղում»:

Հետո նա հողը մաքրեց և դուրս հանեց մայրու փայտից մի տուփ: Նա վերցրեց այն և գտավ մի զանձարկղ, որի կողքերին ու տակը մանր խճեր կային: Տուփի մեջ մի՛ մարմարե գնդիկ կար: Թոմի զարմանքը անսահման էր: Նա գլուխը տարակուսանքով տարուբերեց և ասաց.

— Սա ուղղակի հրաշք է:

Թոմը զայրույթով դեն զցեց զնդակը և սկսեց մտածել: Չճամարտությունն այն էր, որ իր և իր ընկերների կողմից անխախտ համարվող մի սնահավատություն խախտված էր: Եթե դու մի գնդակ էիր թաղում անհրաժեշտ կախարդան-

քի խոսքերով և երկու շաբաթ թողնում այդտեղ ու բացում կախարդանքի այն խոսքերով, որ նա հենց նոր արտասանել էր, քո բոլոր կորցրած գնդակները պիտի այդտեղ գտնեիր հավաքված, անկախ նրանից, թե ինչքան հեռու վայրերում նրանք կորած լինեին: Իսկ այժմ այդ բանն անհաջող անցավ: Թո՛մի հավատքի ամբողջ կառուցվածքը հիմքից խախտված էր: Նա միշտ լսել էր, որ այդ բանը հաջողվում է: Դրա ձախողման մասին ոչ մի անգամ չէր լսել: Նա մոռացել էր, որ ինքը մի քանի անգամ փորձել էր, բայց երբեք չէր գտել իր պահած տեղը: Որոշ ժամանակ նա մտածեց այդ մասին և ի վերջո որոշեց. ինչ-որ կախարդ միջամտել է և կախարդանքը խափանել: Նա ուզում էր վերջնականապես համոզվել այդ բանում: Փորձեց ու գտավ մի ավազոտ մաքուր տեղ, որի մեջտեղում ձագարի նման փոս կար: Շուրթերը մոտեցրեց այդ փոսին և բղավեց.

Մրջնառյուծ, ասա ինձ, ինչ ուզում եմ իմանալ:

Մրջնառյուծ, ասա ինձ, ինչ ուզում եմ իմանալ:

Ավազն սկսեց շարժվել, փոսից զուրս եկավ մի փոքրիկ բզեզ և վախեցած իսկույն պահվեց:

— Զի ասում, ուրեմն՝ կախարդն է արել: Այդպես էլ գիտեի:

Թո՛մը լավ գիտեր, որ կախարդի հետ շփվելն անօգուտ է, հետևաբար հուսահատված ձեռ քաշեց: Հետո մտածեց, որ այնուամենայնիվ կարող էր վերցնել հենց նոր դեն նետած մարմարե գնդիկը:

Նա գնաց և համբերությամբ փնտրեց: Բայց չկարողացավ գտնել: Հետո վերադարձավ գանձի տեղը և կանգնեց ճիշտ այնպես, ինչպես կանգնել էր գնդիկը նետելու ժամանակ: Գրպանից մի ուրիշ գնդիկ հանեց և նույն ձևով պցեց, ասելով.

— Եղբայր, գնա՛, գտի՛ր քո եղբորը:

Նա նայեց, թե ուր է ընկնում գնդիկը և գնաց այնտեղ: Բայց ըստ երևույթին նախորդն ավելի մոտ կամ ավելի հեռու էր ընկել: Նա երկու անգամ փորձեց: Վերջին փորձը հաջող էր: Երկու գնդիկներն իրարից մի ոտնաչափ հեռու էին ընկած:

Ճիշտ այդ պահին անտառի եզրից լսվեց թիթեղե խաղա-
ք-շեփորի մի թույլ ձայն: Թոմն արագ հանեց բաճկոնն ու
շարժարը, ուսակապը գոտի դարձրեց, փտած ճյուղը մի կողմ
հեռաց, ինչ-որ տեղից հանեց կոպիտ սարքած մի նետ ու ա-
զազ, մի թիթեղե խաղալիք-շեփոր, սպառազինվեց և մերկ ու
քորթիկ առաջ նետվեց: Նա կանգ առավ մի մեծ թզենու տակ,
առտասխան ազդանշան տվեց և հետո սկսեց ոտքի մատներին
զգուշանալ, շուրջը նայելով, զգուշորեն առաջ շարժվել: Նա հրա-
ճեց իր երևակայական վաշտին.

— Կանգնեցե՛ք, իմ քաջն՛ր, թաքնվեցե՛ք, մինչև փող
չլսեմ:

Երևաց Զո շարպըրը, Թոմի նման թեթև հագնված և
առաջնայես զինված: Թոմը գոռաց.

— Կանգնի՛ր, ո՞վ է համարձակվում, առանց իմ թույլ-
առնությունից: Շեղարկի անտառը մտնել:

— Գայ Գիզրորենը ոչ ոքի թույլտվություն կարիքը չունի:
Քճ էս դու, որ... որ...

— Որ համարձակվում ես այդպես խոսել,— ասաց Թոմը
չառաչ. որովհետև նրանք խոսում էին «գրքի խոսքերով»,
ճշգրտությամբ:

— Ո՞վ ես դու, որ համարձակվում ես այդպես
խոսել ինձ հետ:

— Ով եմ ե՞ս: Ես Ռորին Ղուղն՛ եմ, դրանում շուտով
հասնելու չունիք ստոր դիակը:

— Ուրեմն դու այն նշանավոր ավազա՞կն ես: Ես ուրա-
խ եմ կշափվեմ սուրբ անտառի մուտքի համար: Պատ-
շախտե՛ք:

Նրանք մերկացրին իրենց փայտե սրերը, մյուս զենքերը
հեռացնեցին, դեմ-դիմաց դիրք գրավեցին և սկսեցին
առաջադիմել, կանխամտածված պայքար՝ երկու հարված վերև,
հարված հարված ներքև: Հետո Թոմն ասաց.

— Գե որ պիտի կովենք, իսկականից կովենք:
Նախ և սկսեցին եռանդով կովել ու քրտնեցին: Ի վերջո
ճանաչվեց.

Թոմն Ղուղ — հնագույն անգլիական դրույցների և երգերի նշա-
խոսք:

— Ընկիր, ընկիր, ինչո՞ւ չես ընկնում:

— Ձեմ ընկնի, ինչո՞ւ դու չես ընկնում. քո գրությունէն ավելի վատ է:

— Դա ոչինչ չի նշանակում: Ես չեմ կարող ընկնել. դա գրքում գրվածի պես չէ: Գիրքն ասում է. «Հետո մեջքին հասցրած մի հարվածով նա գետին գլորեց խեղճ Գայ Գիզոր-նին»: Դու պետք է շուռ գաս, որ մեջքիդ հարվածին:

Հեղինակություններից չես կարող փախչել. Ջոն դարձավ հարվածն ստացալ և ընկավ:

— Այժմ,— ասաց Ջոն վեր կենալով,— դու պետք է թողնես, որ բեզ սպանեմ. դա արդարացի կլինի:

— Ես այդ անել չեմ կարող: Գրքում այդ չկա:

— Բայց դա ազնիվ բան չէ. ահա թե ինչ:

— Դե լավ, Ջո, դու կարող ես Պեկ արեղան լինել կամ ջրաղացպանի որդի Միլլերը և դազանակով խփել: Կամ ևս կլինեմ Նաթինգհամի շերիֆը, իսկ դու որոշ ժամանակով Ռոբին Լուդը և ինձ սպանել:

Դա գոհացուցիչ էր, և այդ սխրագործությունը շարունակվեց: Հետո Թոմը նորից Ռոբին Լուդ դարձավ և թույլ տվեց, որ արյունաբամ լինի դավաճան միանձնուհու կողմից վերքը վատ կապելու պատճառով: Ի վերջո, Ջոն, որ ներկայացնում էր ողբացող ավազակների մի ամբողջ խումբ, տխրությամբ նրան մի կողմ քաշեց, աղեղը հանձնեց նրա թույլ ձեռքերին, և Թոմն ասաց. «Որտեղ որ այս նետն ընկնի, այնտեղ թաղեք խեղճ Ռոբին Լուդին, կանաչ ծառի տակ»: Հետո Թոմն արձակեց նետը և գետնին ընկավ: Նա պետք է մեռներ, բայց եղինջը կծեց վիզը, և նա թռավ դիակի համար անսովոր արագությամբ:

Տղաները հագնվեցին, թաքցրին իրենց զենքերը և զնացին՝ վշտանալով, որ այլևս ավազակներ չեն: Նրանք մտածում էին, թե ինչ կարող էր տալ ժամանակակից քաղաքակրթությունն իրենց այդ կորստի դիմաց: Նրանք ասացին, որ կնախընտրեն մի տարի Շերվուդի անտառում ավազակ լինել, քան Միացյալ Նահանգների սրբզիղենտ՝ առհավելու:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Այդ երեկո, ըստ սովորության, Թոմն ու Սիդը քնելու ուզարկվեցին ժամը ինն անց կեսին: Նրանք աղոթեցին, և շուտով Սիդը քնեց: Թոմն արթուն պառկած սպասում էր տաղանապալի անհամբերության: Երբ նրան թվաց, թե համարք լուսաբաց է, լսեց ժամացույցի տասը զարկ: Դա հուսահատական էր. նա ուզեց վեր կենալ ու անհամբերությունից շարժումներ անել: Գրգռված շղերը այդպես էին պահանջում: Բայց վախեցավ Սիդին արթնացնելուց, անշարժ պառկեց և նայեց մթությանը: Ամեն ինչ ծանր լուսության մեջ էր: Կամաց-կամաց սկսեցին լսելի դառնալ անորսալի ձայներ, ժամացույցի թիթ-թաթն իրեն զգալ տվեց: Հին գերաններն սկսեցին խորհրդավոր կերպով ճարճատել: Սանդուղքները թույլ ճռռացին: Անկասկած, ոգիները շրջում էին: Մորաբույր Պալիի սենյակից լսվում էին խուլ ու համաշափ խումփոցներ: Այնուհետև սկսվեց ծղրիղների հոգնեցուցիչ ճռռոցը, որի տեղը մարդկային ոչ մի հնարամտություն չէր կարող որոշել: Ապա լսվեց ժամագործ բղեղի թիթ-թաթը պատի մեջ՝ մահճակալի զլխավերևում, որից Թոմը սարսուռաց: Նշանաբան էր, որ ինչ-որ մեկի օրերը հաշվված էին: Դրան հաջորդեց մի շան հեռավոր ոռնոցը, որին արձագանքեց մի ուրիշ թույլ ոռնոց, ավելի հեռվից: Թոմը մղձավանջի մեջ էր: Եվ երջո, նա զգաց, որ ժամանակը դադարեց գոյություն ունենալուց, և սկսվեց հավիտենականությունը: Հակառակ իր կամքի՝ սկսեց ննջել: Ժամացույցը տասնմեկը խփեց, բայց Թոմը չլսեց: Հանկարծ, կիսաերազի մեջ, նա լսեց հետվի տխուր մլավոց: Մոտիկ տեղում լուսամուտը թրխկաց: Ինչ-որ ձայն կանչեց. «Կորի, սատանա»: Մի դատարկ շիշ խփվեց մորաբորջ պատին, և Թոմը միանգամից արթնացավ: Նա վայրկենապես հագնվեց և լուսամուտից դուրս եկավ: Չորեքթաթ սողաց տանիքի վրայով: Գնալիս զգուշությամբ մի երկու անգամ մլավեց, հետո թռավ փայտանոցի տանիքը, հետո՝ գետին: Հեքլբերի Ֆինն այնտեղ էր՝ իր սատակած կատվի հետ: Տղաները շարժվեցին և անհետացան խավաբում: Կես ժամ հետո նրանք քայլում էին գերեզմանա-տան բարձր խոտերի միջով:

Արևմուտքի երկրներին հատուկ հին ձևի մի գերեզմանատուն էր դա, բլրի վրա, քաղաքից մոտ մեկուկես մղոն հեռու Շրջապատված էր մի հիմար ցանկապատով, որը ընդհանրապես դեպի դուրս էր ընկած, տեղ-տեղ գեպի ներս, բայց ոչ մի տեղ ուղիղ չէր կանգնած: Ամբողջ գերեզմանատանը աճել էր փարթամ խոտը: Բոլոր հին գերեզմաններն իջել էին, ոչ մի դամբարան չէր երևում: Փտած, վերևի մասերը կտրացած, որդերի կեր դարձած տախտակները թեքվել էին դեպի հողը՝ հենարանի կարիք զգալով, բայց չգտնելով: Դրանց վրա մի ժամանակ գրված էր եղել. «Հավերժ հիշատակ այսինչին», բայց դրանց մեծամասնությունը վրա, եթե նույնիսկ մի ժամանակ տապանագրեր եղել էին, նույնիսկ ցերեկը այլևս չէին կարդացվում:

Մի թույլ քամի նվում էր ծառերի արանքում, Թոմը վախեցավ, որ գուցե մեռելների ոգիներն էին դրանք և բողբոջում էին իրենց հանգիստը վրդովելու համար: Տղաները քիչ էին խոսում և այն էլ՝ շնչոցով, որովհետև վայրը, ժամանակը, տիրող հանգիստությունը և լուսթյունը ճնշում էին նրանց: Նրանք գտան իրենց փնտրած նոր հողաթումբը և թաքնվեցին երեք մեծ թիթեղների հովանու տակ, հողաթմբից մի քանի քալ հեռու:

Հետո նրանք լուռ սպասեցին, ինչպես նրանց թվաց, շատ երկար ժամանակ: Հեռվից լսվող բլի վայոցը միակ ձայնն էր, որ խզում էր մեռելային լուսթյունը: Թոմի մտորումները ճնշող դարձան: Տղան խոսելու կարիք զգաց: Նա ասաց փրսփըսոցով.

— Հեքի, կարծո՞ւմ ես, որ մեր այստեղ լինելը մեռելներին դուր կգա:

Հեքիբերին փսփսաց.

— Երանի իմանայի: Դրուսթյունը սարսափելի լուրջ է, չէ՞:

— Այդպես է:

Բավական երկար լուսթյուն տիրեց, մինչ տղաներն այդ հարցը ուսումնասիրում էին իրենք իրենց մեջ: Հետո Թոմը շնչաց.

— Կսիր, Հեքի, կարծո՞ւմ ես, որ Հոս Ուիլյամսը լսում է մեզ:

— Անշուշտ լսում է, գոնե նրա հոգին լսում է:

Որոշ լուսթյունից հետո թումն ասաց.

— Երանի միտքը Ուրլյամս ասելի: Բայց ես նրան վի-
րավորելու միտք չունեի: Բոլորը նրան Հոս են անվա-
նում:

— Մարդ պետք է զգուշ լինի մեռելների մասին խոսե-
լիս, թում:

Դա վհատեցրեց նրան, և զրույցը շարունակվեց:

Հանկարծ թումը բռնեց ընկերոջ թևը և ասաց.

— Սո՛ւս:

— Ի՞նչ է, թում:— Եվ երկուսն իրար կպան թպրտացող
որտերով:

— Սո՛ւս: Այ, նորից. շե՛ս լսում:

— Ես...

— Ահա, դու էլ լսեցի՞ր:

— Աստված իմ, թում, նրանք գալիս են, անկասկած գա-
լիս են: Ի՞նչ անենք:

— Զգիտեմ: Կարծո՞ւմ ես, որ մեզ կտեսնեն:

— Ահ, թում, նրանք կարող են մթու՞թյան մեջ տեսնել
էստույնների նման: Երանի եկած չլինեի:

— Է՛, մի վախեցիր: Զեմ կարծում, որ նրանք մեզ ձեռք
տան: Մենք ոչ մի վնաս չենք տալիս: Եթե լրիվ անշարժ
մնանք, գուցե մեզ բոլորովին չնկատեն:

— Կփորձեմ, թում, բայց աստված իմ, ամբողջ մարմը-
նով գողում եմ:

— Լսիր:— Տղաները գլուխներն իրար կպցրին: Հագիվ
չեն շնչում: Գերեզմանատան հեռավոր ծայրից խուլ ձայներ
չեն լսվում:

— Նայիր, այնտեղ նայիր,— շնչաց թումը,— այդ ի՞նչ է:

— Սատանայի կրակ է: Օ՛յ, թում, դա սարսափելի է:

Եավարի միջով անորոշ կերպարանքներ մոտեցան, օրո-
շով հնաձև մի թիթեղե լապտեր, որը լույսի անհամար շո-
տեր էր սփռում գետնին: Հանկարծ Հեբլբերին ցնցվելով
ուզաց.

— Անկասկած սատանաներ են: Երեքն են, աստված իմ,
Թե՛՛ք, մենք կորած ենք: Կարո՞ղ ես աղոթել:

— Կփորձեմ, բայց դու մի վախեցիր: Նրանք մեզ չեն
չեռնի:

— Շք՝ 222...

— Ի՞նչ է, Հեք:

— Մարդիկ են: Առնվազն մեկը: Մեկի ձայնը Մըֆ Գ տերսի ձայնն է:

— Ձի կարող պատահել, մի՞թե:

— Ես ճանաչում եմ նրան: Մի շնչիր և մի շարժվիր: Նա մեզ տեսնելու շափ սրատես չէ: Հարբած է, ինչպես միշտ: Կակած ծերուկ:

— Շատ լավ, անշարժ կմնամ: Ահա կանգնեցին: Ձե՛մ տեսնում: Ահա նորից գալիս են: Արդեն արագ են շարժվում. նորից դանդաղեցին: Նորից շտապում են. շատ են շտապում: Այս անգամ ուղիղ այստեղ են գալիս: Լսիր, Հեք, մի ուրիշի ձայնն էլ եմ ճանաչում: Հնդկացի Ջոնն է:

— Ճիշտ է, անիծյալ խառնածինն է: Ավելի լավ էր սատանաներ լինեին: Տեսնես ինչո՞ւ են այստեղ եկել:

Շնչոցներն այժմ բոլորովին լռեցին, որովհետև երեք հոգի հասան հողաթմբին և կանգնեցին տղաների թաքստոցից մի քանի քայլ հեռու:

— Ահա սա է,— ասաց երրորդ ձայնը, և ձայնի տերը լապտերը բարձրացրեց, երևան հանելով երիտասարդ բժիշկ Ռոբինսոնի դեմքը:

Պոտերը և Հնդկացի Ջոնն թոկերով կապված մի պատգարակ էին բերում, վրան երկու բահ: Նրանք ցած դրեցին իրենց բեռը և սկսեցին գետինը փորել: Բժիշկը լապտերը դրեց գերեզմանի գլխավերևը և նստեց, մեջքը հենելով թեղիներից մեկին: Նա այնքան մոտ էր, որ տղաները կարող էին դիպչել նրան:

— Շտապեք,— ասաց նա ցածրաձայն,— լուսինը կարող է հանկարծ դուրս գալ:

Նրանք ինչ-որ պատասխան փնթփնթացին և շարունակեցին փորել: Որոշ ժամանակ ոչ մի ձայն չկար, բացի հողը մի կողմ նետող բահերի ձայնից: Այդ ձայնը շատ միօրինակ էր: Ի վերջո, մի բահ կապվ դագաղին խուլ, փայտային աղմուկով, և մի քանի րոպե հետո նրանք դագաղը դուրս հանեցին: Բահերով բարձրացրին կափարիչը, դուրս հանեցին

մարմինը¹ և կոպտորեն գեախն գցեցին: Լուսինը ամպերի տակից դուրս եկավ ու լուսավորեց զունաս ղեմքը: Պատգարակը պատրաստ էր: Մարմինը դրեցին վրան, ծածկեցին բարակ վերմակով և պարանով կապեցին: Պոտերը հանեց ծալովի մեծ դանակը և կտրեց պարանի կախված ծայրերը, հետո ասաց.

— Ահա մենք վերջացրինք այս կեղտոտ գործը, միսարի Գե, մի հնգանոց էլ տվեք, թե չէ այստեղ էլ կմնա:

— Ծիշտ է ասում,— ասաց Հնդկացի Ջոն:

— Ան՞ք, դա ի՞նչ է նշանակում,— ասաց բժիշկը,— դուք ձեր վարձը կանխիկ պահանջեցիք, և ես վճարեցի:

— Այո, բայց մեր միջև մի ուրիշ հաշիվ էլ կա,— ասաց Հնդկացի Ջոն՝ մոտենալով բժշկին, որը վեր էր կացել,— հինգ տարի առաջ դուք ինձ վռնդեցիք ձեր հոր խոհանոցից, երբ եկել էի ուտելու բան խնդրելու: Դուք ասացիք, որ ես վատ գործի համար էի եկել, և երբ երդվեցի վրեժ լուծել ձեզնից նույնիսկ հարյուր տարի հետո, ձեր հայրն ինձ ձերբակալել տվեց որպես թափառաշրջիկի: Կարծում եք մոռացե՞լ եմ: Իզուր չէ, որ հնդկական արյուն ունեմ: Իսկ այժմ դուք իմ ձեռքին եք և իմացեք, որ պետք է հաշիվ տաք:

Մինչ այդ Ջոն, բոռուցքը նրա ղեմքին մոտեցնելով, սպասուհուս էր: Բժիշկը հանկարծ հարվածեց և հնդկացուն գետին գլորեց: Պոտերը դանակը գետին պեցեց և գռչեց.

— Է՛, ընկերոջս չխփես...— հաջորդ պահին նա կալավ բժշկին, և Լրկուսը պայքարում էին ամբողջ ուժով ու բոլոր միջոցներով, կանաչ խոտը տրորելով և կրունկներով գետինը քանդելով: Հնդկացի Ջոն վեր թռավ, աչքերը ատելութունից վառվելով, վերջրեց Պոտերի դանակը, կատվի նման գաղտագողի և կուզկուզ մոտեցավ կովոզներին ու սկսեց նրանց շուրջը պտտվել՝ հարմար առիթ որոնելով: Հանկարծ բժիշկն ազատվեց, վերջրեց Ուիլյամսի գերեզմանի ծանր

¹ Այն ժամանակներում կրոնական սնահավատության պատճառով չէր թույլատրվում բժիշկներին անատոմիա սովորել մարդկային դիակների վրա: Այդ պատճառով բժիշկներն ու ուսանողները ստիպված էին մարդիկ վարձել, որոնք գերեզմաններից նրանց համար փորում հանում էին նոր թաղված մեռելներին:

տախտակը և Պոտերին դրանով գետին տապալեց: Նույն պահին խառնածինը հարմար առիթը գտավ և դանակը մինչև կոթը խրեց երիտասարդի կուրծքը: Բժիշկը երերաց և կիսով չափ ընկավ Պոտերի վրա, նրան իր արյամբ ողողելով: Նույն պահին ամպերն այդ սարսափելի տեսարանը ծածկեցին, և երկու վախեցած տղաները մթության մեջ փախան:

Երբ լուսինը նորից դուրս եկավ, Հնդկացի Ջոն կանգնած էր երկու մարմինների վերև և նրանց էր դիտում: Բժիշկն անհասկանալի բառեր շնջաց, մի երկու անգամ խորը շնչեց և անշարժացավ: Խառնածինը մոմոաց.

— Հաշիվը մաքրված է, անիծված լինես:

Հետո նա կոհոպտեց դիակը: Այնուհետև ճակատագրական դանակը դրեց Պոտերի բաց աջ ձեռքին և նստեց շուռ տված դագաղի վրա: Անցավ երեք, չորս, հինգ րոպե, և Պոտերն սկսեց շարժվել ու անքալ: Նա դանակը սեղմեց, բարձրացրեց, նայեց և դողալով ձեռքից ցած գցեց: Հետո նստեց, բժշկի մարմինը իրենից հեռու գլորեց և շփոթված նայեց դրան, հետո իր շուրջը: Նրա աչքերը հանդիպեցին Ջոյի աչքերին:

— Աստված, այս ի՞նչ բան է, Ջո,— ասաց նա:

— Կեղտոտ գործ է,— ասաց Ջոն առանց շարժվելու,— ինչո՞ւ արեցիր:

— Ե՛ս, ես չեմ արել, երբե՛ք:

— Լռիր, այդպիսի խոսքերով չես աղատվի:

Պոտերը դողաց և գույնը գցեց:

— Կարծում էի հարբածությունս անցել է: Այս գիշեր ես չպետք է խմեի: Բայց դեռևս զլուխս պտտվում է՝ ավելի վատ, քան այստեղ գալիս: Ամեն ինչ խառնվել է. ոչինչ չեմ կարողանում հիշել: Ասա, Ջո, անկեղծ ասա, հին ընկեր, ե՞ս արեցի այդ: Ջո՛ւ, ես երբեք չէի ուզում, հոգիս ու պատիվս վկա, ես երբեք այդպիսի նպատակ չունեի: Ասա, ինչպե՞ս պատահեց, Ջո: Ա՛հ, սարսափելի է, որքա՛ն երիտասարդ ու խոստումնալից էր նա:

— Դուք երկուսդ կովում էիք: Նա տախտակով խփեց բոզլիսին, գետնին տապալվեցիր: Հետո վեր կացար երերալով և դանակն առար ու խրեցիր նրա կուրծքը: Մինչ այդ նա մի

ուրիշ սարսափելի հարված հասցրեց: Մինչև այժմ էլ մե-
ռածի նման պառկած էիր:

— Օ՛հ, շեմ իմացել, թե ինչ եմ անում: Կուզենայի
այս պահին մեռած լինել, եթե ես եմ արել: Այդ բոլորը
վիսկիից է և հուզմունքից: Կյանքումս զենք չեմ գործածել,
Ձու կովիլ եմ, բայց ոչ զենքով: Բոլորը կվկայեն այդ բանը:
Ձո, շմատնես, խոստացիր, որ չես մատնի, Ձու Դու լավ տղա
ես: Ես միշտ սիրել եմ քեզ, Ձո, պաշտպանել եմ քեզ: Չե՞ս
հիշում: Չես մատնելու, չէ՞, Ձու— Եվ խեղճ արարածը մար-
դասպանի առաջ ծունկի եկավ և պաղատող ձեռքերը մեկնեց
նրան:

— Այո, դու իմ նկատմամբ միշտ արդար ես եղել: Մըֆ
Պոտեր, և ես քեզ չեմ դավաճանի: Այժմ հանգստացիր. տղա-
մարդու խոսք եմ տալիս:

— Ձո, դու հրեշտակ ես: Դրա համար ես քեզ օրհնելու
եմ, որքան ապրեմ:— Եվ Պոտերը սկսեց լաց լինել:

— Դե, հերիք է: Լաց լինելու ժամանակը չէ: Դու այս
ճամփով գնա, ես՝ այս: Դե՛, շարժվիր և ետևիցդ հետքեր
մի՛ թող:

Պոտերն սկսեց վազել նախ դանդաղ, հետո ամբողջ ու-
ժով: Խառնածինը նայեց նրա ետևից: Նա քրթմնջաց.

— Եթե իսկապես նա շշմել է հարվածից ու խմբելուց,
ինչպես երևում էր տեսքից, նա դանակի մասին չի մտածի,
մինչև այնքան հեռացած լինի, որ կվախենա դրա համար
մեենակ վերադառնալ այսպիսի մի տեղ: Հավի սիրտ ունի:

Երկու կամ երեք բուպե հետո սպանված մարդը, վերմակի
մեջ փաթաթված դիակը, առանց կափարիչի դազաղը և բաց
գերեզմանը մնացել էին միայն լուսնի հսկողության տակ:
Երբից խոր լուսթյուն էր տիրում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Երկու տղաները վազեցին դեպի քաղաք, սարսափից
հազված լեզուներով: Ժամանակ առ ժամանակ նրանք ետ
չե՛ն նայում, վախենալով, որ իրենց հետևող լինի: Ճանա-
պահին պատահող յուրաքանչյուր կոճղ նրանց թվում էր

մարդ և թշնամի: Նրանց շունչը կտրվում էր, իսկ երբ հասան քաղաքի ծայրին գտնվող հյուղականերին, արթնացած մի շան հաշոցը նրանց ոտքերին թևեր տվեց:

— Միայն թե մինչև կաշվի գործարան հասնենք,— շնչաց թումը, երկու հևոցի արանքում:— Այլևս չեմ դիմանում:

Հեքլբերի փնչոցները նրա միակ պատասխանն էին: Տղաներն աչքները հռեցին իրենց հույսերի նպատակակետին և մեծ ճիգ գործ դրեցին հաղթահարելու համար այդ տարածությունը: Նրանք մոտենում էին դրան և ի վերջո, միասին շնչասպառ ներս խոյացան բաց դռնից ու իրենց գոհ զգացին նրա փրկարար հովանու տակ: Նրանց զարկերակները կամաց-կամաց հանդարտվեցին, և թումը շնչաց.

— Հեքլբերի, ի՞նչ ես կարծում, դրանից ի՞նչ դուրս կգոյ:

— Եթե դու կտոր Ռոբինսոնը մահանա, ես կարծում եմ՝ կախաղան:

— Այդպե՞ս ես կարծում:

— Անշուշտ, հաստատ բան է:

Թումը մի պահ մտածեց, հետո ասաց.

— Ո՞վ պիտի հայտնի, մե՞նք:

— Ի՞նչ ես ասում: Իսկ եթե հանկարծ մի բան պատահի և Հնդկացի Ջոյին չկախեն, նա մեզ կսպանի: Դա՛ հաստատ բան է, ինչպես հաստատ է, որ այժմ այստեղ պառկած ենք:

— Ես էլ եմ այդպես կարծում, Հեք:

— Եթե որևէ մեկը պիտի հայտնի, թող Մըֆ Պոտերն անի, եթե այդքան խելք ունի: Նա ընդհանրապես հարբած է լինում:

Թումը ոչինչ չասաց և շարունակեց մտածել, հետո շշնջաց.

— Հեք, Մըֆ Պոտերը չգիտե, ինչպե՞ս կարող է հայտնել:

— Ինչո՞ւ չգիտե:

— Որովհետև ճիշտ այն պահին, երբ նա գլխին ստացավ փայտի հարվածը, Հնդկացի Ջոն արեց այդ բանը: Կարծո՞ւմ ես, որ նա կարող էր դա նկատել: Կարծո՞ւմ ես, որ նա որևէ բան իմացավ:

— Իսկապես, ճիշտ ես ասում, Թո՛մ:

— Եվ գուցե փայտի այդ հարվածից նրա խելքը թռած լինի:

— Ո՛չ, շեմ կարծում, Թո՛մ. նա հարբած էր, ես այդ բանն էի, թեև նա միշտ հարբած է լինում: Երբ հայրս հարբած էր լինում, կարող էիր գլխին ինչով ասես խփել, և բան էր լինում: Նա ինքն էր այդ ասում: Ուրեմն նույնն է նաև Վեֆ Պոտերի համար: Եթե հարբած չլինեիր, այդ հարվածից գուցեև մեռնեիր: Չգիտեմ:

Մտախոհ լուսթյունից հետո Թոմն ասաց.

— Հեքի, դու վստահ ես, որ կարող ես լռել:

— Թոմ, մենք պարտավոր ենք լռել, դու դիտես: Այդ զգացի սատանան մեզ կատվի ձագերից ավելի հեշտ կխեղճե՞ս: Եթե խոսենք, և նրան շկախեն: Լսիր, Թոմ, արի իրար հարցրե՛ք, այո, պետք է երգվենք, որ կլռենք:

— Համաձայն եմ, Հեք, դա լավագույն ձևն է. դե՛, ձեռքդ չբժրացրու և երգվիր, որ...

— Օ՛, ո՛չ, այս դեպքում դա շատ քիչ է. դա լավ է սոսիալական փոքր դեպքերի համար, հատկապես աղջիկների համար: Երբ լռես, պարզ է, ի վերջո խաբելու են և դուրս տան: Եթե շարանան, բայց այսպիսի մեծ դեպքի համար պետք է լուսթյուն լինի: Եվ արյուն:

Թոմն ամբողջ էությամբ ողջունեց այս գաղափարը: Դա արդարավոր էր, մոռյլ և սարսափելի: Ժամանակը, պայմանները, շրջապատը համապատասխանում էին այդպիսի մեծ քրո՛թի: Լուսնի լույսի տակ նա մի տաշեղ գտավ, գրպանից հանեց «կարմիր ներկի» մի կտոր և այնպես, որ լույսն առնու՝ տաշեղի վրա, դժվարությամբ, դանդաղորեն գրեց այս բանը՝ յուրաքանչյուր բառի վրա լեզուն ատամների արանքով շփված փայցնելով.

«Հեք Ֆինը և Թոմ Սոյերը երգվում են,
որ պիտի լռեն այս գործի մասին
և տեղն ու տեղը թող մեռնեն, եթե երբևէ
ասեն և խոսք թոցնեն»:

Այդ բանին հիացած էր Թոմի գրելու հեշտությամբ և ոճի համար: Նա անմիջապես գնդասեղ հանեց բաճկոնի տակից և ուզում էր մարմինը ծակել, բայց Թոմն ասաց.

— Սպասիր, մի արա: Դա պղնձե գնդասեղ է, կարող է ժանգ ունենալ:

— Ժանգն ի՞նչ բան է:

— Դա թույն է, այո, թույն է: Մի անգամ փորձիր դրանից մի կտոր կուլ տալ և կտեսնես:

Թոմը հանեց իր ասեղներից մեկը, և տղաները ծակեցին իրենց բռ. Գ մատները ու արյուն կաթեցրին:

Ի վե՛լ: Մի քանի կաթիլ արյուն հանելուց հետո ճկույթը որպես գրիչ գործածելով, Թոմը կարողացավ ստորագրել: Հետո նա Հեքլբերիին ցույց տվեց ինչպես H և F նկարել, և երգմնագիրը պատրաստ էր: Նրանք հանդիսավորությամբ տաշեղը թաղեցին պատի տակ և համարեցին, որ իրենց լեզուն կողպվել է, ու բանալին հեռու գցվել:

Կիսավեր շենքի մյուս ծայրից մի կերպարանք զգուշորեն ներս մտավ, բայց նրանք չնկատեցին:

— Թոմ,— շնչաց Հեքլբերին,— այս երգումը ընդմիշտ փակ կպահի՞ մեր լեզուն...

— Անշուշտ: Ինչ էլ պատահի, մենք պետք է լռենք: Տեղ-նուտեղը կմեռնենք, չգիտե՞ս:

— Այո, այդպես է:

Որոշ ժամանակ նրանք շարունակեցին շնչալ: Հանկարծ, ճիշտ դրսում, նրանցից տասը քայլ հեռու, մի շուն սկսեց ոռնալ: Տղաները սարսափահար իրար գրկեցին:

— Մեղանից ո՞ր մեկին նկատի ունի,— շնչաց Հեքլբերին:

— Չգիտեմ. շուտ արա, ծակից նայիր:

— Չէ, դու նայիր, Թոմ:

— Ես չեմ կարող, ես չեմ կարող անել, Հեք:

— Խնդրում եմ, Թոմ, ահա, նորից...

— Օ՛, աստված, շնորհակալ եմ,— շնչաց Թոմը,— ես այդ ձայնը ճանաչում եմ. Բուկ Հարբիսոնի՛ ձայնն է:

— Օ՛հ, վերջապես, Թոմ, ես սարսափից մեռնում էի, կարծում էի, թե անտեր շուն է:

1 Բուկը շան անուն է. Թոմը շան տիրոջ ազգանունը տալիս է նաև շանը՝ կոչելով Բուկ Հարբիսոն:

Շունը նորից ոռնաց: Տղաների սիրտը նորից կանգ ա-
ռավ:

— Օ՛յ, աստված, դա Բուլ Հարբիսոնը չէ,— շնչաց Հեքը-
բերին,— նայիր, Թոմ:

Վախից դողալով, Թոմը տեղի տվեց և աչքը դրեց ճեղքի
ժրա: Նրա շունը հագիվ էր լսվում, երբ ասաց.

— Օ՛յ, Հեք, դա անտեր, թափառական շուն է:

— Շուտ արա, Թոմ, նայիր, ո՛ւմ վրա է ոռնում:

— Հեք, նա պետք է երկուսիս նկատի ունենա, մենք
ծիսսին ենք:

— Օ՛յ, Թոմ, երկուսս էլ կորած ենք. ես գիտեմ, թե ուր
ախտի զնամ: Ես այնքան վատն եմ եղել:

— Ահա և պատժվում եմ. այս բոլորը նրանից է, որ
գարոցից փախչում էի և անում այն, ինչ մարդիկ ինձ ասում
էին շանել: Ես կարող էի Սիդի նման խելոք լինել, եթե ուզեի:
Բայց ոչ, չէի լինում: Եթե այս անգամ ազատվեմ, ես պարզա-
պես կիրականորյա դպրոցից դուրս չեմ գալու:

Եվ Թոմն սկսեց հեկեկալ:

— Դո՛ւ ես վատը,— և Հեքըբերին նույնպես սկսեց հե-
կեկալ:— Սխալվում ես, Թոմ Մոյեր, դու պարզապես բարի
հոգևորակ ես ինձ հետ համեմատած: Օ՛հ, աստված իմ, աստ-
ված իմ, երանի ես քո կեսի շափ լավը լինեի:

Թե՛սն արցունքները կուլ տվեց և ասաց.

— Նայիր, Հեքի, նայիր. նա ետևը մեր կողմն է արել:

Աչքը նայեց հրճվանքը սրտում:

— Եիչտ որ, առա՞ջ էլ այդպես էր, այո, այդպես էր,
այո, այո՛ հիմարս, այդ մասին շատածեցի: Է՛հ, դա շատ լավ
է ասումս: Բայց ո՛ւմ նկատի ունի:

Երկուսը դադարեց: Թոմը ականջները սրեց:

— Ե՛հ... Ի՛նչ է այդ,— շնչաց նա:

— Կարծես... կարծես խոզ է խոնչում: Ո՛չ, ինչ-որ մեկը
ասում է, Թոմ:

— Այո, բայց որտե՞ղ, Հեք:

— Ե՛նձ թվում է, որ մյուս ծայրում է: Այդպես է թվում:
Երբեմն երբեմն այնտեղ քնում էր խոզերի հետ, բայց նա
այնտեղ էր խումփացնում, որ գլուխդ առ ու փախիր: Բայց
այնտեղ եմ, այլևս այս քաղաքը չի վերադառնա:

Արկածախնդրութեան ոգին մի անգամ ևս արթնացուց
տղաների մեջ:

— Հեք, ինձ հետ կգա՞ս, եթե քեզ այնտեղ տանեմ:

— Չէի ուզենա, Թոմ. բա որ Հնդկացի Ջոն լինի:

Թոմը տատանվեց: Բայց գայթակղութիւնը այնքան ուժեղ էր, որ տղաները համաձայնեցին փորձել, պայմանով, որ եթե խոստացող դադարի, փախչեն: Ոտքի ծայրերի վրա, իրար ետեկից նրանք առաջ գնացին: Երբ խոստացից հինգ քայլ հեռու էին, Թոմը մի փոքր փայտի կտոր տրորեց, որը սուր աղմուկով ջարդվեց: Մարդը տնքաց, մի փոքր շարժվեց, և լուսնի լույսն ընկավ նրա դեմքին: Մըֆ Պոտերն էր:

Տղաների ոտքերն ու մարմիններն անշարժացան, երբ մարդը շրջվեց, բայց նրանց վախն անցավ: Ոտքի մատների վրա դուրս եկան պատի ճեղքից և մի փոքր հեռվում կանգ առան, իրար հրաժեշտ տալու համար: Երկար, շարագուշակ ոտնոցը նորից լսվեց գիշերային խավարում: Նրանք շուտ եկան և տեսան, որ օտար շունը մի քանի քայլ հեռու էր կանգնած Պոտերի պառկած տեղից և երեսը Պոտերին ուղղած, քիթը՝ երկինք, ոռնում էր:

— Օ՛հ, աստված իմ, նրա վրա է,— բացականչեցին տղաները միասին:

— Լսիր, Թոմ, ասում են. որ մի թափառական շուն ոռնալով եկել է Ջոնի Միլլերի տան շուրջը, երկու շաբաթ առաջ, կեսգիշերին, իսկ գիշերահավը նույն գիշերը մտել է նրանց տունը և սանդղաճաղի վրա կանգնած երգել է, բայց դեռևս ոչ ոք չի մեռնում:

— Այո, բայց մի՞թե հաջորդ շաբաթ օրը Կրեյսի Միլլերը լինհանոցի կրակը շնչեց և շվառվեց:

— Այո, բայց շմեռավ: Դեռ ավելին. լավանում է:

— Դե լավ, սպասիր ու տես: Նա կմեռնի, ինչպես Մըֆ Պոտերը: Այդպես են ասում նեգրերը, իսկ նրանք նման բաներ շատ լավ են իմանում, Հեք:

Հետո տղաները մտամոլոր բաժանվեցին:

Երբ Թոմը ննջարանի լուսամուտից ներս մտավ, գիշերը համարյա անցել էր: Նա ծայրահեղ դժուրութեամբ հանվեց և քնեց, ինքն իրեն շնորհավորելով, որ ոչ ոք չէր իմացել իր

փախուստի մասին: Նա չէր իմանում, որ մեղմորեն խորմ-
փացնող Սիդը քնած չէր և արթնացել էր մի ժամ առաջ:

Երբ Թոմը արթնացավ, Սիդը հագնվել էր և գնացել: Լույ-
սից և մթնշաղից երևում էր, որ ուշ էր: Նա զարմացավ:
Ինչո՞ւ իրեն չէին կանչել, ինչո՞ւ չէին տանջել մինչև արթ-
նացնելը, ինչպես սովորաբար: Այդ մտածումը նրան վա-
խեցրեց: Հինգ րոպեում հագնվեց և ներքև իջավ, թեև իրեն
քնատ և հոգնած էր զգում: Ընտանիքը դեռևս սեղանի շուրջն
էր, բայց նախաճաշն ավարտված էր: Հանդիմանական ոչ
մի խոսք չեղավ, բայց բոլորը խուսափում էին նրան նայե-
լուց: Այնպիսի լուսթյուն և հանդիսավորություն կար օդում,
որ հանցավորի սիրտը սառեց: Նա փորձեց ուրախ երևալ,
բայց իզուր. ոչ մի ժպիտ չառաջացրեց, ոչ մի պատասխան
չստացավ և լուսթյունից սիրտը վախ ընկավ:

Նախաճաշից հետո մորաքույրը նրան մի կողմ տարավ,
և Թոմը համարյա ուրախացավ, որ ծեծ է ուտելու: Բայց
սիալվեց: Մորաքույրը լաց եղավ և ասաց, թե ինչպես է կա-
րողանում այդպես կոտրել իր ծեր սիրտը: Ի վերջո, նա ա-
սաց, որ եթե այդպես շարունակի, ինքն իրեն կործանի,
իր սպիտակ մաղերը չհարգի, կհասցնի իրեն գերեզման,
որովհետև անօգուտ էին Թոմին ուղղելու փորձերը: Այդ ավե-
լի վատ էր, քան հազար անգամ ծեծ ուտելը: Թոմը լաց եղավ,
ինչդրեց ներել, նորից ու նորից խոստացավ փոխվել և թողու-
թյուն ստացավ, միաժամանակ զգալով, որ հասել էր ոչ կա-
տարյալ ներման և շատ թույլ վստահության էր արժանացել:

Նա դուրս եկավ շատ դժբախտ ու փորձ անգամ շարեց
Լոբոսից վրեժ լուծել: Այնպես որ Սիդն իզուր էր ետևի դռնից
փախել: Թոմը դպրոց գնաց ընկճված ու տխուր և Ջո Հարպլըրի
հետ դասից փախչելու համար պատժվեց մի մարդու տեսքով,
որի սիրտը լիքն էր ծանր վշտերով և անտարբեր էր շրջապա-
սի նկատմամբ: Հետո նստեց իր գրասենյանի առաջ, ար-
մունկները դրեց սեղանին ու ծնոտն առավ ձեռքերի մեջ ու
պատին նայեց քաղցած հայացքով մի մարդու, որի վշտերը
հասել էին ծայրահեղ սահմանի և ավելին լինել չէին կարող:
Նրա արմունկը դեմ առափ մի կոշտ իրի: Երկար ժամանակ
հետո նա դանդաղ և տխրորեն փոխեց իր դիրքը և այդ ա-
ռարկան վերցրեց ծանր հոգոցով: Թղթի մեջ փաթաթված

բան էր: Նա բացեց այդ: Մի երկար, խոր, տանջալից հոգոց հետևեց դրան, և նրա սիրտը կտոր-կտոր եղավ: Իր պղնձե զնդակն էր:

Այս վերջին փետուրը կոտրեց ուղտի մեջքը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Կհսորվա մոտ ամբողջ քաղաքը էլեկտրականացած էր սարսափելի նորութունից: Հեռագրի կարիք չկար, որի մասին այդ ժամանակ չէին էլ երազում: Լուրը մարդուց մարդ թռավ, խմբից խումբ, տնից տուն՝ հեռագրից մի քիչ պակաս արագությամբ: Գպրոցի տնօրենը կեսօրից հետո, իհարկե, արձակեց երեխաներին: Քաղաքը կտարակուսեք, եթե նա այդպես շաներ:

Սպանված մարդու մոտ արյունոտ դանակ էին գտել, և մի մարդ պնդել էր, թե դա պատկանում է Մըֆ Պոտերին: Այդպես էր տարածվում պատմությունը: Պատմում էին, որ գիշերը մի ուշացած քաղաքացի տեսել էր Պոտերին վացվելիս, և թե Պոտերը անմիջապես փախել էր: Կասկածելի հանգամանքներ էին, հատկապես վացվելը, որը Պոտերի սովորությունների մեջ չէր մտնում: Պատմում էին նաև, որ քաղաքը խուզարկվել էր «մարդասպաններին» գտնելու համար (ժողովուրդը միշտ կասկածելին համարում է ապացույց) և թե չէին կարողացել գտնել: Գլխավոր փողոցները և ամեն ուղղությամբ ձիավորներ էին ուղարկված: Իբր թե շերիֆը՝ «վստահ էր», որ մինչև երեկո հանցագործը կձերբակալվեր:

Ամբողջ քաղաքը հոսում էր դեպի գերեզմանատուն: Տըխրութունը մոռացած՝ Թոմը միացավ մյուսներին, ոչ նրա համար, որ նա հազար անգամ չէր նախընտրի ուրիշ ուղղությամբ գնալ, այլ որովհետև մի սարսափելի, անբացատրելի ուժ նրան այնտեղ էր քաշում: Հասնելով ահռելի վայրը, նա մարդկանց արանքով սողաց և տեսավ այդ սարսափելի տեսարանը: Նրան թվաց, թե մի դար է անցել իր այս-

1 Երիֆ — պաշտոնյա, որը օկրուզում կատարում է դատավորի կամ ոստիկանի դեր:

տեղ լինելուց հետո: Մեկը նրա թևը բռնեց: Դարձավ և հան-
գիպեց Հեքլբերիի աչքերին: Հետո երկուսն էլ ուրիշ կողմ
նայեցին և մտածեցին, թե արդյո՞ք որևէ մեկը որևէ բան
նկատեց իրենց հայացքի մեջ: Բայց բոլորը խոսում էին, իրենց
ուշադրությունը սևեռած առջևում բացված սարսափելի տե-
սարանին:

«Խեղճ մարդ», «խեղճ երիտասարդ», «սա պետք է խրատ
լինի դիակ գողացողներին», «Մըֆ Պոտերը կկախվի դրա
համար, եթե գտնեն», այդպիսի արտահայտություններ էին
լսում: Իսկ քարոզիչն ասաց. «Դա երկնային պատիժ է. այս
գործի մեջ նրա մատը կա»:

Թոմը ոտից գլուխ գողաց, որովհետև նրա հայացքը ըն-
կավ Հնդկացի Ջոյի մոայլ դեմքին: Այդ պահին ժողովուրդն
սկսեց ճանապարհ բացել, և մի քանի ձայներ լսվեցին: «Նա՛
է՛ նա՛ է, նա ի՛նքն է գալիս»:

— Ո՛վ, ո՛վ,— հարցրեցին բազմաթիվ ձայներ:

— Մըֆ Պոտերը:

— Տեսեք, կանգ առավ, տեսեք, ետ է դառնում, մի՛
ջողկեք, որ փախչի:

Թոմի գլխավերևը, ծառերի վրա գտնվող մարդիկ ասա-
ցին որ նա չի փախչում, նա պարզապես մտածկոտ ու զար-
ժացած է երևում:

— Դժոխային անամոթություն,— ասաց մեկը,— ուզեց
ուշ և հանգիստ նայել իր արած գործին, մարդու շէր սպա-
սում:

Ժողովուրդը կիսվեց, և շերիֆը, Պոտերի ձեռքից բռնած,
ստեղծեցավ: Խեղճ մարդու դեմքն այլայլված էր, աչքերը մատ-
նում էին նրան պատած սարսափը: Երբ Պոտերը հասավ
ուղևճված մարդու մոտ, ամբողջ մարմնով դողաց, ձեռքե-
րով ծածկեց դեմքը և սկսեց լաց լինել:

— Այդ ե՛ս չեմ արել, բարեկամներ,— լաց եղավ նա,—
գուցե խոսք եմ ասում, որ ես չեմ արել:

— Ո՛վ է քեզ մեղադրում,— հնչեց մի ձայն:

Նա ձայնը խելքի բերեց նրան: Պոտերը բարձրացրեց
գլուխը և շուրջը նայեց՝ աչքերում հուսահատություն: Նա տե-
սավ Հնդկացի Ջոյին և բացականչեց.

— Մ, Հնդկացի Ջո, դու ինձ խոստացար, թե երբեք...

— Դա ըո՞ դանակն է,— շերիֆը դանակը դրեց նրա առջև: Պոտերը ցած կընկներ, եթէ շքոնեին և գետնին շնաստեցնեին, նա ասաց.

— Ինչ-որ բան ինձ ասում էր, որ եթէ չվերադառնամ... — նա դողաց. հետո անուժ ձեռքը շարժեց հուսահատ շարժումով և ասաց.— Պատմիր նրանց, Ջո, պատմիր նրանց, այլևս ի՞նչ իմաստ ունի...

Հերթերին և թոմը մունջ ու քարացած մնացել էին և լսում էին, թե ինչպես այդ քարսիրտ ստախուսը հանդարտ պատմում էր: Ամեն բոպե նրանք սպասում էին, որ անամսլ երկինքը աստծո կրակը թափի նրա գլխին և զարմանում էին, տեսնելով, թե ինչքան է ուշանում հարվածը: Եվ երբ նա ավարտեց ու դեռ ողջ-առողջ էր մնում, նրանց մեջ արթնացած երկշոտ ցանկությունը՝ երգումը խղելու և ազատելու խեղճ բանտարկյալի կյանքը, շքացավ, որովհետև պարզ էր, որ այս շարագործը հոգին ծախել էր սատանային և ճակատագրական կլիներ դեմ գնալ այդպիսի ուժի:

— Ինչո՞ւ չփախար, ինչո՞ւ եկար այստեղ,— ասաց մեկը:

— Ուրիշ կերպ չէի կարող, իմ ձեռքին չէր,— տնքայ Պոտերը,— ես ուզեցի փախչել, բայց այստեղից բացի ուրիշ տեղ չկարողացա գնալ:— Եվ նա նորից սկսեց լաց լինել:

Հնդկացի Ջոն իր պատմությունը կրկնեց մի բանի բոպե հետո նույն հանգստությամբ և երգվեց: Եվ տղաները տեսնելով, որ կայծակը չէր խփում նրան, վերջնականապես համոզվեցին, որ Ջոն հոգին ծախել է սատանային: Այժմ հրնդկացին նրանց համար դարձավ ամենահետաքրքրական էակը, որ երբևէ տեսել էին, և իրենց կախարդված աչքերը չէին կարողանում նրանից հեռացնել: Նրանք որոշեցին գիշերները դիտել նրան, եթե առիթը ներկայանար, այն հույսով, որ գուցե սատանայական որևէ բան տեսնեն:

Հնդկացի Ջոն օգնեց սպանված մարդու դիակը վերցնել և մի սալի վրա դնել: Բաղմությունը ցնցվեց. ասացին, որ այդ պահին վերքից արյան կաթիլներ¹ գլորվեցին: Տղա-

¹ Հնուց եկող հավատ կա, թե եթե սպանողը մոտենա սպանվածի դիակին, մարմնի վրայի վերքերը կսկսեն արյունահոսել:

Լերը հույս ունեցան, որ այդ բարեբախտ պատահարը կասկածը կուղղի ճիշտ ուղղութիւնամբ, բայց հիասթափվեցին, որովհետև մի քաղաքացի նկատեց.

— Երեք ոտնաչափ հեռու էր Մըֆ Պոտերը, երբ այդ կատարվեց:

Այդ դեպքից հետո, ավելի քան մի շաբաթ, սարսափելի գաղտնիքն ու խղճի խայթը Թոմին հանգիստ չէին տալիս. մի առավոտ, նախաճաշին, Սիդն ասաց.

— Թոմ, քնիդ մեջ շուռումուռ ես գալիս և այնքան շատ ես խոսում, որ ինձ քնել չես թողնում:

Թոմը գուլնը գցեց և աչքերը գետնին հառեց:

— Դա վատ նշան է,— ասաց մորաքույր Պոլին լրջորեն:— Ի՞նչ կա մտքումդ, Թոմ:

— Ոչինչ, ոչինչ չկա.— բայց տղայի ձեռքը այնպես դողաց, որ նա սուրճը թափեց:

— Եվ այնպիսի բաներ ես խոսում,— ասաց Սիդը:— Երեկ գիշեր դու ասացիր. «Արյո՞ւն է, արյո՞ւն է, այո՛, արյո՞ւն է»: Դու այդ մի քանի անգամ կրկնեցիր: Հետո ասացիր. «Այդպես մի տանջիր, ես, ես կպատմեմ»: Կպատմե՞ս, ի՞նչ կպատմես:

Ամեն ինչ պատմեց Թոմի առջև: Դժվար էր ասել, թե ինչ կարող էր պատահել, բայց բարեբախտաբար մորաքույր Պոլի դեմքից չբացավ մտահոգութիւնը, և Թոմին օգնութեան էկավ առանց իմանալու: Նա ասաց.

— Սը՛սս... դա սարսափելի սպանութիւն է: Ես ինքս ամեն գիշեր այդ մասին երազ եմ տեսնում: Երբեմն երազումս այնպես է լինում, որ իբր ես եմ արել:

Մերին ասաց, որ ինքն էլ նույն ձևով ազդված է: Սիդը բավարարված թվաց: Թոմը նրանց մոտից հեռացավ ինչքան կարող էր արագ և զրանից հետո, ատամնացալից ասեցաւ: ինչու, մի շաբաթ գիշերները ծնոտը կապում էր: Երբեք չիմացավ, որ Սիդը գիշերները դիտում էր նրան և յաճախ քանդում էր կապն ու արմուկներին հենված, երկար ժամանակ լսում, հետո նորից կապը տեղն էր դնում: Թոմի լարված ուղեղը քիչ առ քիչ հանգստացավ, իսկ ատամնացալը մոռացվեց: Եթե Սիդը Թոմի անկանոն մոմոտցութեան օրէնքն էր հասկացավ էլ, ոչ ոքի չասաց: Թոմին թվում

էր, որ իր դպրոցական ընկերները երբեք չեն կարող սատակած կատունների մասին հարցեր շտալ և չեն թողնի, որ իր վիշտը մոռանա: Սիդը նկատեց, որ Թոմը երբեք հարգաքննություններին չէր մասնակցում, թեև նրա սովորությունն էր նման դեպքերում առաջնորդ լինել: Նա նկատեց, որ Թոմը երբեք որպես վկա հանդես չէր գալիս: Դա տարօրինակ էր: Սիդը բաց շթողեց նաև այն փաստը, որ Թոմը շեշտված իուսափողականութուն է հանդես բերում այդ հարցերի ժամանակ ու միշտ փախչում է դրանցից, երբ հնարավոր է լինում: Սիդը զարմանում էր, բայց ոչինչ չէր ասում: Ի վերջո, նույնիսկ այդ տիպի հարցերը գնալով անհետաքրքիր դարձան և դադարեցին տանջել Թոմի խիղճը:

Վշտի այդ ծանր շրջանում, ամեն օր կամ երկու օրը մեկ, Թոմը առիթ էր գտնում, գնում էր բանտի երկաթապատ լուսամուտի մոտ և «մարդասպանին» տալիս մի կտոր խմորեղեն, երբ ձեռք էր բերում: Բանտը փոքր, աղյուսաշեն շենք էր քաղաքի ծայրին և ճահճի մեջ: Պահակներ չկային, որովհետև բանտը հազվագեպ էր զբաղված լինում: Այդ նվերները մեծապես օգնում էին Թոմին խիղճը հանգստացնելու: Քաղաքացիները շատ էին ուզում պատժել Հնդկացի Զոյին դիակներ գողանալու համար, բայց այնպիսի սարսափելի բնավորութուն ուներ նա, որ ոչ ոք չէր ուզում այդ գործում առաջինը հանդես գալ, այդ իսկ պատճառով իրենց մտադրությունից հրաժարվեցին: Երկու անգամ էլ նա իր հայտարարությունը սկսեց կովից հետո եղածներից, առանց խոստովանելու դիակի գողությունը, որն ավելի առաջ էր եղել: Հետևաբար, ավելի լավ համարվեց դատարանում առայժմ այդ հարցը չբարձրացնել:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Թոմի ուղիղը շեղվեց իր գաղտնի մտահոգություններից, որովհետև գտավ նոր և ավելի ծանր պատճառ՝ զբաղվելու: Բեքի Թեչըրը դադարել էր դպրոց գալ: Մի քանի օր Թոմը պայքարեց իր հպարտության դեմ և փորձեց «վիշտը քամուն տալ»: Նա սկսեց զիշերները շրջել աղջկա հոր տան շրջակայքում և իրեն շատ դժբախտ էր զգում: Բեքին հիվանդ էր:

Իսկ եթե մեռնե՞ր: Այդ մտածողութեան մեջ հուսահատութիւն կար: Նա այլևս պատերազմներով, նույնիսկ ծովահենութեամբ չէր հետաքրքրուի: Կյանքի հմայքը կորել էր, մնացել էր միայն թախիծը: Նա մի կողմ դրեց գլորանն ու փայտը: Գրանք այլևս հաճույք չէին պատճառում: Մորաքույրը մտահոգված էր: Նա բոլոր տեսակի դեղերը փորձեց տղայի վրա: Մորաքույր Պոլին այն մարդկանցից էր, որոնք հափըշտակվում են պատենտ ունեցող դեղերով և բոլոր այն նորահնար մեթոդներով, որոնք առողջացնում կամ բարելավում են: Այդպիսի բաների առաջին փորձարկողն էր նա: Երբ բուժման գծով որևէ նոր բան էր հայտնվում, նա անմիջապես իրարանցման մեջ էր ընկնում, ուզում էր փորձել: Ոչ իր վրա, որովհետև նա չէր հիվանդանում, այլ որևէ մեկի, ով ձեռքն ընկներ: Նա բաժանորդ էր բոլոր «Առողջապահութիւն» պարբերաթերթերի ու շառլատանական բրոշյուրների և դրանց հանդիսավոր տգիտութիւնը նրա համար շնչելու օդ էր: Ամբողջ հիմարութիւնը, որ դրանք պարունակում էին, թե ինչպե՞ս պիտի օդափոխվել, ինչպես քնել, ինչպես վերկենալ, ինչ ուտել, ինչ խմել, ինչքան դրադվել մարմնամարզութեամբ, միտքն ինչքան և ինչպես զբաղեցնել, ինչ տեսակ հագուստ հագնել. այս ամբողջը նրա համար Ավետարանի խոսք էր, և նա երբեք չէր նկատում, որ այդ ամսվա «առողջապահական» ամսագրերն ընդհանրապես հակասում էին չախորդ ամսվա ամսագրերին: Նա պարզհոգի և բարի էր, այդ պատճառով էլ հեշտորեն զոհ էր դառնում: Ի մի հավաքած շաղակրատող ամսագրերն ու կեղծ դեղերը, մահով զինված, իր դժգոյն ձին նստած, նա փոխաբերական լեզվով խոսում էր «իր ետևից եկող դժոխքի մասին»: Բայց երբեք չէր կասկածում, որ ինքը բուժող հրեշտակ չէր իր հիվանդ հարեանների համար, ոչ էլ ամենաբույժ սպեղանի:

Զբաղուցիւթիւնն այդ ժամանակ նորութիւն էր, և Թոմի վաճառողները՝ ծառից ընկած պտուղ: Նա Թոմին արթնացնում էր լույսը շրջված, տանում էր ցախատուն և սառը ջուր ցողում վրան: Հետո պինդ շփում էր կոշտ սրբիչով, փաթաթում սավանի մեջ և վերմակներով ծածկում, որ տղան չօճ քրտներ և մարմնի ծակոտիներէից դուրս գային դեղին բծեր, ինչպես ասում էր Թոմը:

Բայց, հակառակ այս բոլորին, տղան գնալով ավելի քախժոտ, անգույն ու խղճալի էր դառնում: Մորաքույրը բուժմանն ավելացրեց տաք լողանքներ, ցնցուղ: Տղան մնում էր ընկճված, ինչպես դիակառք: Նա սկսեց բուժիչ ջրի մեջ ախորժակ բացող դեղեր և պլաստերներ ավելացնել: Նա իր օւժերը փորձեց ինչքան կարող էր և տղային պատեց ամեն ասակ կեղծ դեղերով:

Թոմն անտարբեր էր դարձել հալածանքի հանդեպ, և դա ծեր կնոջ սիրտը լցրեց անհանգստությամբ: Այդ անտարբերությունը ամեն կերպ պետք էր կոտրել: Այդ ժամանակ նա առաջին անգամ լսեց «ցավ կտրողի» մասին: Նա անմիջապես պատվիրեց դրանից: Փորձեց և լցվեց երախտագիտությամբ: Դա պարզապես հեղուկ կրակ էր: Նա մի կողմ թողեց ջրաբուժությունը, մնացած բոլորը և հավատքը կենտրոնացրեց «ցավ կտրողի» վրա: Նա Թոմին թեյի մի լիքը զղալ խմեցրեց և խոր մտահոգությամբ սպասեց արդյունքին: Պառավի մտահոգությունն անմիջապես անցավ, հոգին նորից խաղաղվեց, որովհետև «անտարբերությունը» կոտրվեց: Տղան չէր կարող ավելի վայրի, ավելի մեծ հետաքրքրություն ցույց տալ, եթե նրա տակ կրակ վառեին:

Թոմն զգաց, որ սթափվելու ժամանակն էր: Այդ տեսակ կյանքը բավական ուժանտիկ էր, բայց սկսում էր անհետսփրթիր դառնալ: Նա մտածեց ազատվելու զանազան պլաններ մշակել և ի վերջո որոշեց ընդունել, որ «ցավ կտրողը» օգնել է: Այնքան հաճախ էր այդ դեղից պահանջում, որ անիմաստ դարձավ, և մորաքույրն ասաց, որ իր գլխի ճարը սեանի, իր ձեռքով ընդունի դեղը, դադարի իրեն անհանգրստացնելուց: Եթե բուժվողը Սիդը լիներ, պառավը չէր դադարի հաճույք զգալուց, բայց քանի որ դա Թոմն էր, նա շարունակում էր գաղտնի հետևել շշերին: Նա տեսավ, որ շշի պարունակությունը իսկապես սակասում է, բայց մտքովն էլ չանցավ, որ տղան բուժում էր հյուրասենյակի տախտակամածի մեծ ճեղքը:

Մի օր Թոմը բուժում էր ճեղքը, ևրբ մորաքրոջ դեղին կատուն մլավելով և թեյի զգալին նայելով, մոտեցավ աղահոբեն խնդրելով, որ համը տեսնի: Թոմն ասաց.

— Մի խնդրիր, Պիտեր, եթե իսկապես դրա կարիքը չես
զգում:

Բայց Պիտերը նշան արեց, որ զգում է:

— Ավելի լավ է վստահ լինես:

Պիտերը վստահ էր:

— Դե, դու ինքդ ես խնդրում, և ես տալիս եմ, որովհետև
ագահ չեմ: Եթե դուրդ չգա, ոչ ոքի չմեղադրես, բացի քե-
զանից:

Պիտերը համաձայնեց: Թո՛մը բաց արեց կատվի բերանը
և «ցավ կտրողը» լցրեց ներս: Պիտերը մի քանի յարդ թռավ
օդում, հետո մի սուր ճիչ արձակեց և սկսեց սենյակում
պտտվել՝ կահույքին խփվելով, ծաղկամանները գլորելով և
տնով մեկ աղմուկ հանելով: Ապա ետևի թաթերին կանգնե-
լով, սկսեց ինչ-որ խենթ ուրախությամբ գլուխը բարձր պա-
հած՝ շրջել անզուսպ հրճվանքով: Հետո նորից սկսեց սեն-
յակում պտտվել, ավերածություն ու քոս տարածելով իր
ճանապարհին: Մորաքույր Պոլին ճիշտ ժամանակին ներ-
ժտավ և տեսավ, թե ինչպես կատուն մի քանի «խաղ խա-
ղաց», վերջին անգամ թռիչք կատարեց և լուսամուտից դուրս
թռավ, մնացած ծաղկամանները հետը տանելով: Մեր լեզին
զարմանքից քարացած՝ նայեց ակնոցի վերևից: Թո՛մը հա-
ռակին գալարվում էր, ծիծաղից շնչակտուր լինում:

— Թո՛մ, ի՞նչ է պատահել կատվին:

— Չգիտեմ, մորաքույր, — կմկմաց Թո՛մը:

— Երբեք այդպիսի բան չեմ տեսել: Ինչի՞ց այդպես
գարձավ:

— Իսկապես, չգիտեմ, մորաքույր: Կատունները միշտ
այդպիսի բաներ են անում, երբ ուրախ են լինում:

— Իսկապե՞ս: — Նրա խոսելու տոնի մեջ մի բան կար,
որ Թո՛մին զգաստացրեց:

— Այո, այդպես է: Ես այդպես եմ կարծում:

— Կարծո՞ւմ ես:

— Այո, մորաքույր:

Մեր լեզին կուացավ: Թո՛մը դիտում էր տազնապալից հե-
ռաճարությամբ: Նա շատ ուշ հասկացավ մորաքրոջ մտա-
կությունը: Մահճակալի տակ երևում էր թեյի գդալը: Մո-
րաքույր Պոլին վերցրեց: Թո՛մը ետ-ետ գնաց և հայացքը

խանարհեց: Մորաքույր Պոլին նրան բարձրացրեց սովորական ձևով՝ ականջից բռնած, և մատնոցով պինդ խփեց գլխին:

— Սիրելիս, ինչո՞ւ ես այդպես վարվում այդ խեղճ և նկեղու անասունի հետ, հը՞:

— Ես այդ արեցի խղճալուց, որովհետև նա մորաքույր շունի:

— Մորաքույր շունի... այ դու ապուշիկ: Մորաքույրն ի՞նչ կապ ունի դրա հետ:

— Մեծ կապ: Եթե մորաքույր ունենար, կմտահոգվեր նրա մասին: Առանց խղճալու կվառեր նրա ներսը, շմտածելով, թե մարդ է:

Մորաքույր Պոլին հանկարծ խղճի խայթ զգաց: Հարցը նոր լույսով սլատկերացավ. այն, ինչ դաժան էր կատվի համար, կարող էր դաժան լինել նաև երեխայի համար: Նա չկսեց մեղմանալ: Զղջաց: Պառավի աչքերը մի փոքր խոնավացան, և նա ձեռքը թոմի գլխին դնելով, մեղմորեն ասաց.

— Ես բո լավն էի ցանկանում, Թոմ: Եվ դա օգնեց քեզ: Թոմը նրա դեմքին նայեց լրջությամբ, բայց շուրթերի անկյունները աննկատելի ցնցվում էին:

— Ես դիտեմ, որ իմ լավն ես ցանկանում, մորաքույր, ինչպես ես՝ Պիտերի լավը: Ես նրան լավություն արեցի: Երբեք չեմ տեսել, որ նա այդքան ուրախ լինի:

— Է՞, հերիք է, Թոմ, գնա, քանի ինձ շնա վշտացրել: Եվ փորձիր լավ տղա լինել գոնե մի անգամ: Դու այլևս դեղ ընդունելու կարիք չունես:

Թոմը ժամանակից շուտ դպրոց հասավ: Նկատվում էր, որ այս տարօրինակ երևույթը վերջերս ամեն օր էր տեղի ունենում: Եվ այժմ, ըստ վերջին ժամանակների սովորության, փոխանակ ընկերների հետ խաղալու, մնաց բակի դռան մոտերքում: Ասում էր, թե հիվանդ է, և հիվանդի տեսք ուներ: Նա աշխատում էր ամեն կողմ նայողի տեսք ունենալ, բայց իսկապես նայում էր դեպի փողոցը: Այդ պահին երևաց Զեֆ Թեչըրը, և Թոմի դեմքը պայծառացավ: Նա մի պահ դիտեց, հետո վշտահար դուրս եկավ: Երբ Զեֆ Թեչըրը տեղ հասավ, Թոմը մոտեցավ նրան և անընդհատ առիթ էր ման գալիս Բեքիի մասին խոսելու, բայց բութ տղան ոչ մի

կերպ գլխի շէր ընկնում: Թումը նայում էր ու նայում, հույսով լցվում ամեն անգամ, երբ վառ գուլնի մի զգեստ էր երևում, և ատում էր դրա տիրոջը, երբ տեսնում էր, որ դա իր ուզածը չէր: Ի վերջո, շրջազգեստները դադարեցին երևալուց, և նա վերջնականապես հուսահատութեան մեջ ընկավ: Մտավ դպրոցի դատարկ սենյակը և նստեց տառապելու: Հետո մի շրջազգեստ էլ անցավ դռնով, և Թումի սիրտը սաստիկ տրոփեց: Հաջորդ վայրկյանին նա դրսում էր և հնդկացու պես «մոլեգնած» ճշում էր, ծիծաղում, տղաներին հալածում, կյանքի կամ հաշմանդամ դառնալու զնով ցանկապատի վրայով թռչում, ձեռքերի վրայով գլորվում, գլխի վրա կանգնում, անում իր իմացած բոլոր հերոսական արարքները և երկյուղով նայում, թե Բեթի Թեչըրը նայո՞ւմ է: Բայց աղջիկն այդ բոլորի հանդեպ կարծես անտարբեր էր: Նա չէր էլ նայում: Կարո՞ղ էր պատահել, որ աղջիկը շնկատեր Թումին: Տղան իր գործունեությունը փոխադրեց աղջկա մոտերքը, «կսեց նրա շուրջը պտտվել մարտական կոշերով, վերցրեց ազաններից մեկի գլխարկը և զցեց դպրոցի կտուրը, խուժեց տղաների մի խմբի մեջ, նրանց այս ու այն կողմ զցելով, և փովեց Բեթիի քթի տակ, համարյա վախեցնելով նրան: Աղջիկը շուտ եկավ, քիթը երկինք տնկած, և Թումը լսեց նրա խոսքերը.

— Փը՛ֆ, ոմանք կարծում են, թե իրենք շատ ճարպիկ են... միշտ իրենց ցույց են տալիս:

Թումի այտերը վառվեցին: Նա իրեն հավաքեց, վեր կացավ տխուր, ընկճված և գլխիկոր մի կողմ քաշվեց:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Թումը վճռել էր: Նա ընկճված էր ու անհույս: Մտածում էր, որ ինքը մոռացված և բարեկամներից զուրկ տղա էր, ոչ ոք չէր սիրում իրեն: Երբ իմանան, թե ինչ բանի են մղել իրեն, գուցե զղջան: Փորձեց ուղղվել, բայց թույլ չտվին, որովհետև նրանք մի բան էին միայն ցանկանում. իրենից ազատվել: Ուրեմն, թող այդպես լինի, թող նրան մեղադրեն հեռանալների համար, ինչո՞ւ չէ: Բարեկամ չունեցողը ի՞նչ

իրավունք ունի դժգոհելու: Այո, նրան ի վերջո մղել էին այդ բանին, նա ոճրագործի կյանք կվարի: Ընտրութիւն չկար: Մինչ այդ Թոմը հասել էր Միդս Լեյն մարգագետնի մյուս ծայրը և հեռվից լսեց աշակերտներին հետճաշյա դասի կանչող զանգի ձայնը: Նա լաց եղավ, մտածելով, որ այլևս երբեք չի լսելու այդ մտերիմ ձայնը: Շատ ծանր էր: Հակառակ իր կամքի, նա վճռոված էր ցուրտ աշխարհը. պետք է հնազանդվեր: Բայց Թոմը ներում էր մարդկանց: Հետո արտասուքն ավելի առատացավ:

Ճիշտ այդ պահին նա հանդիպեց իր մտերիմ ընկերոջը՝ մուսյլ Զո Հարպըրին, որն, ըստ երևութիւն, հոգում մի մեծ և դառը կսկիծ ունեւր: «Մի նպատակ ունեցող երկու հոգիները» անշուշտ իրար միացան: Թեքով աչքերը սրբելով, Թոմն սկըսեց ինչ-որ բան ասել տնից փախչելու իր որոշման մասին, որտեղ նրա հետ խիստ էին վարվում և բանի տեղ չէին գնում: Խոսեց արտասահման գնալու մասին, որտեղից երբեք չէր վերադառնալու: Նա ավարտեց խոսքը, հուսալով, որ Զոն իրեն չի մոռանա:

Բայց պարզվեց, որ Զոն ուզում էր նման մի բան խընդրել Թոմին և այդ նպատակով եկել էր նրան հանդիպելու: Մայրը, ինչ-որ կրեմ խմելու համար, որ նա նույնիսկ չէր համտեսել և այդ մասին ոչինչ չգիտեր, ծեծել էր նրան: Պարզ էր, որ մայրը հոգնել էր իրենից և ցանկանում էր, որ որդին հեռանա: Եթե նա այդպէս էր զգում, տղային ոչինչ չէր մնում անել, բացի ենթարկվելուց: Նա հույս ուներ, որ մայրը երջանիկ կլինի և երբեք չի զղջա իր խեղճ աղային զուրս քշելու համար, թեկուզ անզգա աշխարհում նա տառապի ու մահանա:

Մինչ երկու տղաները տխուր քայլում էին, նրանք խոսք տվին եղբայրների պես իրար թե-թիկունք լինել և երբեք չբաժանվել, մինչև մահը ազատի նրանց այս տանջանքներից: Հետո սկսեցին իրենց ծրագրերն առաջադրել: Զոն ուզում էր ճգնավոր դառնալ և ինչ-որ քարանձավում ապրելով, ի վերջո մահանալ ցրտից, բայց լսելով Թոմին, նա համաձայնեց, որ հանցագործի կյանքը առավելութիւններ ունի, և որոշեց ծովահեն դառնալ:

Սանկտ-Պետերբուրգից երեք մղոն հեռու, ուր Միսսիսիպի

գժար մեկ մղոնից ավելի լայնութիւն ուներ, կար մի երկար
 և նեղ անտառապատ կղզի, ծանծաղուտ, ավազոտ ծայրա-
 մասով, որը հարմար էր որպէս ավազականոց: Կղզին ան-
 մարդաբնակ էր, ընկած էր հակառակ ափի կողմը, որը
 թածկված էր համարյա կուսական անտառով: Ուրեմն՝ Զեկ-
 տեի կղզին ընտրված էր: Թե ո՞վ էր լինելու նրանց ծովա-
 նետութեան «զոհը», այդ մասին շատածեցին: Հետո
 ասան Հեքլբերի Ֆիննին, որն անմիջապէս միացավ տղանե-
 տեան, որովհետև բոլոր ասպարեղները նրա համար մեկ էին.
 նա անտարբեր էր: Նրանք որոշեցին հանդիպել հարմար ժա-
 մին, այսինքն՝ կեսգիշերին, մի ամառի տեղում, ավանից եր-
 ան մղոն վերև, գետափին: Այնտեղ կար փայտե մի փոքր
 շէնք, որը նրանք նպատակ ունեին գրավել: Յուրաքանչյու-
 րը խայծ, կարթեր և սննդամթերք պիտի բերեր, դրանք գո-
 րծնալով հնարավորին շափ մութ ու խորհրդավոր ձևով,
 քաղցեա վայել է ավազակներին: Հետմիջօրեից առաջ նը-
 քանք հպարտութեամբ քաղաքում լուր տարածեցին, թե շու-
 քով քաղաքում «մի բան» պիտի լինի: Այս անորոշ լուրն
 ասացողներին նախազգուշացնում էին «լուռ մնալ ու սպա-
 սել»:

Զեկիցի ժողով մտտ Թոմը խողի ապուխտով և ուրիշ ավար-
 տով եկավ... սպասեց խիտ խոտերի մեջ, մի ուղղածից
 անտեթափի վրա, հանդիպման վայրի վերևում: Աստղալույս
 էր և խաղաղ: Հսկա գետը հանգստացող օվկիանոսի նման
 էր: Թոմը մի պահ ականջը ձայնի պահեց, ոչ մի ձայն լու-
 չուէր: Նա չէր խզում: Հետո ցածր, պայմանավորված ձևով սու-
 ճաբ նրան պատասխանեցին զառիթափի տակից, Թոմը երկու
 անգամ էլ սուլեց: Այդ աղղանշաններին նույն ձևով պատաս-
 խանեցին: Հետո մի զուսպ ձայն ասաց.

— Ո՞վ է եկողը:

— Թոմ Սոյերը, Իսպանիայի ծովի Սև Վրիժառուն: Զեր
 անունը ասեք:

— Հեք Ֆիննը՝ Արյունոտ Զեռքը, և Զո Հարպըրը՝ Մովելի
 Զարափը:

Եւ անունները Թոմը ընտրել էր իր սիրած գրքերից:

— Եւ, ասացեք պայմանական խոսքը:

Գիշերային խավարում երկու հոգի խռպոտ շշուկով արտասանեցին սարսափելի բառը.

— «Արյուն»:

Թոմը զառիթափից գցեց ապուխտը և հտևից ցած գլորվեց, վնասելով մաշկը և շորերը: Զառիթափի եզերքով դեպի ներքև հեշտ ու հարմարավետ ճանապարհ կար, բայց այն շուներ արկածի դժվարությունը և վտանգը, որը բարձր են գնահատում ծովահենները:

Սովերի Սարսափը բերել էր խոզապուխտի մի կող, որը շատ դժվարությամբ էր տեղ հասցրել: Արյունոտ Ձեռքը՝ Ֆինները, մի կաթսա էր գողացել և մի քիչ կիսաշոր ծխախոտ: Բերել էր նաև եգիպտացորենի մի քանի ցողուն ծխամորճ պատրաստելու համար, թեև, բացի իրենից, ծովահեններից ոչ մեկը ոչ ծխում էր, ոչ ծամում: Իսպանական ծովի Սև Վրիժառուն հայտարարեց, որ չի կարելի առանց կրակի գործի անցնել: Դա խելոք միտք էր. այդ ժամանակ լուցկին համարյա հայտնի չէր: Նրանք հեռվում՝ հարյուր յարդ վերև, մի լաստի վրա կրակ տեսան և զգուշությամբ գնացին այնտեղ ու մի խանձող վերցրին: Այդ գործողությունը նրանք վերածեցին մի տպավորիչ արկածախնդրության. իրար «հեյ» էին ասում երբեմն և հանկարծ կանգ առնում մատը շրթների վրա դրած, ձեռքերը դնում երևակայական դաշունների վրա և կիսաձայն հրամաններ արձակում, եթե «թշնամին» շարժվի, դաշունը «խրիր մինչև կոթը», որովհետև «մեռելները չեն մատնում»: Նրանք շատ լավ գիտեն, որ լաստավարները քաղաք էին գնացել, որտեղ կամ քնած էին, կամ կերուխուսով էին զբաղված, բայց դա պատճառ չէր, որ նրանք այդ բոլորն անեին ոչ ծովահենաբար:

Շուտով նրանք ճանապարհ ընկան: Թոմը ղեկավարում էր լաստը, Հեքը հտևի թիակի մոտ էր, Զոն՝ առջևի: Թոմը կանգնել էր նավի մեջտեղում, հոնքերը կիտած, ձեռքերը կրծքին ծալած և հրամաններ էր արձակում ցածր, լուրջ շշուկով.

— Դեպի քամին, քամու ուղղությամբ:

— Լսո՛ւմ եմ, սըր:

— Ուղի՛ղ, ուղի՛ղ:

— Լսո՛ւմ եմ, ուղիղ, սըր:

— Առագաստները բացեք:

— Լսո՛ւմ եմ, առագաստները բացել, սրբ:

Քանի որ տղաները լաստը քշում էին դեպի գետի մեջտեղը և միայն մի ուղղութեամբ, անկասկած հասկանալի է, որ այս հրամանները տրվում էին ձևի համար և ոչինչ էլ չէին նշանակում:

— Ո՞ր առագաստներն են բարձրացված:

— Ներքևի, վերևի և թռչողները, սրբ:

— Կենտրոնականը բարձրացրեք. ավելի եռանդով, քաջեր. առջևի մասում ուշադիր եղեք. ավելի եռանդով:

— Լսում եմ, սրբ:

— Բաց թողեք առագաստը. կենտրոնականը բարձրացրեք, ձեզ տեսնեմ, իմ քաջեր:

— Լսում եմ, սրբ:

— Քամու ուղղութեամբ. ձախ կողմի վրա: Պատրաստ եղեք ցամաքին մոտենալու: Գեպի ցամաք, դե՛, տղերք, եռանդով, եռանդով:

— Լսում եմ, եռանդով, սրբ:

Լաստը հասավ գետի մեջտեղը: Տղաները լաստի գլուխն ուղղեցին և թիակները ցած դրին: Գետը խորունկ չէր, երկու կամ երեք մղոնի արագութեամբ ուներ: Հաջորդ երեք քառորդ ժամվա ընթացքում նրանք գրեթե շիտուեցին: Այժմ լաստն անցնում էր քաղաքի առջևով: Մի քանի փայլփլող լույսեր ցույց էին տալիս քաղաքի տեղը, որը խաղաղ քնած էր, աստղերը իր մեջ ցոլացնող լայն ջրից այն կողմ, անտեղյակ մեծ իրադարձությանը: Սև Վրիժառուն անշափ ուրախ էր: Վերջերս տղան շատ էր վշտացել և ցանկանում էր, որ «նա» կարողանար տեսնել իրեն այժմ, փոթորկալից ծովի վրա, կործանման և մահվան վտանգի մեջ, անվախ սրտով, տեսնել, թե ինչպես շրթների վրա դառը մի ժպիտ, նա գնում է դեպի իր ճակատագիրը: Երևակայության մի փոքր ճիգով Ջեկսոնի կղզին հեռացավ, քաղաքից անտեսանելի դարձավ, և տղան կոտորված, բայց զոհ սրտով «վերջին անգամ» նայեց հայրենի քաղաքին: Մյուս ծովահեններն էլ նայում էին «վերջին անգամ»: Նրանք այնքան երկար նայեցին, որ քիչ մնաց հոտանքը նրանց կղզուց հեռացներ: Բայց ժամանակին նկատեցին վտանգը՝ կանխեցին: Ժամը երկուսին լաստը ափ հասավ կղզու ծայրից երկու հարյուր յարդ հեռու: Երկար ժա-

մանակ գնում-գալիս էին, բեռնաթափում իրենց ապրանքը։ Լաստից վերցրին նաև մի հին առագաստ և անտառի մի խուլ մասում դրանով վրան շինեցին իրենց ունեցվածքը պահելու համար։ Լավ եղանակին պետք է բացօթյա քնեին, քանի որ ավազակներ էին։

Տղաները կրակ վառեցին մի մեծ կոճղի կողքին, անտառից քսան-երեսուն քայլ հեռու և ընթրիքի համար մի քիչ խոզի միս տապակեցին, օգտագործելով խոզի մսի իրենց բերած ամբողջ պաշարի կեսը։ Նրանց հրաշալի թվաց այդպես ազատ ընթրելը անմարդաբնակ և շուտամենասիրված մի կղզու կուսական անտառում, հեռու մարդկային բնակությունից։ Նրանք ասում էին, որ այլևս քաղաքակիրթ կյանքին չեն վերադառնա։ Մտռերն ի վեր մտազուրկ կրակը լուսավորեց նրանց դեմքերը, և կարմիր բոցերն ընկան նրանց անտառե գղջակի ծառերի բնբրի և տերևների վրա։ Երբ կերան տապակած մսի վերջին պատառը և սպիտակ հացի վերջին կտորը, տղաները գոհունակությամբ փռվեցին կանաչ խոտի վրա։ Նրանք կարող էին ավելի զով տեղ գտնել, բայց չէին ուզում իրենց զրկել այդքան ոռոմանտիկ տեսարանից, ինչպիսին էր հանգչող կրակը։

— Հրաշալի է, չէ՞, — ասաց Ջոն։

— Հրաշալի է, — պատասխանեց Թոմը։

— Ի՞նչ կասեին տղաները, եթե կարողանային մեղ տեսնել։

— Ինչ կասեի՞ն. պարզապես նախանձից կմեռնեին, չէ՞, Հեքի։

— Անշուշտ, — ասաց Հեքիբերին, — բոլոր դեպքերում ես գոհ եմ։ Սրանից լավ բան ինձ պետք չէ։ Ուտելու հարցում պահանջկոտ չեմ, հետո էլ այստեղ ոչ ոք չի գա, առանց պատճառի ինձ չի ծեծի, վատ խոսքեր չի ասի։

— Իմ ուղած կյանքն է որ կա, — ասաց Թոմը։ — Ստիպված չես առավոտները շուտ վեր կենալ և ստիպված չես դպրոց գնալ, լվացվել ու անել մնացած բոլոր հիմարությունները։ Տեսնո՞ւմ ես, Ջո, ծովահենը, երբ ցամաք է դուրս եկել, անելու ոչինչ չունի, մինչդեռ ճգնավորը պարտավոր է բավական շատ աղոթքներ անել ու ոչ մի հաճույք չստանալ, միշտ մենակ լինել։

— Այո, այդպես է,— ասաց Ջոն,— բայց, գիտե՞ս ինչ, ես այդ մասին երկար չեմ մտածել: Այժմ, երբ փորձել եմ, նախընտրում եմ ծովահեն լինել, քան ճգնավոր:

— Տեսնո՞ւմ ես,— ասաց Թոմը,— մեր օրերում մարդիկ ճգնավորներին շատ չեն հարգում, ինչպես նախկինում, մինչդեռ ծովահենը միշտ հարգված է: Բացի այդ, ճգնավորը պարտավոր է քնել ամենակոշտ տեղերում, հագնել ցնցոտիներ, գլխին մոխիր ցանել, կանգնել անձրևի տակ և...

— Ինչպե՞ս է ցնցոտիներ հագնում և գլխին մոխիր ցանում,— հարցրեց Հեքը:

— Չգիտեմ, բայց պարտավոր են այդպես անել: Ճգնավորները միշտ այդպես են անում: Պարտավոր ես, եթե ճբգնավոր ես:

— Ես այդպես չէի անի, եթե լինեի,— ասաց Հեքը:

— Հապա ի՞նչ կանեիր:

— Չգիտեմ, բայց այդպես չէի անի:

— Բայց, Հեք, դու պարտավոր էիր. հապա ինչպե՞ս կապրեիր:

— Ես պարզապես դրան չէի դիմանա: Ես կփախչեի:

— Փախչել: Ոչ թե ճգնավոր կդառնայիր, այլ հիմար. քեզ կնշխովին:

Արյունոտ Ձեռքը չպատասխանեց, որովհետև զբաղված էր սվեյխ հետաքրքրական գործով: Մաքրել էր մի ցողուն, ծխախոտով լցրել, իսկ այժմ կրակը կպցրած ծխի ամպ էր փչում գոլթա: Նա երանության մեջ էր: Մյուս ծովահենները նախանձեցին նրա այս արքայական վայելքին և գաղտնի որոշեցին կարճ ժամանակում տիրապետել դրան: Այդ պահին Հեքը հարցրեց.

— Իսկ ի՞նչ են անում ծովահենները:

— Թոմը պատասխանեց.

— Նրանք պարզապես ուրախ կյանք են վարում. նավեր են գրավում ու այրում, փողը վերցնում են, թաքցնում իրենց կողմ: շատ գաղտնի վայրերում, որտեղ այդ իրերին հսկող ուժականներ կան: Ծովահենները սպանում են նավերի մեջ եղած բոլոր մարդկանց և ծովն են թափում:

— Իսկ կանանց տանում են կղզի,— լրացրեց Ջոն:— Արտե՞ք կանանց չեն սպանում:

— Ոչ, կանանց չեն սպանում,— հաստատեց Քումը:—
Նրանք շատ ազնիվ են, իսկ կանայք միշտ սիրուն են լինում:

— Եվ հազնում են ամենաշքեղ հագուստները: Չէ՞, Օ՜,
ոսկու, արծաթի ու գոհարների մեջ լողում են,— ասաց Զոն
ոգևորված:

— Ուրե՞ր,— ասաց Հեքը:

— Մովահենները:

Հեքը շփոթված նայեց իր հագուստներին:

— Ինձ թվում է, որ ես ծովահենի հարմար հագուստներ
չունեմ,— ասաց նա տխրածայն,— բայց թե բացի սրանցից,
ուրիշը չեմ ճարե՞լ:

Տղաներն ասացին, որ գեղեցիկ հագուստները շուտով կլի-
նեն, երբ սկսեն իրենց արկածները: Նրանք համոզեցին Հե-
քին, որ այդ հագուստները հարմար էին գործ սկսելու հա-
մար, թեև հարուստ ծովահենի համար սովորություն էր հար-
մար հանդերձանքով սկսել:

Աստիճանաբար զրույցն ընդհատվեց, և քունն սկսեց լիզ-
նել փոքրիկ թափառականների աչքերին: Մխախտոն ընկավ
Արյունոտ Ձեռքի մատների արանքից, և նա քնեց խիղճը
հանգիստ ու հոգնած մարդու քնով: Մովերի Սարսափը և Իս-
պանական ծովի Սև Վրիժառուն ավելի զժվար քնեցին: Նը-
րանք գաղտնի, պառկած աղոթեցին: Դե՛, ոչ ոք չկար, որ
նրանց ստիպեր ծունկի գալ և բարձրածայն աղոթել: Իրա-
կանում նրանք մտադիր էլ չէին աղոթել, բայց վախենում
էին այդքան առաջ զնալուց, վախենում էին երկնքի հան-
կարծական և հատու կայծակից: Հետո անմիջապես հասան
քնելու սահմանին, բայց նրանց տիրեց ինչ-որ ներքին երկ-
յուղ, որը չէր անցնում: Դա խիղճն էր: Նրանք սկսեցին տար-
տամ մի վախ զգալ, որ սխալ են վարվում տնից փախչելով,
հետո մտածեցին գողացված մսի մասին, և իսկական տանջան-
քը պաշարեց նրանց: Սկսեցին վիճել խղճի հետ, նրան հիշեց-
նելով, որ առաջներում էլ բազմիցս կարկանդակ և խնձոր
են թոցրել: Բայց խիղճը չէր հանգստանում, շատ թույլ հա-
մարելով այդ պատճառաբանությունները: Նրանց ի վերջո
թվում էր, որ կարկանդակ և խնձոր թոցնելը պարզապես
թոցնել է, մինչդեռ խոզի միս և ուրիշ արժեքավոր բաներ
վերցնելը՝ «գողություն» և դրա դեմ Ավետարանում գրված

պատվիրան կար: Նրանք ներքնապես որոշեցին, որ քանի ծովահենությունյամբ են ղրաղվում, երբեք գողություն չեն արածավորի ծովահենի պատիվը: Խիղճը զինադադար կնքեց, և այս անհետևողական ու տարօրինակ ծովահենները խաղաղ բնեցին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Առավոտյան, երբ Թոմն արթնացավ, շիմացավ, թե որտեղ է գտնվում: Նստեց, աչքերը տրորեց և նայեց շուրջը: Հետո հասկացավ: Զուլ ու գորշ առավոտ էր, և անտառը խոբանկ անդորրի և լուսթյան մեջ հանգիստ ու խաղաղ էր: Ոչ մի տերև չէր շարժվում, ոչ մի ձայն չէր խանգարում բնության մտորումները: Տերևների ու խոտերի վրա իջել էր մարգարտանման ցողը: Կրակը ծածկված էր մոխրի սպիտակ շերտով, և ծխի կապույտ մի երիզ ուղիղ երկինք էր բարձրացում: Զոն ու Հեքը դեռ քնած էին: Հեռվում, անտառի խորքում մի թռչուն ճշաց: Մի ուրիշը պատասխանեց: Լավեց փայտփորիկի թխկթխկոցը: Աստիճանաբար վաղորդյան կապույտ մշուշն սպիտակեց, ձայներն աստիճանաբար բազմապատկեցին, և կյանքը ինքն իրեն զգացնել տվեց: Քնից արթնացող և աշխատանքն սկսող բնության հրաշքը ծավալվում էր մտախոհ տղայի առջև: Մարմնի երկու երրորդը զգամ կախելով՝ մի կանաչ որդեկավ շրջապատը շափելով և նորից առաջ գնալով: Երբ որդը շարժվեց դեպի Թոմը, սա քարի պես անշարժ մնաց: Տղայի ուրախությունը պակասում էր՝ ավելանում էր, նայած այդ արարածը իր կողմն էր գալիս, թե հեռանում: Իսկ երբ, ի վերջո, իր ժլորապատույտ բարմնով օդում ճիգ գործ դնելով՝ որդը վճռականորեն բարձրացավ Թոմի ոտքի վրա ու սկսեց ոտքի վրայով ճանապարհորդել, տղան ամբողջ սրտով ցնծում էր: Դա նշանակում էր, որ նա մի նոր զգեստ էր ունենալու. անկասկած, ծովահենի մի շքեղ համազգեստ: Այդ պահին, շգիտես որտեղից, երևաց մրջյունների մի թափոր և գործի անցավ: Թեև սկսեց քաջաբար քարշ տալ իրենից հինգ անգամ մեծ քաղցած սարդ և ծառի բնով բարձրացնել վեր: Սև բծե

րով զատիկը բարձրացավ մի ցողունի՝ իր համար սարսափելի բարձր ծայրը, և Թոմը թեքվեց դեպի այն ու ասաց.

Չատիկ, թո՛ր տուն, ուժ սուր թևերիդ,
Տունդ վառվում է, փրկիր ձագերիդ...

Եվ զատիկը, թևերը բացելով, թռավ ձագերին փրկելու։ Այդ բանը տղային շշմեցրեց։ Նա վազուց գիտեր, որ այս միջատը իսկույն հավատում է, երբ ասում ես, որ իր տունն այրվում է։ Թոմը բազմիցս փորձել էր զատիկի պարզամտութունը։ Այնուհետև եկավ մի բզեզ՝ հագիվ բարչ տալով մահմինը, և Թոմը մատով կպավ, տեսնելու, թե ինչպես է դա ոտքերը ներս քաշելու և մեռած ձևանալու։ Մինչ այդ, թռչունները բավական աղմկում էին։ Մի կատվաթռչուն, հյուսիսային ծաղրածուն, նստեց Թոմի գլխավերևը, ծառի վրա և սկսեց հարևանների հրդի տնազն անել։ Հետո կապույտ բոցի նման օդում երևաց ճայեկը և նստեց մի ճյուղի, որին Թոմի ձեռքը կհասներ, գլուխը թեքեց մի կողմի վրա և ազահ հետաքրքրությամբ նայեց օտարականներին։ Մի գորշ սկյուռ, նրա ետևից աղվեսանման մի ուրիշ գազանիկ սլանալով անցան։ Ժամանակ առ ժամանակ նստում էին, դիտում տղաներին և այդ մասին կարծիք փոխանակում, քանի որ այդ վայրի գազանիկները հավանաբար մարդ չէին տեսել և չգիտեին պետք է վախենա՞նք, թե ոչ։ Մինչ այդ, ամբողջ բնությունը լրիվ արթնացել էր։ Արևի երկար նետերը տեղ-տեղ ճեղքեցին խիտ սուղարթը, և մի քանի թիթեռներ թռչկոտելով բեմ դուրս եկան։

Թոմն արթնացրեց մյուս ծովահեններին, և բոլորն աղմուկով առաջ վազեցին։ Մի վայրկյանում մերկացան, ընկան իրար ետևից, սկսեցին միմյանց քաշքշել սպիտակ ավազի վրա և գոլ ջրի ծանծաղուտում։ Նրանք չէին կարոտում փորրիկ քաղաքը, որ քնած էր հեռվում, արքայաբար տարածվող ջրի մյուս կողմում։ Մի ուժեղ հոսանք կամ դետի փոքր-ինչ բարձրացում քշել տարել էր նրանց լաստը, բայց տղաները դրանից գոհ մնացին, որովհետև դա նշանակում էր այրել իրենց և քաղաքակրթության միջև եղած կամուրջը։

Տղաները ճամբար վերադարձան հրաշալիորեն թարմացած, ուրախ և սաստիկ սոված։ Շուտով բոցավառվեց ճամբարային խարույկը։ Հեքը մոտակայքում գտավ վճիտ, սառը

քի մի աղբյուր, տղաներն ընկուզենու և կաղնու լայն տե-
քեններից բաժակներ սարքեցին, զգալով, որ ջուրը, անտառի
վայրի գեղեցկութեանը միացած, կարող է շատ լավ փոխա-
րինել սուրճին: Ջոն նախաճաշի համար սկսեց ապուխտ
կտրատել, բայց Թոմը և Հեքը ասացին, որ մի քիչ սպասի:
Չհտափին գտան մի խոստումնալից անկյուն և այնտեղ գցե-
ցին իրենց կարթերը: Համարյա անմիջապես վարձատրվեցին:
Ջոն համբերութունը դեռ չէր կորցրել, երբ նրանք վերա-
դարձան, հետները բերելով բավական քանակությամբ կար-
մըրախայտ, մի քանի արևածուկ և մի փոքր կատվածուկ:
Այդ բոլորը բավական էր մի ամբողջ ընտանիքի: Չուկը ա-
պուխտի հետ տապակեցին և զարմացան. ոչ մի ձուկ, մինչ
այդ, այդքան համեղ չէր թվացել: Չգիտեին, որ ինչքան շուտ
է գետի ձուկը կրակի վրա դրվում, այնքան համեղ է լինում,
չէին մտածում, թե ինչ լավ համեմունք է բացօթյա կյանքը,
լողանալը և մանավանդ քաղցը:

Նախաճաշից հետո ստվերում պառկեցին, մինչև Հեքը
ծխեց, ապա գնացին անտառը հետախուզելու: Նրանք ուրախ
քայլում էին փտող ճյուղերի վրայով, անցնում թփուտների
միջով, անտառի արքաների՝ մեծ ծառերի արանքով, որոնք
վերից վար պատած էին վայրի խաղողի որթով: Երբեմն հան-
դիպում էին կանաչ գորգով ծածկված և ծաղիկներով զար-
գարված հրաշալի անկյունների:

Շատ բաներ գտան, որոնք ուրախացրին նրանց, բայց ոչ
մի բան չզարմացրեց: Գտան, որ կղզին մոտ երեք մղոն եր-
կարութուն և քառորդ մղոն լայնութուն ունի, որ ամենա-
մատիկ ափը կղզուց բաժանված է հազիվ երկու հարյուր
չարդ լայնությամբ մի նեղուցով: Համարյա ժամը մեկ լո-
զանում էին, դրա համար էլ ճամբար վերադարձան հետմիջ-
ոքին: Սաստիկ սոված էին և չէին կարող ձկնորսութուն ա-
նել, բայց մեծ ախորժակով սառը ապուխտ կերան, ապա
ստվերում պառկեցին զրուցելու: Շուտով զրույցը դանդա-
ղեց, ապա բոլորովին դադարեց: Անտառի լուսթյունը, հան-
գիսավորութունը և մենակության զգացումը սկսեցին ներգոր-
ծել տղաների վրա: Նրանք մտածմունքի մեջ ընկան: Մի ան-
բացատրելի թախիժ պատեց նրանց: Այդ ի վերջո որոշակի
հարձակ. տան կարոտն էր: Նույնիսկ Արյունոտ Ձեռք Ֆիննը

երազում էր պատշգամբներ ու դատարկ տակառներ: Բայց բոլորն ամաշում էին իրենց թուլութեան համար և ոչ մեկն այնքան քաջ չէր, որ իր մտածածի մասին խոսեր:

Որոշ ժամանակ էր արդեն, ինչ տղաները, առանց ուշադրութիւն դարձնելու, հեռվից մի տարօրինակ ձայն էին լսում, ինչպէս մարդիկ լսում են ժամացույցի թիբ-թաքը, առանց անդրադառնալու դրան: Բայց այժմ այդ խօրհրդավոր ձայնը դարձավ ավելի շեշտված, ստիպեց ուշադրութիւն դարձնել: Տղաներն ահանջ դրին և իրար նայեցին: Մի երկարատև լռութիւն տիրեց, խորունկ ու անխախտ, հետո հեռվից լսվեց մի խուլ, ահեղ ջբամ»:

— Սա ի՞նչ է,— հարցրեց Ջոն շշուկով:

— Չեմ հասկանում,— պատասխանեց Թոմը շշուկով:

— Դա կարևոր չէ,— ասաց Հեքլբերին ահաբեկված տունով,— որովհետև կայծակը...

— Լսիր,— ասաց Թոմը,— լսիր, մի խոսիր:

Նրանք մի պահ սսկվեցին, որը նրանց մի դար թվաց, հետո նույն «բոմ»-ը խանգարեց հանդիսավոր լուրջութեամբ:

— Գնանք տեսնենք:

Նրանք վեր թռան և շտապեցին դեպի քաղաքի կողմի ափը: Ետ ավեցին ափի թփերը և նայեցին ջրի մակերեսին: Մի փոքր շոգենաով, որ ծառայում էր մի ափից մշուսը մարդիկ տեղափոխելու, քաղաքից մի մղոն ցածր, հոսանքով լողում էր: Ընդարձակ տախտակամածը մարդկանցով լեցուն էր: Բազմաթիվ մակույկներ, շոգենավը շրջապատած, գետի հոսանքով ցած էին իջնում, բայց տղաները չէին կարողանում հասկանալ, թե ինչ էին անում նավակների միջի մարդիկ: Հանկարծ մի մեծ սպիտակ ծուխ դուրս թռավ շոգենավի կողքից և մինչ ծուլորեն տարածվում էր ու բարձրանում, նույն խուլ ազմուկը նորից լսվեց:

— Արդեն հասկացա,— բացականչեց Թոմը,— ինչ-որ մեկը խեղդվել է:

— Ճիշտ է,— ասաց Հեքլը,— այդ նույն բանը արեցին անցյալ ամառ, երբ Բիլ Տերները խեղդվել էր: Ջրի վրա թռնդանոթ արձակեցին. դա խեղդվողին ստիպում է ջրի երեսը դուրս գալ: Այո, վերցնում են նաև հաց ու կենդանի արծաթ¹:

¹ Սնդիկ:

և գցում ջուրը: Այնտեղ, ուր ջրահեղձ է լինում, հացն ու արծաթը կանգ են առնում:

— Այո, այդ մասին լսել եմ, — ասաց Ջոն: — Բայց չեմ հասկանում, թե ինչից է, որ հացը կանգ է առնում:

— Այստեղ գլխավորը հացը չէ, — ասաց Թոմը, — ինձ թվում է, որ կարևորը հացի վրա, ջուրը գցելուց առաջ, ասված խոսքերն են:

— Բայց ոչ մի խոսք չեն ասում հացի վրա, — ասաց Հեբբը: — Ես տեսել եմ, ոչինչ չեն ասում:

— Տարօրինակ է, — ասաց Թոմը, — գուցե ցածր ձայնով են ասում, մտքում: Անշուշտ ասում են: Կարելի է իսկույն գլխի ընկնել:

Մյուս տղաները համաձայնեցին, որ Թոմի ասածի մեջ արամաբանություն կա, որովհետև հացի հասարակ կտորը, առանց կախարդանքի, չէր կարող խելացի գործել, երբ ուղարկվում էր այդքան լուրջ գործի համար:

— էհ, ինչքան կուզեի այժմ այնտեղ լինել, — ասաց Ջոն:

— Ես էլ, — ասաց Հեբբը: — Ամեն ինչ կտայի, իմանալու համար, թե ո՞վ է խելզվել:

Տղաները շարունակում էին նայել և լսել: Հանկարծ Թոմի գլխում մի միտք ծագեց, նա բացականչեց.

— Տղաներ, ես գիտեմ, թե ով է խելզվել: Այդ մենք ենք:

Մի բուպեում նրանք իրենց հերոսներ զգացին: Ահա մի հայկապ հաղթանակ. նրանց փնտրում էին, սգում, նրանց համար սրտեր էին ճմլվում, արցունքներ էին թափվում: Գլուխ էին բարձրացրել տղաներին ցույց տրված անխիղճ վերաբերմանը դատապարտող հիշողությունները և զզման ու բզեխ խայթի զգացումները: Բայց, ամենակարևորը, ամբողջ քաղաքը խոսում է ջրահեղձների մասին, և բոլոր տղաները նրանք են նրանց փառքին: Դա հրաշալի էր: Այս բանից նետո արժեք ծովահենն լինել:

Նրբ մթնշաղն իջավ, շոգենավը վերադարձավ իր սովորական աշխատանքին, իսկ մակույկներն անհետացան: Ծովահենները վերադարձան իրենց ճամբարը: Նրանք սնափառ էին: Նրանք հրճվում էին իրենց նոր մեծությունը և այն գլխացույցով, որ սլատճառել էին: Նրանք ձուկ որսացին, ընթ-

րիք պատրաստեցին, կերան և սկսեցին գուշակել, թե ի՞նչ էր մտածում ու խոսում քաղաքը իրենց մասին: Ընդհանուր վշտի նրանց պատկերացրած տեսարանները հաճելի էին: Բայց գիշերվա խավարը գրկեց տղաներին, նրանք աստիճանաբար դադարեցին խոսել և սկսեցին սեեռուն նայել կրակին: Մտովի, անկասկած, թափառում էին հեռուներում: Քիչ առաջվա ուրախությունն անցել էր, և թումն ու Ջոն հիշում էին իրենց հարազատներին, որոնք հագիվ թե հաճույքով վայելին այս շարաճճիության պտուղները: Տարակուսանքը պաշարեց նրանց: Իրենց անհանգիստ ու դժբախտ զգացին: Նրանց շրթներից ակամա հառաչանքներ դուրս թռան: Զգուշությամբ Ջոն միամտաբար հարցրեց, թե ի՞նչ են մտածում մյուսները քաղաքակրթության վերադառնալու մասին, անշուշտ, ոչ անմիջապես, այլ...

Թումը նրան ծաղրեց: Հեքը, որ դեռ մասնակից չէր այդ զգացումներին, Թոմի կողմն անցավ, և տատանվող Ջոն անմիջապես «բացատրեց», ուզեց արդարանալ: Նա ուրախ էր, որ այդքան քնով ազատվեց վախկոտության և տան կարտը քաշելու մեղադրանքից: Ապստամբությունն այս անգամ ճնշվեց:

Գիշերը խորացավ: Հեքն սկսեց ննջել և ի վերջո խորմփացնել: Ջոն հետևեց նրան: Թումը արմունկին հենված որոշ ժամանակ անշարժ պառկած էր և սեեռուն նայում էր մյուս երկուսին: Հետո զգուշությամբ վեր կացավ ծնկների վրա, սկսեց կրակի լույսով խոտերի մեջ ինչ-որ բան փնտրել: Գրտավ, զննեց կեշու կեղևի խողովակաձև կտորները, ի վերջո ընտրեց երկուսը, որոնք նրան հարմար թվացին: Հետո կրակի մոտ ծունկի եկավ և դժվարությամբ յուրաքանչյուրի վրա ինչ-որ բան գրեց: Մեկը դրեց իր բաճկոնի գրպանը, իսկ մյուսը՝ Ջոնի գլխարկի վրա, որը նա տիրոջից մի փոքր հեռացրեց: Նա գլխարկի մեջ դպրոցականի համար անգնահատելի արժեք ունեցող իրեր դրեց. կավճի մի կտոր, ռետինե գնդակ, երեք կարթ և մի գնդիկ, որ «մաքուր բյուրեղ» է կոչվում: Հետո զգուշությամբ, ոտքի մատների վրա, զնաց ծառերի արանքով: Երբ զգաց, որ անցել է լսելիության սահմանը, ամբողջ թափով վազեց դեպի ավազոտ ափը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԻՆԳԵՐՈՐԴ

Մի քանի բոլորակ անց թումը ծանծաղ ջրի մեջ էր ու գնում էր դեպի Իլինոյսի ափը: Նախքան ջուրը մեջքին կհասնեն, նա քիչ ճանապարհն անցել էր: Հոսանքը շեր թողնում ոտքով ավելի գնալ: Նա սկսեց վստահորեն մնացած հարյուր յարդը քալ: Լողաց հոսանքի դեմ, բայց դեպի ներքև քշվեց ավելի քալ, քան սպասում էր: Ի վերջո ափ հասավ և եզերքով իջավ, մինչև մի ցածրադիր տեղ գտավ ու դուրս եկավ: Նա անքր զրեց բաճկոնի գրպանի վրա և համոզվելով, որ կեղևի քորը անվնաս է, գնաց ափի ուղղությամբ, անտառի միջով, աշտարակներն չհարձնելով շորերից կաթող ջրին: Շուտով, ժամը տասից առաջ նա հասավ մի բաց տարածություն՝ քաղաքի դիմաց և տեսավ շոգենավը, որ բարձր ափի մոտ, ծառերի տակ կանգնած էր: Ամեն ինչ խաղաղ էր փայլփլող առողերի տակ: Ուշադիր նայելով, նա ափից իջավ ջուրը, մի քանի քայլ լողաց և բարձրացավ այն նավակը, որ կապված էր շոգենավի ետևից: Նա իրեն գցեց նավակի հատակին և առատորով սպասեց: Լավեց դանգակի խզված ձայնը, ու մեկը համայնեց. «Բաց թող»: Մի քանի բոլորակ հետո շոգենավի եզրը բարձրացավ նավակից վեր, և ճանապարհորդությունն սկսվեց: Թումը երջանիկ էր իր հաջողության համար. գիտեր, որ շոգենավի այդ դիշերվա վերջին երթն էր: Տասներկու կամ տասնհինգ երկարատև բոլորակից հետո անիվները կանգ առան, և թումը նավակից դուրս սողալով, մթան մեջ լողաց դեպի ափը. դուրս գալով հիսուն յարդ այն կողմ, հավանական անցքների տեսողությունից հեռու: Նա գնաց անմարդ փողոցներով ու շուտով հայտնվեց մորաքրոջ տան ետևի ցանկառայի դիմաց: Մագլցելով անցավ ցանկապատը և հյուրասանակի լուսամուտից ներս նայեց, քանի որ այնտեղ լույս էր վառվում: Նստած էին մորաքույր Պոլին, Մերին, Սիդը և Քլարայրի մայրը ու զրուցում էին: Մահճակալին մոտ էին, և մահճակալը նրանց ու դռան միջև էր: Թումը սողաց դեպի գուռը և զգուշությամբ փակը բացեց: Հետո կամացուկ անց գուռը, որը ճանշաց: Նա շարունակեց զգուշությամբ անց և յուրաքանչյուր ճոխելից ցնցվեց, մինչև որոշեց, որ քաղաք է ծնկաչոք անցնել: Նա զլուխը մտցրեց ու սկսեց քայլ: Թյամբ առաջ գնալ:

— Ինչի՞ց է մոմի լույսը այդպես երեքում,— ասաց մորաքույր Պոլին: Թոմը շտապեց սողալ.— երևի դուռը բաց է, օ՛, անշուշտ: Տարօրինակ դեպքերին վերջ չկա: Սիդ, գնա դուռը ծածկիր:

Թոմը ճիշտ ժամանակին անհետացավ մահճակալի տակ: Նա միառժամանակ ազատ շունչ քաշեց, այնուհետև սողաց առաջ, որտեղից կարող էր համարյա կպչել մորաքրոջ ոտքերին:

— Ինչպես ասում էի,— ասաց մորաքույր Պոլին,— նա վատը չէր, միայն, այսպես ասած, շարաճճի էր, պարզապես հեղհեղուկ, գլխում՝ քամիներ: Մտրուկի պես իր արածի համա՞լ պատասխանատվություն չէր զգում: Նա երբեք վատություն չէր ուզում անել և ամենամաքուր սիրտ ունեցող տղան էր,— մորաքույրն սկսեց լաց լինել:

— Ճիշտ այդպես էր նաև իմ Ջոն՝ միշտ շարություններ անելու պատրաստ, բայց այնքան բարի, ինչքան հնարավոր է բարի լինել: Աստված ինձ թող ների, ես նրան իզուր նեղացրի սերուցքը վերցնելու համար, շմտածելով, որ դա թթված էր և ինքս դուրս թափեցի: Էլ երբեք չեմ տեսնի նրան այս աշխարհում, երբեք, երբեք, իմ խեղճ երեխա:— Եվ տիկին Հարպըրը սկսեց նույնպես լաց լինել. կարծես սիրտը կտոր-կտոր էր լինում:

— Ես հույս ունեմ, որ նա երկնքում այժմ իրեն լավ է զգում,— ասաց Սիդը,— բայց եթե որոշ տեսակետից իրեն այստեղ լավ պահեմ...

— Սիդ— Թոմն զգաց ծեր կնոջ աչքերի հայացքը, թեև չէր կարող տեսնել:— Ոչ մի խոսք իմ Թոմի մասին, երբ նա արդեն մեկնել, գնացել է այս աշխարհից: Աստված կհոգա նրա մասին, հանգիստ կաց: Օ՛հ, տիկին Հարպըր, չգիտեմ՝ ինչպե՞ս մոռանամ նրան, չգիտեմ՝ ինչպե՞ս մոռանամ: Նա այնպիսի մխիթարանք էր ինձ համար, թեև, ընդհանրապես, տանջում էր իմ խեղճ սիրտը:

— Աստված տվեց և աստված առավ, օրհնյալ լինի աստծո կամքը: Բայց շատ ծանր է, օ՛, շատ ծանր է: Դեռ անցյալ շաբաթ իմ Ջոն խաղալիք-ատրճանակով կրակեց քթիս տակ, և ես այնպես շրխկացրի, որ գետին ընկավ: Այդ ժա-

ժանակ ես չգիտեի, թե շուտով... է՛հ, եթե մի անգամ էլ առ ներ, ես նրան կհամբուրեի ու կօրհնեի դրա համար:

— Այո, այո, գիտեմ, թե ինչ ես զգում, տիկին Հարպըր: Ես լավ գիտեմ, թե ինչ ես զգում: Դեռ երեկ կեսօրին իմ Թոմը կատվի բերանը «ցավ կտրող» դեղ լցրեց, և ես կարծեցի, թե այդ արարածն ամբողջ տունն իրար է խառնելու: Եվ աստված թող ինձ ների, ես մատնոցով խփեցի Թոմի գլուխին: Խեղճ երեխա, իմ խեղճ, մեռած տղա: Բայց այժմ վերջացան նրա բոլոր շարությունները: Եվ վերջին խոսքը, որը նա ինձանից լսեց, հանդիմանություն էր:

Այս հիշողությունը չափազանց ծանր էր ծեր տիկնոջ համար, և նա դառնորեն լաց եղավ: Թոմը նույնպես լաց էր լինում: Նա ինքն իրեն ավելի էր խղճում, քան որևէ մեկը: Նա լսում էր Մերիի լացը և մեկ-մեկ իր մասին նրա ասած քերուշ խոսքերը: Սկսեց իր մասին ավելի լավ կարծիք կազմել: Մորաքրոջ վիշտը նրան շատ հուզեց, և նա ուզեց դուրս թռչել անկողնու տակից ու խեղճ պառավին երջանկացնել: Այդ տեսարանի թատերական հոյակապությունը չափազանց դժգոհ էր, բայց տղան դիմադրեց և անշարժ պառկեց: Նա շարունակեց լսել ու կցկտուր խոսքերից սկզբում իմացավ, որ իրենք՝ տղաները, լողանալիս խեղդվել էին: Հետո փոքր չափով կորել էր: Հետո մի քանի տղաներ ասել էին, թե կորածները նախադրուշացրել էին, թե քաղաքը շուտով մի բան աստք է լսի: Խելացի գլուխներն ի մի էին բերել այս բոլորը և որոշել, որ տղաները լաստով հեռացել են և շուտով անորդ քաղաքից ետ կուղարկվեն: Բայց կեսօրվա մոտ լաստը գտնվել էր քաղաքից հինգ կամ վեց մղոն ցած, Միսսուրիի ափին, և հույսը մարեց: Պետք է խեղդված լինեն, ասլապես քաղցը նրանց տուն քշած կլինեի երեկոյան, եթե ոչ ավելի շուտ: Համոզված էին, որ դիակների որոնումը անօգուտ էր: Երոզհետև ջրահեղձությունը ջրանցքի կենտրոնում պետք է եղած լիներ, և լավ լողորդներ լինելով, կարող էին ափ քարք գալ: Այսօր շորեքշաբթի գիշեր էր: Եթե մարմինները օրվա կիրակի չգտնվեն, ամեն հույս պետք էր կորած համարել: և առավոտյան հոգեհանգիստ կատարել: Թոմը սարսափեց:

Դիտիս Հարպըրը արտասովելով բարի գիշեր մաղթեց ու

շուտ եկավ գնալու: Հետո ներքին նույն մղումով երկու որդեկորույս մայրերը իրար գիրկ նետվեցին և կուշտ լաց եղան ու մխիթարվելով բաժանվեցին: Մորաբույր Պոլին շատ ափելի քնքուշ էր, երբ Սիդին ու Մերին բարի գիշեր էր մաղթում: Սիդը հեկեկաց, իսկ Մերին հեռացավ արցունքներով ողողված:

Մորաբույր Պոլին ծունկի եկավ և Թոմի համար աղոթեց այնպես հույիշ, այնպես աղերսական ձևով, այնպիսի դողացող ձայնով, բառերի մեջ դնելով անասհաման սիրո այնպիսի խոսքեր, որ նորից սկսեց արտասպել, թեև աղոթքը դեռ չէր ավարտվել:

Նրա պատկելուց հետո երկար ժամանակ Թոմն ստիպված էր մահճակալի տակ մնալ, որովհետև մորաբույրը շարունակ շուռումուռ էր գալիս, հապում և երբեմն-երբեմն խորտակված սրտով հառաչում: Բայց ի վերջո նա անշարժացավ, միայն քնի մեջ երբեմն տնքում էր: Այդ ժամանակ Թոմը դուրս եկավ մահճակալի տակից, դանդաղ ոտքի կանգնեց մահճակալի կողքին և ձևորով մոմի լույսը ծածկելով, նայեց նրան: Թոմի սիրտը նրա նկատմամբ խղճահարություն լցվեց: Նա գրպանից հանեց կեղեր և զրեց մոմի կողքին: Բայց մի բան հիշեց ու սկսեց մտածել: Նրա գեմքը փայլեց իր մտածած երջանիկ լուծումից: Նա արագ գրպանը դրեց կեղևը, համբուրեց մորաբուրջ թառամած շրթունքները և անմիջապես անձայն դուրս եկավ, դուռը ետևից ծածկելով:

Նա վերադարձավ նախահանգիստը և ոչ ոքի չգտնելով ույնտեղ, համարձակ նավակ բարձրացավ. գիտեր, որ բացի պահակից (սա էլ շարունակ լինում էր իր խցում և քնում արձանի նման), այդտեղ ուրիշ մարդ չէր լինի: Նա արձակեց մակուշկը, ներս սողաց և սկսեց զգուշությամբ թիավարել հոսանքն ի վեր: Երբ քաղաքից մի մղոն բարձրացել էր, կտրեց անցավ հոսանքը և հասավ գիմացի նավահանգիստը: Այդ բոլորը նրա համար սովորական գործ էր: Նա շատ էր ուզում չուրացնել նավակը, պատճառաբանելով, թե մակուշկը կարելի էր նավի տեղ ընդունել և ծովահենների օրինավոր ավար համարել, բայց իմանալով, որ մակուշկի համար լուրջ խուզարկություն կկատարվի, հրաժարվեց: Թոմն ափ դուրս եկավ և անտառ մտավ: Նստեց ու երկար հանգստա-

ցամ, միևնույն ժամանակ աշխատելով շքնելու Այնուհետև հոգնած ճանապարհ ընկամ իր ընկերների մոտ: Գիշերն սպառված էր. երբ հասավ կղզու դիմացի ափը, լրիվ լուսացել էր: Նա նորից հանգստացավ, մինչև արևը բարձրացավ և ոսկեգոծեց մեծ գետը, այնուհետև շուրջ մտավ և մի քիչ հետո, թրջված, կանգ առնելով ճամբարի մոտ, լսեց Ջոյի խոսքերը.

— Ոչ, Թոմը հավատարիմ է, Հեք, և կվերագառնա: Նա չի դասալքի: Գիտե, որ դասալքությունը ամոթ է ծովահենի համար, և Թոմը շատ հպարտ է այդպիսի բան անելու համար: Նա ինչ-որ բանի հետևից կլինի ընկած, բայց թե ինչի, չգիտեմ:

— Իսկ իրերը այնուամենայնիվ մերն են, չէ՞:

— Համարյա թե, բայց դեռևս ոչ, Հեք: Գրությունն ասում է, որ դրանք մերն են, եթե մինչև նախաճաշ չվերագառնա:

— Ահա և ինքը,— բացականը Թոմը դրամատիկական հրաշալի ձևով ու ներս ընկավ ճամբար, գործելով փառասեղ տպավորություն:

Շուտով նրանք ձկով ու ապուխտով նախաճաշ արեցին: Մինչ տղաներն այդ գործով էին զբաղված, Թոմը պատմեց (առանց շափազանցելու) իր արկածները: Երբ պատմությունն ավարտվեց, նրանք իրենց համարում էին հերոսների մի անափառ խումբ: Այնուհետև Թոմը ստվերում քնեց մինչև կեսօր, իսկ մյուս ծովահենները պատրաստվեցին ձուկ որսալու և կղզին հետախուզելու:

ԳՆՈՒՆ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Ճաշից հետո ամբողջ խումբը գնաց գետափ՝ կրիայի ձու փնտրելու: Նրանք գնում էին փայտերը ավազին խփելով և երբ փափուկ տեղ էին գտնում, ծնկի էին գալիս ու ձևոքերով փորում: Պատահում էր, որ մի փոսից հիսունից-վաթսուն ձու էին հանում: Իրանք կլոր, սպիտակ, անզլիական էնկույզից փոքր բաներ էին: Այդ երեկո նրանք խաշած ձվով Կրիայի ընթրիք պատրաստեցին, մի նախաճաշ էլ՝ ուրբաթ

առաջնություն: Նախաճաշից հետո սկսեցին իրար վրայով ցատկոտել ավազի վրա և իրար ետևից վազելիս շորերը հանձել, մինչև որ լրիվ մերկացան, ապա խաղերն ու կատակները շարունակեցին ջրում, կոպելով ուժեղ հոսանքի դեմ, որը հրբևմն քշում էր նրանց, ոտքերը կտրում գետնից և դրանով ավելացնում հաճույքը: Երբեմն երեքով կանգնում էին և ձեռքով իրար վրա ջուր շաղ տալիս: Շուտ տված դեմքերով աստիճանարար իրար էին մոտենում, որպեսզի հեռու լինեն ջրի հարվածից, ի վերջո իրար էին կպչում և փաթաթվելով, սլաքարում, մինչև որ ուժեղը ջրի մեջ էր սուզում թուլին: Ապա երեքով սուզվում էին ձեռքերն ու ոտքերը իրար սեղմած և դուրս էին գալիս փնչացնելով, հևալով, ծիծաղելով, թրելով, ազահորեն շունչ քաշելով:

Երբ լրիվ ուժասպառ էին լինում, վազում էին, մեկնվում շոր, տաք ավազի վրա, ավազով ծածկվում, ապա նորից ջուրը նետվում, շարունակում նույնը: Ի վերջո նրանց թվաց, որ իրենց սևացած մաշկը ոչնչով չի տարբերվում իրենց զգեստներից: Ավազի վրա շրջանակ գծեցին և կրկես սարքեցին, որն ուներ երև. ծաղրածու. ոչ մեկը այդ նախանձելի դերը չէր զիջում հարևանին:

Այնուհետև հանեցին իրենց մարմարյա զնդիկները և դրանցով տարրեր խաղեր խաղացին, մինչև դա էլ ձանձրալի դարձավ: Հետո Ջոն և Հերբ մի անգամ էլ լողացին, իսկ Քոմը չփորձեց. նկատել էր, որ շալվարը հանելիս կորցրել էր ծնկին կապած բոժոժավոր օձի համայիլը և զարմացավ, թե ինչպես հաշմանդամ չի դարձել առանց այդ խորհրդավոր հուռուժի: Նա նորից շամարձակվեց ջուրը մտնել մինչև գտնելը, իսկ երբ գտավ, մյուս տղաներն արդեն հոգնել էին ու պառկել հանգստանալու: Նրանք կամաց-կամաց ցրվեցին և ընկնելով թախժի գիրկը, սկսեցին կարտոով նայել լայն գետից այն կողմ, որտեղ արևով ողողված քաղաքն էր: Քոմը հանկարծ տեսավ, որ ինքը բթամատով ավազի վրա «Բեռի» է դրում: Ջնջեց ու թուլության համար ինքն իր վրա բարկացավ: Բայց, այնուհետև, նորից գրեց: Ուրիշ կերպ չէր կարող: Նորից ջնջեց և գայթակղութունից հեռու մնալու համար սկսեց տղաներին նկարել: Հետո միացավ նրանց:

Բայց Ջոյի տրամադրությունն անդառնալիորեն ընկել էր:

նա այնքան էր կարոտում իրենց խունը, որ հազիվ էր դիմա-
նում: Արցունքները շատ մոտ էին թափվելու: Հերը նույնպես
թախծոտ էր: Թոմը ճնշված էր, բայց փորձում էր ցույց շտալ:
Նա մի զաղանիք ուներ, բայց դեռևս չէր ուզում ասել: Բայց
եթև այս ըմբոստ ընկճվածությունը շուտով շանցներ, սախա-
ված պիտի լիներ այն մեջտեղ բերել: Իրեն շատ ուրախ
ցույց տալով, նա ասաց.

— Տղաներ, պրազ կգամ, որ այս կղզում նախկինում ծո-
վահեններ են եղել: Մենք այն նորից կխուզարկենք: Նրանք
մի տեղ գանձ պահած կլինեն: Ի՞նչ կասեք, եթե մի փտած
սնդուկ գտնենք՝ ոսկով և արծաթով լեցուն:

Բայց այդ խոսքը շատ թույլ ոգևորություն առաջացրեց,
որը հանդավ՝ անպատասխան մնալով, Թոմը մի քանի քարիշ
պրավիշ բաներ էլ ասաց, բայց հաջողություն չունեցա՞վ: Ջոն
նստել էր, գավազանով ավազն էր փորում և նայում շատ
մտայլ: Ի վերջո նա ասաց.

— Է՛հ, տղաներ, եկեք վերջ տանք: Ես ուզում եմ տուն
գնալ: Շատ տխուր է այստեղ:

— Է՛, ո՛չ, Ջո, դու կամաց-կամաց կընտելանաս ու քեզ
ավելի լավ կզգաս,— ասաց Թոմը,— հասպա մտածիր, թե
ինչ արժե այստեղի ձկնորսությունը:

— Ինձ ոչ մի ձկնորսություն պետք չէ: Ուզում եմ տուն
գնալ:

— Բայց, Ջո, լողանալու համար ավելի լավ տեղ չկա:

— Լողանալն ի՞նչ է որ... Ինձ այլևս դուր չի գալիս, երբ
ոչ որ չկա, որ ինձ արգելի: Ուզում եմ տուն գնալ:

— Է՛հ, երեխա: Երեկ ուզում ես մայրիկիդ տեսնել:

— Այո, ուզում եմ մորս տեսնել: Դու էլ կուզենայիր, եթե
մայր ունենայիր: Ես քեզնից պահաս տղա չեմ:— Եվ Ջոն
բիթը վեր քաշեց:

— Լավ, կթողնենք, որ լացկան երեխան գնա տուն, մոր
մոտ, չէ՞, Հեք: Խեղճ երեխա, ուզում է մորը տեսնել: Թող
այդպես լինի: Քեզ այստեղ դուր է գալիս, չէ՞, Հեք: Մենք
կմնանք, չէ՞:

Հերը «այո» ասաց, առանց այդ խոսքի մեջ սիրտ դնելու:

— Այլևս չեմ խոսի ձեզ հետ, ամբողջ կյանքումս,—

ասաց Ջոն վեր կենալով:— Այդպես էլ իմացեր:— Եվ նա մտայլ հեռացավ ու սկսեց հագնուիլ:

— Շատ հոգս է,— ասաց Թոմը:— Ոչ որ քեզ չի ստիպում: Տուն գնա և թող վրադ ծիծաղեն: Օ՛, հրաշալի ծովահեններ են: Հերբ և հս լացկան շներ: Մենք կմնանք, չէ՞, Հեր: Թող գնա, եթե ուզում է: Ես կարծում եմ, որ առանց նրա էլ յոլա կդնանք:

Բայց Թոմը, տեսնելով Ջոյին մտայլ դեմքով հագնուիլիս, անհանգստություն ու տաղնապ զգաց: Առավել անհանգստացնող էր Հերի տեսքը, որ ազահորեն նայում էր Ջոյի պատրաստություններին և տրտում լուծ էր: Ջոն առանց ռմնաք բարով» ասելու շարժվեց դեպի Իլինոյսի ափը: Թոմի սիրտը փուլ եկավ: Նա նայեց Հերին: Հերբ շղիմացավ այդ հայացքին և աչքերը գետին հառեց, հետո ասաց.

— Ես էլ եմ ուզում գնալ, Թոմ, մի տեսակ ձանձրալի է դառնում, իսկ այժմ ավելի վատ է լինելու: Մենք էլ գնանք, Թոմ:

— Ես չեմ գնա, եթե ուզում եք, երկուսդ էլ կարող եք գնալ: Ես մնում եմ:

— Թոմ, ավելի լավ է ես գնամ:

— Լավ, գնա, ո՞վ է արգելում:

Հերն սկսեց իր ցաքուցրիվ եղած հագուստները հավաքել: Նա ասաց.

— Թոմ, ուզում եմ, որ դու էլ գաս: Դե՛, լավ մտածիր: Մենք քեզ ափին կսպասենք:

— Ստիպված կլինեք շատ երկար սպասել: Վե՛րջ:

Հերբ տխրությամբ հեռացավ: Թոմը նայեց նրա ետևից, սաստիկ ցանկանալով հպարտությունը դեն գցել և նույնպես գնալ: Դեռ հույս ուներ, թե տղաները կանգ կառնեն, բայց նրանք դանդաղորեն առաջ շարժվեցին: Հանկարծ Թոմին թվաց, որ շրջապատը անսովոր տխուր ու լուռ դարձավ: Մի վերջին անգամ նա պայքարեց իր հպարտության դեմ, հետո վազեց ընկերների հետևից՝ գոչելով.

— Սպասեք, սպասեք, ուզում եմ մի բան ասել:

Նրանք անմիջապես կանգնեցին և շուռ եկան: Տեղ հասնելով, Թոմը պատմեց իր դաղտնիքները: Նրանք խոժոռված լսեցին, մինչև հասկացան, թե խոսքը ինչի մասին է: Հետո

ուրախութիւնից մարտական կանչեր արձակեցին, ասելով, թէ «հրաշալի» միտք է, և եթէ նախապես ասեր, նրանք ճանապարհ չէին ընկնի: Թոմը ներողութիւն խնդրեց, բայց իրականում վախենում էր, որ նույնիսկ այդ գաղանփքը նրանց իր մոտ երկար չէր պահի, և թարցրել էր որպէս վերջին խայծ:

Տղաներն ուրախ վերադարձան և սկսեցին նորից հաճույրով խաղալ, ամբողջ ժամանակ խոսելով Թոմի անսովոր ծրագրի մասին ու հիանալով նրա հանճարով: Չվով ու ձկով համեղ ճաշից հետո Թոմն ասաց, որ ուզում է ծխել սովորել: Ջոյին այդ միտքը դուր եկավ և ասաց, որ ինքն էլ է ուզում փորձել: Հեքը ծխամորճեր պատրաստեց ու լցրեց: Այս երկու սկսնակները մինչև այդ ծխել էին միայն խաղողի տերևից սարքած սիգարներ, բայց դրանք լեզուն «կծում» էին և աղամարդկային չէին:

Արմոնիկների վրա հենված՝ սկսեցին խնամբով ու անվստահ ծխել: Մուլքը տհաճ համ ուներ, և աղաներն իրենց մի քիչ վատ զգացին: Բայց Թոմն ասաց.

— Այնքան հեշտ բան է: Եթէ իմանայի, վաղուց սովորած կլինեի:

— Ես էլ,— ասաց Ջոն:— Հասարակ բան է:

— Քանի՛-քանի՛ անգամ նայել եմ ծխող մարդկանց և մտածել. երանի՛ կարողանայի սրանց նման ծխել: Բայց երբևէ չեմ կարծել, թէ կարող եմ,— ասաց Թոմը:

— Ինձ հետ էլ նույնն է եղել, չէ՞, Հեք: Ինձնից էլ նույնն ևս լսել, չէ՞, Հեք: Թող Հեքն ասի, եթէ ստում եմ:

— Այո, շատ անգամ ասել է,— հաստատեց Հեքը:

— Ես էլ եմ ասել,— ասաց Թոմը,— հարյուրավոր անգամներ: Մի անգամ սպանդանոցի մոտ, շե՞ս հիշում, Հեք: Բոր Տաննէրը այնտեղ էր, ինչպէս նաև Ջոնի Միլլերը և Ջեֆ Թեյլորը: Չե՞ս հիշում, Հեք, թէ ինչ ասացի:

— Այո, ճիշտ է,— ասաց Հեքը:— Դա այն օրն էր, երբ ես իմ սպիտակ գնդիկը կտրցրի: Ո՛չ, դրա նախորդ օրն էր:

— Տեսա՞ր, Հեքը հիշում է,— ասաց Թոմը:

— Ես կարծում եմ, որ ամբողջ օրը կարող եմ այս ծխամորճը ծխել,— ասաց Ջոն:— Ինձ վատ չեմ զգում:

— Ոչ էլ ես,— ասաց Թումբը,— Կարող եմ ամբողջ օրը ծխել, բայց գրազ կգամ, որ Զեֆ Թեչբերը չի կարող:

— Զեֆ Թեչբերը: Որ երկու անգամ ծուխը ներս քաշի, կմեռնի: Թող մի անգամ փորձի, կիմանա:

— Գրազ կգամ, որ չի կարող: Ոչ էլ Զոնի Միլլերը: Կուզենայի մի անգամ տեսնել, թե ինչպես է նա ծխում:

— Ես էլ,— ասաց Զոնը,— Գրազ կգամ, որ Զոնի Միլլերը ոչ մի բան էլ չի կարող անել, ուր մնաց սա: Մի քիչ որ ծուխ ներս քաշի, ցած կրնկնի:

— Ծիշա է, Զոն կսիր, կուղենայի, որ տղաները մեզ այժմ տեսնեին:

— Ես էլ:

— Լսեք, տղաներ, այս մասին ոչ մի խոսք մի ասեք, և մի անգամ, երբ բոլորը հավաքված լինեն, ես քեզ մոտ կդամ ու կասեմ. «Զո, ծխամորճ ունե՞ս, ուղում եմ ծխել»: Իսկ դու կպատասխանես մի տեսակ անտարբեր ձևով, իբր դա հասարակ բան է. «Այո, ծխամորճս մոտս է և մի ուրիշն էլ, բայց ծխախոտը լավը չէ»: Իսկ ես կասեմ. «Ոչինչ, եթե թունդ է»: Հետո դու կհանես ծխամորճդ, և մենք կվառենք, իբր շատ սովորական բան է: Այդ ժամանակ նայիր նրանց:

— Է՛, դա հրաշալի բան կլինի, Թում: Կուզենայի, որ դու հենց հիմա լիներ:

— Ես էլ: Հետո մենք նրանց կասենք, որ սովորել ենք մեր ծովահենն եղած ժամանակ: Զե՞ն ուզենա, որ մեզ հետ լինեին:

— Չեմ էլ կասկածում: Գրազ կգամ, որ կուզենան:

Այդպես շարունակվեց դրույցը, բայց շուտով կաշկանկ վեց, դարձավ անկապ: Լուռ պահերը երկարեցին, թեչբերը շատացավ: Տղաների բնական դարձավ աղբյուր, հազիվ լին հասցնում իրենց լեզվի տակը մաքրել, որ հեղեղի ասույց առնեն: Հակառակ նրանց բոլոր ջանքերին, կոկորդիները լրջվում էին, սրտները՝ խառնում: Երկու տղաներն էլ սաստիկ գունատվել էին և շատ խղճալի տեսք ունեին: Զոնի թուրքցած մատներով ծխամորճն ընկավ: Գրան հետևեց Սեֆ ծխամորճը: Երկու աղբյուրները շարունակում էին ուժգին հորդել, երկու ջրհանները ամբողջ ուժով ու կարողությամբ աշխատում էին: Զոն շատ թույլ ասաց.

— Դանակս կորցրել եմ: Ավելի լավ է գնամ փնտրեմ: Թումը դողացող շրթունքներով և ընդհատվող ձայնով արձագանքեց.

— Ես քեզ կօգնեմ: Դու այս կողմով գնա, իսկ ես աղբյուրի մոտ կփնտրեմ: Դու մի արի, Հեք, մենք կգնանք:

Հեքը տեղը նստեց և մի ժամ սպասեց: Հետո ձանձրացավ և գնաց ընկերներին գտնելու: Նրանց գտավ անտառում, իրարից հեռու. երկուսն էլ գունատ էին և խոր քնած: Նա զարմացավ, բայց հասկացավ, որ եթե տղաները որևէ պատճառով իրենց վատ են զգացել, հետո դա անցել է:

Այդ երեկո ընթրիքին տղաները շատ չէին խոսում. մի տեսակ խեղճացած էին, երբ Հեքը ճաշից հետո պատրաստեց իր ծխամորճը և ուզում էր նրանց համար պատրաստել, նըրանք հրաժարվեցին, ասելով, թե իրենց վնասել է:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԴ

Կեսգիշերվա մոտ Զոն արթնացավ և ձայն տվեց տղաներին: Օգուժ կանգնած էր ինչ-որ ճնշող տոթ, որը լուրջ բան էր գուշակում: Տղաները իրար մոտ եկան ու զգացին կրակի հաճելի ընկերությունը, թեև անշունչ մթնոլորտը հեղձուցիչ էր: Նրանք նստել և սպասում էին: Կրակի լույսից այն կողմ ամեն ինչ կուլ էր գնացել խավարի սևությանը: Հանկարծ ինչ-որ փայլ անորոշ կերպով լուսավորեց շրջապատը և անհայտացավ: Շուտով մի ուրիշը փայլեց ավելի ուժեղ: Հետո մի ուրիշը: Մի թույլ հառաչանք անցավ անտառի ծառերի միջով, և տղաներն իրենց այտերին ինչ-որ շունչ զգացին, դողացին, մտածելով, որ «գիշերվա ոգին» անցավ կողքով: Մի փոքր դադար եղավ: Հանկարծ կայծակի մի շարադուշակ փայլ գիշերը ցերեկ դարձրեց և ցույց տվեց յուրաքանչյուր ցողունը, իրարից անջատ ու տարբեր, որ աճում էին իրենց ոտքերի տակ, և երեք գունատ, վախեցած դեմքեր: Երկնքով որոտաձայն անցավ ամպրոպը և կորավ՝ հեռվում արձագանքելով: Սառը քամի փչեց, խշրտացնելով բոլոր տերևներն ու խոտերի վրա շաղ տվեց սպիտակ մոխիրը: Մի ուրիշ ուժեղ բռնկումից լուսաշողովեց անտառը: Դրան հետևեց վայր-

կենսական մի անկման աղմուկ, որը կարծես ծառերը շուռ էր տալիս ուղիղ տղաների գլխին: Նրանք սարսափահար իրար սեղմվեցին հաջորդող խոր մթության մեջ: Անձրևի խոշոր կաթիլներն սկսեցին ընկնել տերևների վրա:

— Շտապեք, տղաներ, դեպի վրանը, — բացականչեց Քոմը: Տարբեր ուղղություններով, արմատների կպչելով և որթատունկերի արանքով մթության մեջ նրանք առաջ վազեցին: Մի սարսափելի փոթորիկ ոտնաց ծառերի արանքում, ստիպելով, որ իր ճանապարհին ամեն ինչ քրքի: Փայլատակող կայծակները հաջորդում էին մեկը մյուսին, և խլացուցիչ որոտներ էին լսվում: Այն անց սկսվեց հեղեղանման անձրևը: Փոթորիկը տերևների միջով անձրևի հոսանքը գետին էր հասցնում: Տղաներն իրար կանչեցին, բայց ոտնացող քամին և պայթող ամպրոպը նրանց ձայնը խլացրեց: Ի վերջո, իրար հետեից նրանք տեղ հասան ու պատսպարվեցին վրանի տակ՝ մրսած, վախեցած ու թրշված, բայց զոհ էին, որ թշվառության մեջ միասին էին, ընկերներով: Նրանք չէին կարողանում խոսել: Հին առագաստը այնպես կատաղի էր թափահարվում, որ եթե նույնիսկ մյուս ձայները չլինեին, գարձյալ նրանք իրար լսել չէին կարողանա: Փոթորիկը զնալով սաստկացավ: Հանկարծ առագաստը սլատվեց ամրացված տեղերից և քամու հետ թևեր առավ, թռավ: Տղաներն իրար ձեռք բռնեցին և շարունակ վայր ընկնելով ու իրար բախվելով փախան: Ապաստանեցին գետափնյա մի մեծ կաղնու տակ: Այժմ տարերքի պայքարը ամենակատաղի վիճակում էր: Կայծակների անդադար փայլատակումների տակ, որոնք վառվում էին երկնքում, ներքևում, անձրևի քոյի տակից պարզ երևում էին անստվեր կռացած ծառերը, հորդացած գետը՝ փրփուրից սպիտակած, և հանդիպակաց ափին գտնվող բարձր ժայռերի մութ ուրվագծերը: Երբեմն մի հսկա ծառ պայքարը լքում էր և ընկնում, ջարդելով շրջապատի մատղաշ ծառերը: Կայծակի որոտն ընդմիջվում էր ակասի խլացնող սուր ու կտրող պայթյուններով և անասելի զարհուրանք պատճառում: Փոթորիկը լարեց իր բոլոր ուժերը: Թվում էր, թե շուտով կղզին կտոր-կտոր կանի, կվառի, կհեղեղի մինչև ծառերի կատարները, կթշի հեռու և կխլացնի այնպիսի բոլոր արարածներին, բոլորին միասին, մի բոպետում: Սաք

սպիեւի, վայրագ գիշեր էր անապաստան երեխաների համար:

Բայց ի վերջո ճակատամարտն ավարտվեց, և տարերքի ուժերը նահանջեցին, հեռացան թուլացող սպանալիքով: Խաղաղություն հաստատվեց: Տղաները ճամբար վերադարձան կարգին վախեցած, բայց այդտեղ պարզվեց, որ պետք է շնորհակալ լինեին. մեծ թեղին, որի տակ գիշերում էին, շարդված էր, կայծակնահար եղած, լավ էր, որ աղետի պահին ծառի տակ չէին մնացել:

Ճամբարում ամեն ինչ թրջվել էր, ինչպես նաև կրակը: որովհետև իրենց սերնդի նման թեթևամիտ երեխաներ էին և անձրևի դեմ միջոցներ չէին նախատեսել: Դա անախորժ բան էր, որովհետև մինչև ոսկորները թրջվել ու մրսում էին: Նրանց հուսահատությունը շատ ակնբեր էր, բայց նկատեցին, որ կրակը այնքան էր առաջացել կոճղի տակ (այն դեպի վեր էր ցցված և գետնից բարձր էր), որ մի բուռ կրակ ազատվել էր թրջվելուց. նրանք համբերությամբ շոր ցախ ու կեղև հավաքեցին ծառերի բների տակ պաշտպանված տեղերից և հաջողվեց կրակը նորից վառել: Կրակին դրեցին խոշոր ճղափայտեր, մինչև որ ստացվեց մի մեծ խարույկ: Ուրախացան: Չորացրին իրենց թրջված ապուխտը, ընթրեցին և դրանից հետո նստեցին կրակի մոտ ու մինչև առավոտ խոսեցին գիշերային իրենց արկածի մասին: Միևնույն է, քնելու համար ոչ մի կտոր շոր տեղ չկար ամբողջ շրջապատում:

Երբ արևն ընկավ տղաների վրա, նինչը հաղթեց, և նրանք գնացին գետափ ու պառկեցին ավազի վրա: Իսկ երբ արևն սկսեց կամաց-կամաց այրել, նրանք վեր կացան և ծուլորեն անցան նախաճաշ պատրաստելու: Նախաճաշից հետո շարդված էին, հոգնած և նորից մի փոքր տան կարոտ էին զգում: Թո՛մը նկատեց այդ նշանները, սկսեց ծովահեններին ոգևորել ինչքան հնարավոր էր: Բայց նրանք ոչ գնդիկների, ոչ կրկեսի, ոչ լողանալու և ոչ էլ որևէ բանի ցանկություն ունեին: Նա հիշեցրեց տպավորիչ գաղտնիքը: Նորից ուրախության աղաղակ բարձրացավ: Այդ ուրախությունը գեռևս չէր անցել, երբ Թո՛մը նրանց հետաքրքրեց մի նոր մտքով: Պետք է կարճ ժամանակով թողնեին ծովահենությունը և հնդկա-

ցիներ գառնային: Այս միտքը գրավեց նրանց: Շուտով մերկացան և ոտքից դուրս սև ցեխով ներկվեցին, դարձան զերբերի պես շեքտավոր: Բոլորն էլ, անշուշտ, առաջնորդներ էին և գնացին անտառ անգլիական գաղութի վրա հարձակվելու:

Շուտով բաժանվեցին երեք թշնամի ցեղերի, թաքստոցից հուրս գալով՝ իրար վրա հարձակվեցին ահռելի սազմակոշերով և միմյանց հազարավոր զոհեր պատճառելով: Արյունահեղ օր էր, հետևաբար և դահացուցիչ:

Ընթրիքի ժամին ճամբարում հավաքվեցին բազմաթիվ, բայց երջանիկ: Սակայն այժմ մի նոր դժվարություն առաջ եկավ: Թշնամի հնդկացիները չէին կարող հյուրասիրության հայր միասին կտրել ատանց նախապես հաշտության կնքելու և դա պարզապես անհնար էր առանց միասին խաղաղության ժխտմորճ ծխելու: Ուրիշ արարողության մասին նրանք երբեք չէին լսել: Վայրենիներից երկուսը համարյա ամբողջացին, որ ծովահեն չէին մնացել: Բայց այլ ճանապարհ չկար: Աշխատելով ինչքան հնարավոր է ուրախ երևալ, նրանք ժխտմորճ ուզեցին և սկսեցին հերթով ծխել, ինչպես կարգն էր:

Եվ ահա ուրախ էին, որ վայրենացել էին. մի բան շահել էին: Պարզվեց, որ կարող էին ծխել ատանց ստիպված լինելու կորած դանակը որոնելու: Նրանք լրջորեն անհանգստանալու չափ իրենց վատ շղագցին: Ինչպե՞ս կարելի էր կորցնել այդ հրաշալի առիթը: Ընթրիքից հետո զգուշությամբ, ինչպես և բավական մեծ հաջողությամբ, մի անգամ էլ փորձեցին: Հրաշալի երեկո անցկացրին: Իրենց նոր հաջողությամբ ավելի հպարտ ու ավելի երջանիկ էին, քան եթե վիղ ցեղ գերեին և մաշկահան անեին:

Իսկ հիմա նրանց թողնենք, որ ծխեն ու շտապախոսեն, առայժմ կարող ենք պատմությունը շարունակել առանց աղաների:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Շարաթ օրվա երեկոյան այնքան էլ ուրախ չէր փորձադաբը: Հարպրրները և մորաքույր Պուլիի ընտանիքը սև էին հագնում վշտով ու արյունաքույ: Մի անսովոր լուսություն տի-

րեց քաղաքում, որն առանց այն էլ սովորաբար բավական լուռ էր: Քաղաքացիներն իրենց գործը կատարում էին մտացրիվ և քիչ էին խոսում: Հաճախ հառաչում էին: Շաբաթ օրվա հանգիստը ծանր էր թվում երեխաներին: Նրանք սիրով չէին խաղում և աստիճանաբար հրաժարվեցին խաղից:

Երեկոյան Բեթի Քեչըրը իրեն գտավ դպրոցի ամայացած բակում շրջելիս: Շատ տխուր էր: Բայց այնտեղ մխիթարող ոչինչ չգտավ: Նա խոսում էր ինքն իր հետ.

— Է՛հ, գոնե նրա պղնձե կոճակը նորից մոտս լիներ: Այժմ ես ոչինչ չունեմ, որ նրան հիշեցնի,— և կուլ տվեց արցունքը:

Աղջիկը կանգ առավ և ասաց ինքն իրեն.

— Ճիշտ այստեղ էի: Մ՛հ, եթե նա նորից նույնը աներ, այդ խոսքը չէի ասի, չէի ասի, եթե ամբողջ աշխարհը ինձ տային: Բայց նա այժմ չկա: Ես նրան երբեք, երբեք, երբեք չեմ տեսնի:

Այս միտքը ընկճեց Բեթիին, և նա հեռացավ՝ այտերից արցունք գլորելով: Հետո տղաների ու աղջիկների՝ Քոմի ու Զոյի ընկերների մի խումբ եկավ և ցանկապատից այն կողմ նայելով, հարգալից տոնով խոսել սկսեց, թե վերջին անգամ, երբ Քոմին տեսան, նա ի՞նչ արեց, ի՞նչ ասաց Զոն: Հիշում էին ամեն մի խոսքը, որ այն ժամանակ շատ սովորական էր թվում, բայց իրականում լի էր շարագուշակ մարգարեությամբ, ինչպես արդեն ղգում էին բոլորը: Յուրաքանչյուր խոսող ցույց էր տալիս ճշգրիտ տեղը, թե որտեղ վերջին անգամ կանգնեցին տղաները: Հետո ավելացնում էին. «Իսկ ես կանգնել էի ճիշտ այսպես, ինչպես այժմ, իսկ նա՝ քո տեղը: Ա՛յ, այդքան մոտ էինք, և նա ժպտաց, ճիշտ այսպես, և կարծես մտքովս մի բան անցավ, մի տեսակ վատ բան, հասկանո՞ւմ ես, ես, իհարկե, չհասկացա դրա նշանակությունը: Հիմա հասկանում եմ»:

Հետո վեճ ծագեց, թե ո՞վ է վերջին անգամ ողջ տեսել մեռած տղաներին, և շատերը բազմաթիվ փաստեր բերելով և առավել կամ պակաս թվով ուրիշների վկայակոչելով, այդ պատիվը իրենց էին վերագրում: Եվ երբ վերջնականապես պարզվեց, թե ով է հանգուցյալներին վերջին անգամ տեսել ու վերջին բառերը փոխանակել նրա հետ, երջանիկները ստա-

ցան սրբազան կարևորութիւն, զարմանք ու նախանձ առաջացրին մյուսներին մեջ: Մի խեղճ տղա, որ ուրիշ ասելիք չէր գտել, պատմեց՝ իր հիշողութեամբ բավական հպարտ.

— Թո՛ւմ Սոյերը մի անգամ ինձ ծեծեց:

Բայց փառքի ձգակալու այդ ձևը ձախողվեց: Տղաներից շատերը կարող էին այդ ասել և դա կարևորութիւն ստանալու համար լավ միջոց չէր: Խումբը հեռացավ, շարունակելով կորած հերոսների մասին ակնածանքով հուշեր պատմել:

Հաջորդ օրը առափստայան, երբ կիրակնօրյա դպրոցում դասերը վերջացան, զոդանջեց եկեղեցու դանգը: Դա սովորական պանդահարութիւն չէր: Շատ հանդիստ մի կիրակի էր, և մարդկանց մշտարեկ մրմունջը համապատասխանում էր բնութեան անդորրին: Քաղաքացիներն սկսեցին հավաքվել, մի պահ կանգ առնելով դավթում՝ շշուկով խոսելու համար ախար դեպքի մասին: Բայց ժողովարանում շշուկ չկար: Միայն հուզարկավոր կանանց հագուստների խշխշոցը, երբ նրանք իրենց տեղերն էին գրավում, խանգարում էր լուծութիւնը: Ոչ ոք չէր կարող հիշել, թե մինչ այդ փոքրիկ եկեղեցին Լ՞րբ էր այգրան լիբր եղել: Ի վերջո՝ սպասողական լուծութիւն և սպասողական պապանձվածութիւն ախրեց: Այնուհետև եկեղեցի մտավ մորաբույր Պալին, նրա ետեից՝ Սիդն ու Մերին, ապա Հարպրենների բնտանիքը, բոլորը սև հագած: Ներկաները, ինչպես և ծեր քարոզիչը, հարգանքով ոտքի ելան, մնացին կանգնած, մինչև սգավորները նստեցին առջևի նստարանին: Ապա նորից լուծութիւն ախրեց, որը ընդհատվում էր դսպլոած հեկեկանքներով: Ապա քարոզիչը ձևութեբը լայն բացեց ու աղոթեց: Մի հուզիչ աղոթք Երգեցին, ոտին հաջորդեց քարոզը՝ «Ես համբարձումն եմ և կյանքը՝ նշանաբանով:

Քարոզի բնթացքում կրոնավորը կորած տղաների արժանիքները, հազվադէպ շնորհները այնպես նկարագրեց, որ այնտեղ եղածներից յուրաքանչյուրը լիովին հավատարմով այդ խոսքերին, ափսոսանք զգաց, որ ինքը միշտ կուրացել էր նրանց նկատմամբ և միայն սխալներ ու շարութեաններ էր տեսել խեղճ երեխաների մեջ: Կրոնավորը պատմեց նաև բազմաթիվ հուզիչ դեպքեր հանգուցայանների կյանքից, նկարագրելով նրանց բարի բնավորութեանները: Փառվարուրդը

կարող էր հեշտությամբ տեսնել, թե ինչ ազնիվ ու գեղեցիկ էին այդ դեպքերը: Մարդիկ հեշտությամբ կարող էին տեսնել, թե որքան անսովոր էին եղել այդ երեխաների արածները և տխրությամբ հիշեցին, թե ինչպես նույն արարքները այդ ժամանակ թվում էին հասարակ շարություններ, որոնց համար արժանի էին կաշեփոկի: Հավաքվածները գնալով ավելի հուզվեցին, քանի շարունակվում էր հուզիչ պատմությունը, մինչև բոլորը միացան լաց եղող սգավորներին: Նույնիսկ քարոզիչը, զգացմունքին հանձնվելով, սկսեց լաց լինել ամբիոնի վրա:

Վերահարկում ինչ-որ շարժում կատարվեց, որը ոչ ոք չիկատեց: Քիչ անց եկեղեցու մուտքի դուռը ճոնչաց: Քարոզիչը բարձրացրեց արցունքակալած աչքերը և քարացավ: Նախ մեկ, ապա մի ուրիշ զույգ աչքեր հետևեցին քարոզչի նայացքին, և հետո, համարյա մի մարդու պես ծխականները վեր կացան և նայեցին: Երեք մեռած տղաները դեպի բևեռ էին քայլում. առջևից՝ Թոմը, հետո՝ Զոն, հետո՝ Հեքը, որը քարշ էր տալիս վրայից թափվող ցնցոտիները և ետ էր մնում: Նրանք պահվել էին լքված վերնատանը և լսել իրենց համար ասվող դամբանականը:

Մորաքույր Պուլին, Մերին և Հարպըրները նետվեցին դեպի իրենց հարություն առածները, նրանց համբույրներով ծածկեցին և գոհություն հայտնեցին արարչին, իսկ խեղճ Հերր կանգնած էր շփոթված և անհանգիստ, շիմանալով ինչ տեղ կամ ուր պահվել այսքան անբարեհաճ հայացքներից: Նա շարժվեց և ուզեց փախչել, բայց Թոմը բռնեց նրան և ասաց.

Մորաքույր Պուլի, դա արդարացի չէ. մեկնումեկը պետք է ուրախ լինի Հեքին տեսնելու համար:

Իհարկե, պետք է ես շատ ուրախ լինեմ նրան տեսնելու համար, խեղճ, անմայր երեխա:— Եվ մորաքույր Պուլի: Իրի վրա շռայլած սիրալիր վերաբերմունքը միակ բանն էր. որ կարող էր տղային հուզել ավելի, քան մինչ այդ որևէ այլ պատճառ:

Լանկարծ քարոզիչը ամբողջ ձայնով որոտաց.

Սրհնյալ լինի աստված, որից բխում են բոլոր օրհնությունները: Երգեցեք ամբողջ սրտով:

Սիլ նրանք երգեցին: Հին օրհնութիւնը թնդում էր հաղթական, և մինչ ցնցում էր գերանները, ծովահենն թոմ Սոյերը նայում էր շուրջը, նախանձող ընկերներին ու մտքում խոստովանում, որ դա իր կյանքի ամենալավ պահն է:

«Մինչ խաբված» ծխականները դուրս էին դալիս, նրանք խոստովանեցին, որ կցանկանային նորից ծիծաղելի լինել, սրպեսզի այդ հիմնը մի անգամ էլ նույն ձևով երդնին:

Թոմն այդ օրը ավելի շատ համբույր ու բարակ ստացավ, նայած մորաբույր Պոլիի փոփոխվող տրամադրութաներ, բուն նախկինում կտանար մի տարում: Տղան շէր կարողանում հասկանալ, թի ինչով է ավելի լավ արտահայտվում գոհութիւնը ասածո հանգեպ և սերը՝ իր նկատմամբ. համբույրներով, թե արտակներով:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Սա էր թոմի մեծ գաղտնիքը՝ իր ծովահեն եղբայրների հետ տուն դառնալու և իրենց թաղմանը ներկա լինելու ծրագիրը: Շաբաթ օրվա լուսաբացին նրանք գերանի օգնութեամբ գետն անցան, դուրս եկան Միսսուրիի ափը՝ քաղաքից հինգ կամ վեց մղոն ցած: Քաղաքի ծայրամասի մոտ՝ անտառում քնեցին մինչև լուսաբաց, այլա խուլ ճանապարհներով մտան քաղաք և իրենց բունն ավարտեցին եկեղեցու վերահասարկում, հաշմանգամ նստարանների միջև:

Երկուշաբթի առավոտյան, նախաճաշի ժամանակ մորաբույր Պոլին և Մերին շատ սիրալիր էին թոմի նկատմամբ և ուշադիր՝ նրա ցանկութիւններին: Աշխույժ խոսակցութիւն էր տեղի ունենում: Զրույցի միջոցին մորաբույր Պոլին ասաց.

— Լավ, թոմ, շեմ ասում, թե սրամիտ կատակ շէր բուրին մի շաբաթից ավելի տանջելը. որպեսզի դուք՝ տղաներդ, ուրախ ժամանակ անցկացնեք, բայց ցավալի է, որ կարող ես այդքան կարծրասիրտ լինել և ստիպել, որ ես այդպէս տառապեմ: Եթե կարող էիր գերանով գետը անցնել և բռնաղմանը գալ, ուրեմն՝ կարող էիր նաև գալ և մի կերպ ինձ հասկացնել, որ մեռած չես: Դու միայն փախչել գիտես:

— Այո, կարող էիր այդ անել, թոմ,— ասաց Մերին, — ևս հավատում եմ, որ դու այդ կանեիր, եթե մտածեիր:

— Կանեի՞ր, Թոմ,— հարցրեց մորաքույր Պուլին ժպտաօղակով,— ասա, կանեի՞ր, եթե մտքովդ անցնեիր:

— Ես... ես... չգիտեմ: Բայց դա ամեն ինչ կփշացնեիր:

— Թոմ, ես կարծում էի, թե դու ինձ բավական սիրում ես,— ասաց մորաքույր Պուլին վշտացած, և տղան իրեն վատ դպացու:— Եթե նույնիսկ չգայիր, այլ գոնե մտածեիր, դա մի բան կնշանակեր:

— Մորաքույր, դա դեռ ոչինչ, վնաս չունի,— ասաց Մերին:— Վատը Թոմի գլխապառույտ պատճառով գործերն են: Ես միշտ այնքան շտապողականության մեջ է, որ երբեմն ոչ մի բանի մասին չի մտածում:

— Ավելի վատ: Սիդը կմտածեր: Սիդը կգար ու այդպես կաներ: Թոմ, դու մի օր կզղջաս քո արածների համար և կոտնականաս, որ մի փոքր ավելի իմ մասին մտածած լինեիր, երբ դա շատ քիչ էր պահանջվում քեզնից, բայց արդեն ուշ կլինի:

— Մորաքույր, դու գիտես, որ սիրում եմ քեզ,— ասաց Թոմը:

— Ես այդ ավելի լավ կհիմանայի, եթե գործով ցույց տայիր:

Սրանի մտքով անցնեիր,— ասաց Թոմը զղացված տոնով. — Բայց այնուամենայնիվ երազումս տեսա քեզ: Դա մի բան է, չէ՞:

Մեծ բան չէ. այդքանը կատուն էլ է անում, բայց ավելի լավ է, քան ոչինչը: Ի՞նչ տեսար երազում:

Ուրեմն շորեքշաբթի գիշեր երազումս տեսա, որ դու Եսայի էիր մահճակալի կողքին, Սիդը՝ տախտակե արկղի վրային, իսկ Մերին՝ նրա կողքին:

Այո, այդպես էինք նստել: Մենք միշտ այդպես նստում էինք: Ուրախ եմ, որ գոնե երազումդ այդքան մտածում ես մեր մասին:

Ես տեսա նաև, որ Ջո Հարպըրի մայրը ձեզ հետ էր: Ի՞նչու է, նա այստեղ էր: Ուրիշ բան չտեսա՞ր:

Ես ոչինչ տեսա, բայց հիմա շատ ազոտ եմ հիշում:

Ի՞նչ լավ, փորձիր մտաբերել, չե՞ս կարող:

Կարծեմ բամբին... քամին հանգցնում էր... հանգցը:

Թոմ էր

— Փորձիր ավելի լավ հիշել: Քամին փշում էր, դե՛, փորձիր:

Քոմը մատները ճակատին դրեց: Մի բուպե կենտրոնացած ու մտահոգ մնաց, հետո ասաց.

— Հիշեցի, հիշեցի: Քամին հանգցնում էր մոմը:

— Ողորմյա մեղ, աստված: Շարունակիր, Քոմ, շարունակիր:

— Կարծեմ դու ասացիր. «Ինձ. թվում է, որ դուռը...»

— Շարունակիր, Քոմ:

— Մի բուպե մտածեմ, մի բուպե: Այո, այո, դու ասացիր, թե դուրը բաց է մնացել:

— Այո, այստեղ նստած՝ ես այդ բանն ասացի: Ասացի, չէ՞, Մերի: Շարունակիր:

— Հետո, հետո, վստահ չեմ, բայց թվում է, որ դու Միդին ուղարկեցիր և...

— Հետո՞, հետո՞, ո՛ր ուղարկեցի, Քոմ: Ի՞նչ անելու ուղարկեցի, Քո՛մ:

— Գու ուղարկեցիր, ուղարկեցիր, այո, ուղարկեցիր դուր ծածկելու:

— Աստված իմ, կյանքումս նման բան չէի լսել: Էլ շատեք, թե երպեսնոր ոչինչ չեն նշանակում: Հիմա, անմիջապես կվազեմ և Սերենի Հարպըրին կպատմեմ այս բոլորը: Տեսնենք ինչպես կվերաբերվի այս բոլորին իր ամբողջ անհավատաթշամբ: Շարունակիր, Քոմ:

— Այժմ ամեն ինչ ցերեկվա պես պարզվում է: Սկզբում դու ասացիր, որ ես ոչ թե վստահ եմ, այլ պարզապես շար և թեթևսոյիկ և իմ արածների համար պատասխանատու եմ այնքան, ինչքան... ինչքան կարծեմ ասացիր քուռակը կամ գրա նման մի բան:

— Ճիշտ այդպես էլ ասացի: Ա՛խ, տեր աստված: Շարունակիր, Քոմ:

— Հետո դու սկսեցիր լաց լինել:

— Այո, լաց եղա, լաց եղա, թեև ոչ առաջին անգամ: Հետո՞...

— Հետո միսիս Հարպըրը սկսեց լալ և ասաց, որ նույնն էր նաև Ջոն, կուզենար, որ սերուցքի համար նրան ծեծած չլիներ, մանավանդ որ այդ սերուցքը ինքը դուրս էր թափել:

— Թոմ, սուրբ հոգու լույսը իջել է վրադ. դու մարգա-
րեանում էիր, այո, ահա թե ինչ էիր դու անում: Աստված
մեծ է... Շարունակիր, Թոմ:

— Հետո Սիդն ասաց... նա ասաց...

— Չեմ կարծում, որ ես բան ասած լինեմ,— ասաց Սիդը:

— Ասացիր, Սիդ,— միջամտեց Մերին:

— Լռեցեք և թողեք, որ Թոմը շարունակի: Նա ի՞նչ ասաց,
Թոմ:

— Նա ասաց... կարծեմ ասաց, որ ես ավելի լավն 'եմ իմ
զնացած տեղում, բայց եթե ավելի բարի լինեի...

— Ահա, լսո՛ւմ ես. ճիշտ է, նրա բառերն են:

— Եվ դու անմիջապես լռեցրիր:

— Այո, լռեցրի: Այստեղ պետք է մի հրեշտակ լինի: Այս-
տեղ հրեշտակ է եղել:

— Եվ միսիս Հարպըրը պատմեց, թե ինչպես Ջոն վա-
խեցրել է իրեն խաղալիք-ատրճանակով, իսկ դու պատմեցիր
Պիտերի՝ «ցավ կտրող» դեղի մասին:

— Դա այնքան ճիշտ է, որքան ճիշտ է, որ ես այժմ ապ-
րում եմ:

— Եվ հետո երկար խոսք եղավ, թե ինչպես մեզ փնտրել
էք գետում և կիրակի օրը մեր թաղումն եք անելու, այնու-
հետև դուք և խեղճ միսիս Հարպըրը իրար գրկեցիք ու լաց
եղաք, հետո նա գնաց:

— Ծիշտ այդպես եղավ, ճիշտ այդպես եղավ: Այնքան
հիշա է, ինչքան այն, որ ես նստել եմ այստեղ: Թոմ, դու
ավելի ճիշտ չէիր նկարագրի, եթե տեսած լինեիր: Հետո ի՞նչ,
Թոմ, շարունակիր:

Հետո, կարծեմ, դու աղոթեցիր ինձ համար: Ծն քեզ
«հանում էի ու լսում քո ասած յուրաքանչյուր բառը: Հետո
«եկողին մտար, իսկ ես այնքան ցավում էի քեզ համար, որ
վերքի ծառի մի կեղև և վրան գրեցի. «Մենք չենք մահացել,
ձեք պարզապես ծովահեններ ենք դարձել» և գրեցի սեղա-
ւեր վրա, մոմի մոտ: Եվ դու այնքան բարի էիր քնած ժամա-
կ... 4. որ ես մոտեցա, խոնարհվեցի վրագ և շրթունքներդ
... րուրեցի:

Մի՞շտ, Թո՛մ, համբուրեցի՞ր: Դրա համար ես ամեն
թե, եերում եմ քեզ,— և այնպես ուժեղ գրկեց ու կրծքին սեղ-

մեց տղային, որ Թումն իրեն զգաց ամենամեծ հանցավորը:

— Շատ լավ բան է եղել, թեկուզ երազում,— նկատեց Սիդը լսելի ձայնով:

— Լսիր, Սիդ: Մտորդ երազում անում է այն, ինչ կաներ, եթե արթուն լիներ: Ահա քեզ ամենամեծ խնձորը, Թում, որ քեզ համար էի պահում, եթե գտնվեիր: Հիմա դնա դպրոց: Ես շնորհակալ եմ բարի աստծուց, մեր բոլորի երկնակալ հորից, որ նորից քեզ վերադարձրեց, շնորհակալ եմ նրա սրբափայլ, որ բարի ու համբերատար է բոլորի նկատմամբ, բոլորի, ովքեր հավատում և հետևում են իր խոսքերին, իմ նրկատմամբ, թեև ես անարժան եմ: Միայն ընտրյալներն են արժանի նրա օգնությանը և նրա ձեռքին, որպեսզի անցնեն դժվար ճանապարհներով, որտեղ շատ քչերը կարող են ժրպտալ ու հասնել հանգստի, երբ մեծ զիշերը գա: Գնացեք, Սիդ, Մերի, Թում, հեռացեք այստեղից, դուք ինձ բավական չարչարեցիք:

Երեխաները դպրոց գնացին, իսկ ծեր լեդին՝ միսիս Հարպլերի մոտ, որպեսզի Թումի հրաշալի երազով նրա ոեանլիզմը ոչնչացնի: Սիդը շասաց այն, ինչ մտածում էր տնից հեռանալիս: Նա մտածում էր.

— Այդքան երկար և անսխալ երազ կլինի:

Ի՞նչ հերոս էր դարձել այժմ Թումը: Նա ոչ վազում էր, ոչ էլ թռչկոտում, այլ քայլում էր վեհ արժանապատվությամբ, ինչպես կաներ ծովահենը, որն իր վրա զգում էր ամբողջ հասարակության հայացքը: Եվ իրոք գա այդպես էր: Անցնելիս նա փորձեց հայացքները շտեմել և իր մասին արվող նկատողությունները շտեմել, բայց դրանք տղայի համար հաց ու ջուր էին: Փոքր երեխաները կրնկակոխ հետևում էին Թումին՝ հրպարտ, որ կարող են նրա հետ երևալ, իսկ նա հանդուրժում էր դրանց՝ իր կողքին: Կարծես թափորի գլուխն անցած թմբկահար լիներ կամ քաղաք մտնող գազանների առչից քայլող փիղ: Հասակակից տղաները ձեռնում էին, թե իբր բողոքովին շփոտեն նրա բացակայության մասին, բայց, այնուամենայնիվ, նախանձում էին: Ամեն ինչ կտային Թումի արևահար մորթը և փայլուն հոշակն ունենալու համար, իսկ Թումը դրանցից չէր բաժանվի, նույնիսկ եթե կրկեսը տային:

Դպրոցում երեխաներն այնպես էին վերաբերվում նրան

ու Ջոյին, այնպես պերճախոս հիացում էր արտահայտում նրանց հայացքը, որ երկու հերոսներն սկսեցին անտանելի «փքվել»: Նրանք հափշտակված ունկնդիրներին պատմեցին իրենց արկածները, բայց միայն սկիզբը: Դա անվերջանալի մի պատմութուն էր, քանի որ նրանց երևակայութունը շարունակ մի բան ավելացնում էր: Վերջապես, երբ հանեցին իրենց ծխամորձեները և սկսեցին անյլոգով ծխել, փառքի գաղաթնակետին հասան:

Թումը որոշեց, որ այժմ կարող է Բեքի Բեչըրից անկախ լինել: Փառքը բավարար էր: Նա կարող էր փառքով ապրել: Այժմ, երբ ինքը հռչակավոր էր, գուցե աղջիկն ուզենար «հաշտվել»: Թող փորձի: Կտեսնի, որ Թումը կարող է այնքան անտարբեր լինել, ինչքան ուրիշները: Այդ պահին եկավ Բեքին: Թումը ձեռքերեց, թե չի տեսնում: Մի կողմ քաշվեց, միացավ տղաների ու աղջիկների մի խմբի և շարունակեց խոսել: Շուտով նկատեց, որ Բեքին կարմրած դեմքով ու վառվող աչքերով ետ ու առաջ է վազում, ձեռքներով, թե բնկերներին է հալածում: Նա ծիծաղից պայթում էր, երբ հայտնվում էր որևէ մեկին բռնել: Բայց Թումը նկատեց, որ միշտ իր շուրջն է պտտվում և հարմար պահերին իր կողմն է նայում: Դա շոյում էր Թումի ինքնասիրութունը, բայց փոխանակ այդ դժգոհումը հաղթահարելու, տղան շարունակում էր յույց տալ, թե իրր չի նկատում աղջկա ներկայութունը: Այդ մամանակ Բեքին թողեց վազվզելը և անվճռական շայլերով հեռացավ, մի քանի հառաչանք արձակելով և վախեցած ու գողտնի հայացքներ գցելով Թումի կողմը: Հետո նկատեց, որ Թումը առավել ուշադրությամբ խոսում է էմի Լուրենսի հետ, քան ուրիշների: Նա սուր ցավ զգաց, հանկարծ սկսեց ձանձրանալ ու անհանդստանալ: Փորձեց հեռանալ, բայց ոտքերը ցափածանեցին և նրան տարան դեպի խումբը: Թումի կողքին ցածր ու աղջիկներից մեկին նա ասաց.

Մերի Օստին, վատ աղջիկ, ինչո՞ւ կիրակնօրյա դըպրոց չ'իր եկել:

Սկել էի, դու ինձ շտեսա՞ր:

Ո՞չ. եկե՞լ էիր: Որտե՞ղ էիր նստել:

Միտ Պիտերիսի դասարանում էի, ինչպես միշտ: Նա

թե՛ս ասա:

— Տեսա՞ր: Զարմանալի է, որ ես քեզ չտեսաւ Աւզում էի քեզ ասել պիկնիկի մասին:

— Ա՛, հրաշալի է, ո՞վ է կազմակերպում:

— Մայրս ինձ թույլ է տալիս կազմակերպել:

— Ա՛, սքանչելի է. հույս ունեմ, որ ինձ կհրավիրի:

— Դե, անշուշտ: Պիկնիկն ինձ համար է կազմակերպւ-վում: Նա կհրավիրի բոլոր նրանց, ում ես ուզեմ: Իսկ ես ուզում եմ, որ դու գաս:

— Դու շատ բարի ես: Ե՞րբ է լինելու:

— Շուտով: Գուցե արձակուրդին:

— Օ՛, ինչ հրաշալի բան կլինի: Բոլոր տղաներին ու աղ-ջիկներին կանչելու՞ ես:

— Այո, բոլոր նրանց, ովքեր իմ բարեկամներն են կամ ուզում են լինել:— Եվ նա գողունի նայեց Թոմին, որն այդ ժամանակ էմի Լոուրենսին պատմում էր կղզում եղած սար-սափելի փոթորիկի մասին, թե ինչպես կայծակը կտոր-կտոր արեց թեղի խոշոր ծառը, երբ ինքը ծառից միայն երեք ոտ-նաշափ էր հեռու:

— Ես կարո՞ղ եմ գալ,— հարցրեց Գրեսի Միլլըրը:

— Այո:

— Իսկ ե՞ս,— հարցրեց Սալի Ռոչերսը:

— Այո:

— Ե՞ս էլ,— ասաց Սուպի Հարպըրը,— Զոն է՞լ:

— Այո:

Եվ այդպես բոլորն ուրախ ծափ էին տալիս, մինչև բոլորն էլ խնդրեցին, որ իրենց հրավիրեն, բացի Թոմից ու էմիից: Հետո Թոմը սառնորեն շուռ եկավ և շարունակելով խոսել, հեռացավ էմիի հետ: Բեքիի շրթունքները դողացին, և աչքերը արցունքով լցվեցին: Նա դրանք քողարկեց շիճու ուրախությամբ և շարունակեց շաղակրատել, բայց պիկ-նիկը կորցրեց իր հետաքրքրությունը, ինչպես ամեն ինչ: Նա առաջին իսկ առիթով հեռացավ ընկերուհիներից և մի տեղ պահվելով «մի կուշտ» լաց եղավ, ինչպես վարվում են գեղեցիկ սեռին պատկանողները: Հետո մոռյլ, վիրավորված հարատւությամբ նստեց, մինչև ղանգը հնչեց: Նա վեր կացավ՝ աչքերում վրեժխնդրութուն, թափ տվեց հյուսերը և ասաց, թե այժմ գիտե իր անելիքը:

Դասամիջոցքն թումը շարունակեց սիրահետել էմիին մեծ
 րավականությամբ: Նա ուզեց Բեքիին գտնել և կատաղեցնել
 իր արածով: Թ վերջո գտավ, բայց նրա ուրախությունը հան-
 կարծ փշացավ: Բեքին դպրոցի հետևում, մի փոքր նստարա-
 նի նստած՝ զրուցում և պատկերազարդ գիրք էր դիտում
 Ալֆրեդ Տեմպլերի հետ. այնքան կլանված էին նրանք, գրքի
 վրա նրանց գլուխները այնքան մոտիկ էին, որ կարծես ի-
 րենց շուրջը ոչինչ չէին տեսնում: Նախանձը կրակի պես հո-
 սեց թումի երակներում: Նա սկսեց իրեն ատել Բեքիի տված
 հաշտության առիթը բաց թողնելու համար: Իրեն հիմար և
 ամեն տեսակի վատ անուններ տվեց: Ուզեց կատաղությունից
 լայ լինել: Քայլելիս էմին շարունակում էր ուրախ շաղակրա-
 տել, որովհետև նրա սիրտը երզում էր, մինչդեռ թումի լե-
 ցուն կապ էր ընկել: Նա չէր լսում էմիի ասածը, իսկ երբ
 աղջիկը լուում էր և պատասխանի սպասում, թումը դժկամու-
 թյամբ մի խոսք էր մրթմրթում, հաճախ անտեղի: Նա շարու-
 նակ դպրոցի ետևն էր գնում, թեև այդ ատելի տեսարանը
 նրան տանջում էր: Տղան չէր կարողանում այլ կերպ վարվել:
 Եվ նա խենթանում էր այդ բանը տեսնելով: Նրան թվում էր,
 թե Բեքի Թևշերին չի էլ հետաքրքրում իր գոյությունը: Բայց
 աղջիկը հրճվում էր, տեսնելով, որ այժմ էլ տղան է տառա-
 պում: Էմիի ուրախ շաղակրատանքը անտանելի դարձավ:
 Թումն ասաց, թե ինչ-որ գործեր ունի, անհետաձգելի գործեր:
 Ժամանակ չկա... Բայց իզուր, աղջիկը շարունակում էր խո-
 սել, թումը մտածեց. «է՛, գրողը տանի, երբեք չե՞մ կարողա-
 նալու սրանից օձիքս ազատել»: Ի վերջո նա պարտավոր էր
 իր գործերն անել: Աղջիկն ասաց, որ դասերն ավարտելուց
 հետո «շրջակայքում» կլինի: Թումը շտապեց հեռանալ, ատե-
 լով այդ աղջկան:

«Մի ուրիշ տղա», մտածեց թումը ատամները կրճտադ-
 եկով, «թող մի ուրիշ տղա լիներ ամբողջ քաղաքից, բացի
 «Կոյունիդի» այս մեկից, որն այնքան լավ է հագնվում և ի-
 րեն արխատոկրատ է համարում: Է՛հ, շատ լավ. առաջին օրն
 ի՞նչ, իրո այս քաղաքը եկար, ես քեզ ծեծեցի, միստր, և նո-
 բի կծեծեմ: Սպասիր, մինչև դրսում բռնեմ քեզ, սպա-
 տիր...»

Եվ թոմն սկսեց երևակայական տղային ծեծել, ձեռքերն օղում թափահարելով, աքացի տալով և խոսելով.

— Ախ, դո՛ւ ես, հա՛: Դե խնդրիր, որ խնայեմ: Առ քեզ: Թող դա քեզ դաս լինի:

Եվ այդպես, երևակայական այդ կոիվն ավարտվեց թոմի հաղթանակով:

Կեսօրին թումը տուն փախավ: Նա այլևս չէր կարողանում դիմանալ էմիի միամիտ երջանկությանը, իսկ նախանձը այլևս չէր կարող դիմանալ վշտին: Բեքին ավարտեց Ալֆրեդի հետ նկարներ նայելը, բայց որովհետև բոպեններն անցնում էին, և թոմը չէր վերադառնում տառապելու, հաղթանակն սկսեց ամօրսուել և հետաքրքրությունը կորցրեց: Լրջությունը և անուշադրությունը հաջորդեցին, սրից հետո եկավ թախիծը: Մի անգամ նա ականջ դրից ոտնաձայնի: Ձուր հույսեր: Թոմը չեկավ: Ի վերջո աղջիկն իրեն բոլորովին դժբախտ ըզգաց: Երանի խաղն այդքան հեռուն տարած չլիներ: Խնդհ Ալֆրեդը տեսնելով, որ կորցնում է նրան, շարունակեց բացականչել. «Ահա մի հրաշալի նկար, սրան նայիր», աղջիկը ի վերջո համբերությունից դուրս եկավ և ասաց. «է՛հ, հանդիսս թող ինձ, ձանձրացա»: Նա լաց եղավ ու վեր կենարտվ հեռացավ:

Ալֆրեդը քայլեց նրա կողքով, ուզեց մխիթարել, բայց Բեքին ասաց.

— Հեռացիր և ինձ մենակ թող: Ես քեզ ատում եմ:

Տղան կանգ առավ, մտածելով, թե ինչ վատ բան կարող էր արած լինել: Չէ՞ որ աղջիկն ասում էր, թե ամբողջ հեռմիջօրեն նկարներ կնայի, իսկ այժմ լաց լինելով հեռանում էր: Ալֆրեդն սկսեց շրջել աճայի դասարանում: Նա ստորացած և բարկացած էր: Հեշտությամբ դուշակեց ճշմարտությունը. աղջիկը պարզապես իրեն օգտագործեց թոմ Սոյիբին շարացնելու, վրեժ լուծելու համար: Երբ այդ եզրակացությունն եկավ, ավելի ատեց թոմին: Ուզեց որևէ ձևով թոմից վրեժ լուծել, առանց իրեն վտանգելու: Աչքովն ընկավ թոմի բնֆերցանության դիրքը: Ահա և առիթը: Նա բացեց այդ օրվա գասի տեղը և ամբողջ էջի վրա թանաք լցրեց:

Այդ պահին լուսամուտից նայող Բեքին տեսավ նրա արարքը և առանց նշմարվելու հեռացավ: Տուն գնաց, մտածե-

լով, որ պետք է թոմին գտնել և ասել: Թոմը շնորհակալ
կլինի, և անախորժությունները կվերանան: Տան կես ճանա-
պարհին հասած, նա փոխեց միտքը: Հիշեց թոմի վերաբեր-
մունքը պիկնիկի մասին խոսելիս և ամաչեց: Որոշեց. թող
նրան ծեծեն ընթերցանության դիրքը կեղտոտելու համար:
Այդ տղային ինքն ընդմիջաւ կատի:

ՉԼՈՒՆ ՔՅԱՆԵՐՈՐԴ

Թոմը տուն հասաւ մոայլ տրամադրությամբ և մորաքրոջ
առաջին խակ խոսքից հասկացաւ, որ վշտերը մեղմելու հա-
մար լավ տեղ չէր ընտրել:

— Թոմ, ինչպէս երևում է, կաշիք բերթելու եմ:

— Ի՞նչ եմ արել, մորաքույր:

— Արածդ բավական է: Հիմարի պէս գնում եմ Սերենի
Հարպըրի մոտ, կարծելով, թե նրան կհամարտացնեմ, որ ճիշտ
են երազի մասին քո ասած հիմարությունները, բայց պարզ-
վում է, նա Ջոյից ամեն ինչ իմացել է: Դու այստեղ ես
կողև և լսել այդ գիշերվա մեր ամբողջ զրույցը: Թոմ, ես
յգիտեմ, թե ինչ դուրս կգա քեզ նման մի տղայից, որն այդ-
պէս է վարվում: Ինձ շատ վատ եմ զգում, մտածելով, թե
դու ինչպէս թույլ տվիր, որ գնամ Սերենի Հարպըրի մոտ,
ծաղրատեղ գառնամ... և ոչ մի խոսք չասացիր:

Թոմն ամեն ինչ տեսաւ նոր լույսի տակ: Առավոտյան իր
սրամտությունը թվում էր լավ հնարված, հաջող կատակ:
Այժմ դա թվում էր վատ, հիմար արարք: Նա գլուխը կախեց
և մի պահ շկարողացաւ ասելիք գտնել, հետո ասաց.

— Մորաքույր, երանի արած չլինելի, բայց չմտածեցի:

— Ախ, Թոմ, դու երբեք չես մտածում: Դու ոչ մի բանի
մասին չես մտածում, բացի քո եսամոլությունից: Դու կարող
ես մտածել գիշերով Զեկսոնի կղզուց մինչև այստեղ գալու
և իս պատճառած մտահոգությունների վրա ծիծաղելու մա-
սին, կարող ես մտածել հնարովի երազով իմ վրա ծիծաղե-
լու մասին, բայց երբեք էլ չես կարող մեզ խղճալու և վիշտ
լուստհատելու մասին մտածել:

Մորաքույր, ես այժմ գիտեմ, որ շատ ստոր բան եմ

արհլ, թեև չէի ուզում: Չէի ուզում, աղնիվ խոսք: Մյուս կողմից, այդ գիշեր ես քեզ վրա ծիծաղելու չեկա:

— Հապա ինչո՞ւ եկար:

— Եկա ասելու, որ մեր մասին շանհանգստանաք, որ մենք շենք խեղդվել...

— Թո՛մ, Թո՛մ, ես այս աշխարհի ամենաշնորհակալ մարդը կլինեի, եթե կարողանայի հավատալ, որ դու գոնե այդքան բան մտածած կլինես, բայց դու ինքդ գիտես, որ այդպիսի բան մտրովդ չի անցել: Ես էլ գիտեմ, Թո՛մ:

— Ճիշտ, ճիշտ եմ ասում, մորաքույր, քարանամ, եթե դրա համար եկած չլինեմ:

— Ծ՛հ, Թո՛մ, մի ստիր, մի ստիր: Այդպես հազար անգամ ավելի է մեծանում հանցանքդ:

— Չեմ ստում, մորաքույր, ճիշտ եմ ասում: Ես ուզում էի, որ դու չվշտանայիր, միայն դրա համար եկա:

— Ամբողջ աշխարհը կտայի, միայն թե հավատայի դրան: Դա կծածկեր քո մեղքերը, Թո՛մ: Ես նույնիսկ ուրախ կլինեի, որ դու փախել ես և այդքան վատ վարվել: Բայց դա խելքի մոտ բան չէ: Հապա ինչո՞ւ շասացիր, ա՛յ տղա:

— Որովհետև, գիտե՞ս ինչու, մորաքույր, երբ դուք ըսկրսեցիր խոսել թաղման մասին, ես միանգամից մտածեցի գալու և եկեղեցում թաքնվելու մասին և չկարողացա, չգիտեմ ինչու, չկարողացա փչացնել գործը: Ես նորից գրպանս գրեցի ծառի կեղևը և լուռ մնացի:

— Խ՛նչ կեղև:

— Այն կեղևը, որի վրա գրել էի, թե մենք գնացել ենք ծովահենություն: Երանի արթնացած լինեիր, երբ համբուրեցի քեզ: Աղնիվ խոսք, համբուրեցի:

Մորաքրոջ դեմքի խստությունը մեղմացավ, ու աչքերում հանկարծակի քնքշություն երևաց:

— Դու ինձ համբուրեցի՞ր, Թո՛մ:

— Այո, իհարկե, համբուրեցի:

— Վստա՞հ ես, Թո՛մ:

— Այո, իհարկե, իհարկե, համբուրեցի, մորաքույր:

— Ինչո՞ւ համբուրեցիր, Թո՛մ:

— Որովհետև քեզ շատ եմ սիրում, դու երազում հեկեկում էիր, և ես ցավում էի...

Այդ խոսքերը ճշմարտանման հնչեցին: Պատավ լեզին չէր կարող թաքցնել դողացող ձայնը, երբ ասաց.

— Նորից համբուրիր ինձ, Թոմ, և այժմ գպրոց գնա ու ինձ այլևս մի խանգարի:

Նրա գնալուց անմիջապես հետո մորաքույրը մատան վազեց և դուրս հանեց Թոմի ծովահենության պատառոտված բաճկոնը: Բաճկոնը ձեռքին կանգնեց և ասաց ինքն իրեն.

— Ոչ, չեմ համարձակվի: Խեղճ երեխա. ես համոզված եմ, որ ստեց, բայց դա օրհնյալ սուտ է, օրհնյալ սուտ, այնքան հանդստացնող սուտ: Հույս ունեմ, որ Տերը, որ Տերը կօղնի նրան. այնքան մաքուր սրտով էր ասում: Բայց չեմ ուզում իմանալ, որ դա սուտ էր: Չեմ ստուգի:

Նա բաճկոնը տեղը դրեց, կողքին կանգնեց ու մի պահ մտածեց: Արկու անգամ ձեռքը երկարեց այն վերցնելու և երկու անգամ էլ ետ քաշեց: Մի անգամ էլ փորձեց և այս անգամ իրեն ուժ տվեց մտածելով. «Լավ սուտ էր, բարի սուտ, չեմ թողնի, որ այն ինձ տանջի»: Նա նայեց բաճկոնի զրրպանը: Մի բույն հետո կարգաց Թոմի կեղևի կտորը: Աչքերից արցունք հոսեց, և նա մրմնջաց.

— Հիմա կարող եմ ներել նրան, եթե նույնիսկ մեկ միլիոն հանցանք գործած լինի:

ՉԼՈՒՆ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Թոմին համբուրելիս մորաքույր Պոլիի զեմքն այնպիսի արտահայտություն ուներ, որ տղայի վատ տրամադրությունը չբացրեց և նրան նորից դարձրեց թեթևասիրտ ու երջանիկ: Նա դպրոց գնաց և բախտ ունեցավ Միգս Լեյն մարգագետնի եզրին Բեթի Թեյլորին հանդիպելու: Նրա տրամադրությունը միշտ սրտում էր անելիքը: Առանց մի պահ վարանելու, նա վազեց աղջկա մոտ և ասաց.

Այսօր ես շատ վատ վարվեցի, Բեթի, և այնպես ցավում եմ: Սա այլևս այդպես չեմ անի, ինչքան ապրեմ: Խնդրում եմ՝ հաշտվենք, այո՞:

Ապրիլը կանոց առավ և արհամարհանքով նայեց տղայի գանգի:

— Ես շատ շնորհակալ կլինեմ, եթե դուք ձեզ ինձնից հեռու պահեք, միսար Քոմաս Սոյեր: Ես ձեզ հետ երբեք չեմ խոսի:

Նա գլուխը թափ տվեց ու կողքով անցավ: Թոմն այնպես շշմեց, որ նույնիսկ շկարողացավ պատասխանել. «Շատ հոգս է, օրիսրդ տելոր»: Պատասխանելու համար պահն արգին անցել էր: Նա ոչինչ շատաց, բայց այնուամենայնիվ կատաղեց: Մտավ դպրոցի բակը, ցանկանալով, որ Բեքին տղոջիներ և պատկերացնելով, թե ինչպես պիտի ծեծեր նրան: Այդ պահին նա անցավ աղջկա կողքով և միրավորական խոսք նետեց: Աղջիկը նույն ձևով պատասխանեց, և բաժանումը կատարյալ դարձավ: Բարկացած Բեքին անհամբեր սպասում էր, որ դասը վերսկսվի: Ուզում էր տեսնել, թե ինչպես է Թոմը ծեծ ուտելու կեղտոտված գրքի համար: Եթե նա երբևէ մտածել էր Ալֆրեդ Տեմպլին մատնելու մասին, Թոմի վիրավորական խոսքից հետո այդ միտքը լրջվ շքացավ:

Խեղճ աղջիկ. շփտեր, թե վտանգը ինչքան մոտ էր իրեն: Ուսուցիչ միսար Դորինսը միջին տարիքի էր հասել չիրագործված երազանքով: Նրա նվիրական ցանկությունն էր բժիշկ դատնալ, բայց օգրոսթությունը նրան դատապարտել էր դատնալու ոչ ավելին, բան դշուղական դպրոցի ուսուցիչ: Ամեն օր նա մի խորհրդավոր գիրք էր հանում դարակից և գրադվում դրանով, երբ աշակերտները դաս չէին պատասխանում: Այդ գիրքը կողպեքի տակ էր պահում: Դպրոցում ոչ մի տղա և աղջիկ չկար, որ շմեռներ այդ գրքի վրա մի հայացք պցելու ցանկությունից, բայց երբեք առիթ չէր լինում: Յուրաքանչյուր տղա կամ աղջիկ իր կարծիքն ուներ այդ գրքի էության մասին, բայց ոչ մի կարծիք չէր համընկնում մյուսի հետ, և ոչ մի ճանապարհ չկար ճշմարտությունը պարզելու: Երբ Բեքին անցնում էր սեղանի մոտով, որը դոսն մոտ էր, նկատեց, որ բանալին կողպեքի վրա է: Թանկագին առիթ էր: Աղջիկը շուրջը նայեց: Մենակ էր: Հաջորդ վայրկյանին գիրքը նրա ձեռքին էր: Վերնագիրն «Անատոմիա», այսինչ պրոֆեսորի գրածը նրա ուղեղին անհասկանալի մնաց: Սկսեց չչերթ թերթել: Անմիջապես հասավ մարդկային զեմրի մի զեղեցիկ ու գունավոր նկարի: Այդ պահին մի ստվեր ընկավ էջի վրա, Թոմ Սոյերը ներս մտավ ու մի հայացք պցել

նկարին: Բեքին շտապեց գիրքը փակել և դժբախտություն ունեցաւ նկարազարդ էջը մինչև կեսը պատռելու: Նա գիրքը գցեց դարակի մեջ, բանալին դարձրեց ու բարկությունից լաց եղաւ:

— Թո՛մ Սոյեր, ավելի ստոր լինել չեք կարող: Տեսե՛լ մեկին ու լրտեսել, թե նա ինչի է նայում:

— Ես ինչի՞ց իմանայի, որ դուք մի բանի եք նայում:

— Դուք պետք է ձեզնից ամաչեք, Թո՛մ Սոյեր: Անշուշտ, կմատնեք ինձ: Եվ ի՞նչ պիտի անեմ ես, ի՞նչ պիտի անեմ: Ինձ կծեծեն, իսկ ինձ դայրոցում երբեք չեն ծեծել:

Հետո նա փոքրիկ օտքը գետնին խփեց ու ասաց.

— Այդքան ստորացի՛ր, Լթե ուզում ես, իսկ ես մի բան գիտեմ, որը շուտով լինելու է: Սպասիր և կտեսնես: Ատելի, ստելի, աւելի՛ տղա:— Եվ լացի մի նոր պոռթկումով սենյակից դուրս նետվեց:

Թո՛մը մնաց անշարժ, այս հարձակումից շճած: Հետո ասաց ինքն իրեն.

— Ինչ հետաքրքիր խենթ է այս աղջիկը: Դպրոցում երբևէ չեն ծեծել: Ի՞նչ մեծ բան է ծեծվելը: Իսկական աղջիկ է: Դրանք շատ նուրբ մաշկ ունեն ու հավի սիրտ: Դե, իհարկե, ևս այդ Դորինսին չեմ ասի այս փոքրիկ գծի մասին, հաշիվ մարբելու ուրիշ ձևեր կան, որ ստոր չեն: Բայց դրանից ի՞նչ պորտ կգա: Ծեր Դորինսը հարցնելու է, թե ո՞վ է պատռել իր գիրքը: Ոչ ոք չի պատասխանելու: Հետո վարվելու է այնպէս, ինչպես սովոր է. մեկ-մեկ հարցնելու է բոլորին, իսկ եւր հարցնի հանցավորին, գլխի է ընկնելու առանց սրա խոստովանելու: Աղջիկների դեմքերը նրանց միշտ մատնում են: Դիմացկուն չեն: Սա ծեծ կուտի: Դե, Բեքի Թեչըրի համար վատ է, որովհետև խուսափելու տեղ չունի:— Թո՛մը մի փոքր մտածեց, հետո ավելացրեց.— Շատ լավ է. կուզենար ինչ տեսնել այդ վիճակում, հիմա թող իր վրա փորձի:

Թո՛մը միացաւ դրսում խաղացող աշակերտներին: Մի քանի րոպեից ուսուցիչը վերադարձաւ և աշակերտներին ներս տարաւ: Թո՛մը դասերով առանձնապէս չէր հետաքրքրվում: Ամեն րոպե հայացք էր գցում աղջիկների կողմը, և Բեքիի գլխի մասն ուղում էր նրան: Ամեն ինչ հաշիվ առնելով, նա լիք ուզում խղճաւ աղջկան, բայց չէր կարողանում: Զէր կա-

րողանում ուրախանալ նրա վիճակով: Շուտով ընթերցանության գրքի գաղտնիքը բացվեց, և Քոմի միտքը որոշ ժամանակ զբաղվեց իր հարցով: Բեքին դուրս եկավ իր ճնշված վիճակից և մեծ հետաքրքրություն ցուցաբերեց այդ իրադարձության նկատմամբ: Նա չէր սպասում, որ Քոմը կկարողանա գլխացավանքից ազատվել, ասելով, թե ինքը չի թափել թանաքը: Եվ նա իրավացի էր: Քոմի ուրացումը ավելի վատթարացրեց գործը: Բեքին կարծում էր, թե ինքը կուրախանա զրա համար, բայց այդպես չեղավ: Երբ գործը հասավ ամենավատին, նա ցանկացավ վեր կենալ և ասել Ալֆրեդ Տեմպլի մասին, բայց ճիգ գործադրեց ու իրեն ստիպեց լուռ մնալ, որովհետև ինքն իրեն ասաց. Քոմն, անշուշտ, կրահայտնի գիրքը պատռելու մասին: «Նուշնիսկ նրա կյանքը ազատելու համար մի բան չեմ ասի»,— որոշեց նա:

Քոմը ծեծ կերավ և տեղը վերադարձավ առանց վիրավորանք զգալու. մտածում էր, թե երևի խաղի ժամանակ, առանց իմանալու, ինքը շուռ տված լինի թանաքը ընթերցանության գրքի վրա: Նա ուրացավ ձևի համար, որովհետև այդպես էր ընդունված, և համառեց իր խոսքի վրա՝ ի սեր սկզբունքի:

Մի ամբողջ ժամ անցավ: Ուսուցիչն իր դահլի վրա ննչում էր: Օղը լցված էր դաս սերտելու բզղոցով: Ի վերջո միտար Դորինսը ուղղվեց, հորանջեց, հետո բացեց դարակը և ձեռքը երկարեց գրքին, բայց դեռ չէր վճռել՝ գիրքը հանի՞, թե թողնի: Աշակերտների մեծամասնությունն անտարբեր մնաց, բայց կային երկուսը, որ նրա շարժումները դիտում էին ուշադրությամբ: Միտար Դորինսը գիրքը մտացրիվ շուռ տվեց, հետո դուրս բերեց և աթոռի վրա տեղավորվեց՝ կարդալու:

Քոմը մի հայացք զցեց Բեքի կողմը: Աղջիկը գրքին նայում էր այնպես, ինչպես հալածված ու անպաշտպան նախաստակը իր գլխին ուղղված հրացանին: Քոմն իսկույն մոռացավ աղջկա հետ ունեցած վեճը: Մի բան պետք է մտածել՝ շտապ, կայծակի արագություն: Բայց շտապողականության անհրաժեշտությունը նրան մտածելու անկարող դարձրեց: Ահա, նա մի ներշնչում ունեցավ. կվազի, գիրք կխլի, դռնից դուրս կնետվի և կփախչի: Բայց այդ որոշումը կայացնելիս տղան մի վայրկյան տատանվեց և հարմար ա.

Ռիթը բաց թողեց: Ուսուցիչը բացեց դիրքը: Երանի կորած ստիժը նորից ներկայանար Քոմիին: Շատ ուշ էր. ոչինչ չէր կարող այժմ Բեքիին օգնել: Հաշորդ պահին ուսուցիչը նայեց դասարանին: Նրա հայացքի տակ բոլորի աչքերը խոնարհվեցին: Այդ հայացքի մեջ մի բան կար, որից անմեղներն էլ սարսափում էին: Մինչև տասը հաշվելու շափ լուսթյուն տիրեց: Ուսուցիչը ցատում էր կուտակում: Հետո նա խոսեց.

— Ո՞վ է պատռել գիրքը:

Ոչ մի պատասխան չեղավ: Եթե հատակին ասեղ ընկներ, լայնը կլավեր: Լուսթյունը շարունակվեց: Ուսուցիչը գեմբ-պեմբի ետևից քննեց հանցանքի նշան գտնելու համար:

— Բենջամեն Ռոջերս, դո՞ւք պատռեցիք գիրքը:

Բացասական պատասխան: Նորից լուսթյուն:

— Ջոզեֆ Հարպըր, դո՞ւք պատռեցիք:

Նորից ժխտում: Այս արարողության դանդաղ տանջանքի տակ Քոմի անհանգստությունը գնալով ավելանում էր: Ուսուցիչը նայեց տղաների շարքին, մի պահ մտածեց, հետո նորից պարծավ աղջիկներին.

— Էմի Լուրեմոն:

Գլխի բացասական շարժում:

— Գրեյսի Մի՞լլըր:

Նույն շարժումը:

Սյուզան Հարպըր, դո՞ւք պատռեցիք:

Նորից բացասական շարժում: Հաշորդ աղջիկը Բեքի Թեյլորի էր: Քոմը ոտքից գլուխ հուզմունքից դուրս էր, զգալով դրություն անհուսալիությունը:

Թեև Բեքա Թեչըր (Քոմը նայեց աղջկա դեմքին. սարսափից սպիտակել էր), դո՞ւք պատռեցիք, ո՞չ, դեմքիս նայեք (սպիտակ ձեռքերը աղերսական բարձրացան), դո՞ւք պատռեցիք գիրքը:

Մի միտք փայլատակեց Քոմի ուղեղում: Նա վեր թռավ և գոտաց.

Իս եմ արել:

Սուրբոց գպրոցը տարակուսանքով նայեց այս անհավատարի խեղճությունը: Քոմը մի պահ կանգնեց հավաքելու համար սովորի և երբ զնաց իր պատժին ընդոտաջ, դարմանքը, լեռնակալությունը, պաշտամունքը, որ Բեքիի աչքերից ճա-

ոագայթում էին, հարյուր հարվածի վարձատրություն թվապէս արարքի փայլով ներշնչված, Թոմն ընդունեց միատր Դորիկոսի երբեք տված ամենաանխիղճ հարվածները: Նույն անտարբերությամբ ընդունեց դպրոցից հետո երկու ժամ մնալու հավելյալ պատիժը, որովհետև գիտեր, թե ով էր իրեն դրսում սպասելու, երբ իր գերությունը վերջանար: Եվ դպրոցում մնալու ձանձրալի ժամերը կորուստ չէր համարում:

Այդ գիշեր Թոմը անկողին մտավ Ալֆրեդ Տեմպլերի գետ վրեժ ծրագրելով, որովհետև ամոթով ու զղջումով Բեքին ամեն ինչ պատմել էր, շոտանալով իր դավաճանությունը: Բայց նույնիսկ վրեժ լուծելու մարմաջը շուտով տեղի տվեց ամենահաճելի մտածումներին. նա ի վերջո քնեց Բեքիի վերջին խոսքերը ականջում:

— Թոմ, ինչպե՞ս կարող ես այդքան ազնիվ լինել:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Արձակուրդը մոտենում էր: Միշտ խստապահանջ ուսուցիչը ավելի խստացավ և ավելի պահանջկոտ դարձավ, որովհետև ցանկանում էր, որ աշակերտները հաջող հանդես գային քննությունների օրը: Նրա փայտն ու քանոնը այժմ շատ քիչ էին անգործ մնում, հատկապես փոքր աշակերտների շրջանում: Միայն ամենամեծ տղաները և տասնութ-բասն տարեկան օրիորդներն էին գերծ մնում պատժից: Միատր Դորիկոսի պատիժները շատ խիստ էին: Թեև կեղծամի տակ նրա գլուխը ճաղատ ու փայլուն էր, նա հազիվ միջին տարիքի էր և միաննելու թուլության նշան անգամ չուներ: Նշանավոր օրվա մոտենալու հետ նրա մեջ եղած ամբողջ բռնակալությունը երևան էր գալիս: Թվում էր, թե նա հանույք էր զգում ամենափոքր հանցանքի համար իսկ պատժելուց: Հետևանքը լինում էր այն, որ փոքր տղաները իրենց օրն անց էին կացնում սարսափի մեջ, իսկ գիշերները վրեժխնդրություն ծրագրելով: Նրանք ոչ մի առիթ բաց չէին թողնում ռաջջիկ գլխացավանք պատճառելու համար: Բայց առավելությունը միշտ մնում էր ուսուցչի կողմը: Վրեժխնդրության յուրաքանչյուր հաջող արարքին հետևող ճնշումը

այնքան հիմնական ու արքայական էր լինում, որ տղաները ռազմադաշտից հեռանում էին մեծ կորուստներով: Ի վերջո, նրանք միասնաբար դավադրեցին, մի ծրագիր մշակեցին, որ փայլուն հաղթանակ էր խոստանում: Խոսեցին ցուցանակներ պրոզ տղայի հետ, իրենց ծրագիրը հայտնեցին և նրանից օգնութուն խնդրեցին: Այդ տղան իր ուրույն պատճառներն ուներ ուրախանալու, որովհետև ուսուցիչն ապրում էր իրենց բնտանիքի հետ և բազմաթիվ առիթներ էր ստեղծել՝ իրեն առելու: Ուսուցչի կինը մի քանի օրից դուռ էր մեկնելու, և ծրագրի իրագործմանը խանգարող ոչ մի արգելք չկար: Նման կարևոր իրադարձություններին ուսուցիչը միշտ լավ էր պատրաստվում՝ հարբելով: Ցուցանակ գրող տղան ասաց, որ երբ նա քննության երեկոյին հասնի հարմար բարձրության և ննջի իր աթոռի վրա, ինքը «գործը գլուխ կրերի»: Հետո ճիշտ ժամանակին կարթնացնի և կշտապեցնի դպրոց:

Ամեն ինչ եղավ ծրագրվածի պես: Երեկոյան ժամը ութին դպրոցը պայծառ լուսավորված էր և զարդարված տերևներով ու ծաղիկներով: Ուսուցիչը նստել էր իր մեծ աթոռին, ինչպես գահի վրա՝ բարձր դիրքով, գրատախտակի ետևում: Նա բավականաչափ խմածի տեսք ուներ: Յուրաքանչյուր կողմի երեք շարքի նստարաններն ու կենտրոնի վեց շարք նստարաններն զբաղեցրել էին քաղաքի նշանավոր անձինք և աշակերտների ծնողները: Չախ կողմում, քաղաքացիների շարքի ետևում, կար ժամանակավորապես շինված մի ընդարձակ սախտակամած, որտեղ նստել էին երեկոյան քննությունների հանդես եկող աշակերտները: Լվացված ու զգեստավորված տղաների շարքեր, անհանգիստ լինելու աստիճան հուզված պատանիների շարքեր և, վերջապես, փոքրիկ աղջիկների ու դեռատի օրիորդների շարքեր, որոնք զարդարված էին նուրբ զգեստներով և ցուցադրում էին իրենց մերկ թևերը, իրենց սատիկների զարդերը, իրենց վարդագույն ու կապույտ ժապավենները, մազերի մեջ դրած ծաղիկները: Սրահի մնացած մասը լցված էր քննություններին շմասնակցող դպրոցականներով:

Քննություններն սկսվեցին: Մի շատ փոքր տղա կանգնեց և ամաչելով արտասանեց՝ «Դուք հազիվ թե սպասեք, որ իմ ասորիքի մի տղա արտասանի» և այլն: Նա իր խոսքերին

միացնում էր տանջանքով հարմարեցված այնպիսի շարժումներ, որ մի փշացած մեքենա էլ կարող էր անել: Բայց նա մի կերպ ավարտեց, թեև շատ վախվորած, արժանացավ ծափահարությունների, գլուխ տվեց ու հեռացավ:

Ամոթխած դեմքով մի աղջիկ թոթովեց. «Մերին ուներ մի փոքր գառ» և այլն, հաճելի ձևով գլուխ տվեց, ստացավ ծափերի իր բաժինը, նստեց շիկնած ու երջանիկ:

Թոմ Մոյերը կեղծ համարձակությամբ բեմ եկավ ու արտասանեց հին, բայց անմեռ Ռենձ ազատութուն տվեք կամ մահ՝ ճառը՝ հրաշալի կատարումով, ձևերի ուժեղ շարժումներով և կեսին կանդ առաջ: Հասարակության առաջ խայտառակվելու սարսափը տիրեց նրան, սրունքները դողացին, շունչը կտրվեց: Ճիշտ է, դահլիճի համակրանքը նրա կողմն էր, բայց կար նաև դահլիճի լուսթյունը, որն ավելի վատ էր, քան այդ համակրանքը: Ուսուցիչը հոնքերը կիտեց և այդ աղետը լրացրեց. Թոմը հեռացավ վերջնականապես պարտված: Մի թույլ փորձ եղավ ծափահարելու, բայց դա շուտով մարեց:

Այնուհետև արտասանվեցին «Տղան կանգնեց իր այրվող տախտակամածին», «Ասորիները դնում էին» և այլ ոտանավորներ: Հետո բնթերցանության քննություններ եղան: Անցան երեկոյի ամենակարևոր իրադարձությանը՝ երիտասարդ աղջիկների «ինքնատիպ» շարադրություններին: Աղջիկները հերթով գալիս էին բեմի ծայրը, կոկորդները մաքրում, բարձրացնում ձեռագիրը (որը կապված էր սիրուն ժայպվենու) և սկսում կարգալ, մեծ ուշադրություն դարձնելով հնչյուններին ու կետադրությանը: Թեմաները նույնն էին, ինչ եղել էին նման առիթներով նրանց մայրերի, տատիկների թեմաները և, անկասկած, իդական գծով բոլոր նախորդների թեմաները, մինչև խաշակիրները: «Բարեկամություն», «Անցած օրերի հիշողություն», «Կրոնը պատմության մեջ», «Ծրագների աշխարհ», «Կուլտուրայի առավելությունները», «Քաղաքակրթական կառավարության ձևերը՝ համեմատված և հակադրված», «Տիրություն», «Որդիական սեր», «Սրտի երազանքներ» և այլն, և այլն:

Այս շարադրությունների գլխավոր հատկությունը բնորոշված և մաշված թախիծն էր, անօգուտ և առատ «գեղեցիկ

լեզուն», բացի դրանից, ինչ-որ ձևով ախորժալուր բառեր և նախադասութուններ գործածելու, դրանք հոգեհան անելու մեծ ճիգը: Մի հատկանիշ էլ կար, որը շեշտված էր և ամեն ինչ խճողում էր: Դա բարոյախոսութունն էր, որը բոլոր ելույթների վերջում իր պոչն էր ցցում: Անկախ նրանից, թե ինչ էր թեման, մեծ ճիգ էր թափված, որպեսզի այն հարմարվեր բարոյական ու կրոնական մտքին: Հակառակ քարոզների բացահայտ անլրջությանը, դրանք ոչ մի կերպ չես կարող դեն նետել: Մինչև այսօր էլ դրանք իշխում են մեր դպրոցներում և շեն համարվում բավարար չափով մատուցված: Գուցե երբեք էլ բավարար չհամարվեն, քանի դեռ աշխարհը պոլիթյուն ունի: Մեր ամբողջ երկրում չկա մի դպրոց, որտեղ երիտասարդ աղջիկները ստիպված չլինեն իրենց շարադրութունները եզրափակել բարոյախոսությամբ: Կարող է պատահել, որ դպրոցի ամենաթեթևամիտ ու ամենաանաստված աղջկա բարոյախոսությունը ամենաներկարը և ամենաստվածավախը լինի: Բայց բավական է այս մասին: Ճշմարտությունը ոչ ոքի ճաշակով չէ: Վերադառնանք «քննություններին»: Ընթերցված առաջին շարադրությունը վերնագրված էր. «Ա՛յս է, ուրեմն, կյանքը»: Գուցե ընթերցողը պիտանա դրա մի հատվածին:

«Կյանքի հասարակ ճանապարհներին ինչ հուզումներով է երիտասարդի միտքը նայում ապագա ուրախ տեսարաններին: Երևակայությունը հաճությի վարդազույն պատկերներ է նկարում: Երազներում մոդաների երկրպագուն իրեն տեսնում է տոնական շրջապատում, որտեղ ինքը դառնում է «դիտված բոլոր դիտողներից»: Ձյունասպիտակ շրջազգեստի մեջ երևապոպ շնորհալի մարմինը ուրախ պարի շրջապատությունների մեջ է, երա ոչբիրը ամենափայլունն են, քայլվածքը՝ ուրախ շրջապատի ամենաթեթև քայլվածքը: Նման հաճելի դվարճություններով սահում անցնում է ժամանակը, և հասնում է այն օրը, երբ նա պետք է մուտք գործի էլիզյան աշխարհ, որի մասին «լեբան պայծառ երազներ է փայփայլել: Ինչպես է ամեն ինչ երա երջանիկ հայացքին երևում հեթաթային: Յուրաքանչյուր նոր տեսարան ավելի գրավիչ է դառնում, քան նախորդը: Սայց շուտով նա գտնում է, որ այս գեղեցիկ արտաքին ետևում ամեն ինչ ունայն է: Գովեստները, որոնք մի

ժամանակ գրավում էին հոգին, այժմ տհաճ են հնչում ականջին: Պարահանդեսի սրահը կորցնում է գրավչությունը, և կարցրած առողջությամբ ու դառնացած սրտով նա հեռանում է այն համողմամբ, որ երկրային հաճույքները չեն կարող բավարարել հոգու պահանջները»:

Եվ այսպես շարունակ: Ընթերցանության ժամանակ լրսւմ էին համաձայնության մրմունջներ, շուկով ասված դիտողություններ. «որքան լավ է», «որքան զեղեցիկ է ասված», «ինչ ճշմարտություն» և այլն: Երբ շարագրությունն ավարտվեց չափազանց ձանձրալի բարոյախոսությամբ, ոգևորված ծափահարեցին:

Հետո վեր կացավ մի նիհար, թախծոտ աղջիկ: Դեմքն ուներ «Տեսաբրբիր» գունատություն, որ արդյունք էր դեղերի և վատ մարսողության: Նա կարգաց մի «բանաստեղծութուն»: Երկու տունը բավական կլինի.

Միսսուրեցի օրիօրի նրամեղսր Ալարամային!

Ալարամա, մնաս բարով: Ես բեզ այնքան եմ սիրում,
Սակայն շուտով պիտի թողնեմ ու հեռանամ բեզանից:
Տխուր, այո, տխուր խոհեր են իմ սիրտը պարուրում,
Եվ ծանրանում են ճակատախ այրող հուշերը նորից.
Թափանկ եմ թո ծաղկավետ պուրակների ստվերում,
Նավարկել ու գիրք կարդացել Տալպաղչյան ջրերում,
Ունկնդրել եմ Տալափի ալիքների հողմավար
Եվ Քուղայի կողմից դիտել արշալույսը հրավառ...
— Սակայն ամոթ չեմ զգա ես իմ սրտի քոր հուզմունքից,
Չեմ կարճրի իմ աչքերից հոսող առատ արցունքից.
Ինձ օտար չէ այն երկիրը, որից պիտի բաժանվեմ,
Օտարին չէ, որ այս շքնաղ հողը պիտի ես թողնեմ:
Այս նահանգում իմ բաժինը տունն էր, գալուստը բարի...
Ես թողնում եմ հովիտ ու դաշտ, աշտարակներ վիթխարի,
Սառած պիտի սիրտս լինի, իմ աչքերը և tète²-ը,
Երբ, սիրելի Ալարամա, արդեն նայեմ բեզ սառը...

Այդտեղ գտնվողներից շատ քչերն էին հասկանում tète բառի իմաստը, բայց այնուամենայնիվ բանաստեղծությունը շատ գոհացուցիչ գտան:

¹ Ալարամա — հյուսիսամերիկյան նահանգներից մեկը:

² La tête — գլուխ (ֆր.):

Հաջորդը բնմ բարձրացավ թխադեմ, սևաշյա, սևահեր մի օրիորդ, որը մի պահ կանգնեց տպավորիչ կերպով, բնդունեց ղեմքի ողբերգական արտահայտություն և շափված, լուրջ տոնով կարգաց.

Տ Ե Ս Ի Ը

«Մութ ու փոթորկալից գիշեր էր: Եթկնայքն գահի շուրջը ոչ մի աստղ չէր փայլվում, բայց մաքուր ականջին շարունակ հասնում էին ինչ-որ որոտներ: Առթափեղի կայծակը մարդկանց ցույց էր տալիս երկնքի սենյակները, կաթձես արհամարհելով այն իշխանությունը, որ ձեռք էր բերել նշանավոր Ֆրանկլինը՝ նրանց սարսափելի ուժի նկատմամբ: Նույնիսկ կատաղի քամիները միահամուռ դուրս էին գալիս իրենց խորհրդավոր ապաստարաններից և մրրկում, կաթձես իրենց օգնությունը ավելի արհավիր դարձնելով այդ վայրի տեսարանը: Այդ պահին այնքան մութն էր, որ իմ տխուր սիրտը չարդկային հոգու համար հառաչում էր: Բայց...»

Իմ ամենաթանկ բարեկամը, իմ խորհրդատուն, իմ մխիթարողն ու առաջնորդողը,

Մշուշի մեջ իմ ուրախությունը, սերախությունն մեջ իմ օրհնությունը եկավ ինձ մոտ:

Նա քայլում էր նման այն պայծառ արարածների, որոնց Լոկեմի՞ արևոտ ուղիներում նկարել են երիտասարդ մարդիկ: Իսկ զեղեցկություն մի թագուհի էր, որ պաշտվում է իրենից լիսոզ գեղեցկության համար: Այնքան մեղմ էին նրա քայլերը, որ նույնիսկ ձայն չէր լսվում, բացի մոգական մի հնչյունից, որ ուղեկցում էր նրա շփումին, ինչպես սթրիչ անշուտ փելի գեղեցկություններ, նա կարող էր սահել-հեռանալ անտեսանելի, անհայելի: Մի տարօրինակ տիրություն իջել էր նրա գեմերին, ինչպես սառը արցունքներ՝ դեկտեմբերի հաղուստի վրա, իրը նա ցույց տվեց դրսի տարիքը և երկու ներկայացված արարածներին»:

Այս մղձավանջը գրավել էր ձեռագիր տառը էջ և ավարտ-

1 «Էլեզավին Ֆրանկլին (1706—1790) — հյուսիսամերիկյան բաղադրատեսակի և գիտնական: Շանթարգելի գյուտարարը:

Եվ նա՝ դրախտային այգի:

վում էր մի բարոյախոսութեամբ, որը ոչ-ամետարանական-
ների համար փրկութեան ոչ մի հույս չէր թողնում: Ստացաւ
սուաջին մրցանակը: Այս շարադրութիւնը այդ երեկոյի լա-
վագույն գործը համարվեց: Քաղաքապետը, մրցանակը հեղի-
նակին հանձնելով, մի շերտ ճառ արտասանեց և ասաց, որ
դա իր լսած լավագույն գրվածքն էր, և Դանիել Ուեբստերը՝
կարող էր դրանով հպարտ լինել:

Ի միջի այլոց, պետք է անցողակի նկատել, որ այն շարա-
դրութիւնները, որոնց մեջ շատ էր «գեղեցկագույն» բառը
և մարդկային փորձառութիւնը կոչվում էր «կյանքի էջ», սո-
վորականից բիշ չէին:

Ի վերջո, ուսուցիչը հարրածութեան համարյա գազաթնա-
կետին, աթոռը մի կողմ դրեց, մեջքը ունկնդիրներին դարձ-
րեց և սկսեց դաստիարակի վրա գծել Ամերիկայի քարտեզը՝
աշխարհագրութեան քննութեան համար: Բայց ձեռքը դողում
էր, և տխուր բան ստացվեց: Սենյակում մեղմ ծիծաղ լսվեց:
Նա կռահեց, թե ինչը ինչոց է և փորձեց ուղղել: Գծերը
ջնջեց և նորից գծեց: Բայց ավելի վատթարացրեց դրանք, իսկ
ծիծաղը ավելի շեշտված հնչեց: Նա իր ամբողջ ուշադրու-
թիւնը նվիրեց իր աշխատանքին, վճանց զինու ազդեցութեա-
նը շննթարկվելու Ձգում էր, որ բոլոր աշքերը իրեն են ուղղ-
ված, թվաց, թե գործը հաջողվում է, բայց ծիծաղը շարունակ-
վում էր, նույնիսկ որոշակիորեն սաստկացավ: Եվ դա դար-
մանալի չէր: Ուսուցչի գլխավերևում, առաստաղում մի ճեղք
կար: Այդ ճեղքից ցած էր կախվում ետևի ոտքերից կապված
մի կատու: Դուրսը փախսով փաթաթել էին, որ շմլափի
ներքե կախվելիս կատուն վեր էր ձգտում և աշխատում պա-
րանը բռնել, բայց ցած էր կախվում, կառչում օդից: Ծիծաղը
գնալով ավելի սաստկացավ: Կատուն վեց դոյում² էր հետո
իր գործով տարված ուսուցչի գլխից: Ցած, ցած, մի քիչ էլ,
և կատուն հուսահատ ճանկերը խրեց ուսուցչի կեղծամի մեջ,
կառչեց և իր ավարի հետ մի ակնթարթում քաշվեց վերև, ա-
ռաստաղի ճեղքից դուրս: Եվ ինչպես էր լույսը փայլեցնում

1 Դանիել Ուեբստեր (1782—1852)— ԱՄՆ-ի քաղաքական գործիչ,
նշանավոր հեռագրի

2 Անգլիական շափ, որը հավասար է 2,5 սմ-ի:

ուսուցչի ճաղատ զլուխը. ցուցանակ գրող տղան ոսկեգույն էր ներկել այն:

Գրանով էլ ավարտվեց երեկոն¹: Տղաների վրեժը լուծված էր: Արձակուրդն սկսվեց:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Թոմը միացավ «պատանի ժուժկալների» միությանը՝ գայթակղված նրանց փայլուն զարդանշանով: Խոստացավ շծխել, ծխախոտ չծամել և սրբապղծություն չանել, քանի դեռ անգամ է: Իսկույն նոր հայտնագործություն կատարեց. այն է՝ մի բան չանելու խոստումը աշխարհում ամենաապահով միջոցն է, որ մարդ ուզի հենց այդ բանը անել: Շուտով Թոմն պահեց, որ տանջվում է խմելու և հայհոյելու ցանկությունից: Անկուսությունն այնքան ուժեղացավ, որ միայն կարմիր փողկապով երեւալու հեռանկարն էր նրան ետ պահում ընկերությունից դուրս գալու մտքից: Հուլիսի շորսը² մոտենում էր, բայց շուտով նա հոգնեց այդ տոնին սպասելուց, հոգնեց իր շշանը օգտագործելու ժամկետից քառասունութ ժամ առաջ և հույսը դրեց ժեր դատավոր Ֆրեյզերի վրա, խաղաղության պաշտպանի, որը հավանաբար իր մահվան մահճում էր և հասարակական մեծ թաղում պետք է լիներ, քանի որ նա այդուհանդերձ պաշտոնյա էր: Ամբողջ երեք օր Թոմը խիստ հետաքրքրվում էր դատավորի վիճակով և ծարավ էր այդ նյութի շուրջը եզած որևէ նորություն: Երբեմն այնքան էր տուսադրվում, որ դուրս էր բերում իր բոլոր զարդանշանները և հայելու առաջ փորձում: Բայց դատավորի վրա հույս պահելը շատ անհուսալի բան դուրս եկավ: Ի վերջո հայտարարվեց, որ դրությունը փոխվում է, իսկ ավելի ուշ, որ առողջա-

¹ Սրպիս «շարագրություն» վերոհիշյալ մեջբերումները առանց փոփոխության վերցված են «Արձակ և բանաստեղծություն» հատորից, հեղինակ՝ ամն Արեմտյան Լեդի, բայց դրանք այնքան են նման դպրոցական գրիչների շարագրություններին, որ ավելի լավն են, քան որևէ նմանություն: Ա կարող էր լինել (Մ. Հ.):

² «Մեկրիկայի անկախության դեկլարացիայի» հոշակման օրը
1917 թ. 10 րոպե:

նում է: Թոմը զգլեց ու միաժամանակ իրեն վիրավորված զգաց: Նա անմիջապես հրաժարական տվեց: Այդ դիշեր զատավորը մի նոր նույա տնեցավ ու մահացավ: Թոմը վճույն ման մարդկանց այլևս չհավատալ: Թաղումը հրաշալի անցավ. «պատանի ժուժկալները» այնպես տողանցեցին, որ կարծես ուզում էին նախանձից սպանել նախկին անդամին:

Բայց այնուամենայնիվ Թոմը նորից ազատ տղա էր: Դա մի բան նշանակում էր, նա կարող էր խոճել և հայհոյել, բայց ի վարման իրեն, տեսավ, որ արդեն չի ուզում: Այն մըտքից, որ կարող է, չբացավ ամեն մի դանկություն ու հետաքրքրություն:

Այժմ Թոմը վարմանում էր՝ գլխի ընկնելով, որ այնքան ցանկալի արձակուրդը ճնշում է և ձանձրացնում:

Նա փորձեց օրագիր պահել, բայց հաջորդ երեք օրվա ընթացքում ոչ մի դեպք չպատահեց, և թողեց այդ մտադրությունը:

Ի վերջո քաղաք եկավ նեղրական մի նվազախումբ և մեծ տպավորություն գործեց: Թոմն ու Զո Լարսլըրը նույնպես կազմակերպեցին նվազողների մի խումբ և երկու օր ուրախացան:

Նույնիսկ հուլիսի շորսի տոնը մի տեսակ ձախուղում էր, որովհետև սաստիկ անձրև եկավ, և, հետևաբար, տոնակատարություն տեղի չունեցավ: Եվ աշխարհի ամենամեծ մարգը (ինչպես կարծում էր Թոմը), միստր Բենտոնը, Միացյալ Նահանգների մի իսկական սենատոր, իսկական հիասթափություն պատճառեց, որովհետև քանհինգ ստնաչափից ավելի բարձր հասակ չունեիր, ոչ էլ այդ չափսին էր մոտենում:

Եկավ կրկեսը: Դրանից հետո տղաները երեք օր հնացած կարպետներից սարքած վրանների տակ կրկես-կրկես խաղացին՝ մուտքը տղաների համար երեք դնդասեղ, աղջիկների համար՝ երկու: Հետո կրկեսը թողնվեց երեսի վրա:

Մի գանգաբան ու մի հիպոստող եկան... և գնացին՝ քաղաքը թողնելով առաջվանից ավելի տափակ ու ձանձրալի վիճակում:

Տղաների ու աղջիկների մի քանի երեկույթ տեղի ունեցավ, բայց դրանք այնքան քիչ էին և այնքան հրաշալի, որ ավելի ծանր էին դարձնում մնացած ժամանակը:

Բեքի Թեչըրը զնացել էր Կոստանդնուպոլսում գտնվող իրենց տունը՝ արձակուրդը ծնողների հետ անցկացնելու կյանքում ոչ մի լուսավոր տեղ չմնաց։

Սպանություն անհավոր զաղտնիքը անհաղթահարելի տառապանք էր նրա համար։ Այն խոցի նման շթուլացող ցավ էր պատճառում։ Խրոնիկ դժբախտություն էր տևականության իմաստով և ցավ պատճառելու տեսակետից պարզապես իսկական քաղցկեղ էր։

Հետո Թոմը քուժեղով հիվանդացավ։

Ամբողջ երկու շաբաթ պառկեց բանտարկյալի պես, աշխարհի և նրա իրադարձությունների համար մահացած։ Նա շատ ծանր հիվանդ էր և ոչ մի բանով չէր հետաքրքրվում։ Նրբ ի վերջո ոտքի կանգնեց ու թուլացած շարժվեց քաղաքի փողոցներով, մի թախծոտ փոփոխություն էր իջել ամեն ինչի ու ամեն մարդու վրա, մի «զարթոնք» էր տեղի ունեցել և բույրը «կրոնասեր» էին դարձել, ոչ միայն շափահասները, այլ և սույնիսկ տղաներն ու աղջիկները։ Թոմը շրջում էր, անհուսորեն փնտրելով մի օրհնված մեղավոր դեմք, բայց ամեն տեղ հրասթափություն էր հանդիպում։ Նա Ջո Հարպըրին գտավ Կոստանդնուպոլսում և տխուր հեռացավ այդ տխուր տեսարանից։ Բեն Ռոջերսին փնտրեց և գտավ այն պահին, երբ տղան աղքատներին մի տասնյակ հոգևոր բրոշյուրներ էր բաժանում։ Թոմը որսաց Ջիմ Հոլիսին, որ նրա ուշադրությունը հրավիրեց վերջին հիվանդության վրա, այն համարելով թանկագին օրհնություն՝ ուղարկված որպես նախապատրաստում։ Հանդիպած յուրաքանչյուր տղա ավելացրեց Թոմի ճնշվածությունը, և երբ հուսահատ, որպես վերջին օգուտտարան, վազեց Հեքլբերի Տիննի մոտ ու ընդունվեց Միտտարանից վերցված մի մեջբերումով, տղայի սիրտը և սիրտը նա վերադարձավ տուն՝ իր անկողինը, գիտակցելով որ քաղաքից միայն ինքը կորած էր ընդմիշտ, հատկապես։

Մյուս գիշեր մի սարսափելի փոթորիկ բարձրացավ՝ քամաթի անձրևով, սարսափելի որոտով և կուրացնող կայծակով։

Թոմը գլուխը ծածկեց վերմակով ու սարսափով սպասեց թր վախճանին. կասկածի նշույլ անգամ չուներ, որ ամբողջ

այդ իրարանցումն իր համար է: Նա հավատում էր, որ երկրներում իշխող ուժերի համբերությունը ծայրաստիճան շահագործել էր, և այս բոլորը դրա արդյունքն էր: Նրան կարող էր թվալ, թե մի միջատ սպանելու համար այդքան հանդիսավորություն և ռազմամթիիր պետք չեն, բայց անհավանական ոչինչ չգտավ, որ իր նման միջատը ոչնչացնելու համար այդքան թանկարժեք փոթորիկ բարձրացվի:

Փոթորիկը դանդաղ սպառվեց և անցավ առանց իրագործելու իր նպատակը: Տղայի առաջին միտքը եղավ շնորհակալ լինել և փոխվել: Երկրորդ մտածումը՝ սպասել, որովհետև կարող էր երկրորդ փոթորիկը չլինել:

Հաջորդ օրը նորից բժիշկ կանչեցին: Թոմի վիճակը նորից էր ծանրացել: Այս անգամ մեջքի վրա անցկացրած երեք շաբաթը նրան մի դար թվաց: Ի վերջո, երբ առողջացավ ու դուրս եկավ, նա հազիվ կարող էր շնորհակալ լինել, որ աստված իրեն խնայեց, իմանալով, թե ինչպես մենակ էր լինելու, առանց ընկերների և բարեկամների: Նա անտարբեր քայլեց փողոցում ու գտավ Ջիմ Հոլիսին, որ դատավոր էր դարձել և գատում էր մի կատվի սպանության համար, զոհի ներկայությամբ, որը մի թուղուն էր: Նա Ջո Հարպերին և Հեք Ֆիննին գտավ մի փողոցում գողացած սևիս ուտելիս: Խեղճ երեխաներ, նրանք էլ Թոմի նման նորից մոլորվել էին:

ՎՈՐԻՆ ՔԱՆՉՈՐՍԵՐՈՐԳ

Ի վերջո բնած շրջապատը, այն էլ հախուռն թափով, արթնացավ. որոշվեց մարդասպանության դատի օրը: Դա անմեջապես դարձավ քաղաքի խոսակցության զլխավոր նյութը: Թոմը դրանից խուսափել չէր կարող: Սպանության մասին ամեն մի ակնարկ լսելիս նրա սիրտը ճնշվում էր, որովհետև անհանդիստ խիղճը և վախը տղային համարյա համոզում էին, թե այդ ակնարկները արվում են իր ականջի տակ «հատուկ նպատակով»: Նա չէր հասկանում՝ ինչու պիտի կասկածեն, թե ինքը սպանության մասին որևէ բան գիտե, բայց դարձյալ չէր կարողանում հանդիստ մնալ այդ զրույցները լսելիս: Անընդհատ ահուղողի մեջ էր: Նա Հեքին տարավ մի

առանձին տեղ՝ հետը խոսակու։ Սիրտը մի ուրիշի մոտ բացելը, ծանր ապրումները մի ուրիշ տառապողի հետ կիսելը թեթևություն կլինե՞ր։ Ավելին, նա ուզում էր հավաստիանալ, թե Հեքը գաղտնապահ՞ է մնացել։

— Հեք, դու երբևէ որևէ մեկին ասե՞լ ես այդ մասին։

— Ինչի՞ մասին։

— Ինքդ լավ գիտես։

— Օ՛հ, իհարկե ոչ։

— Ոչ մի խո՞սք։

— Ոչ մի խոսք. հավատա։ Ինչո՞ւ ես հարցնում։

— Հենց այնպես. վախենում էի։

— Ի՞նչ ես ասում, Թոմ, մենք երկու օր էլ ողջ չենք մնա, եթե իմացվի։ Դու այդ գիտես։

Թոմն իրեն ավելի հանգիստ զգաց։ Մի քիչ լռելուց հետո ասաց.

— Հեք, ոչ ոք չի կարող քեզ ստիպել, որ ասես, չէ՞։

— Ինձ ստիպե՞լ։ Եթե ուզենամ, որ այդ խառնածինն ինձ խեղդի, կարող են ստիպել։ Ուրիշ ճանապարհ չկա։

— Դե, ուրեմն՝ լավ է։ Ես կարծում եմ, որ մենք ապահով ենք այնքան ժամանակ, քանի դեռ լուռումունջ ենք։ Բայց բոլոր դեպքերում եկ նորից երդվենք։ Ավելի ապահով կլինենք։

— Համաձայն եմ։

Նրանք նորից երդվեցին պատշաճ լրջությամբ։

— Իսկ ո՞ւմ մասին են խոսում, Հեք։ Ես այնքան բաներ եմ լսում։

— Ո՞ւմ մասին։ Դե, Մըֆ Պոտերի։ Մըֆ Պոտեր, Մըֆ Պոտեր, միշտ Մըֆ Պոտեր։ Քրտինքը միշտ վրա է տալիս և ուզում եմ մի տեղ թաքնվել։

— Ճիշտ նույն բանն էլ ինձ հետ է պատահում։ Կարծում եմ, որ նա կորած է։ Մեկ-մեկ շն՞ս խղճում նրան։

— Համարյա միշտ... Համարյա միշտ։ Նա ոչ մի մեղք չունի, ոչ ոքի էլ վատություն չի արել։ Մեկ-մեկ ձուկ էր որսում, որ մի քիչ փող ունենար ու խմեր։ Ավելի շատ անգործ ման էր գալիս, բայց, տեր աստված, մենք բոլորս նրա պես հնր վարվում, առնվազն մեզնից շատերը, օրինակ, քարոզիչները և նրա նմանները։ Բայց նա բարի էր, մի անգամ ինձ

կես ձուկ տվեց, երբ երկու հոգու բաժին էլ շուներու նա ինձ շատ անգամ է օգնել, երբ փորձանքի մեջ եմ ընկել:

— Նա իմ կարթերն է նորոգել, Հեք, և կարթեր է դրել իմ ձողին: Կուզենայի, որ կարողանայինք նրան ազատել:

— Ի՞նչ ես ասում. ալատել շինք կարող, Քոմ: Բացի դրանից, դա ոչ մի օգուտ չի տա. նրան նորից կբռնեն:

— Այո, այդպես էլ կլինի: Բայց տանել շեմ կարողանում, երբ նրան հայհոյում են մի բանի համար, որ չի արել:

— Սա էլ, Քոմ... Աստված իմ, ինքս էլ եմ լսել: Ասում են, թե նա իբր ամենաարյունոտըտ սրիկան է այս ամբողջ երկրում և զարմանում են, թե ինչո՞ւ մինչև այսօր չեն կախել նրան:

— Այո, միշտ այդպես են խոսում: Լսել եմ, ասում են, որ եթե ազատ արձակվի, պիտի լինչի՛ ենթարկեն:

— Այդպես էլ կանեն:

Տղաները երկար խոսեցին, բայց դա շատ քիչ հանդստացրեց նրանց: Երբ մթնշաղն իջավ, սկսեցին թրև գալ առանձնացած փոքր բանտի շուրջը, այն անորոշ հույսով, թե գուցե մի բան պատահի և վերացնի իրենց դժվարությունները: Բայց ոչինչ չպատահեց: Կարծես այս անրախտ կալանավորով չէին հետաբերվում ոչ հրեշտակները, ոչ էլ հավերժահարսերը:

Տղաներն արեցին այն, ինչ հաճախ արել էին: Մոտեցան խցին, ողջունեցին և Պոտերին մի քիչ ծխախոտ ու լուցկի տվեցին: Նա գետնահարկում էր, և պահակներ չկային:

Այդ նվերների համար հայտնած նրա շնորհակալությունը առաջներում միշտ տանջում էր նրանց խիղճը: Այս անգամ ավելի խորն ազդեց: Նրանք իրենց վերին աստիճանի վախկոտ և դավաճան զգացին, երբ Պոտերն ասաց.

— Դուք իմ նկատմամբ շատ բարի եք, տղաներ, ավելի բարի, քան այս քաղաքում որևէ մեկը: Եվ ես այդ բանը չեմ մոռանա: Երբեք: Հաճախ ինքս ինձ ասում եմ. «Միշտ նորոգում էի բոլոր տղաների օգապարիկները և ուրիշ բաներ, ցույց էի տալիս, թե որտեղ կարելի է լավ ձուկ որսալ և օգ-

1 Հաշվահարդար առանց դատի Ամերիկայում լինչի ենթարկում էին և ենթարկում են նեգրերին:

նում էի նրանց ինչով կարող էի, իսկ այժմ բոլորը մոռացել են խեղճ Մըֆին, երբ նա փորձանքի մեջ է, բայց Քոմը չի մոռանում, Հեքը չի մոռանում: Նրանք ինձ չեն մոռանում, ասում են, ես էլ նրանց չեմ մոռանում: Այո՛, տղաներ, ես սարսափելի բան եմ արել: Խմած և խենթ եմ եղել այդ ժամանակ: Միայն դրանով կարող եմ բացատրել և այժմ դրա համար ինձ կախելու են: Եվ դա արդարացի է: Արդար և լավագույն պատիժ: Ես այդպես եմ կարծում, բոլոր դեպքերում այդպես եմ կարծում: Լավ, այլևս այդ մասին չխոսենք: Ես չեմ ուզում, որ դուք ձեզ վատ զգաք: Դուք իմ բարեկամներն եք: Բայց ահա թե ինչ եմ ուզում ասել. երբեք մի հարբեք: Այդ դեպքում երբեք այստեղ չեք գա: Մի քիչ դեպի արևմուտք կանդենք. այդպես, երբ մարդ այսպիսի փորձանքի մեջ է, ամենամեծ մխիթարանքը բարեկամի երևա տեսնելն է, իսկ բացի ձեզնից, ոչ ոք այստեղ չի դալիս: Բարեկամի բարի դեմքը: Բարեկամի բարի դեմքը: Մեկը մյուսի մեջքի վրա բարձրացեք, որ ձեռքս դիպչի ձեզ: Այ, այդպես: Իրար ձեռք սեղմենք: Ձեր ձեռքերը ճաղերի միջով կանցնեն, իսկ իմ ձեռքերը շատ խոշոր են: Փոքր ձեռքեր, թույլ, բայց դրանք շատ են օգնել Մըֆ Պոտերին և ավելի կօգնեն, եթե էարդանան»:

Քոմը տուն գնաց դժբախտ և նրա այդ գիշերվա երազները լիքն էին սարսափով: Հաջորդ օրը և մյուս օրը նա թափանց դատարանի շուրջը, հալածված համարյա անդիմադրելի մի ուժից, որ ներս գնա, բայց իրեն ստիպում էր մնալ դրսում: Նույն փորձությունն մեջ էր նաև Հեքը: Նրանք իրարից խուսափում էին: Ժամանակ առ ժամանակ իրարից հեռանում էին, բայց նույն ձգող ուժը նորից հտ էր բերում: Քոմը ականջները սրում էր, երբ մեկը դուրս էր գալիս դահլիճից, բայց միշտ անմխիթար լուրեր էր լսում: Ցանցներն ավելի և ավելի էին փակվում խեղճ Պոտերի շուրջը: Երկրորդ օրվա վիչքում քաղաքը խոսում էր, թե Հնդկացի Ջոյի վկայությունը հաստատ էր և անհերքելի: Ոչ մի կասկած չկար, թե ինչ է լինելու դատարանի վճիռը:

Քոմն այդ գիշեր ուշ տուն վերադարձավ և լուսամուտից երևա մտավ: Նա սաստիկ հուզված էր: Ամբողջ ժամեր շեր կարողանում քնել: Հաջորդ առավոտ ամբողջ քաղաքը խլամբլամ էր դատարանի առջև, որովհետև դատավճռի օրն էր

լինելու: Տղամարդիկ թե կանայք, հավասարապես ներկայացված էին լեփ-լեցուն դահլիճում: Երկար սպասումից հետո բերին շղթայված, դժգույն ու շփոթված, միամիտ ու անօգնական Պոտերին և նստեցրին մի տեղ, որ բոլոր հետաքրքրվողները կարողանան տեսնել: Պակաս հետաքրքիր չէր Հնդկացի Ջոն: Նա անվրդով էր, ինչպես միշտ: Մի ուրիշ դադար եղավ, հետո եկավ դատավորը, և շերիֆը նիստը հայտարարեց բացված: Դրան հետևեց իրավաբանների սովորական շնչոցը և թղթեր հավաքելը: Այս մանրամասները և զբոսանց ուղեկցող ուշադուռները ստեղծեցին սպասողական մի մթնոլորտ, որը որքան աղղեցիկ, նույնքան էլ զրավիչ էր:

Մի վկա կանչվեց, որը հաստատեց, թե ինքը տեսել էր Մըֆին աղբյուրի մոտ լվացվելիս, առավոտ կանուխ, սպանություն հայտնաբերման օրը, և թե մարդասպանն անմիջապես փախել է: Մի քանի հարց տալուց հետո դատախազն ասաց պաշտպանին.

— Կարող եք հարցեր տալ:

Բանտարկյալը մի պահ աչքերը բարձրացրեց, բայց նորից խոնարհեց, երբ պաշտպանն ասաց.

— Հարցեր չունեմ:

Հաջորդ վկան հաստատեց դանակի գտնվելը դիակի մոտ: Դատախազն ասաց.

— Կարող եք հարցեր տալ:

— Հարցեր չունեմ,— պատասխանեց Պոտերի իրավաբանը: Երբորդ վկան երդվեց, որ նա հաճախ է Պոտերի մոտ տեսել այդ դանակը:

— Կարող եք հարցեր տալ:

Պոտերի դատապաշտպանը հրաժարվեց վկային հարցաքննելու:

Ունկնդիրների ղեմքերը սկսեցին ձանձրույթ արտահայտել: Մի՞թե այս դատապաշտպանը նպատակ ուներ իր հովանավորչալի կյանքը զոհել առանց պաշտպանություն փորձ կատարելու:

Բազմաթիվ վկաներ խոսեցին Պոտերի վարմունքի մասին, երբ սպանության վայրն էր տարվել: Նրանք իրենց տեղն էին վերադառնում առանց խաչաձև հարցաքննման:

Գերեզմանատան ղեկաբի հաջորդ առավոտյան կատար-

ված յուրաքանչյուր մանրամասնութիւնը, որը բոլոր ներկաները շատ լավ հիշում էին, կրկնեցին վստահելի վկաները, բայց նրանցից ոչ մեկին խաշածև հարցաքննութեան շնորհակց Պոտերի փաստաբանը: Սրահի զարմանքն ու դժգոհութիւնը արտահայտվեց շնչոցով և գրա համար դատարանից նկատողութիւն ստացավ: Դատախազն ասաց.

— Քաղաքացիների երդումով, որոնց պարզ խոսքը կասկածից վեր է, այդ սարսափելի ոճիրը անկասկածելիորեն մենք դնում ենք այս դժբախտ բանտարկչալի վրա: Մենք կարծում ենք, որ ամբաստանութիւնը հաստատված է:

Խեղճ Պոտերից մի հառաչ դուրս եկավ, և նա դեմքը ձեռքերի վրա դրեց ու մարմինը մեղմորեն օրորեց, մինչ դատարանի դահլիճում տիրեց ցավալի լուսթիւն: Բազմաթիւ տրդամարդիկ հուզված էին, և շատ կանայք իրենց խղճահարութիւնը արցունքներով արտահայտեցին: Պաշտպանը վեր կացավ և ասաց.

— Նորին մեծապատվութիւն, ինչպես դատավարութեան սկզբում մենք ցույց տվեցինք, մեր նպատակն էր ապացուցել, որ մեր պաշտպանչալն այս սարսափելի արարքը գործել է խմբի բնական զգացումով և առաջացած կույր և անպատասխանատու վիճակում: Այժմ մենք փոխել ենք մեր միտքը. մենք այդ խնդրանքը շնք ներկայացնում (նա դարձով քարտուղարին): Կանչեցեք Քոմաս Սոյերին: Դահլիճում գտնվող բոլոր մարդկանց դեմքերը, նույնիսկ Պոտերի՝ զարմանք արտահայտեցին: Յուրաքանչյուր աչք վարմացած հետաքրքրութեամբ սպասեց Քոմի վրա, երբ նա տեղ գրավեց վկայի աթոռին: Տկտն բավական շփոթված էր, որովհետև սարսափելի վախեհում էր: Երդման գործողութիւնը տեղի ունեցավ:

— Քոմաս Սոյեր, որտե՞ղ էիք դուք հունիսի տասնյութին, մոտավորապես կեսգիշերվա ժամին:

Քոմը նայեց Հնդկացի Զոյի երկաթե դեմքին, և լեզուն պատճառանք նրան: Ունկնդիրները առանց շնչելու լսում էին, բայց բառերը հրաժարվում էին դուրս գալ: Մի բանի վայրկյան հետո, ի վերջո, տղան մի փոքր վերագտավ իր ուժը և կարողացավ բավարար շփով ուժ հաղորդել ձայնին, որպեսզի դահլիճի մի մասը լսի:

Գերեզմանատանը:

— Մի քիչ ավելի բարձր, խնդրում եմ: Մի վախեցեք: Գուք դանվում էիք...

— Գերեզմանատանը:

Արհամարհանքի մի ժպիտ անցավ Հնդկացի Ջոյի դեմքի վրայով:

— Արդյոք դուք Հոս Ուիլյամսի գերեզմանի մոտերքում էիք:

— Այո, սըր:

— Մի քիչ ավելի բարձր խոսեք: Ինչքա՞ն մոտ էիք:

— Այնքան, ինչքան ձեզ եմ մոտ:

— Թաքնվա՞ծ էիք, թե ոչ:

— Թաքնված էի:

— Որտե՞ղ:

— Մփինների ետևում, որ գերեզմանի ծայրին են:

Հնդկացի Ջոն հազիվ ու աննկատելի ցնցվեց:

— Քեզ հետ որևէ մեկը կա՞ր:

— Այո, սըր, ես այնտեղ գնացի...

— Սպասեք, մի բույե սպասեք. կարևոր չէ հիշել ձեր բնկերոջ անունը, մենք այն կհարցնենք, երբ հարկ լինի: Այնտեղ սրե՛կ բան տարա՞ք ձեզ հետ:

Թոմը տատանվեց և հայեց շփոթված:

— Խոսիր, տղաս, մի վախեցիր: Ծշմարտութունը միշտ հարգելի է: Ի՞նչ էիք տարել այնտեղ:

— Միայն մի... մի... սատկած կատու:

Գահլիճով ծիծաղ անցավ. նախագահը զսպեց ծիծաղը:

— Մենք ի հայտ կրերինք կատվի կմախքը: Այժմ, տղաս, ասա մեզ ինչ որ պատահեց, պատմիր բո ձեռով, ոչ մի բան մի թաքցնի և մի վախենա:

Թոմը սկսեց վարանելով, բայց հետո տաքացավ և բառերը զնալով ավելի հեշտությամբ հոսեցին: Շուտով ամեն ազմուկ դադարեց, բացի նրա ձայնից, և շունչները կտրած ունկնդիրները, այդ պատմությամբ հափշտակված, կախվեցին նրա բառերից, առանց ուշադրութուն դարձնելու ժամանակին: Հուզումը իր գագաթնակետին հասավ, երբ տղան ասաց.

— Եվ հրբ բժիշկը տախտակով խփեց, և Մըֆ Պոտերնը բնկավ, Հնդկացի Ջոն վեր թռավ և դանակով...

Թրախկ. կայծակի արագութեամբ խառնածինը դեպի լուսամուտը նետվեց, բոլոր դիմադրողներին միջով ճանապարհ բացեց ու շքացավ:

ԳԼՈՒԽ ԲՍԱՆՎԻՆԳԵՐՈՐԳ

Թոմը մի անգամ ևս դարձավ հռչակավոր հերոս, մեծահասակների սիրելին և երիտասարդների նախանձի առարկան: Նրա անունը նույնիսկ անմահացավ մամուլում, որովհետև տեղական թերթը հռչակեց այն: Կային մարդիկ, որ հավատում էին, թե նա պրեզիդենտ կդառնա, եթե, անշուշտ, մինչ այդ, կախվելուց խուսափի:

Ինչպես սովորաբար լինում է, դյուրահավատ, շտրամաբանազ մարդիկ Մըֆ Պոտերին գրկաբաց ընդունեցին և մեծ խնամք ցուցաբերեցին, որ առաջներում մերժում էին: Բայց այդպիսի վերաբերմունքը պատիվ է բերում հասարակությանը այնպես, որ դրա համար շպետք է դատապարտել նրան:

Թոմի ցերեկները փառքի ու ցնծութեան մեջ էին անցնում, բայց գիշերները սարսափով էին լցվում: Հնդկացի Ջոն թունավորում էր նրա բոլոր երազները և միշտ վրեժխնդիր աչքերով էր հայտնվում: Հազիվ թե որևէ բան համոզեր տղային, որ մութն ընկնելուց հետո դրսում մնար: Խեղճ Հեքը նույն անհանգիստ և սարսափահար վիճակում էր, որովհետև Թոմը իրավաբանին ասել էր ամբողջ պատմությունը դատավարութեան մեծ օրվան նախորդող գիշերը, և Հեքը սաստիկ վախենում էր, թե այդ գործում ունեցած իր բաժինը կարող էր դեռևս բացահայտվել, հակառակ այն բանի, որ Հնդկացի Ջոնի փախուստը փրկել էր նրան դատարանում վկայություն տալու տառապանքից: Իրավաբանը խեղճ տղային խոստացել էր գաղտնիքը պահել, բայց հետո՞ ինչ, երբ Թոմի տանջված խիղճը կարողացավ գիշերով նրան բշել դեպի իրավարանի տունը և ստիպեց ամենասարսափելի երդումով կրքված շուրթերը բացել տալ, Հեքի վստահությունը մարդկային սիրտը նկատմամբ մեծ չափով նվազել էր: Յերեկները Մըֆ Պոտերի շնորհակալությունը Թոմին ուրախացնում էր, բայց գիշերները նա ցանկանում էր լեզուն պահած լինել: Որոշ ժա-

ժանակ վախենում էր, թե Հնդկացի Ջոյին շեն կարող ձեր-
բակալել, որոշ ժամանակ էլ վախենում էր, թե կբռնեն: Նա
վստահ էր, որ ազատ շունչ կբաշեր միայն այն ժամանակ,
երբ այդ մարդը մահանար, և ինքը դիակը տեսներ:

Պարզեններ խոստացվեցին, ամբողջ շրջանում փնտրեցին,
բայց ոչ մի Հնդկացի Ջո չգտնվեց: Սենտ-Լուիից բերել տվե-
ցին ամենատես և ամեն ինչ գտնող հրաշքներից մեկը, խու-
զարկու ոստիկանին, որը այս ու այն կողմ ընկավ, գլուխն
օրորեց, խելոք ձեացավ և հասավ զարմանալի հաջողու-
թյան, որ նրա արհեստի մարդիկ սովորաբար հասնում են
Ալյսինբն՝ «հետքեր գտավ»: Բայց հո չես կարող «հետքերը»
կախել որպես մարդասպանի, և խուզարկուի վերադառնա-
լուց հետո Թոմն իրեն նույնքան անապահով զգաց, ինչպես
առաջ:

Օրերը դանդաղ առաջ շարժվեցին, և անցնող յուրաքանչ-
յուր օրը թեթևացրեց տղաների մտահոգության մի մասը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Յուրաքանչյուր նորմալ տղայի կյանքում գալիս է մի ժա-
մանակ, երբ նա անդիմադրելի ցանկություն է ունենում մի
տեղ գնալու և թաղված մի գանձ փնտրել-գտնելու: Այդ ցան-
կությունը մի օր հանկարծակի տիրեց Թոմին: Նա գնաց
Ջո Հարպրրին գտնելու, բայց ձախողվեց: Որոնեց Բեն Ռո-
ջերսին: Սա էլ ձկնորսության էր գնացել: Հանկարծ հանդի-
պեց Հեք Ֆիննին՝ Արլունտա Ձեռքին: Հեքը կհամաձայնի: Թո-
մը նրան մի առանձին տեղ տարավ և գաղտնաբար խնդիրը
բացեց նրա առաջ: Հեքը համաձայնեց: Նա միշտ ուզում էր
մասնակցել որևէ ձեռնարկի, եթե դա զվարճություն էր խոս-
տանում և դրամ չէր պահանջում: Տղան այնքան անսահմա-
նափակ ժամանակ ուներ, որ կարող էր ասել, թե ժամանակը
ոսկի չէ:

— Որտե՞ղ փնտրենք,— ասաց Հեքը:

— Է՛հ, համարյա ամեն տեղ:

— Ինչո՞ւ, մի՞թե ամեն տեղ էլ պահված է:

— Ոչ, իհարկե ոչ: Գանձը պահված է շատ հատուկ տե-

գերում, Հեք, երբեմն կղզիներում, երբեմն որդերի կեր դարձած սնդուկներում, ինչ-որ փտած ծառի տակ, որսւեղ կեսգիշերին ստվեր է ընկնում, բայց հաճախ էլ ուրվականներով լիքը տների տախտակամածի տակ:

— Ո՞վ է պահում դրանք:

— Իհարկե, ավազակները: Հապա էլ ո՞վ: Կիրակնօրյա դպրոցների վերակացունե՞րը:

— Չգիտեմ: Եթե իմը լիներ, ես չէի թաքցնի: Կծախսեի և լավ ժամանակ կանցկացնեի:

— Ես էլ, բայց գողերն այդպես չեն վարվում, նրանք միշտ թաքցնում են, ինչ-որ տեղ թաղում:

— Հետո չե՞ն գալիս տանելու:

— Ոչ. նրանք մտադրվում են գալ, բայց ընդհանրապես մոռանում են նշանները կամ մահանում են: Բոլոր դեպքերում, գանձը երկար ժամանակ մնում է այնտեղ, որտեղ թաղված է լինում, մինչև որ մեկը գտնում է մի հին, դեղնած թուղթ, որն ասում է, թե ինչպես պետք է նշանները հայտնաբերել: Այդ թուղթն էլ մի ամբողջ շաբաթ պետք է վերծանես, որովհետև նշաններ և հիերոգլիֆներ են լինում վրան:

— Հիրո... Ի՞նչ...

— Հիերոգլիֆներ, պատկերներ և նման բառեր, հասկանում ես, այնպիսի նշաններ, որոնք կարծես ոչինչ չեն նշանակում:

— Այդպիսի թղթերից որեէ մեկը ունե՞ս, Թոմ:

— Ոչ:

— Հապա ինչպե՞ս պիտի գտնես նշանները:

— Ինձ նշաններ պետք չեն: Գանձը միշտ թաղում են ուրվականներով լցված տներում կամ կղզում, կամ հնամենի մի ծառի տակ, որի մի ճյուղը ջարդված ու շորացած է լինում: Հիշո՞ւմ ես, Ջեկսոնի կղզում մենք մի քիչ փորձեցինք և կարող ենք մի օր նորից փորձել: Գետի մյուս կողմում կա մի հին, ուրվականներով լիքը տուն, որտեղ բաղամթիվ յուրացած ճյուղերով ծառեր կան:

— Բոլորի տակ էլ գա՞նձ կա:

— Ի՞նչ ես ասում, ոչ:

— Հապա ինչի՞ց պիտի իմանաս, թե որ մեկի տակն է:

— Բոլորի տակն էլ կնայենք:

— է՛, թո՛մ, ամբողջ ամառը ստիպված կլինենք փորելու
— Հետո՞ ինչ: Պատկերացրու, որ գտնենք պղնձե մի կաթսա, մեջը հարյուր ժանգոտած դոլար, կամ փտած մի սնդուկ՝ գոհարներով լեցուն: Ի՞նչ կասես դրան:

Հեքի աչքերը փայլեցին:

— Դա հրաշալի է, ինձ համար հրաշալի է: Հարյուր դոլարը ինձ տուր, և ես գոհարները չեմ ուզում:

— Շատ լավ, բայց ես վստահ եմ, որ դու գոհարները չես ոչցի: Դրանցից մի քանիսը քսան դոլար կարժենան:

— Մի՞թե, մի՞թե այդպես է:

— Ինչ խոսք, ում ուզում ես հարցրու: Երբեք գոհար չե՞ս տեսել, Հեք:

— Ոչ, ինչքան հիշում եմ:

— Թագավորները գոհարի սարեր ունեն:

— Ես ոչ մի թագավորի չեմ ճանաչում, թո՛մ:

— Վստահ եմ, բայց եթե Եվրոպա գնաս, ինչքան ասես կտեսնես: Չորս կողմը թագավորներ են:

— Թովո՞ւմ են:

— Թովո՞ւմ: Գիժ, ինչո՞ւ պիտի թովոան:

— Մի՞թե դու շասացիր, թե թովոում են:

— Հիմարութուն: Ես պարզապես ուղեցի ասել, թե կրտսնես դրանց, իհարկե, ոչ թովոալիս: Ինչո՞ւ պիտի թրովրոան: Ես պարզապես ուղեցի ասել, որ նրանցից շատերին կտեսնես սուհասարակ: Օրինակ, այդ սապատավոր Ռիչարդին՝

— Ռիչար՞դ. ի՞նչ է նրա ազգանունը:

— Նա ազգանուն չունի: Թագավորները միայն անուն են ունենում:

— Ճի՞շտ:

— Չեն ունենում:

— Եթե այդ նրանց դուր է գալիս, շատ լավ, բայց ես չեմ ուզում թագավոր լինել և միայն անուն ունենալ, ինչպես նեղրերը: Բայց լսիր. ամենից առաջ որտե՞ղ ես փնտրելու:

1 Սապատավոր Ռիչարդ— Անգլիայի թագավոր Ռիչարդ III (1483—1485):

— Զգիտեմ: Գետի մյուս կողմի բլրի ծերացած ծառի մոտից շսկսե՞նք:

— *Նամաձայն եմ:

Նրանք մի հին քլունգ ու մի բահ վերցրին և ճանապարհ ընկան դեպի երեք մղոն հեռվում գտնվող իրենց նպատակը: Տեղ հասան կարմրած, հոգնած, մոտակա մի ծխենու տակ պառկեցին հանգստանալու և ծխելու:

— Ինձ սա դուր է գալիս,— ասաց Թոմը:

— Ինձ էլ:

— Լսիր, Հեք, եթե այստեղ դանձ գտնենք, ի՞նչ կանես թո բաժինը:

— Ե՛ս, դե, ամեն օր մսով կարկանդակ կուտեմ և սողալաջուր կիմեմ. կզնամ քաղաք ևկող կրկեսի բոլոր ներկայացումներին: Գրազ կգամ, որ շատ ուրախ ժամանակ կանցկացնեմ:

— Գրա մի մասը չե՞ս պահելու:

— Պահե՞լ, ինչո՞ւ:

— Որպեսզի հետո դրանով ապրես:

— Դա ավելորդ բան է: Որտեղ որ է հայրս կվերագառնու և թաթը վրան կգնի, եթե ես չշտապեմ ծախսել: Կարող եմ բեզ վստահեցնել, որ նա շատ արագ կխմի: Դու թո բաժինը ի՞նչ ես անելու, Թոմ:

— Ես մի նոր թմբուկ կզնեմ, անպայման մի սուր և մի կարմիր փողկապ, մի շան լակոտ և կամուսնանամ:

— Կամուսնանա՞ս:

— Այո:

— Թոմ, դու հո խելքդ չե՞ս կորցրել:

— Սպասիր և կտեսնես:

— Եվ դա ամենահիմար բանն է, որ դու կարող ես ահել, Թոմ: Այ, օրինակ, իմ հայրն ու մայրը: Կոխվ, կոխվ. ամեն օր կովում էին: Հիշում եմ, շատ լավ հիշում եմ:

— Դա ոչինչ չի նշանակում: Այն աղջիկը, որի հետ պիտի ամուսնանամ, չի կուլի:

— Թոմ, ես կարծում եմ, որ բոլորը իրար նման են: Բոլորը նույն միս ու արյունից են: Ավելի լավ է, որ այդ մասին որոշ ժամանակ մտածես: Ես քեզ ասում եմ, մտածիր: Ի՞նչ է այդ աղջիկ անունը:

— Նա բոլորովին էլ աղջի չէ. աղջիկ է:

— Իմ կարծիքով նույն բանն է. ոմանք աղջի են ասում, ոմանք՝ աղջիկ: Երկուսն էլ ճիշտ է: Այնուամենայնիվ, Ի՞նչ է անունը, Թոմ:

— Մի օր կասեմ, բայց ոչ այժմ:

— Շատ լավ, ինչպես կուզես, երբ ամուսնանաս, ես ա՛յլեւի մենակ կլինեմ:

— Ոչ, մենակ չես մնա. կգաս ինձ հետ կապրես: Այժմ թողնենք այդ և սկսենք փորել:

Մի կես ժամ աշխատելուց հետո հոգնեցին: Ոչ մի արդյունք: Մի կես ժամ էլ աշխատեցին: Էլի ոչ մի արդյունք: Հեքն ասաց.

— Միշտ այսքան խո՞րն են թաղում:

— Երբեմն ոչ: Ընդհանրապես ոչ: Ես կարծում եմ, որ ճիշտ տեղը չգտանք:

Նրանք մի նոր տեղ ընտրեցին և նորից սկսեցին: Աշխատանքը մի րիչ դանդաղեց, բայց բավական առաջ գնաց: Որոշ ժամանակ էլ լուռ և քրտնաջան աշխատեցին: Ի վերջո Հեքը հենվեց իր բահին, թեով սրբեց ճակատի քրտինքը և ասաց.

— Արանից հետո որտե՞ղ ենք փորելու:

— Իմ կարծիքով լավ է՛ինի փորձել այրու տան ետևում գտնվող շոր ծառի տակը:

— Ես էլ եմ կարծում, որ այդ տեղը հարմար է, բայց այրին չի՞ խլի մեղնից, Թոմ: Նրա հողամասում է:

— Խլի՞: Թող փորձի: Ով գտնում է պահված գանձը, նրան է պատկանում: Կարևոր չէ, թե ում հողամասում է գտնվում:

Դա գոհացուցիչ էր: Աշխատանքը շարունակվեց: Քիչ հետո Հեքն ասաց.

— Գրողը տանի, ըստ երևույթին նորից սխալ տեղում ենք: Ի՞նչ ես կարծում:

— Շատ հետաքրքի՛չ է, Հեք: Չեմ հասկանում: Երբեմն կախարդները միջամտում են: Ես կարծում եմ, որ հենց այդ պատճառով չենք գտնում:

— Հիմարություն: Կախարդները ցերեկները ուժ չունեն:

— Դա ճիշտ է: Ես այդ մասին չէի մտածել: Ահա, հասկա-

ցա, թե ինչից է: Ինչ հիմարներն ենք մենք: Պետք է գտնել: Թե կեսգիշերին որտե՞ղ է ընկնում ծառի շվաքը և այդ տեղը փորել:

— Է՛հ, դուրս է գալիս, որ ամբողջ այս աշխատանքը իդուր տեղը արեցինք: Այժմ ամեն ինչ թող. պետք է գիշերը վերադառնանք: Ահավոր երկար ճանապարհ է: Կարո՞ղ ես դուրս գալ:

— Կարող եմ: Պետք է այս գիշերն իսկ անենք, որովհետև, և թե որևէ մեկը այս փոսերը տեսնի, անմիջապես կհասկանա թե բանն ինչ է, և գանձը կգտնի:

— Լավ, գիշերը ես կգամ ու կմլավեմ:

— Շատ լավ: Եկ գործիքները մացառուների տակ պահենք:

Այդ գիշեր, համարյա պայմանավորված ժամին, տղաները այդտեղ էին: Նրանք ստվերում նստեցին և սպասեցին: Խուլ տեղ էր և այնպիսի ժամ, որ բոլոր տրադիցիաներով լուրջ էր համարվում: Շարժվող տերևների մեջ ոգիներն էին շշմուշում, ուրվականներ էին պահվում մութ անկյուններում: Հեռվից լսվեց մի շան հաչոց: Մի բու պատասխանեց շարագուշակ կոխնչով: Տղաները ճնշվում էին շրջապատի հանդիսավորութունից և քիչ էին խոսում: Հետո որոշեցին, որ հասել է ժամը տաններկուսը: Նշեցին ստվեր ընկած տեղը և սկսեցին փորել: Հույսը նրանց թե էր տալիս: Շահագրգռվածությամբ զննելով մեծացավ և թափ տվեց աշխատանքին: Փոսը խորանում ու խորանում էր, և ամեն անգամ, երբ լուսնը մի բանի էր դիպչում, նրանց սիրտը վեր էր թռչում, լայց հիասթափվում էին: Մի քար կամ մի արմատ էր լինում: Ի վերջո թոմն ասաց.

— Շարունակելն իմաստ չունի, Հեք, նորից սխալվել ենք:

— Բայց մենք սխալված լինել չենք կարող. սկսեցինք ստվեր ընկած տեղից:

— Գիտեմ, բայց այդ դեպքում մի ուրիշ պատճառ կա:

— Ի՞նչ պատճառ:

— Մենք ժամանակը գուշակեցինք մոտավորապես: Շատ հավանական է, որ ավելի ուշ էր կամ ավելի շուտ:

Հերթ ցած գցեց բահը:

Այդ է որ կա,— ասաց նա:— Հենց դա է պատճառը: Այս մեկը պետք է թողնենք: Մենք երբևէ չենք կարող ճիշտ

ժամանակն իմանալ և, բացի այդ, այստեղ շատ սարսափելի է գիշերվա այս ժամին, երբ շուրջը վխտում են վհուկներ ու ողիներ: Շարունակ ինձ թվում է, թե մեկը կանգնած է իմ ետևում: Վախենում եմ շուտ գալ. գուցե ուրիշներ էլ կան առջևում, որոնք միայն այդպիսի առիթի են սպասում: Այստեղ գալուց ի վեր անընդհատ զողում եմ:

— Ես ինքս էլ ավելի լավ վիճակում չեմ, Հե՛ք: Նրանք համարյա միշտ մի մեռած մարդ են դնում գանձի կողքին, երբ թաղում են ծառի տակ, որպեսզի պահպանի այն:

— Ասաված իմ:

— Այո, այդպես են անում: Ես միշտ այդպես եմ լսել:

— Թո՛մ, ես չեմ սիրում թրև դալ այն վայրերում, որտեղ մարդիկ են մահացել: Վստահ եմ, որ նրանց հետ գործ ունենալիս մարդ միշտ փորձանքի է հանդիպում:

— Ես ինքս էլ չեմ սիրում նրանց արթնացնել, Հեք: Պատկերացրու. եթե հանկարծ մի անդամ դուրս ջցվի ու խոսի:

— Լո՛իր, Թո՛մ, սարսափելի է:

— Հենց այդպես էլ է: Հեք, ես ինքս բոլորովին էլ հանգիստ չեմ:

— Լո՛իր, Թո՛մ, արի այս տեղը թողնենք և մի ուրիշ տեղ փորձենք:

— Շատ լավ, ինձ թվում է՝ ավելի լավ կլինի:

— Ո՛ւր գնանք:

Թո՛մը մի պահ մտածեց, հետո ասաց.

— Ուրվականներով լցված տունը: Դա է որ կա:

— Թող կորչի, ես ուրվականներով լցված տուն չեմ սիրում, Թո՛մ: Դրանք մեռելներից վատ են: Մեռած մարդիկ գուցե խոսեն, բայց պատանքի մեջ փաթաթված շուրջը չեն պտտվի, երբ դու չես նայում, և հանկարծ ուսիդ վրայից զաղտնի չեն նայի ու ատամ չեն կրճտացնի, ինչպես ուրվականներն են անում: Ես այդպիսի բանի չեմ դիմանա: Ոչ որ չի դիմանա:

— Այո, բայց ուրվականները միայն գիշերներն են շրջում: Մեղ չեն խանգարի, եթե ցերեկը փորենք:

— Դա այդպես է, բայց դու լավ գիտես, որ այդ ուրվականների տունը մարդիկ ոչ գիշերն են դնում, ոչ ցերեկը:

— Դա ավելի շուտ նրանից է, որ մարդիկ շեն սիրում զընայլ մի տուն, որտեղ մարդ է սպանվել: Բայց դիշերն էլ այդ տան շուրջը ոչ մի բան չի նշմարվել: Միայն ինչ-որ կապույտ լույս, որ լուսամուտից է երևում, բայց ոչ մի կարգին ուրվական չի երևացել:

— Այո, բայց եթե որևէ տեղ կապույտ լույս են տեսնում, Թոմ, կարող ես գրազ գալ, որ դրա ետևում ուրվական կա: Պետք է տրամաբանել: զիտես, որ միայն նրանք են կապույտ լույս օգտագործում:

— Այո, այդպես է, բայց բոլոր դեպքերում նրանք ցերեկը շեն շրջում, ուրեմն ի՞նչ օգուտ մեր վախենալուց:

— Դե լավ, որ այդպես ես ասում, ուրվականների տունը քանդենք: Բայց վտանգավոր է:

Մինչ այդ տղաները բլրից իջել էին: Ներքևում, լուսնի լույսով լուսավորված հովտի մեջտեղում կանգնել էր ռուրվականներով լցված տունը՝ բոլորովին մեկուսացած, վաղուց ցանկապատից զրկված, մինչև դուռը խոտով ծածկված, ծխանելույզը միուլ եկած, անապահի լուսամուտներով, տանիքի մի անկյունը քանդված: Տղաները որոշ ժամանակ նայեցին, կարծելով, թե կապույտ լույս կտեսնեն լուսամուտներից մեկի մոտ, հետո ցածրաձայն խոսելով, ինչպես ժամանակն ու հանգամանքներն էին պարտադրում, թեքվեցին աջ, մի մեծ յրջան արեցին, ուրվականների տնից հեռացան և իրենց տան ճանապարհը բռնեցին Քարտիֆ բլրի հակառակ կողմից:

ԳԼՈՒԽ ԲՍԱՆՅՈՒԹԵՐՈՐԴ

Հաջորդ օրը, կեսօրվա մոտ աղաները գնացին շորացած ծառի մոտ՝ իրենց գործիքները տանելու: Թոմն անհամբեր էր, ուզում էր ժամ առաջ մտնել ուրվականներով լցված աուևր: Հեքը շափավոր էր սգեորված և հանկարծ ասաց.

Լսիր, Թոմ, զիտես՞ս այսօր ինչ օր է:

Թոմը մտքում հաշվեց շաբաթվա օրերը, հետո արագ բարձրացրեց ապշությամբ լեցուն աչքերը.

Այ, երբեք այդ մասին չէի մտածել, Հեք:

— Ես էլ չէի մտածել, բայց հանկարծ հիշեցի, որ այսօր ուրբաթ է:

— Գրողը տանի: Մարդ չպետք է այդքան անզգույշ լինի. Հեք: Կարող էինք սարսափելի փորձանքի մեջ ընկնել, այսպիսի գործ ուրբաթ օրը անելով:

— Կարող էր պատահել: Ավելի լավ է ասես, որ ընկնում էինք: Գուցե բախտավոր օրեր կան, բայց ուրբաթը դրանցից չէ:

— Ամեն մի հիմար գիտե՞ս այդ բանը: Ես չեմ կարծում, թե դու ես առաջին իմացողը, Հեք:

— Երբեք ես չեմ ասել, թե առաջինը ես եմ: Եվ հարցր միայն ուրբաթը չէ: Անցյալ գիշեր ես մի շատ վատ երազ տեսա՝ առնականեր:

— Մի ասա: Փորձանքի հաստատ նշան է: Կովո՞ւմ էին:

— Ոչ:

— Դա լավ է, Հեք: Երբ չեն կովում, դա նշանակում է, որ շուրջդ փորձանք կա: Մենք պետք է շատ զգույշ լինենք, որ կրակը չընկնենք: Այս գործը այսօր հետաձգենք և խաղանք: Գու՞ Թորին Հուդին ճանաչո՞ւմ ես:

— Ոչ, Ո՞վ է Թորին Հուդը:

— Դա Անգլիայի ամենամեծ և լավագույն մարդկանցից մեկն էր: Նա ավազակ էր:

— Ա՛խ, երանի նրա տեղը լինելի: Ո՞ւմ էր նա կողոպտում:

— Միայն շերիֆներին, Լպիսկոպոսներին և հարուստ մարդկանց, թաղավորներին ու նրանց նամաններին: Բայց աղքատներին երբեք չէր անհանդուստանում: Նրանց սիրում էր: Նրանց հետ միշտ հավասար բաժանում էր կողոպտածը:

— Հրաշալի մարդ պետք է եղած լինի:

— Գրադ կգամ, որ այդպիսին է եղել, Հե՛ք: Օ՛, նա աշխարհի ամենաապնիվ մարդն է եղել: Այժմ այդպիսի մարդիկ չկան, կարող եմ վստահեցնել քեզ: Մի ձեռքը մեջքին կուպած, նա կարող էր ծեծել ում ասես, միշտ կարող էր ղեղձենուց սարքած իր նետով մեկուկես մղոն հեռվից խփել տասաննիստոցին:

— Ի՞նչ բան են ղեղձենուց սարքածները:

— Զգիտեմ: Անշուշտ մի տեսակ նետ է: Եթե փնդի մեկ-

տեղը չէր խփում, այլ ծայրին, նստում ու լաց էր լինում և հայհոյում: Ուրեմն Ռոբին Հուդ ենք խաղալու. շատ լավ խաղ է: Ես քեզ կսովորեցնեմ:

— Համաձայն եմ:

Ամբողջ կեսօրից հետո Ռոբին Հուդ խաղացին, երբեմն ազահ հայացքներ գցելով ուրվականներով լցված տան կողմը և ծանրութեթև անելով հաշորդ օրվա հեռանկարներն ու հնարավորությունները: Երբ արևն սկսեց դեպի արևմուտք թեքվել, նրան, տան ճանապարհը բռնեցին ծառերի երկար ստվերների կողքով և շուտով տեսողությունից կորան Քարտիֆ բլրի անտառում:

Շաբաթ օրը, կեսօրից քիչ հետո, տղաները նորից շորացած ծառի մոտ էին: Մխեցին ու զրուցեցին ստվերի տակ և մի փոքր փորեցին իրենց նախկին փոսը, ոչ մեծ հույսով, այլ նրա համար, որ... Թոմն ասաց, թե շատ դեպքեր են եղել, երբ մարդիկ գանձից զրկվել են մի քանի մատնաչափ պակաս փորելու պատճառով: Հետո մի ուրիշ մարդ եկել և բահի մի հարվածով գտել է: Բայց այս անգամ դա տեղի չունեցավ, և տղաները շալակեցին իրենց գործիքներն ու հեռացան, այն դպացողությամբ, որ գանձի չեն տիրացել, բայց կատարել են այն բոլորը, ինչ անհրաժեշտ է գանձ գտնելու համար:

Երբ հասան ուրվականներով լցված տունը, շարագուշակ ու սարսափելի մի լռություն էր տիրում այրող արևի տակ և լրված ու անմարդաբնակ տանը հատուկ այնպիսի մի ճնշող բան, որ նրանք մի պահ վախեցան ներս մտնել: Հետո դռան մոտեցան և դողալով ներս նայեցին: Տեսան մի սենյակ ուսանց տախտակամածի, խոտածածկ հատակ, ծեփը թափած մի հին ծխնելույղ, դատարկ լուսամուտներ, մի քանդված սանդուղք, այս ու այն կողմ, ամեն տեղ կախված ոստայններ: Նրանք անձայն, բաբախող սրտերով ներս մտան: Խոսում էին շշուկով, ականջները պահած ամենափոքր իսկ ձայնի, լարված մկաններով, պատրաստ անմիջապես փախույթ:

Կարճ ժամանակում ընտելացան, վախը մեղմացավ, և կանոն սկսեցին վայրն ուսումնասիրել հետաքրքրությամբ, խոսելով իրենց համարձակությամբ ու միաժամանակ զար-

մանալով: Հետո ուզեցին տեսնել վերնահարկը: Այդ նահանջի ճանապարհը կտրելու պես բան էր, բայց միմյանց համարձակություն ներշնչեցին և անշուշտ արդյունքի հասան: Գործիքները մի անկյուն դրեցին ու վերև բարձրացան: Այնտեղ էլ լքվածության նույն նշանները կային: Միայն մի պահարան գտան, որ խորհրդավոր գաղտնիք էր խոստանում, բայց հրասթափվեցին. մեջը ոչինչ չկար: Տղաներն այժմ վերջնականապես արիացել էին և իրենց տիրապետում էին: Ուզում էին ցած իջնել և աշխատանքն սկսել, երբ.

— Շր՛շշ, — ասաց Խոմը:

— Ի՞նչ կա, — շնչաց Հերը, վախից դույնը գցելով:

— Շր՛շշ, լսո՞ւմ ես, այնտեղ:

— Այո: Օ՛, փախչենք:

— Հանգիստ մնա, մի շարժվիր, ուղիղ դեպի դուռն են գալիս:

Տղաները հատակին պառկեցին, աչքները տախտակամածի ճեղքին, և սարսափահար պառկած սպասեցին:

— Կանգ առան... ոչ... գալիս են... ահա նրանք: Ոչ մի բառ չշնչաս, Հեր: Է՛հ, երանի այստեղ եկած չլինեինք:

Երկու մարդ ներս մտան: Տղաներից ամեն մեկը ինքն իրեն ասաց.

— Ահա ծեր, խուլումունջ իսպանացին, որ վերջերս մի կրկու անգամ քաղաքում երևաց, մյուս մարդուն երբեք չեմ տեսել:

«Մյուսը» կեղտոտ, պատառոտված շորերով անխնամ մի արարած էր, դեմքի վրա ոչ մի հաճելի բան չունեցող: Իսպանացին փաթաթված էր թիկնոցով: Նա խիտ սպիտակ մորուք ուներ, լայնևզր զլխարկի տակից դուրս պրծած երկար սպիտակ մազեր, աչքերին դրել էր կանաչ ակնոց: Երբ ներս մտան, «մյուսը» խոսում էր ցածրաձայն: Նրանք նստեցին գետնին՝ դեմքները դռանը, մեջքները պատին: Խոսողը շարունակեց: Նրա շարժումները նվազ դուսպ դարձան և բռնեք՝ ավելի որոշ:

— Ո՛չ, — ասաց նա, — ես ամեն ինչ կշռադատեցի և ինձ դուր չի գալիս: Վտանգավոր է:

— Վտանգավոր, — փնթփնթաց «խուլ ու համր» իսպանացին, մեծ վարմանք պատճառելով տղաներին: — Թուլամորթ:

Այդ ձայնից տղաների շունչը կտրվեց և դողացին: Հընդ-
կացի Ջոյի ձայնն էր: Որոշ ժամանակ լռություն տիրեց: Հետո
Ջոն ասաց.

— Խնչն էր ավելի վտանգավոր, քան այն մյուս գործը,
բայց ոչինչ չզատահեց:

— Գա ուրիշ: Գետի վերևի մասում և մոտերքում տուն
չկար: Ոչ ոք չի իմանում, որ մենք այդտեղ գործ արեցինք,
քանի որ ոչինչ չուրս չեկավ:

— Ես այդ դիտեմ, բայց սրանից հարմար թաքնվելու
տեղ չկար այդ հիմար գործից հետո: Ես ուզում եմ հեռանալ
այս ավերակից: Ուզեցի երեկ հեռանալ, բայց այդ անիծյալ
տղաների պատճառով, որոնք բլրի վրա խաղում էին, հնա-
րավոր չէր առանց նկատվելու դուրս գալ:

«Այդ անիծյալ տղաները» այս խոսքի վրա նորից դողա-
ցին և մտածեցին, թե ինչքան բախտավոր են եղել երեկ՝ հի-
շելով օրվա ուրբաթ լինելը և գործը թողնելով այսօրվան:
Սրտի խորքում նրանք ավստոսեցին, որ մի տարի չեն սպասել:

Երկու մարդիկ ուտելու քան հանեցին և սկսեցին ընթրել:
Երկար, մտածկոտ լռությունից հետո Հնդկացի Ջոն խոսեց.

— Լսիր, տղա, դու դետեղրով բարձրացիր քո որջը: Այն-
տեղ սպասիր, մինչև ինձնից լուր ստանաս: Ես մի անգամ
էլ պիտի փորձեմ այս քաղաքն ընկնել՝ նայելու: Մենք այդ
«վտանգավոր» գործը կանենք շրջապատը մի փոքր լըր-
տեսելուց և համոզվելուց հետո, երբ հանգամանքները հար-
մար կլինեն: Հետո կգնանք դեպի Տեխաս: Միասին կգնանք:

Այս գոհացուցիչ էր: Այժմ երկուսն էլ հորանջում էին, և
Հնդկացի Ջոն ասաց.

— Անքնությունից մեռնում եմ: Հսկելու հերթը քոնն է:
Խոտերի վրա նա կուչ եկավ և շուտով սկսեց խոմփալ:
Ուկերը մի քանի անգամ ցնցեց Ջոյին, բայց նա շարժվեց:
Նուտով պահակը նույնպես սկսեց ննջել: Գլուխը հետզհետե
յոսձ էր իջնում: Այժմ երկուսը միասին սկսեցին խոմփալ:

Տղաները խոր, երկար և թեթևացած շունչ քաշեցին: Թո-
մբ շշնջաց.

Այժմ հարմար սուրթ է, արի:

Հերի ասաց.

Չեմ կարող. կմեռնեմ, եթե արթնանան:

Թումը պնդեց, շեքը համառեց: Ի վերջո թումը դանդաղ ու կամաց վեր կացավ և մենակ ճանապարհ ընկավ: Բայց առաջին քայլը այնպիսի այլանդակ ճոռոց հանեց հիմար տախտակամածից, որ սարսափից զարհուրած տղան անմիջապես նստեց: Երկրորդ փորձն այլևս շարեց: Տղաները պառկած հաշվում էին անցած րոպեները, մինչև թվաց, թե ժամանակը վերջացել է, և հավիտենականությունը կանգ է առել: Հետո նրանք իրենց երախտապարտ զգացին, երբ, ի վերջո, արևը մայր մտավ:

Մի խոմփոցը դադարեց: Հնդկացի Ջոն նստեց, շուրջը նայեց, դառնորեն ժպտաց իր բնկերոջ վրա, որի գլուխը ծնկներին վրա էր ընկել, ստբով արթնացրեց նրան և ասաց.

— Հեյ, դու էլ պիտի ասես, թե պահակ ես, չէ՞: Բայց լավ է, որ ոչինչ չպատահեց:

— Վա՛հ, մի՞թե բնեւ եմ:

— Է՛հ, մասամբ, մասամբ: Համարյա շարժվելու ժամանակն է: Ի՞նչ պիտի անենք մնացած փոզը:

— Չդիտեմ. ինձ թվում է կարելի է այստեղ թաղել, ինչպես միշտ արել ենք: Միտք չկա տանել մինչև հարավ գնալը: Վեց հարյուր հիսուն արծաթը հանելը բավական դժվար է:

— Կա՛մ, շատ լավ, արժե զրա համար մի անգամ էլ գալ:

— Այո, բայց պետք է դիշերը գալ, ինչպես անում էինք. այդպես ավելի լավ է:

— Այո, բայց լսիր. գուցե երկար ժամանակ պետք լինի, մինչև այդ գործն անելը: Կարող են արկածներ պատահել: Այնքան էլ լավ տեղում չեն փողերը: Պետք է կարգին թաղենք, խորը:

— Լավ միտք է, — ասաց ընկերը, քայլեց սենյակի երկյանքով, ծունկի եկավ, բարձրացրեց օջախի քարեւից մեկը և մի տուպրակ հանեց, որը զվարթ գնդոնգաց: Դրա միջից նա իր համար դուրս հանեց քսան կամ երեսուն դոլար և նույնքան էլ Հնդկացի Ջոնի համար, տուպրակը տվեց սրան, որն անկյունում ծնկի էր եկել և իր կեռ դանակով փորում էր:

Տղաները մի պահ մոռացան իրենց ամբողջ սարսափը, բոլոր դժբախտությունները: Ազահ հայացքով դիտում էին նրանց յուրաքանչյուր շարժմանը: Ահա բախտը, որի փայլն ամեն երևակայութունից անցնում էր: Վեց հարյուր դոլարը

բավարար փող էր կես դյուծին երեխա հարստացնելու համար: Ահա գանձ որոնելը իր ամենաերջանիկ տեսքով. այլևս անորոշություն չէր լինի, թե որտեղ պետք է փորել: Ամեն բուսներանք արմունկով բզում էին իրար: Պերճախոս ու հեշտ հասկանալի բզոց. դա պարզապես նշանակում էր. «Օ՛հ, հիմա ուրախ չե՞ս, որ այստեղ ենք»:

Ջոյի դանակը մի բանի կպավ:

— Ահա,— ասաց նա:

— Այդ ի՞նչ է,— ասաց ընկերը:

— Փտած տախտակ, ոչ, կարծես տուփ է: Արի, օգնիր, որ տեսնենք, թե ի՞նչ է: Ոչինչ, ես մի ծակ բացեցի:

Նա ձեռքը մտցրեց և դուրս հանեց:

— Լսիր, փող է:

Երկու մարդիկ նայեցին տուփի միջի փողին: Ոսկի էր: Վերևի տղաները նրանց շափ հուզված և ուրախ էին:

Ջոյի ընկերն ասաց.

— Պետք է շտապ պահել և այս գործը ավարտել: Օջախի մյուս կողմում ես մի քիչ առաջ մի քլունգ ու բահ նկատեցի. զնամ բերեմ:

Նա վազեց և բերեց տղաների բահն ու քլունգը: Հնդկացի Ջոն վերցրեց քլունգը, խուզարկու հայացքով նայեց ու զլուխն օրորեց, ինքն իրեն մի բան մրթմրթաց, հետո գործի անցավ:

Շուտով տուփի վրայի հողը հանեցին: Տուփը շատ մեծ չէր. երկաթապատ էր և շատ դիմացկուն: Ժամանակը հաղիվ էր վնասել: Որոշ ժամանակ նրանք դիտեցին գանձը երանելի լուծյան մեջ:

— Հուլազ, այստեղ հազարավոր դոլարներ կան,— ասաց Հնդկացի Ջոն:

— Միշտ պատմում էին, թե Մյուլլերի ավազակախումբն ամառները այս տեղերում էր մնում,— նկատեց օտարականը:

— Գիտեմ,— ասաց Հնդկացի Ջոն,— և սա կարծես դա է սպացուցում:

— Այժմ դու կարիք չունես այն մյուս գործն անելու. հառնածինը մուսլիմացի է: Նա ասաց.

— Դու ինձ չես ճանաչում, կամ առնվազն այդ գործի մասին ամեն ինչ չգիտես: Դա միայն կողոպուտ չէ. դա վրեժ-խնդրություն է,— և նրա աչքերը շարունակաբար փայլեցին:—

Այդ գործում ևս քո օգնութեան կարիքն ևմ գտում: Երբ ավարտենք, այդ ժամանակ Տեխաս կգնանք: Այժմ քո նանսի տունը գնա, երեխաներիդ մոտ սպասիր, մինչև քեզ լուր ուղարկեն:

— Լավ, եթե այդպէս ևս ասում: Սա ի՞նչ պիտի անենք, նորից թաղե՞նք:

— Այո (վերևում՝ լիակատար հրճվանք): Ո՛չ, հնդկացիների մեծ աստված Սեյջըմը՝ վկա, ո՛չ (վերևում խորունկ հուսահատութուն): Քիչ մնաց մոռանալի, որ քլունգի վրա թարմ հող կար (տղաները սարսուռից մի պահ մեռան): Այստեղ ի՞նչ գործ ունեն բանն ու քլունգը: Սրանց վրա ի՞նչ գործ ունի թարմ հողը: Ո՛վ է դրանք բերել և ո՛ւր է գնացել: Դու որեւէ ձայն լսեցի՞ր, որեւէ մեկին տեսա՞ր, ի՞նչ, նորից թաղել և թողնել, որ նրանք փորված հողը տեսնե՞ն: Ո՛չ, այդ չի լինի, իմ բույնը կտանենք:

— Իհարկե, իհարկե: Այդ մասին ավելի շուտ պետք է մտածել: Համար առաջի՞ն բույնը:

— Ո՛չ, համար երկրորդը, խաշի տակինը: Մյուս տեղը վատ է, շատ մարդ կա մոտերքում:

— Շատ լավ: Բավական մութ է սկսելու համար:

Հնդկացի Ջոն վեր կացավ և լուսամուտից լուսամուտ գրնալով զգուշութեամբ դուրս նայեց: Հետո ասաց.

— Ո՛վ կարող էր այդ գործիքները այստեղ բերել: Չե՞ս կարծում, որ վերևում լինեն:

Տղաների շունչը կտրվեց: Հնդկացի Ջոն ձեռքը դրեց դրոնակին, մի պահ կանգ ստավ անվճռականութեամբ, հետո շուտ եկավ դեպի սանդուղքները: Տղաները մտածեցին պահապանի մասին, բայց տեղից շարժվելու ուժ չունեին: Քայլերը սանդուղքներից ճոճալով բարձրանում էին: Դրութեան անտանելիութունն արթնացրեց տղաների վճռակալութունը: Ուզում էին դեպի պահարանը թռչել, երբ լսվեց կտրվող փտած տախտակների ճոխնչ, և Հնդկացի Ջոն ջարդված աստիճանների հետ փովեց ավերակի մեջտեղը: Նա հայհոյելով վեր կացավ: Ընկերն ասաց:

1 Սեյջըմ Հյուսիսային Ամերիկայում կոչվում էին հնդկացիների մի քանի ցեղերի գլխավոր առաջնորդները:

— Ի՞նչ կարիք կար: Եթե որևէ մեկը կա, և նա վերևում է, թող այնտեղ էլ մնա: Ո՞ւմ հոգն է: Եթե ուզում են ներքև իջնել և փորձանքի մեջ ընկնել, ո՞վ է դեմ: Տասնհինգ բուպեից մութ կլինի, և թող հետևեն մեզ, եթե ցանկանում են: Ինքս եմ ուզում: Իմ կարծիքով, եթե այս բաները այստեղ բերողը մեզ տեսել է, մեզ ոգիների կամ սատանաների տեղ դրած կլինի: Գրազ կգամ, որ նա դեռևս փախչում է:

Ջոն ինչ-որ բան մրթմրթաց, հետո ընկերոջ հետ համաձայնեց, որ պետք է ժամանակին հեռանալ, քանի դեռ լույս է: Գրանից քիչ հետո նրանք տնից դուրս սահեցին խորացող աղջամուղջի մեջ ու իրենց թանկագին սնդուկն առած՝ շարժվեցին դեպի գետը:

Թոմն ու Հեքը վեր կացան թույլ, բայց թեթևացած և նրբանց հտկից երկար նայեցին տան գերանների արանքից: Հետևե՞լ. ո՞չ, ո՞չ: Նրանք գոհ էին, որ նորից գետնին հայտնվեցին՝ առանց վզները կտրելու, և բռնեցին բլրի վրայով քաղաք տանող ճանապարհը: Նրանք շատ չէին խոսում. զբաղված էին իրենք իրենց ատելով, ատելով իրենց ձախորդությունը, որ բաճն ու քլունդը տարել էին այնտեղ: Եթե դա չլիներ, Հնդկացի Ջոն երբեք չէր կասկածի: Նա արժաթը կթաղելու ոսկու հետ, մինչև այդ «վրեժխնդրություն» ծարավը հագեցնելու և հետո դժբախտություն ունենար տեսնելու, որ փողն այլևս չկա: Դժբախտություն, ծանր դժբախտություն: Գործիքներն ինչո՞ւ տարան այնտեղ: Նրանք որոշեցին հետևել այդ խոսանացուն, որ քաղաք պիտի գար լրտեսելու և գտնելու իր վրեժխնդրական գործի առիթը: Պետք է հետևելին մինչև «համար երկուսը», որտեղ էլ դա լիներ: Հետո Թոմի զլխում մի սարսափելի միտք ծագեց:

Վրեժխնդրություն: Իսկ եթե նա մե՞զ նկատի ունի, էհր:

Է՞հ, մի՞ առա,— առարկեց Հեքը՝ համարյա ուշագնաց լինելով:

Նրանք այդ մասին հանգամանորեն խոսեցին և քաղաքի հեկիս համաձայնեցին, որ հավանաբար ուրիշին նկատի էլի: Երևանում, կարող է նկատի ունենալ միայն Թոմին, քանի որ միայն Թոմն էր վկայել:

Քիչ, շատ քիչ մխիթարություն կար թոմի համար, որ մե-
նակ է վտանգի մեջ: Ընկեր ունենալը որոշակիորեն ավելի
լավ կլիներ, մտածում էր նա:

ԳՆՈՒԽ ԲՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

Յերեկվա արկածը թոմին մեծ շափով տանջեց գիշերը:
Չորս անգամ նա ձևորը դրեց այդ հարուստ գանձի վրա, և
չորս անգամ էլ այն ոչնչի փոխակերպվեց: Երբ արթնացավ,
արթնության հետ վերադարձավ դժբախտության իրական ըզ-
գացումը: Վաղ առավոտյան, երբ արթնացած հիշում էր իր
մեծ արկածի մանրամասնությունները, նկատեց, որ դրանք
զարմանալի կերպով անորոշ են և հեռու, կարծես ուրիշ աշ-
խարհում կամ շատ հին անցյալում պատահած լինեն: Հետո
բվաց, թե այդ մեծ արկածը երազ է: Այդ մտքի օգտին մի մեծ
փաստարկ կար, այն, որ իր տեսած փողերը իրական լինե-
լուց ավելի շատ էին: Նա մինչ այդ հիստուն գոլարից ավելին
իրար մոտ չէր տեսել, և նա, ինչպես իր տարիքի և նման
սլաշմաններում սպրոզ տղաները, կարծում էր, թե «հարյուր-
ները» և «հազարները» պարզապես արտահայտվելու ձևեր
էին, իսկ այդրան գումար աշխարհում չկար: Նա երբև չէր
կարծում, թե այնպիսի խոշոր գումար, ինչպիսին հարյուր գո-
լարն է, կարող է որևէ մեկն ունենալ: Թաքցրած գանձերը
նա պատկերացնում էր իրրև մի բուռ իսկական փող և ավե-
լի շատ անորոշ, հրաշալի, բայց և անհասանելի գոլարներ:
Բայց որրան նա մտածում էր իր արկածի մանրամասնու-
թյունների մասին, այնքան դրանք ցայտուն էին դառնում: Ի
վերջո սկսեց հավատալ, որ պատահածը, այնուամենայնիվ,
լրիվ երազ չէր: Այդ անորոշությունը պետք է վերացներ: Նա
արագ պետք է նախաճաշեր և գնար Հեքին գտնելու:

Հեքը շատ ընկճված տեսքով նստած էր մի տափակ նա-
վակի կողքին, ոտքերը ջրի մեջ շարժելով: Թոմն սպասեց, որ
եղածի մասին Հեքը խոսի: Եթև շխոսի, ուրեմն՝ արկածը պար-
զապես երազ է եղել:

— Հեյո՛, Հեք:

— Հեյո՛:

Մի բոսի լուսթյուն:

— Թում, եթե այդ անիծված գործիքները թողնեինք շտապած ծառի մոտ, հիմա փողի տեր կլինեինք: Մի՞թե ահա՜ վոր չէ:

— Ուրեմն երազ չէ՞, երազ չէ՞: Ուզում եմ, որ երազ լիներ, հավատա, ուզում եմ:

— Խնչը երազ չէ:

— Երեկվա պատահածը: Համարյա հավատացած էի, որ երազ է:

— Երա՛զ, Եթե այդ աստիճանները չջարդվեին, կտեսնեիր, թե ինչ երազ էր: Ամբողջ դիշեր բավական երազներ տեսա: Չոած աչքերով այդ իսպանացուն տեսա. ամբողջ ժամանակ ետևիցս էր վազում: Գրողի ծոցը կորչի:

— Ո՛չ, թող չկորչի, պետք է գտնել նրան: Գտնել փողը:

— Թում, մենք նրան երբեք չենք գտնի: Այդպիսի գումար գտնելու համար մարդու բախտը մի անգամ է բանում: Այդ առիթը մենք բաց թողինք: Սարսափելի կվախենամ, եթե նորից տեսնեմ նրան:

— Ես էլ, բոլոր դեպքերում կուզենայի տեսնել և հետևել այդ մարդուն մինչև իր երկրորդ համարը:

— Երկրորդ համար, այո: Ես այդ մասին մտածում էի, բայց դրանից ոչինչ չեմ հասկանում: Խնչ ես կարծում, ի՞նչ բան է դա:

— Չգիտեմ: Շատ մութ բան է: Հսիր, Հեք, դուցե տան համար է:

— Խելոք: Ոչ, Թում, դա չէ: Եթե նույնիսկ այդպես է, մեր այս քաղաքում չէ: Այստեղ տները համար չունեն:

— Այո, այդպես է, թող մի բույն մտածեմ: Ահա, սենյակի համարն է, ինչ-որ հյուրանոցում:

— Հենց այդ է, որ կա: Այստեղ միայն երկու հյուրանոց կա: Մենք կարող ենք հեշտությամբ գտնել:

— Հեք, այստեղ սպասիր, մինչև գամ:

Թումն անմիջապես չքացավ: Հասարակական վայրերում ես չէր ուզում Հեքի հետ երևալ: Կես ժամ անցավ: Նա իմա-

ցավ, որ լավագույն Տյուրանոցի երկրորդ համարը վաղուց զբաղեցրել է մի երիտասարդ իրավաբան և այժմ էլ այնտեղ է: Մյուս ավելի անշուք Տյուրանոցի երկրորդ համարը խորհրդավոր թվաց: Հյուրանոցի տիրոջ տղան ասաց, որ այն վաղուց կողպված է, և ինքը երբևէ չի տեսել, որ այնտեղ մեկն ու մեկը մտնի կամ դուրս գա, բացի գիշերից: Ուրիշ ոչինչ չգիտեր: Նա մի փոքր հետաքրքրասեր տղա էր, բայց ո՛չ այնքան շատ: Նա ավելի խորհրդավոր էր դարձրել այն, ինքն իրեն համոզելով, թե սենյակում «ոգիներ» են ապրում: Նկատել էր, որ անցյալ գիշեր այդտեղ լույս կար:

— Ահա թե ինչ իմացա, Հեք, կարծում եմ, որ դա հենց մեր փնտրած երկրորդ համարն է:

— Ես էլ եմ կարծում, Թոմ: Հիմա ի՞նչ ես ուզում անել:

— Թող մտածեմ:

Թոմը երկար մտածեց, հետո ասաց.

— Ահա թե ինչ: Այդ երկրորդ համարի ետևի դուռը դուրս է գալիս Տյուրանոցի և աղյուսի պահեստի նեղ փողոցը: Այժմ ինչքան բանալի կարողանաս ճարել, ճարիր, իսկ ես մորաքրքրաջա բանալիները կթողնեմ և առաջին մուտք գիշերն իսկ այնտեղ կցնանք ու կփորձենք: Չմոտանաս հետևել Հնդկացի Ջոյին: Նա ասաց, որ մի անգամ էլ է բաղար գալու և առիթ է ման գալու իր վրեժը լուծելու: Եթե տեսնես նրան, պարզապես հետևիր: Եթե նա այդ երկրորդ համարը չգնա, ուրեմն՝ դա չէ տեղը:

— Չեմ ուզում մենակ հետևել:

— Ինչո՞ւ, հավանաբար գիշեր է լինելու: Նա չի կարող բեզ տեսնել, և եթե տեսնի, դուցի ոչինչ էլ չմտածի:

— Լավ, եթե լավ մուտք լինի, կհետևեմ: Չգիտեմ, չգիտեմ, կփորձեմ...

— Եթե մուտք լինի, ես էլ կհետևեմ, Հեք: Տեսնելով, որ վրեժխնդրությունը գլուխ չի գալիս, դուցի դա այստեղ այդ փողկերը տանելու:

— Այդպես է, Թոմ, ճիշտ է: Կհետևեմ, աղնիվ խոսք:

— Այ, արդեն լավ է: Երբեք մի՛ թուլացիր, Հեք: Ինքս էլ չեմ թուլանա:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

Այդ գիշեր թումն ու Հեքը պատրաստ էին իրենց նոր արկածին: Նրանք հյուրանոցի շուրջը թափառում էին մինչև ժամը ինը, մեկը՝ հեռավից, ճանապարհը դիտելով, մյուսը՝ հյուրանոցի դռանը: Ոչ ոք փողոց չմտավ կամ դուրս չեկավ: Իսպանացու նմանվող ոչ մի մարդ հյուրանոց չմտավ կամ այնտեղից դուրս չեկավ: Գիշերը խոստանում էր պարզ լինել: Թումը տուն գնաց, պայմանավորվելով, որ եթե բավականաչափ մութ լինի, Հեքը թող դա, մլավի: Ինքը դուրս կծլկի և կփորձի բանալիները: Բայց գիշերը պարզկա էր, և ժամը մոտ տասներկուսին Հեքը, իր դիտակետը թողնելով, գնաց քնելու շաքարի դատարկ տակաոփ մեջ:

Տղաները երեքշաբթի օրն էլ բախտ չունեցան, ինչպես և չորեքշաբթի օրը: Բայց հինգշաբթի օրը ավելի խոստումնալից էր: Հարմար ժամին թումը դուրս սահեց, վերցնելով մորաքոչոք թիթեղյա հին լապտերը և մի մեծ սրբիչ, որ լույսը քողարկի: Նա լապտերը պահեց Հեքի շաքարի տակաոտում և անցավ պահակության: Կեսգիշերից մի ժամ հետո հյուրանոցը փակվեց, և լույսերը հանդան (չբջակացքում ուրիշ լույս չկար): Ոչ մի իսպանացի չերևաց: Ոչ ոք ներս չմտավ, ոչ էլ դուրս եկավ փողոցից: Ամեն ինչ հարմար էր: Մութը տիրում էր, կատարյալ լուսթյունը խզվում էր միայն հեռավոր ամսրոպի հատուկենտ ճայթյուններից:

Թումը վերցրեց լապտերը, տակաոփ մեջ վառեց, փաթաթեց սրբիչով, և երկու արկածախնդիրները մթության մեջ շարժվեցին դեպի հյուրանոց: Հեքը մնաց հսկելու, իսկ Թումը շոշափելով մտավ նրբանցքը: Հետո մտահոգ սպասման երկարատև ժամանակ անցավ, որ Հեքին ճնշեց սարի նման: Նա ուզում էր տեսնել լապտերի լույսը: Դա տղային կվախեցներ, բայց նա գոնե կիմանար, որ Թումը դեռևս ողջ է:

Թվում էր, թե Թումի գնալուց հետո ժամեր են անցել: Հավանարար ուշադնաց է եղել: Գուցե մեռել է, գուցե սարսափից և հուզմունքից սիրտը պայթել է: Անհանգիստ վիճակում ծերր զլխի ընկավ, որ դանդաղ մոտենում է փողոցին, ամեն բանից վախենալով և ամեն վայրկյան սպասելով օրհասական աղետի: Վախից շունչը կտրվում էր, սիրտն այն-

պես էր թարտում, որ քիչ էր մնում պայթի: Հանկարծ լույսի մի շող երևաց, և Թոմը սլացալ նրա կողքով:

— Փախիր,— ասաց նա,— փախիր և կյանքդ ազատիր:

Կրկնելու կարիք չկար. մի անգամը բավական էր: Հեքն արդեն վազում էր ժամում երեսդուն կամ քառասուն մղոն արագությամբ: Մինչև քաղաքի մյուս ծայրում գտնվող լքված սպանդանոցը տղաները կանգ չառան: Հազիվ էին տեղ հասել, երբ պայթեց ամպրոտը, և անձրև տեղացւ: Երբ Թոմի շունչը տեղը եկավ, ասաց.

— Հեք, սարսափելի էր: Բանալիներից երկուսը փորձեցի, ինչքան կարող էի կամաց, բայց դրանք այնպիսի ձայներ էին հանում, որ լեղիս ճաքում էր: Այնպես էի վախենում: Դրանք կողպեքի մեջ չէին պտտվում: Հետո, առանց իմանալու, թե ինչ եմ անում, ես բռնակը հրեցի, և դուռը բացվեց: Չէր կողպված: Ես ներս թռա, սրբիչը հանեցի և, ով մեծ Կեսարի ոգի...

— Ի՞նչ, ի՞նչ տեսար, Թոմ:

— Հեք, քիչ մնաց Հեղկացի Ջոյի ձեռքը տրորելի:

— Չէ՛:

— Այո: Նա այնտեղ պսոկած էր, հատակին, խոր քնած, աչքին այդ հին լաթի կտորը և ձեռքերը տարածած:

— Աստված իմ, ի՞նչ արեցիր: Նա արթնացա՞վ:

— Ոչ, շարժվեց էլ: Կարծեմ հարբած էր: Ես անմիջապես վերցրի սրբիչը և դուրս թռա:

— Ես սրբիչի մասին չէի մտածի, վատահ եմ:

— Իսկ ես կմտածեի: Մորաբույրս հոգիս կհաներ, եթե կորցնեի:

— Լսիր, Թոմ, այդ սնդուկը տեսա՞ր:

— Հեք, ես շուրջս նայելու ժամանակ շունեցա: Տուփը չըտեսա, խաշն էլ չտեսա: Ես բան չտեսա, բացի Հեղկացի Ջոյի կողքի շշից և թիթեղե բաժակից: Հա, տեսա նաև երկու տակառ և բազմաթիվ շշեր: Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչ է կատարվում այդ ոգիների սենյակում:

— Ի՞նչ:

— Դա վիսկիով է լցված: Գուցե բոլոր հյուրանոցներում այդպիսի ոգիներով լի՞բը սենյակներ կան, հը՞, Հեք:

— Գուցե այդպես է: Ո՞ւմ մտքով կանցնեիր: Ի՞նչ լսիր, Թոմ, հիմա ամենահարմար ժամանակն է այդ տուփը վերցնելու, քանի շնորհաբեր Ջոն հարբած է:

— Ճիշտ է, դե, գնա փորձիր:

Հեքը սարսուռաց.

— Չէ, ես չեմ կարող:

— Ոչ էլ ես, Հեք: Շնորհաբեր Ջոնի կողքին միայն մի շիշ կար և դա բավական չէ: Եթե երեք լինեին, նա բավական խմած կլինեիր, և ես կանեի:

Երկարատև, մտահոգ լուսթյուն տիրեց, հետո Թոմն ասաց.

— Լսիր, Հեք, արի այլևս չփորձենք, մինչև չիմանանք, որ շնորհաբեր Ջոն այնտեղ չէ: Շատ սարսուփելի է: Եթե ամեն գիշեր հսկենք, վստահ եմ, որ դա մեզ կհաջողվի: Այդ ժամանակ տուփը կթողնենք կայծակից էլ արագ:

— Լավ, համաձայն եմ: Ամբողջ գիշերը կհսկեմ և ամեն գիշեր կհսկեմ, եթե դործի մնացած մասը դու անես:

— Շատ լավ, կանեմ: Սրանից հետո քո անելիքը կլինի վազել Հուլյոր փողոցը և մլավել: Եթե քնած լինեմ, լուսամուտին խճաքարեր նետիր, որ արթնանամ:

— Համաձայն եմ, այդպես էլ կանեմ:

— Իսկ հիմա, Հեք, ամպրոպն անցավ, և ես տուն պիտի գնամ: Մի քանի ժամից արշալույսը կբացվի: Դու ետ գնա և հսկիր, լավ:

— Ասացի կանեմ, Թոմ, ուրեմն՝ կանեմ: Ամբողջ մի տարի այս հյուրանոցից գիշերները չեմ հեռանա: Ամբողջ ցերեկը կքնեմ և ամբողջ գիշեր կհսկեմ:

— Շատ լավ: Իսկ որտե՞ղ կքնես:

— Բեն Ռոջերսի խոտանոցում: Նա ինձ թույլ է տալիս: Խույր անում է նրա հոր նեղրը՝ քեռի Ջեկը: Քեռի Ջեկի համար ջուր եմ կրում, երբ նա ուզում է, և ամեն անգամ ուտելու մի փորր բան է տալիս, եթե ունենում է: Շատ բարի նեղր է. Թոմ: Նա ինձ սիրում է, որովհետև ես երբեք այնպես չեմ պահում ինձ, թե իբր նրանից բարձր եմ: Մի քանի անգամ հստեղ եմ նրա հետ և միասին կերել: Բայց կարիք չկա, որ պա պատմես: Երբ մարդ սարսուփելի սոված է, անում է այնպիսի բաներ, որ չէր ուզենա անել, իբրև ամոթալի արարք:

— Լավ, քանի որ ցերեկները քո կարիքը չեմ ղգալու, Հեքւ կթողնեմ, որ քնես: Չեմ գա քեզ խանդարելու: Գիշերնները, եթե որեէ բան նկատես, պարզապես արի և մլափի:

ԳՂՈՒՔ ԵՐԵՄՈՒՆԵՐՈՐԴ

Ուրբաթ առաւոտյան Թոմի լսած առաջին բանը ուրախ լսւր էր, նախորդ գիշեր քաղաք էր վերադարձել դատավոր Թեղբրի ընտանիքը: Մի պահ երկրորդական կարևորութուն ստացան և՛ Հնդկացի Ջոն, և՛ գանձը:

Բերին առաջին տեղը գրավեց տղայի հետաքրքրութեան մեջ: Նա տեսավ աղջկան, և նրանք հրաշալի ժամանակ անցկացրին՝ խաղալով իրենց դասարանցիներին մի մեծ խմբի հետ: Օրն ավարտվեց և պսակվեց շատ գոհացուցիչ ձևով: Բերին համոզեց մորը, որ հաջորդ օրվա համար նշանակի երկար ժամանակ խոստացված և հետաձգված պիկնիկը: Մայրը համաձայնեց: Աղջկա ուրախութունն անասման էր, իսկ Թոմը չափավորներից չէր: Մինչև մայրամուտ հրավերներ ուղարկվեցին: Քաղաքի պատանիներն անմիջապես ընկան պարաստութեան մոլուցքի մեջ և սկսեցին նախապես հրձվել: Թոմը հուզմունքից արթուն մնաց բավական ժամանակ: Հույս ուներ, թե կլսի Հերի մլավոցը և իր դանձով հաջորդ օրը կգարմացնի Բերին ու պիկնիկի մյուս մասնակիցներին, բայց հիասթափվեց: Այդ գիշեր ոչ մի նշան չեղավ:

Առավոտը եկավ և ժամը տասի կամ տասնմեկի մոտերքը ազմկալից ու թռվոուն մի խումբ հավարվեց դատավոր Թեղբրի տան առաջ: Ամեն ինչ պատրաստ էր ճանապարհ ընկնելու: Մոլորութուն չէ, որ մեծահասակներն իրենց ներկայութեամբ խանգարեն պիկնիկավորներին: Երեխաները ապահով էին համարվում տասնութամյա մի քանի աղջիկների և մի քանի քսանամյա երիտասարդների հակողութեան տակ: Վարձված էր «Ջին» գետանցանավը: Շուտով ուրախ խումբը զլխավոր փողոցը լցրեց ուտելիքների գամբլուզներով: Միզը հիվանդ էր և հարկադրված էր այդ հաճույքից զրկվել: Մերին մնաց տանը նրան դրազեցնելու համար: Վերջին բանը, որ միսիս Թեղբրը սասց Բերին, այս էր:

— Դու շատ ուշ կվերադառնաս: Գուցե ավելի լավ կլինի գիշերը մնաս նավահանգստի մոտ ապրող աղջիկներից մեկի տանը:

— Այդ դեպքում ես Սյուզի Հարպըրի հետ կմնամ, մայրիկ:

— Շատ լավ: Քեզ լավ պահիր և որևէ անախորժության առիթ չտաս:

Երբ նրանք դուրս եկան, Թոմն ասաց Բեքին.

— Կսիր, ահա թե ինչ կանենք: Զո Հարպըրենց գնալու փոխարեն մենք բլուր կբարձրանանք և կմնանք այրի Դուգլասի մոտ: Նա պաղպաղակ կունենա: Նա համարյա միշտ պաղպաղակ է ունենում և այնքա՛ն շատ: Նա կուրախանա, եթե մեզ տեսնի:

— Օ՛հ, դա հրաշալի բան կլինի:

Հետո Բեքին մի բուրբ մտածեց ու ասաց.

— Բայց ի՞նչ կասի մայրիկը:

— Որտեղի՞ց պիտի իմանա:

Աղջիկը մտածեց և ասաց անվճռականորեն.

— Ինձ թվում է, որ սխալ է, բայց...

— Բայց ոչինչ: Քո մայրիկը չի իմանա: Կամ ի՞նչ վատ բան կա դրա մեջ: Նրա ամբողջ ուզածն այն է, որ դու ապահով լինես և գրազ կգամ, որ ինքը քեզ կասեր այդտեղ գնալ, եթե մտքովն անցնեք: Վստահ եմ, որ կասեր:

Այրի Դուգլասի հրաշալի հյուրասիրությունը գայթակրողիչ էր: Դա և Թոմի հավաստիացումները գործը տեսան: Որոշովեց գիշերային ծրագրի մասին ոչ ոքի ոչինչ չասել:

Հանկարծ Թոմը հիշեց, որ գուցե այդ գիշեր Հեքը կգա և սպասանջան կտա: Այդ մտքից նրա ոգևորության մի մասր ստոեց: Բայց նա չէր կարողանում հրաժարվել այրի Դուգլասի տանն սպասող ուրախությունից: Եվ ինչո՞ւ պետք է հրաժարվիր, տրամաբանեց նա. անցյալ գիշեր ազդանշան չկալով, ինչո՞ւ պիտի այս գիշեր լիներ: Գիշերային ապահով ուրախությունը մի կողմ մղեց անապահով զանձը և, ինչպես բևեռակոն է Լեռնապատի համար, նա որոշեց տեղի առաջ ավելի ուժով պանկությունը, իրեն թուշլ չտալ գահնձի մասին այդ օրը մի անպամ էլ մտածել:

Մտաքից երեք մղոն ներքև գետանցանալը կանգ առալ

ծառաշատ մի հովտի գիմաց և կապվեց ափից: Խուճը ցամաք դուրս եկավ, ու շուտով անտառի թավուտներում, ժայռերի վրա լսվեցին ծիծաղ ու աղմուկ: Տաքանալու և հոգնելու բոլոր ձևերը գործի դրվեցին: Շուտով շարանճիները ճամբար վերադարձան բացված ախորժակով և վրա պրծան համեղ ուտելիքներին: Խնջույթից հետո հանգստացան սաղարթախիտ կաղնու ստվերում և զրուցեցին: Հանկարծ մեկը բղավեց.

— Ո՞վ է ուզում քարանձավ գնալ:

Բոլորն էլ ուզում էին: Կապոցներով մոմեր մեջտեղ հանվեցին և անմիջապես մազլցեցին բլուրն ի վեր: Քարանձավի մուտքը բլրի գաղաթին էր. Ա տառի նման մի բացվածք: Նրա հսկա կաղնե դուռը բաց էր: Ներսում կար մի փոքր սենյակ, սառցարանի նման ցուրտ և բնության կողմից պատած պինդ կրով, որը թաց էր, կարծես ծածկված էր սառը քրտինքով: Այնքա՞ն խորհրդավոր էր ու սոմանտիկ՝ թանձր խավարում կանգնած դիտել ներքևում տարածվող կանաչ հովիտը, որը սրայում էր արևի տակ: Բայց առաջին տպավորությունը շուտով թուլացավ, և նորից աղմկարարությունն սկսվեց: Հենց որ մեկը մոմ էր վառում, բոլորը հարձակվում էին վրան: Ինչքան էլ սա պայքարեր ու պաշտպանվեր, մոմը շուտով մի կողմ էր շարժվում կամ հանդցվում: Հետո բոլորը ծիծաղում էին և հարձակվում մի ուրիշի վրա: Բայց ամեն ինչ վախճան ունի: Շուտով գլխավոր անցքի գահավեժ թեքվածքով ցած իջան: Մոմերի առկայծող լույսի տակ երևում էին քարե պատերը մինչև իրենց միացման տեղը՝ վաթսուն ոտնաչափ բարձր: Գլխավոր անցքը ութ-տասը ոտնաչափից ավելի լայն չէր: Յուրաքանչյուր քայլափոխին երկու կողմից դրան միանում էին ուրիշ, ավելի նեղ անցքեր: Մակ-Գուգալի քարանձավը իրար միացած միջանցքների մի լաբիրինթոս էր, որոնք ոչ մի կերպ չունեին:

Ասում էին, թի կարելի է օրեր ու դիշերներ թափառել այդ անցքերի ու ճեղքերի խճճվածքում և քարանձավի վերջը շղթանել: Կարելի էր գնալ ու գնալ, իջնել ու իջնել դեպի դետնի խորքը և միշտ միևնույնն էր, լաբիրինթոս լաբիրինթոսի տակ և դրանցից ոչ մեկն էլ վերջ չուներ: Ոչ մի մարդ «չգիտեր» քարանձավը: Դա անհնար բան էր: Երիտասարդներից շատերը դրա մի մասը միայն գիտեին, և ընդունված չէր այդ

Տայտնի մասից ավելի հեռու խիզախել: Թո՛ւմ Սոյերն էլ քա-
րանձավին ծանոթ էր այնքան, որքան ուրիշները. խումբը
շարժվեց զլիսավոր անցքով մոտ երեք քառորդ մղոն, հետո
խմբերի ու զույգերի բաժանվեցին և գնացին դեպի կողքի
անցքերը: Մտադիր էին անցնել նեղ միջանցքներով ու իրար
հանկարծակիի բերել այն տեղում, որտեղ միջանցքները նո-
րից միանում են: Առանց «ճանաչված» մասից հեռանալու,
խմբերը կես ժամ կարող էին իրար շհանդիպել:

Կամաց-կամաց, խումբը խմբի ետևից դուրս եկան քարան-
ձավից՝ ուրախ, ոտից զլուխ մոմի կաթիլներով ծածկված, կա-
վաշաղախ և ամբողջովին հիացած անցկացրած օրվա հաջո-
ղությամբ: Նրանք զարմանում էին, որ շեն զգացել, թե ինչ-
պես է անցել ժամանակը: Արդեն երևկո էր: Կես ժամ էր, ինչ
նավից զանգահարում էին: Այնուամենայնիվ, օրվա արկածն
այս ձևով ավարտելը ողորմանով էր, հետևաբար՝ զոհացուցիչ:
Երբ շոգենավը իր ուրախ բեռով ճանապարհ ընկավ, ոչ ոք,
բացի նավապետից, վեց պենսի շափ իսկ չէր ափսոսում
կորցրած ժամանակը:

Հեքն արդեն իր պահակակետի վրա էր, երբ շոգենավի
լույսերը իր կողքով անցան: Նա ոչ մի ձայն չլսեց, որովհե-
տև երիտասարդները լուռ էին այնպես, ինչպես սովորաբար
լուռ են սաստիկ հոգնած մարդիկ: Նա զարմացավ, թե ինչ
նամ էր այդ, որ նավահանգստում շկանգնեց, հետո շուտով
մոռացավ և ուշադրությունը կենտրոնացրեց իր գործի
վրա: Գիշերն ամպոտ ու մութ էր: Ժամը տասն էր: Սայլերի
աղմուկը դադարեց, ցրված լույսերն սկսեցին հանգչել, ոտ-
նաձայները լռեցին, և փոքր քաղաքն սկսեց ննջել, փորրիկ պա-
հուկին թողնելով մենակ՝ լուսնյան ու ողիների հետ: Ժամը
տասնմեկը հնչեց, և հյուրանոցի լույսը հանգավ: Այժմ ամեն
ակի մութ էր: Հեքն սպասեց, ինչպես իրեն թվաց, շատ երկար,
բայց ոչինչ չպատահեց: Նրա հավատը թուլանում էր: Որե՛է
իմաստ ունե՞ր այս բոլորը, որե՛է նպատակ: Ինչո՞ւ չլքել ու ետ
լվհալ:

Մի ձայն հասավ ականջին: Տղան լսողությունը լարեց:
Փողոցի դուռը կամացուկ փակվեց: Հեքն իսկույն նետվեց մի
...կյուն: Հաջորդ վայրկյանին նրա կողքով վաղեցին երկու
...ի և թվաց, թե մեկը ինչ-որ բան ունի թեի տակ: Պետք է

որ տուփը լիներ: Ուրեմն՝ գանձը տեղափոխում են: Ինչո՞ւ այժմ Քոմիին կանչել: Հիմարություն կլիներ. մարդիկ աուսի հետ կանհետանային, և այլևս չէին գտնի: Ոչ, նա պոկ շի գա դրանցից և կհետևի: Վատա՞ է, որ խավարում կարող է լինել ապահով, մնալ աննկատելի: Այսպես ինքն իր հետ խոսելով, Հեքը դուրս եկավ և մարդկանց հետևից սահեց կատվի նման, բորիկ ոտքերով, նրանց այնքան առաջ թողնելով, որ չնկատվի:

Նրևք տնաշարք անցան դետեզրյա փողոցով, հետո դարձան դեպի ձախ և մտան հանդիպակաց փողոցը: Ուղիղ առաջ հնացին, մինչև հասան Քարտիֆ բլուրը տանող ուղին և այդ ճանապարհը բռնեցին: Նրանք անցան ծեր ունեցու տան մոտով և բլրի կես ճանապարհին, առանց վարանելու, շարունակեցին վերև մագլցել: «Լավ է,— մտածեց Հեքը,— հին քարանձավում են թողնելու»: Բայց նրանք բարձրացան դեպի գագաթը: Շրջվեցին դեպի նեղ արահետը, անցան խիտ թփուտի միջով և հանկարծ խավարում չբացան: Հեքը քայլերն արագացրեց և տարածութունը կրճատեց, որովհետև նրանք այլևս իրեն տեսնել չէին կարող: Որոշ ժամանակ նա համարյա վազում էր, հետո դանդաղեցրեց քայլերը, վախենալով, որ շատ արագ է քայլում: Մի փոքր էլ առաջացավ, հետո բոլորովին կանգնեց: Ականջ դրեց: Ոչ մի ձայն: Լսում էր միայն իր սրտի դարկերը: Բլրից լավեց բուխ կոխնը: Չարագուշակ նշան: Բայց քայլերի ոչ մի ձայն: Նրկինք, մի՞թե ամեն ինչ կորած է: Նա ուզում էր հեռանալ, երբ մի մարդ կոկորդը մարբեց իրենից շորս քայլ հեռու: Հեքի սիրտը կուշ եկավ, բայց նա թուրը կուշ տվեց և մնաց կանգնած: Այնպես էր դողում, կարծես միանգամից բռնվել էր տասը տեսակ տենդով: Իրեն այնքան թույլ էր զգում, որ մտածեց, թե ուր որ է գետին կընկնի: Նա գիտեր, թե որտեղ է կանգնած. ընդամենը հինգ քայլ էր հեռու այրի Դուզլասի կալվածքը շրջափակող ցանկապատի դռնակից: «Շատ լավ,— մտածեց նա,— թող այդտեղ թաղեն, դժվար չի լինի գտնել»:

Այդ ժամանակ մի ցածր ձայն լավեց, մի շատ ցածր ձայն. Հնդկացի Ջոն էր.

— Գրողը տանի, գուցե մոտը մարդ կա. լույսը վառվում է, թեև արդեն ուշ է:

— Ես ոչ մի լույս չեմ տեսնում:

Դա օտարականի ձայնն էր, ողինների տան օտարականի ձայնը: Մահացու մի դող անցավ Հեքի մարմնով. ուրեմն՝ այս էր «վրեժխնդրության» գործը: Նա ուղեց փախչել, բայց հիշեց, որ այրի Դուզլասը միշտ էլ բարի էր եղել իր նկատմամբ: Իսկ այդ մարդիկ գուցե ուզում են սպանել նրան: Հեքը սրտանց կուզենար նախազգուշացնել այրուն, բայց դիտեր, որ չի համարձակվի. կարող էին իրեն բռնել: Այս բոլորը և ավելին աղան մտածեց այն վայրկյանին, երբ օտարականը խոսեց, իսկ Հնդկացի Ջոն պատրաստվեց պատասխանելու: Կերջինս ասաց.

— Մացառը խանգարում է բեզ: Այս կողմից նայիր, տեսնո՞ւմ ես:

— Այո, տեսա. երեւի հյուրեր ունի: Ավելի լավ է այս գործից ձեռ քաշենք:

— Ձեռ քաշե՞լ, երբ այս երկրից ընդմիշտ հեռանում եմ: Ձեռ քաշե՞լ: Գուցե մի ուրիշ առիթ այլևս չունենամ: Քեզ նորից ասում եմ, ինչպես նախօրոք ասել եմ: Նրա փողն ինձ պետք չէ. կարող ես ինքդ վերցնել: Բայց ամուսինը վիրավորել է ինձ, շատ է վիրավորել, հատկապես երբ հաշտարար դատավոր էր: Նա ինձ, որպես շրջմուխիկի, դատել է: Եվ դա դեռ բոլորը չէ: Դա միլիոներորդն էլ չէ: Նա ինձ մտրակել է տվել, մտրակել է տվել բանտի առաջ, հասկանո՞ւմ ես: Բախտ ունեցավ մեռնելու: Բայց ես տեղը կնոջից կհանեմ:

— Օ՛, մի սպանիր նրան, մի սպանիր:

— Սպանե՞լ: Ո՞վ սպանելու մասին խոսեց: Ես կսպանեի ամուսնուն, եթե այստեղ լինեք, բայց ոչ կնոջը: Երբ ուզում ես կնոջից վրեժ լուծել, դու նրան մի սպանի: Ի՞նչ կարիք կա: Դու նրան տղեղացրու. քիթը կտրիր, ականջները:

— Աստված իմ, դու...

— Կարծիքդ քեզ պահիր: Քեզ համար ավելի ապահով կլինի: Ես նրան մահճակալին կկապեմ: Եթե արնաբամ լինի, մի՞թե իմ հանցանքն է: Լաց չեմ լինի, եթե մահանա: Բարեկամս, դու ինձ այս գործում պիտի օգնես, թե չէ էլ ինչո՞ւ Լի րեզ այստեղ բերում: Մեն-մենուկ գուցե չկարողանամ պործր գլուխ բերել: Եթե վախկոտություն անես, կսպանեմ րեզ, հասկանո՞ւմ ես: Եվ եթե ստիպված լինեմ սպանել քեզ:

կսպանեմ նաև նրան, հետո ոչ ոք չի իմանա, թե ո՞վ է այս
գործն արել:

— Լավ, եթե պետք է, շուտ անենք, ինչքան արագ, այն-
քան լավ: Ես ամբողջ մարմնով դողում եմ:

— Հիմա՞, երբ մտար հյուրեր կան: Լսիր, ես կասկածոտ
եմ դառնում, հասկանո՞ւմ ես Ոչ, կսպասենք, մինչև լույսերը
հանդչեն: Շտապելու կարիք չկա:

Հեքր դգաց, որ լուսթյուն է տիրելու: Իսկ դա ավելի սար-
սուփելի էր, քան մարդասպանական որևէ դրույց: Նա շունչը
պահեց և մի քայլ ետ դնաց: Ոտքն զգուշությամբ գետին
դրեց և ետ քայլեց, նախապես շոշափելով այն տեղը, ուր պետք
է կանգնելու: Նույն զգուշությամբ նա մյուս ոտքը ետ քաշեց,
մի քայլ էլ ետ գնաց, հետո մի ուրիշը, մինչև ոտքի տակ մի
ճյուղ շարդվեց: Տղայի շունչը կտրվեց, և նա ականջ դրեց:
Ոչ մի ձայն: Կատարյալ լուսթյուն էր տիրում: Անշափ ուրա-
խացավ: Այժմ, զգուշորեն, նավի նման, շուտ եկավ թփուտ-
ների արանքում և արագացրեց քայլերը: Երբ քարհանք հա-
սավ, իրեն ապահով զգաց և սկսեց վազել որքան ոտքերում
ուժ ուներ: Ներքև շտապեց՝ մինչև հասավ ունխեցու տունը:
Դուրս բխեց: Լուսամուտից դուրս ցցվեցին ձերուներ և նրա
երկու հաղթանդամ տղաների գլուխները:

— Այդ ի՞նչ ազմուկ է: Ո՞վ է դուրս ձեռում: Ի՞նչ ևս
ուզում:

— Ինձ շուտ ներս թողեք: Ես ամեն ինչ կպատմեմ:

— Իսկ ո՞վ ես դու:

— Հեքրերի Ֆիննը, շուտ, ինձ ներս թողեք:

— Հեքրերի Ֆինն, իսկապես: Դա այնպիսի մի անուն չէ,
որ դուները բացվեն նրա ատոց, բայց թե ներս թողնենք,
տղաներ: Տեսնենք ի՞նչ է պատահել:

— Խնդրում եմ ոչ ոքի չհայտնեք իմ ասելիքը:— Սբանք
եղան Հեքրի առաջին խոսքերը, երբ ներս մտավ:— Խնդրում
եմ շասել, ինձ կսպանեն, բայց այրին ինձ հետ լավ է վար-
վել և ես ուզում եմ ասել: Կասեմ, եթե խոստանաք, որ երբեք
չեք ասի, թե ես եմ ասել:

— Ազնիվ խոսք, ասելու բան ունի, թե չէ այդպես չէր
վարվի,— բացականչեց ձերուկը:— Ասա, և մեզնից ոչ ոք ու-
րիշի չի ասի, մանչուկ:

Երեք ըստ ճշտութեան ծերունիքն և նրա որդիները զինված բարձրանում էին բլուրն ի վեր, ոտքի մատների վրա մտնում թփուտները՝ զենքները ձեռքներին պատրաստ: Հեքը ավելի հեռու շուղեկցեց նրանց: Թաքնվեց մի մեծ քարի ետև և ակառջները սրեց: Տիրեց երկար, ճնշող լուսթյուն, հետո հանկարծ լավեցին կրակոցներ և մի ճիչ: Հեքը ավելի մանրամասնությունների չսպասեց: Նա վեր թռավ և բլուրն ի վար արագ վազեց, այնքան արագ, ինչքան ուժ ունեւր:

ՉԼՈՒՆ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

Կիրակի օրը, լուսը բացվելուն պես Հեքը բլուրն ի վեր բարձրացավ և կամացուկ բախեց ծեր ունխեցու դուռը: Տնեցիները քնած էին, բայց այնպիսի քնով, որը մազից էր կախված գիշերվա հուզումնալից անցուդարձի պատճառով: Լուսամուտից մի ձայն լսվեց.

— Ո՞վ է:

Հեքը վախեցած ձայնով, կամացուկ պատասխանեց.

— Խնդրեմ, ներս թողեք ինձ. Հեք Ֆինն եմ:

— Դա մի անուն է, որ կարող է այս դուռը բացել գիշեր թի ցերեկ: Բարի գալուստ, տղա:

Այս խոսքերը տարօրինակ հնչեցին թափառաշրջիկ տղայի ականջին: Ավելի դուրեկան խոսք նա իր կյանքում զեռևս չէր լսել: Չէր հիշում, որ նման խոսքեր մինչ այդ իր հասցեին գործածված լինեին:

Դուռն արագ բացվեց, և ներս մտավ: Հեքին մի աթոռ տվեցին, և ծեր մարդն ու նրա բարձրահասակ տղաները շտապ հագնվեցին:

— Այժմ, տղաս, կարծում եմ, որ դու լավ բողջած կլինես: Նախաճաշը շուտով պատրաստ կլինի: Իսկ երբ արևը բարձրանա, մենք տաք ճաշ կունենանք, ապահով եղիր: Ես ու իմ տղաները կարծում էինք, թե դու կվերադառնաս և գիրքը այստեղ կմնաս:

— Ես սարսափելի վախեցած էի,— ասաց Հեքը,— և փութու: Ես վազեցի, երբ սկսեցին կրակել: Կանգ չառա, մինչև ականջս երեք մղոն տարածություն: Եկա, որովհետև ուղեցի

լմանալ, թե ինչ եղաւ: Արշալույսից առաջ եկա, որովհետեւ չէի ուզում հանդիպել այդ սատանաներին, նույնիսկ Լթի մահացած լինելին:

— Այո, խեղճ երեխա, երևում է, որ ծանր դիշեր ես անցկացրել: Այստեղ մի անկողին կա թեւ համար, որտեղ կարող ես քնել նախաճաշից հետո: Ինչ վերաբերում է նրանց, ոչ, նրանք շին մահացել, և դրա համար մենք բավական ցափում ենք: Քո նկարագրածով մենք լավ գիտեինք, թե որտեղ կարող ենք բռնել նրանց: Զգուշութեամբ մտեցանք: Նրանցից հետո Լինր տասնհինգ ստանալափ միայն: Բիփուտի միջով անցնող արահետը շատ մութն էր: Հենց այդ պահին զգացի, որ պետք է փոշտամ: Լեմնալատ բախտն էր դա: Ես փորձեցի ինձ զբսպել, բայց անօգուտ. փոշտոցը գալու վրա էր և եկաւ: Հրացանը ձեռքիս եւ առջևում էի, և երբ փոշտոցը սկսվեց, այդ սրիկաները դուրս թռան ու ճանապարհով փախան: Ես բղավեցի. «Կրակեցեք, տղաներ»: Կրակեցի այն տեղի վրա, որտեղից նրանց ձայնը լսվեց: Նույնն արեցին տղաները: Բայց սրիկաները փախան, և մենք վաղեցիներ նրանց ետևից մինչև անտառ: Կարծում եմ, որ վրիպեցինք: Երբեմն նրանք էլ Լին կրակում փախչելիս, բայց զնդակները սուլելով անցնում էին մեր կողքով և մեզ ոչ մի վնաս չպատճառեցին: Երբ ոտնաձայները լսեցին, հետապնդումը դադարեցրինք, իջանք ներքև, ոստիկաններին ոտքի հանեցինք: Նրանք մի խումբ ուղարկեցին գետափը հսկելու: Լույսը բացվելուն պես շերիֆն ու նրա խմբերը զնալու են անտառները խուզարկելու: Իմ տղաները նրանց հետ են լինելու: Ես կցանկանայի այդ աղվեսների նկարագրութունն ունենալ: Դա շատ կօգներ, բայց կարծում եմ, որ մթան մեջ նրանց զնալը տեսած չես լինի, հա՞:

— Զէ, ես նրանց քողարում տեսա և հետևեցի:

— Հրաշալի է: Նկարագրիր, նկարագրիր, տղաս:

— Մեկը խուլ ու համր ծեր իսպանացի է, որ այս կողմերում մի քանի անգամ եղել է, մյուսը՝ պատառոտված շորերով, տգեղ...

— Այդքանը բավական է, տղաս, ճանաչեցի դրանց: Այրու տան հետի անառում մի անգամ հանդիպեցի, և նրանք մի

կողմի վրա փախան: Այժմ գնացեք, տղաներ, և այս բոլորը հայտնեցեք շերիֆին: Կնախաճաշեք վաղը:

Ուելսեցու տղաներն անմիջապես մեկնեցին: Երբ նրանք սենյակից դուրս էին գալիս, Հեքը վեր թռավ և բացականչեց.

— Խնդրում եմ, ոչ ոքի չասեք, որ ես եմ նրանց մատնել, խնդրում եմ:

— Շատ լավ, եթե այդպես ես ուզում: Հեք, բայց դու բո արածի պատիվը պետք է ստանաս:

— Օ՛, ոչ, ոչ, խնդրում եմ, մի ասեք:

Երիտասարդների գնալուց հետո ծեր ուելսեցին ասաց.

— Նրանք չեն ասի, ես էլ չեմ ասի: Բայց ինչո՞ւ չես ուզում, որ իմացվի:

Հեքը ավելին չբացատրեց: Նա ասաց միայն, որ դրանցից մեկի մասին ինքն արդեն շատ բան գիտե: Թող այդ մարդը չիմանա, որ ինքը նրա մասին բան գիտե: Նա դրա համար անպայման կսպանի իրեն:

Երբ մարդը մի անգամ էլ խոստացավ գաղտնապահ լինել և ասաց.

— Ինչպե՞ս եղավ, որ դու այս մարդկանց հետևեցիր: Նրանք կասկածելի տե՞սք ունեին:

Հեքը լռեց, մինչև բավական զգույշ մի պատասխան ձևակերպեց: Հետո ասաց.

— Գիտե՞ք ինչ. ես թափառաշրջիկ եմ, դոնե բոլորն այդպես են ասում, և ես առարկել չեմ կարող: Շատ անգամ բուն ու դադար մոռացած՝ մտածում եմ, թե ինչ հնարքով դուրս գամ այդ վիճակից ու նոր ձևով ապրեմ: Այդպես էլ անցյալ գիշեր: Քնել չէի կարողանում: Կեսգիշեր էր: Փողոցներում թափառում էի, երբ հասա հյուրանոցի մոտ գտնվող աղյուսի պահեստին, հենվեցի պատին նորից մտածելու համար: Ծիշտ այդ պահին իմ կողքով անցան երկու մարդ՝ թևների տակ մի բուն, որն ինձ թվաց զողացված: Մեկը ծխում էր, իսկ մյուսը կրակ ուղեց: Հենց իմ կողքին կանգնեցին: Միգարեթները լուսավորեցին նրանց դեմքերը, և ես տեսա, որ հաղթանգամը խուլ ու համր իսպանացին էր. ճանաչեցի ճերմակ մորուքից և աչքի վիրակապից: Իսկ մյուսը կեղտոտ, զզգզված տեսքով մի սատանա էր:

— Սիգարեթները լույսի տակ կարող էիր ցնցոտիները տեսնել— Այս հարցը մի բույս է Լեթին շփոթեցրեց: Նա հետո ասաց.

— Ճիշտն ասած, չգիտեմ, բայց կարծես այդպես թրվաց:

— Հետո նրանք գնացին, իսկ դո՛ւ...

— Նրանց հետևեցի: Այս, այդպես արեցի: Ուղեցի իմանալ, թե ինչ էին անելու Գողերի պես էին իրենց պահում: Հետևեցի մինչև այրու ցանկապատը ու մնացի մթան մեջ: Լսեցի, թե ինչպես ցնցոտիներովը խնդրում էր այրու համար, լսեց իսպանացին երգվում էր, որ այրուն պիտի ազեղացնի, ինչպես ասացի ձեզ, և դուր...

— Ի՛նչ, խուլ ու համր մա՞րդն ասաց այդ բոլորը:

Հերը մի ուրիշ սարսափելի սխալ էր գործել: Նա աշխատում էր, որ ծերունին ամենափոքր կասկածն անգամ չունենար, թե ո՞վ էր իսպանացին, բայց, ըստ երևույթին, լեզուն նրան փորձանքի մեջ գցեց հակառակ իր կամքի: Տղան փորձեց այդ դուրսնուցից դուրս գալ, բայց ծերունու հայացքը նրա մրա էր զամված: Հերը թույլ տվեց սխալ սխալի հտեկից: Հանկարծ ծերունին ասաց.

— Տղաս, ինձնից մի վախեցիր: Քո մադի մեկ թելին իսկ չեմ դիպչի, եթե ամբողջ աշխարհն էլ ինձ տան: Ոչ, ես քեզ կպաշտպանեմ, կպաշտպանեմ: Այդ իսպանացին խուլ ու համր է չէ. արդեն լեզվիցդ թոցրիտ և ուղղել չես կարող: Գաղտնիքն այլևս չես թաքցնի: Այդ իսպանացու մասին մի բան գիտես, բայց չես ուզում հայտնել: Վստահիր ինձ, ես քեզ չեմ մատնի:

Հերը մի սահ նայեց ծերունու ազնիվ աչքերին, հետո անաչ թևավեց ու նրա ականջին շնչացաց.

— Դա իսպանացի չէ. դա Հնդկացի Զոն է:

Ուելսեցին իր աթոռից համարյա վեր թռավ: Քիչ հետո ասաց.

— Այժմ ամեն ինչ պարզ է: Երբ դու պատմեցիր ականջները և թիթը կտրելու մասին, կարծեցի, թե դա քո հնարածն է, որովհետև սպիտակ մարդիկ այդպես վրեժ չեն լուծում: Բայց հնդկացին բոլորովին այլ հարց է:

Նախաճաշի ժամանակ դրույցը շարունակվեց: Մերունին

ասաց, որ քնելուց առաջ ինքն ու տղաները լապտերները վերցրին, ղննեցին ցանկապատն ու նրա մոտակայքը՝ արշան հետքերի համար: Հետք չգտան, բայց գտան մի կապոց...

— Կապոց...

Եթե բռները կայծակ լինեին, չէին կարող ավելի հանկարծակի պոռթկալ Հեքի սպիտակած շրթներից: Այժմ նրա աչքերը նայում էին լայն բացված, և նրա շնչառութունը դադարեց՝ պատասխանի սպասելով: Ունխեցին նույնպես նայում էր նրան երեք վայրկյան, հինգ վայրկյան... տասը... հետո պատասխանեց.

— Գողի գործիքներով... ի՞նչ, ի՞նչ պատահեց քեզ:

Հեքը ետ ընկավ աթոռին և թեթևացած, խորը շունչ քաշեց: Ունխեցին լրջորեն ու հետաքրքրված նայում էր տղային: Հետո ասաց.

— Այո, գողի գործիքներ: Թվում է, թե դա քեզ բավական հանգստացնում է: Բայց ինչո՞ւ: Ի՞նչ էիր սպասում, որ մենք գտնեինք:

Հեքը նեղն էր ընկել: Հարցաքննող աչքերը նրան էին ուղղորդված: Նա ամեն ինչ կտար մի խելացի պատասխանի համար: Ոչ մի բան չգտավ: Հարցաքննող աչքերն ավելի խոր և խորն էին նայում: Հեքը անմիտ պատասխան գտավ. ժամանակ չկար կշռադատելու: Նա արտասանեց թուլորեն.

— Կիրակնօրյա դպրոցի դասադրքեր, գուցե:

Խեղճ Հեքը այնքան ճնշված էր, որ չկարողացավ ժպտալ, բայց ծերունին բարձր և ուրախ ծիծաղեց, որից գլուխը ցնցվեց: Նա խոսքն ավարտեց, ասելով, թե նման ծիծաղը փող արժե, որովհետև պակասեցնում է բժշկին տալիք փողը: Հետո ավելացրեց.

— Խեղճ տղա, գունատ ես և հոգնած, երևի քեզ բոլորովին էլ լավ չես գգում: Զարմանալի չէ, որ դու թույլ ես և հավասարակշռութունդ կորցրած: Բայց ոչինչ, կանցնի: Հանգրստացիր, և քունը քեզ կկազդուրի, հույս ունեմ:

Հեքը գայրացած էր, որ այդքան հիմար գտնվեց և այդպիսի հուզում ապրեց: Կսելով այրու ցանկապատի մոտ եզած խոտակցութունը, նա արդեն հրաժարվել էր այն մտքից, որ յուրանոցից տեղափոխած ծրարը կարող է գանձը լինել: Նա միայն կասկածում էր, որ դա գանձը չէ, բայց բոլոր դեպ-

քերում հաստատ չգիտեր: Դրա համար էլ ծրարը գտնելու փաստն այնքան ցնցող էր, որ տղան չկարողացավ իրեն տիրապետել: Բայց ընդհանրապես նա ուրախ էր. իմացավ, որ դա այն ծրարը չէր, և սիրտն անսահման հանգիստ էր: Այժմ թվում էր, թե ամեն ինչ ճիշտ հունով է ընթանում: Գանձը պետք է Երկրորդ համարում լիներ: Հանցագործները կձերբակալվեին, նույն օրը կբանտարկվեին, և Հեքն ու Քոմը կարող էին տիրանալ, այդ դիշեր իսկ տիրանալ գանձին՝ առանց փորձանքի մեջ ընկնելու կամ վախենալու, թե մեկնումս կարող է խանդարել:

Երբ նախաճաշն ավարտվեց, դուռը բախեցին: Հեքը վեր թռավ, որ թաքնվելու տեղ գտնի. չէր ուզում թեկուզ հեռավոր կապ ունենալ վերջին իրադարձության հետ: Ուելսեցին ներս հրավիրեց մի քանի տիկիներին ու պարոններին: Դրանց հետ էր նաև այրի Դուգլասը: Հեքը տեսավ, որ քաղաքացիները խմբերով մագլցում են բլուրն ի վեր, դեպի ցանկապատը: Ուրեմն լուրը տարածված էր:

Ուելսեցին հյուրերին պատմեց գիշերվա դեպքը: Այլու երախտագիտությունը սահման չկար:

— Այդ մասին ոչ մի բառ մի ասեք, տիկին: Մի ուրիշը կա, որին դուք գուցե ավելի եք պարտական, քան ինձ և իմ տղաներին, բայց նա թույլ չի տալիս իր անունն ասել: Եթե նա չլիներ, մենք երբեք ձեզ մոտ չէինք գա:

Անշուշտ այս խոսքերը այնպիսի հետաքրքրություն առաջացրին, որ հիմնական հարցը համարյա մոռացվեց: Բայց ուելսեցին միայն ավելի հետաքրքրեց իր այցելուներին և նրանց միջոցով ամբողջ քաղաքը, որովհետև հրաժարվող զաղտնիքը հայտնելուց: Երբ ամեն ինչ պատմվեց, այրին ասաց.

— Ես կարդալով քնել էի և ամբողջ այդ աղմուկի ժամանակ քնած էի: Ինչո՞ւ չեկաք և ինձ չարթնացրիք:

— Մտածեցիք, որ չարժե: Այդ մարդիկ ետ եկողը չէին: Նրանց մոտ ոչ մի գործիք չէր մնացել. ի՞նչ միտք ունեք ձեզ արթնացնել ու մահացու կերպով վախեցնել: Իմ երեք նեղր ծառաները ձեր տունը հսկեցին ամբողջ գիշեր: Նրանք նոր են վերադարձել:

Ուրիշ այցելուներ էլ եկան, և հարկ եղավ մի քանի ժամ պատմել ու վերապատմել նույնը:

Արձակուրդի պատճառով կիրականօրյա դպրոցը փակ էր, բայց բոլորը կանուխ եկեղեցի էին եկել, Հուզիչ իրադարձության լուրը տարածվել էր: Լուրեր եկան, որ սրիկաներից ոչ մեկի հետքը դեռևս չի գտնվել: Քարոզն ավարտվելուն պես դատավոր Թեչըրի կինը մոտեցավ միսիս Հարպըրին, երբ սա բազմության հետ դուրս էր գալիս և ասաց.

— Իմ Բեքին ամբողջ գիշեր քնե՞լ է: Երեի սաստիկ հոգնած է:

— Ձեր Բեքի՞ն:

— Այո,— զարմացած հայացքով նայեց կինը:— Անցյալ գիշեր ձեր տանը շմնա՞ց:

— Ոչ:

Միսիս Թեչըրը գունատվեց և նստեց մի նստարանի, երբ մորաքույր Պոլին, տաք-տաք խոսելով իր ընկերուհու հետ, անցավ նրանց մոտով: Մորաքույր Պոլին ասաց.

— Բարի լույս, միսիս Թեչըր, բարի լույս, միսիս Հարպըր: Իմ տղան նորից անհետացել է: Կարծում եմ, որ ձեզնից մեկն ու մեկի տանն է մնացել անցյալ գիշեր, իսկ այժմ վախենում է եկեղեցի գալ, իմանալով, որ իր հետ հաշիվ ունեմ մաքրելու:

Միսիս Թեչըրը թույլ գլուխն օրորեց և ավելի գունատվեց:

— Նա մեր տանը չէր,— ասաց միսիս Հարպըրը, սկսելով անհանգստանալ: Ընդգծված անհանգստություն էր երևաց նաև մորաքույր Պոլիի դեմքին:

— Ձո Հարպըր, այս առավոտ իմ Թոմին տեսե՞լ ես:

— Ոչ, տիկին:

— Վերջին անգամ ե՞րբ տեսար նրան:

Ձոն փորձեց հիշել, բայց վստահ ոչինչ ասել չէր կարող: Սարդիկ դադարեցին եկեղեցում շարժվել: Փսփսոցներ անցան, և բոլորին տիրեց աճող անհանգստությունը: Մտահոգ սկսեցին հարցաքննել երեխաներին և երիտասարդ ուսուցիչներին: Բոլորն ասացին, որ Թոմին ու Բեքիին չէին նկատել գետանցանավի վրա՝ վերադարձին: Մութ էր, ոչ ոքի մտքով չէր անցել հարցնել, թե պակաս մարդիկ կա՞ն: Մի երիտասարդ վախ արտահայտեց, թե նրանք գուցե քարանձավում են: Միսիս Թեչըրը ուշաթափվեց: Մորաքույր Պոլին լաց ելավ՝ ձեռքերը կոտրատելով:

Սարսափը բերնեբերան անցավ, խմբից խումբ, փողոցից փողոց, և հինգ բուսն շանցած եկեղեցու զանգերն սկսեցին ուժեղ հնչել: Ամբողջ քաղաքը ոտքի ելավ: Քարտիֆ բլրի դեպքը անկարևոր դարձավ, գողերը մոռացվեցին, ձիեր թամբվեցին, նավակներ արձակվեցին և գետանցանավի ետևից մարդ ուղարկվեց: Սարսափելի լուրը կես ժամվա հնոթյուն իսկ շուներ, երկու հարյուր մարդ գետի վրայով և ճանապարհներով դեպի քարանձավ դիմեց:

Ամբողջ երկար հետմիջօրեին քաղաքը դատարկ ու մեռած էր: Բաղմաթիվ կանայք այցելեցին մորաքույր Պոլինին, միսիս Թեչըրին և փորձեցին հանգստացնել: Նրանց հետ լաց եղան, և դա ավելի հանգստացուցիչ էր, քան խոսքերը:

Ամբողջ այդ ծանր գիշերը քաղաքը լուրի էր սպասում, բայց երբ վերջապես լույսը բացվեց, միակ լուրը, որ եկավ, այս էր. «Ավելի մոմեր և ուտելիք ուղարկեք»: Միսիս Թեչըրը գլուխը կորցրել էր, ինչպես նաև մորաքույր Պոլին: Դատավոր Թեչըրը քաջայերության և հույսի լուրեր ուղարկեց քարանձավից, բայց դրանք իսկական ուրախություն չպատճառեցին:

Լուսադեմին տուն վերադարձավ ծեր ունեսեցին՝ մոմոտփած, կալի մեջ թաթախված և սաստիկ հոգնած: Մերունին Հեթին գտավ նրան տրամադրված անկողնում՝ տենդի մեջ տանջվելիս: Բոլոր բժիշկները քարանձավում էին, այնպես որ այրի Դուրասը եկավ հիվանդին խնամելու: Նա ասաց, որ կանի ինչ կարող է. Հեթը լավ է, թե վատ կամ սովորական աղա, միևնույն է, աստծուն է պատկանում, իսկ ինչ աստծուն է պատկանում, արհամարհելի չէ: Ունեսեցին ասաց, որ Հեթը լավ հատկություններ ունի, և այրին պատասխանեց.

— Կարող եք ինձ վստահել: Նրա վրա աստծո կնիքը կու հերը սրան չի լքի: Նա երբևր չի լրում: Իր ստեղծած ամեն արարածի միշտ խնայում է:

Կեսօրից առաջ մարդիկ հոգնած խմբերով սկսեցին քաղաք վերադառնալ, բայց ովքեր դեռևս ուժասուղ չէին եղել, շարունակեցին որոնումը: Ստացվող միակ լուրն այն էր, որ քարանձավի ամենահեռավոր մասերը խուզարկում էին, ուր մինչև այդ մարդ չէր այցելել, որ յուրաքանչյուր անկյուն և միջանցք լրիվ նայվում էր և թե այս կամ այն լաբիրինթոսում կրակներ են վառվում, ճիշեր ու կրակոցներ են լսվում, խուլ

տարածվում կամարների տակ: Մի տեղ, ուր տուրիստները սովորաբար չէին հասնում, Բեքիի և Թոմի անուններն էին ծխով գրված գտել և կողքին՝ մոմաճարպի կաթիլներով ծածկված ժապավեն: Միսիս Թեշըրը ճանաչեց ժապավենը և վրան լաց եղավ: Նա ասաց, որ իր աղջկանից մնացած վերջին հիշատակն է դա և ուրիշ ոչ մի հիշատակ չի կարող այդքան թանկ լինել, որովհետև այս ժապավենը ամենավերջում էր բաժանվել ապրող մարմնից, սարսափելի մահվանից առաջ: Ոմանք ասացին, թե քարանձավում, հեռվում, երբեմն լույսի շողեր են երևում և հաղթական բացականչություններով մի խումբ մարդիկ խոչանում էին այդտեղ: Հաջորդում էր սարսափելի հրասթափությունը. երևիսները այնտեղ չէին: Դա պարզապես մի ուրիշ որոնողի լույսն էր:

Երեք օր ու գիշեր անցավ: Զգվում էին սարսափելի ժամերը: Քաղաքն ընկավ անհույս ու բութ վիճակի մեջ: Ոչ ոք որևէ բանի սիրտ չունեի: Պատահաբար կատարված այն հայտնագործումը, թե Ժուժկալների ընկերության հյուրանոց-ճաշարանի տերը թաքուն խմիչք է վաճառում, ոչ ոքի չհուզեց, թեև փաստը շատ նշանակալից էր: Տենդից սթափվելով, Հեքը թույլ ձայնով խոսք բացեց հյուրանոցի մասին և ի վերջո հարցրեց, ավելի վատը սպասելով, թե որևէ բան գտե՞լ են ժուժկալների ճաշարանում իր հիվանդության ընթացքում:

— Այո, — ասաց այրին:

Հեքը անկողնում վեր թռավ վայրի հայացքով:

— Ի՞նչ, ի՞նչ են գտել:

— Խմիչք: Հյուրանոցը փակվեց: Պառկիր, տղաս, ինչպես վախեցրիր ինձ:

— Միայն մի բան ասեք, միայն մի բան, խնդրում եմ: Ի՞նչ Սոյե՞րն է գտել:

Այրին արտասովեց:

— Լոիր, լոիր, տղաս: Ես քեզ նախապես ասացի, որ յոյկտք է խոսես. դու ծանր հիվանդ ես:

Ուրեմն՝ բացի խմիչքից, ոչինչ չէր գտնված: Շատ մեծ ազմուկ կլինեի, եթե ոսկի լինեի: Ուրեմն՝ զանձն ընդմիշտ կուրած էր, ընդմիշտ: Բայց ինչո՞ւ է այրին լաց լինում: Հեռաբարձի է, ինչո՞ւ է լաց լինում:

Այս միտքը պտտվում էր Հեքի գլխում, մինչև տղան հոգեկոծ ու քնեց: Այրին ինքն իրեն ասաց.

— Ահա, քնեց խեղճը! Թո՛մ Սոյերն է գտել: Երանի մեկը
Թո՛մ Սոյերին գտնելու Այժմ շատ բշերն են մնացել, որ բավա-
բար հույս կամ ուժ ունեն որոնումը շարունակելու:

ԳՆՈՒՆ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Այժմ վերադառնանք Թո՛մին ու Բեքիին, տեսնենք, թե ինչ-
պես անցկացրին պիկնիկը: Մյուսների հետ նրանք շրջեցին
մոռյլ միջանցքներում, դիտելով բարանձավի ծանոթ հրաշա-
լիքները, որոնք բավական զարմանալի անունների ունեին՝
«Հյուրասենյակ», «Տաճար», «Ալյադինի պալատ» և այլն: Այս
սկսեցին պահմտոցի խաղալ, և հետզհետե Թո՛մն ու Բեքին
այնքան տարվեցին, այնքան եռանդով ու ոգևորութ՜յամբ խա-
ղացին, մինչև հոգնեցին: Մո՛մերը բարձր բռնած, քայլեցին
ծուռուժուռ միջանցքով՝ կարդալով մո՛մի ծխով ժայռոտ
պատերին գրոտած խառնիխուռն անունները, թվականները,
հասցեները և իմաստալից նշանները: Զրուցելով առաջ
գնացին, չնկատելով, որ հասել են մի տեղ, ուր պատերի
վրա մակագրութ՜յուններ չկան: Նրանք իրենց անունները
մո՛մի ծխով դրեցին պատից կախված մի ժայռի վրա և շա-
րունակեցին առաջ գնալ: Հասան մի տեղ, ուր մի փոքր վտակ
ժայռից դուրս գալով և իր հետ տիզմ բերելով՝ դարերի ըն-
թացքում փայլուն քարից կաղմել էր նիստարայի պես մի բան:
Թո՛մը խցկվեց ջրվեժի հակի նեղ անցքը, որսյիսդի իր մո-
մով լուսավորի այն և ուրախացնի Բեքիին: Նա տեսավ, որ
ջրվեժը ծածկում է երկու բարե պատերի նեղ ճեղքում խրված
մի բնական, դիք սանդուղի: Հանկարծ նրանց տիրեց գյուտ
անելու սնափառութ՜յունը, և նրանք քարի վրա ծխով նշան ու-
նելուց հետո գնացին որոնումների կատարելու: Քայլեցին պա-
տահական ճանապարհով, խորացան քարոնձավի դաղտնի
ուղիներում, մի ուրիշ նշան արեցին, շարունակեցին նորու-
թյուններ որոնել, որպեսզի պատմեն վերևի աշխարհին: Մի
տեղ գտան ընդարձակ քարայր, որի առաստաղից կախված
էին բազմաթիվ փայլուն կավանդուստներ՝ ստալակտիտներ,
մարդու ոտքի երկարութ՜յամբ ու հաստութ՜յամբ: Նրանք հիա-
ռած ու զարմացած շրջեցին ամբողջ քարայրում և դուրս

եկան բազմաթիւ անցքերից մեկով: Շուտով հասան մի ուրիշ աղբյուրի, որի աճազանը ծածկված էր փայտն բյուրեղազարդերով: Դա գտնվում էր մի ուրիշ քարայրում, որի պատերը հենված էին զարմանալի սյուների վրա՝ կազմված ստալակտիտներից¹ և ստալագմիտներից: Դա արդյունք էր դարեր շարունակ կաթիլթող ջրի: Քարանձավի կամարի տակ բույն էին դրել և իրար գլխի հավաքվել հազարավոր շղջիկներ: Մոմերի լույսը անհանգստացրեց նրանց և դրանք հարյուրներով դեսուղեն ընկան զզվելի ծվծվոցների արձակելով և դեպի մոմերը նետվելով: Թոմը գիտեր նրանց բնավորութունը և հասկանում էր, թե ինչ վտանգ է սպառնում նրանց այդ վարմունքը: Նա բռնեց Բեքիի ձեռքը և շտապ քաշեց առաջին իսկ պատահած միջանցքը: Այդ շարժումն այնքան էլ արագ չստացվեց, և մի շղջիկ դիպավ Բեքիի լույսին ու թևով հանցյորեց այն, երբ աղջիկը քարանձավից դուրս էր փախչում: Չղջիկները բավական երկար հալածեցին երևխաներին, բայց փախստականները մտնում էին հանդիպած յուրաքանչյուր անցքի մեջ: Նրանք ի վերջո ազատվեցին այդ վտանգավոր արարածներից: Թոմը գտավ ստորերկրյա մի լիճ, որի ազոտ ուրվագծերը կորչում էին խավարում: Նա ուզեց հետազոտել զրա ափերը, բայց եզրակացրեց, որ ավելի լավ կլինի նախ նստել և մի փոքր հանգստանալ: Այդ ժամանակ առաջին անգամ խորունկ լուսթյունն իր ճնշող թաթը դրեց երևխաների արամադրության վրա: Բեքին ասաց.

— Այս ի՞նչ բան է, բոլորովին շնկատեցի, բայց հիմա ինձ թվում է, որ երկար ժամանակ է, ինչ մյուսների ձայնը չեմ լսում:

— Մտածիր, Բեքի, այժմ մենք նրանցից բավական ներթե հեր և չգիտեմ՝ ինչքան դեպի հյուսիս կամ հարավ, կամ արևելք, կամ ինչ որ է: Այստեղից նրանց լսել չենք կարող:

Բեքին անհանգստացավ.

— Տեսնես ինչքա՞ն ժամանակ է, որ այստեղ ենք, Թոմ: Ավիլի լավ է վերադառնանք:

¹ Ստալակտիտ— կրային կարծրացած մասսա, որ մեծ լույաների Նյան կախված է լինում մի բանի անձավների առատագներից: Նրանց բնական գեղեցիկ բարձրանում է նույնպիսի մասսա, կրային կոների՝ ստալագմիտների ձևով:

— Այո, կարծում եմ, ավելի լավ կլինի:

— Կարո՞ղ ես ճանապարհը գտնել: Թո՞մ: Ես ամեն ինչ շփոթել եմ:

— Կարծեմ կարող եմ գտնել, բայց շղջիկները եթե մեր երկուսի մոմերն էլ հանդցնեն, սարսափելի բան կլինի: Արի մի ուրիշ ճանապարհ փորձենք, որպեսզի նրանց մոտով չգրնանք:

— Լավ, բայց հույս ունեմ, որ շենք կորչի: Դա սարսափելի կլինի:— Եվ սարսուռաց այդ ահավոր մտքից:

Նրանք մի միջանցքով ճանապարհ՝ ընկան և երկար ժամանակ լուռության մեջ շարունակեցին քայլել, յուրաքանչյուր պատահող անցքից նայելով, իմանալու, թե արդյոք ծանոթ է: Բայց բոլորն էլ անծանոթ էին: Ամեն անգամ, երբ Թոմը զննում էր, Բեքին նայում էր նրա դեմքին՝ քաջալերող մի նշան որոնելով, իսկ Թոմն ուրախ-ուրախ ասում էր.

— Է՛հ, ոչինչ, սա էլ մեր անցածը չէ, բայց շուտով դրան կհասնենք:

Յուրաքանչյուր ձախորդությունից հետո տղայի ինքնավստահությունը նվազում էր: Վերջապես նա սկսեց պտտվել միջանցքներում ենթադրաբար, այն աղոտ հույսով, թե ուր որ է կգտնի իրենց ուզածը: Նա դեռ շարունակում էր «ոչինչ» ասել, բայց սրտում արդեն այնպիսի ծանրություն կար, որ խոսքերը կորցրին իրենց անհող շեշտը և այնպես հնչեցին, կարծես ասելիս լինեի. «ամեն ինչ կորած է»: Բեքին վախից կպել էր նրան և դժվարությամբ ու անհաջող փորձում էր արցունքը զսպել: Ի վերջո աղջիկն ասաց.

— Օ՛հ, Թո՞մ, շղջիկները ոչինչ, արի այդ կողմով գնանք: Ինձ թվում է, որ մենք զնալով կորչում ենք:

Թո՞մը կանգ առավ:

— Լսիր,— ասաց նա:

Խոր լուռություն և լուռությունն այնքան խորն էր, որ նույնիսկ իրենց շնչատուրությունը վախ էր ազդում: Թո՞մը գոռաց: Գոռոցը արձագանքելով զնաց դատարկ կամարների տակ և մարեջ հեռվում մեղմ ձայնով, որը հման էր ծաղրող ծիծաղի:

— Օ՛, Թո՞մ, էլ մի գոռա. շատ է սարսափելի,— ասաց Բեքին:

— Սարսափելի է, բայց ավելի լավ է, Բեքի: Նրանք կարող են լսել, գիտե՞ս,— և նորից գոռաց:

«Կարող են» խոսքը ավելի սարսուղեցնող էր, քան ծաղրող ծիծաղը: Դրանով նա խոստովանեց իր մարող հույսը: Երեխաներն անշարժ կանգնեցին և ականջները ձայնի պահեցին, բայց ապարդյուն: Թոմն արագ ետ դարձավ և բայլերն արագացրեց: Հազիվ մի քիչ ժամանակ էր անցել, երբ նրա շարժումների մեջ նկատվող անվստահութունը Բեքիին թվաց մի ուրիշ, ահավոր սպառնալիք. նա չէր կարողանում վերադարձի ճանապարհը գտնել:

— Օ՛հ, Թոմ, դու ոչ մի նշան չթողեցիր:

— Բեքի, ես այնքան հիմար էի, այնքան հիմար: Մտքովս չէր անցնում, թե կողենանք վերադառնալ: Ո՛չ, ես չեմ կարողանում ճանապարհը գտնել: Ամեն ինչ իրար է խառնված:

— Թոմ, Թոմ, մենք կորած ենք. կորած ենք: Այլևս չենք կարող դուրս գալ այս սարսափելի տեղից: Օ՛հ, ինչո՞ւ մյուսներից բաժանվեցինք:

Բեքին փուլ եկավ գետնին և սկսեց այնպես հեկեկալ, որ Թոմին թվաց, թե նա սրտաճաք կլինի կամ կխեղազարվի: Թոմը նստեց կողքին, գրկեց նրան: Աղջիկը դեմքը հպեց տղայի կրծքին, սեղմվեց նրան, հայտնելով իր սարսափը, անսքող դղումը: Հեռվից լսվող արձագանքներն այդ բոլորը վերածեցին հեղնող քրքիջի: Թոմը խնդրեց նորից հուսալ, իսկ աղջիկը պատասխանեց, որ չի կարող: Տղան սկսեց իրեն նախատել այս թշվառ վիճակին մատնվելու համար: Սա ավելի արդյունք ունեցավ: Աղջիկն ասաց, որ կփորձի նորից հուսալ, վեր կկենա և կհետևի տղային, ուր էլ առաջնորդի, եթե միայն սյուրկես այլևս չխոսի, որովհետև նա իրենից ավելի մեղավոր չէր:

Եվ նրանք նորից շարժվեցին աննպատակ, պարզապես խարխափելով: Այն ամենը, ինչ նրանք կարող էին անել, շարժվելն էր: Որոշ ժամանակ հույսը կարծես վերակենդանանալու վրա էր, ընայած որևէ հիմք չկար: Դե՛, հույսի էութունը վերակենդանանալն է, եթե մարդ երիտասարդ է և ճախորդութուններ քիչ է տեսել:

Մի փոքր անց Թոմը վերցրեց Բեքիի մոմը և հանդցրեց: Այս խնայողութունը շատ բան էր նշանակում: Բառեր պետք

չէին: Բեքին հասկացավ, և նրա հույսը նորից մարեց: Նա գիտեր, որ Թոմը մի ամբողջական մոմ ունէր, երեք կամ չորսն էլ գրպանում, բայց խնայելը անհրաժեշտ էր համարում:

Մի փոքր անց հոգնությունն սկսեց իրեն զգացնել տալ: Երեխաները փորձեցին ուշադրություն չդարձնել, որովհետև սարսափելի էր նստելու մասին մտածելը, երբ ժամանակը այնքան թանկ էր դարձել: Շարժվել մի ուղղութեամբ, որն է ուղղութեամբ՝ առնվազն առաջին թաղ էր և կարող էր արդունք առաւ, իսկ նստել նշանակում էր հրավիրել մահը և նրա ճանապարհը կարճել:

Ի վերջոյ Բեքիի թույլ ոտքերը հրաժարվեցին նրան ավելի հեռուն տանել: Նա նստեց: Թոմը նստեց կողքին, և երկուսով խոսեցին տան մասին, իրենց ընկերների, հանգստավետ մահճակալների և այդ բոլորից ավելի՝ լույսի մասին: Բեքին լաց եղավ, և Թոմը փորձեց մխիթարելու ձև գտնել, բայց նրա բոլոր քաջալերանքներն իզուր անցան և ծաղրի պես հնչեցին: Հոգնածութունն այնքան ճնշեց Բեքիին, որ նա բնեց: Թոմը երախտապարտ էր դրա համար: Նա նստեց ու նայեց ազգկա ախուր դեմքին՝ տեսավ, որ այն դնալով հանգիստ ու բնական արտահայտութիւն է ստանում լավ երազների ազդեցութեան տակ: Շուտով ժպիտ խաղաց այդ դեմքի վրա: Անվրդով դեմքը ինչ-որ խաղաղութիւն էր բուրում, և տղան մտովի գնաց դեպի անցած-դնացած օրերն ու երազային հիշողութիւնները: Թոմը խորասուզված էր հիշողութիւնների մեջ, երբ Բեքին արթնացավ ուրախ ծիծաղով, բայց այդ ծիծաղը սառեց շրթների վրա, և ծիծաղին հաջորդեց արտասուքը:

— Ա՛խ, ինչպե՞ս կարողացաք բնել: Երանի երեք շարթնանայի: Ոչ, ոչ, Թոմ, այդպէս մի նայիր, էլ չեմ ասի:

— Ուրախ եմ, որ բնեցիր, Բեքի: Հանգստացար, և մենք դուրս գալու ճանապարհը կգտնենք:

— Կարող ենք փորձել, Թոմ, բայց ես երազումս այնպիսի մի գեղեցիկ երկիր տեսաւ: Ես վստահ եմ, որ մենք այդտեղ ենք գնում:

— Գուցէև ոչ, Բեքի, դուցէև ոչ: Սրտապնդվիր, որ շարունակենք գնալ:

Նրանք վեր կացան և քայլեցին ձեռք-ձեռքի տված ու անհույս: Փորձեցին հաշվել, թե ինչքան ժամանակ է, որ քարան-

ձավում են գտնվում, բայց թվաց, թե օրեր ու շաբաթներ են անցել, թեև պարզ էր, որ դա ճիշտ լինել չէր կարող. մոմերը դեռևս չէին սպառվել:

Երկար ժամանակ անցավ, հայտնի չէ, թե ինչքան: Թոմն ասաց, որ պետք է անձայն քայլել, ականջ դնել հոսող ջրի ձայնին: Հարկավոր էր մի աղբյուր գտնել: Շուտով մեկը գրտան, և Թոմն ասաց, որ հանգստանալու ժամանակն է: Երկուսն էլ սոսկալի հոգնած էին, բայց Բեքին ասաց, որ ինքը կարող է մի փոքր էլ գնալ: Աղջիկը զարմացավ, երբ Թոմը հրաժարվեց: Նա պատճառը չէր հասկանում: Նստեցին: Թոմն իր մոմը կավի օգնությամբ դիմացի պատի վրա ամրացրեց: Շուտով երկուսն էլ մտածմունքի մեջ ընկան: Որոշ ժամանակ ոչ մի բառ չփոխանակեցին: Հետո Բեքին խզեց լուծությունը.

— Թոմ, ես շատ քաղցած եմ:

Թոմը գրպանից ինչ-որ բան հանեց:

— Հիշո՞ւմ ես, — ասաց նա:

Բեքին համարյա ժպտաց:

— Մեր հարսանեկան զաթան է, Թոմ:

— Այո, երանի տակառի շափ մեծ լիներ, որովհետև մեր միակ ունեցածն է:

— Պիկնիկի ժամանակ թաքցրի, Թոմ, որպեսզի բարձի տակ դնենք ու երազենք, ինչպես մեծերն՝ են անում հարսանեկան զաթան, բայց դա կլինի մեր...

Նա նախադասություներ կիսատ թողեց: Թոմը զաթան կիսեց, և Բեքին մեծ ախորժակով կերավ, մինչ Թոմը հաղիվ ձևեր տվեց իր բաժնին: Նախաճաշն ավարտելու համար առատ չոր ունեխին: Քիչ հետո Բեքին առաջարկեց առաջ գնալ: Թոմը մի բռնեց լուռ մնաց, հետո ասաց.

— Բեքի, կարո՞ղ ես դիմանալ, եթե քեզ մի բան ասեմ:

Բեքիի դեմքը գունատվեց, բայց ասաց, որ կդիմանա:

— Հավ, ուրեմն, Բեքի, մենք պետք է այստեղ մնանք, այստեղ խմելու ջուր կա: Այս փոքրիկ կտորը մեր վերջին մոմն է:

¹ Մի քանի երկրներում սնահավատ աղջիկներ հարսանեկան թխվածքի մի կտոր դնում են բարձի տակ, որպեսզի երազում տեսնեն իրենց փեսային:

Բեքին ազատութիւն տվեց արքունիներին և հեկեկանքնուրին: Թոմն ամեն ինչ արեց նրան հանգստացնելու համար, բայց քիչ արդյունքի հասաւ: Ի վերջս Բեքին ասաց.

— Թոմ:

— Ասա, Բեքի:

— Նրանք մեզ չեն գտնի և կզան փնտրելու:

— Այո, կզան: Իհարկե, կզան:

— Կուցե հիմա մեզ սրտնում են, Թոմ:

— Այո, գուցե սրտնում են: Հուշս ունեմ, որ փնտրում են:

— Ե՞րբ կնկատեն մեր բացակայութիւնը, Թոմ,

— Ինձ թվում է, երբ նազ վերադառնան:

— Թոմ, այդ ժամանակ կարող է մութ լինել: Կարո՞ղ է նկատեն, որ մենք չենք վերադարձել:

— Զգիտեմ, բայց բոլոր դեպքերում քո մայրը կփնտրի քեզ, անմիջապէս, հենց որ տուն հասնեն:

Բեքիի դեմքի վախեցած արտահայտութիւնը Թոմին զգաստացրեց, և նա զգաց, որ հիմարութիւն արեց: Այդ գիշեր Բեքին տուն չէր գնալու: Երեխաները լարեցին իրենց լսողութիւնը և մտածութեան մեջ ընկան: Մի պահ հետո Բեքիի վշտի մի ուրիշ արտահայտութիւնը Թոմին համոզեց, որ նույն բանն է մտածում նաև աղջիկը՝ շարաթ օրվա առավոտյան ուշ կարթնանան, և միտիս Թեյըրը ուշ կիմանա, որ Բեքին միտիս Հարպըրինց տանը չի եղել: Երեխաներն իրենց հայացքն ուղղեցին մոմի կտորին: Նայում էին, թե ինչպէս է դա դանդաղ, անգթորեն հալլում, տեսան, որ ի վերջո կես մասնաշափ է մնացել: Բոցը բարձրանում էր ու իջնում, բարակ ծուխը վերն էր մագլցում, մի ակնթարթ դանդաղում պատրույզի ծալրին: Հետո տիրեց զարհուրելի խավարը:

Թե ինչքան ժամանակ Թոմի գրկում լաց լինելուց հետո Բեքին դանդաղորեն գիտակցութեան եկավ, ոչ ոք չէր կարող ասել: Նրանց ամբողջ իմացածն այն էր, որ շատ երկար թվադող ժամանակից հետո երկուսն էլ արթնացան քնի մահացու թմրութիւնից և մի անգամ էլ մտածեցին իրենց թըշվառութեաների մասին: Թոմն ասաց, որ կարող է օրը կիրակի լինել, գուցե երկուշաբթի: Փորձեց Բեքիին խոսեցնել, բայց աղջկա տառապանքը շատ ճնշող էր. նրա բոլոր հուսերը կորած էին: Թոմն ասաց, որ իրենց բացակայութիւնը

վաղուց նկատած կլինեն, և անկասկած որոնումները շարունակվում են: Պետք է դուռալ: Գուցե և մեկը դա: Նա փորձեց, բայց մթության մեջ հետափոր արձագանքներն այնքան զրգովելի հնչեցին, որ այլևս չփորձեց:

Ժամեր անցան, և քաղցը եկավ նորից տանջելու Քոմի կես գաթայի մի մասը մնացել էր. բաժանեցին և կերան: Բայց նախկինից ավելի սուր բաղջ զգացին: Այդ փոքրիկ կոտորը ավելի սրեց ուտելու ցանկությունը:

Քիչ հետո Քոմն ասաց.

— Շըշ, լսեցի՞ր:

Երկուսն էլ շունչները պահեցին և ականջ դրին: Շատ հետափոր գոռոցի թույլ ձայն լսվեց: Քոմն անմիջապես պատասխանեց և Բեքիի ձեռքից բռնած առաջնորդելով միջանցքն ի վար՝ սկսեց գնալ ձայնի ուղղությամբ: Հետո նորից ականջ դրեց, նորից ձայնը լսվեց և, ըստ երևույթին, մի փոքր ավելի մոտիկից:

— Նրանք են,— ասաց Քոմը,— նրանք գալիս են: Այո, Բեքի, մենք փրկված ենք:

Բանտարկվածների ուրախությունն անկարագրելի էր: Նրանք դանդաղ առաջ էին շարժվում, որովհետև ամեն քայլափոխին կարող էր փոս հանդիպել: Պետք է զգույշ լինեին: Շուտով մի փոսի հասան և ստիպված եղան սպասել: Այն կարող էր երեք ոտնաչափ խորություն ունենալ, կարող էր հարյուր ոտնաչափ լինել. բոլոր դեպքերում պետք չէր անցնել: Քոմը կրծքի վրա պառկեց և ինչքան կարող էր փորձեց հատակին հասնել: Հատակը չկար: Պետք է այդտեղ մնային և սպասեին, մինչև որոնողները գային: Սակայն լսեցին, որ հետափոր բզավոցները գնալով ավելի հետափոր էին դառնում: Մի քանի վայրկյան ևս, և դրանք բոլորովին լռեցին: Ինչ սրտաձմիկ ձախորդություն. Քոմն այնքան բզավեց, մինչև ձայնը խզվեց: Բայց անօգուտ: Նա Բեքիին հուսադրեց, բայց մտահոգ սպասումի մի դար անցավ, և ոչ մի ձայն այլևս չլսվեց:

Խարխափելով, երեխաները վերադարձան աղքատի մոտ: Ժամանակը շատ դանդաղ էր սահում: Նորից քնեցին և արթնոցան բաղցած ու սարսափահար: Քոմը կարծում էր, որ պետք է օրը երեքշաբթի լինի:

Հանկարծ նրա գլխում մի միտք ծագեց: Մտտիկ տեղում կողմնակի անցքեր կային: Ավելի լավ էր դրանցից մի քանիսր հետախուզել, քան պարասպ նստած կրել անցնող ժամանակի ծանրությունը: Նա գրպանից հանեց օդապարիկ թոցնելու թելը, կապեց ժայռի մի դուրս ընկած մասից, և երկուսով ճանապարհ ընկան: Թումր գնում էր առջևից, թելը քանդելով՝ Քսան քայլ հետո միջանցքը ավարտվեց մի փոսով: Թումր ծնկի եկավ, շոշափեց ներքևը, հետո և շուրջը, ինչքան կարող էր ձեռքով հասնել: Փորձեց դեպի աջ մի փոքր էլ ձգվել և այդ պահին, հազիվ քսան յարդ հեռվում, ժայռի ետևից երևաց մարդկային մի ձեռք՝ մի մոմ բռնած: Թումր հաղթական մի ճիշ արձակեց, իսկ այդ պահին ձեռքին հետևեց մարմինը... Հնդկացի Ջոյի մարմինը: Թումր քարացավ. շարժվել չէր կարող: Շատ ուրախացավ, երբ հնդկացին հաջորդ բուպեին թիկունքը դարձրեց և անհետացավ: Թումր դարմացավ, որ Ջոն չճանաչեց իր ձայնը, շեկավ իրեն սպանելու դատարանում վկայություն տալու համար: Ըստ երևույթին արձագանքները կեղծել էին ձայնը: Անկասկած այդպես կլինի, եզրակացրեց նա: Վախը թուլացրել էր Թումի բոլոր նյարդերը: Նա ինքն իրեն ասաց, որ եթե մինչև ազդյուրը վերադառնալու ուժ ունենա, այնտեղ էլ կմնա, այլևս ոչինչ չի կարող նրան գայթակղել, այնպես, որ Հընդկացի Ջոյին հանդիպելու վտանդին ենթարկվի: Զգուշությունից Բեքին շհայտնեց իր տեսածը: Նրան ասաց, որ բղավել էր «բախտը փորձելու» համար միայն:

Բայց ի վերջո քաղցն ու անելանելի դրությունը վախից ավելի զորեղ դուրս եկան: Ազդյուրի մոտ սպասելուց և քնելուց հետո նրանց տրամադրությունը փոխվեց: Երեխաներն արթնացան քաղցից տանջվելով: Թումր կարծում էր, թե արդեն շոքեքշարթի կամ հինգշարթի է, կամ նույնիսկ ուրբաթ կամ շաբաթ, և որոնումն ավարտված կլինի: Նա առաջարկեց հետախուզել մի ուրիշ միջանցք: Տղան արդեն պատրաստ էր Հնդկացի Ջոյին հանդիպելու վտանգին և բոլոր մյուս սարսափներին: Բայց Բեքին շատ թույլ էր: Նա ընկել էր ծանր հուսահատության մեջ և տեղից բարձրանալ չէր ուզում: Աղջիկն ասաց, որ այդտեղ էլ կսպասի և շատ շանցած կմահանա: Նա Թումին ասաց, որ թելով գնա և հետա-

խուզի, եթե ցանկանում է, բայց խնդրեց, որ շուտ վերադառնա և հետը խոսի։ Թումին խոստանալ տվեց, որ երբ սարսափելի ժամը գա, կողքին կնստի և մինչև վերջ ձեռքը կբռնի։ Թումը համբուրեց նրան ինչ-որ վատ նախազգացումով և ցույց տվեց, թե իբր վստահ է, որ կգտնի որոնողներին կամ բարանձավից դուրս գալու մի ճանապարհ։ Հետո վերցրեց թելը և խարխափելով ու շորեքթաթ գնաց միջանցքով ցած, քաղցից տանջվելով և մոտալուտ վախճանի նախազգացումը սրտում։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Հասավ երեքշաբթի օրվա հետմիջօրեն և մխրճվեց աղջամուղջի մեջ։ Սանկտ-Պետերբուրգ ավանը շարունակում էր սգալ։ Կորած երեխաները չէին գտնվել։ Նրանց համար ամբողջ համայնքով աղոթեցին, շատերն աղոթեցին նաև իրենց աներո՞ւմ, այդ աղոթքների մեջ գնելով իրենց ամբողջ հոգին։ Բայց, հակառակ դրանց, քարանձավից ուրախ լուրեր չէին ստացվում։ Որոնողների մեծամասնությունը հուսահատվել էր և վերադարձել իր առօրյա զբաղմունքին, ասելով, թե երեխաները գտնվել չեն կարող։ Միսիս Թելլըրը ծանր հիվանդ էր և ժամանակի մեծ մասն անց էր կացնում ուշազնաց վիճակում։ Մարդիկ ասում էին, որ տեսնողի սիրտը կտոր-կտոր է լինում, երբ նա իր երեխային է կանչում, երբ բարձրացնում է գլուխն ու մի ամբողջ բույն ականջ գնում, հետո հանկարծ էլի ցած դնում բարձի վրա՝ հառաչելով։ Մորաքույր Պոլին ընկել էր մելամաղձություն մեջ. նրա մազերը համարյա լրիվ սպիտակել էին։ Երեքշաբթի գիշեր ավանը բուն մտավ տխուր և անհույս։

Գիշերվա կեսին ավանի զանգերն սկսեցին ուժգին ղողանջել։ Մի վայրկյանում փողոցները լցվեցին կիսահագնելու, հուզված մարդկանցով, որոնք բղավում էին. «Վեր կուցեք, դուրս եկեք, գտնվեցին, գտնվեցին»։ Զանգերին ավելուցում թիթեղների աղմուկն ու փողհարությունը։ Բազմուխույր շարժվեց դեպի գետն ու հանդիպեց վերադարձող երեխաներին, որոնց մի բաց կառքի մեջ դրած աղմկելով բերում

էին քաղաքացիները: Նրանք միացան դիմաւորողներին, ճանապարհ ընկան դեպի քաղաք և հանդիսավոր թափուրով, անընդհատ «ուռուռ» կանչելով անցան փողոցներով:

Ավանը լուսավորվեց: Ոչ որ նորից բնելու շղնաց: Փոքր քաղաքի ամենանշանավոր գիշերն էր դա: Առաջին կես ժամվա ընթացքում քաղաքի բնակիչները գնացին դատավոր Թեղբրի տունը, համարուեցին փրկված երեխաներին, սեղմեցին միսիս Թեղբրի ձեռքը: Փորձում էին խոսել, բայց չէին կարողանում և դուրս էին գալիս արցունք թափելով:

Մորաբույր Պոլիի երջանկոթյունը գազաթնակետին էր հասել: Համարյա նույն վիճակում էր նաև միսիս Թեղբրու նրա ուրախությունը ամբողջական կլիներ, եթե մեծ լուրն ուղարկվեր քարանձավ՝ ամուսնուն:

Թոմը պառկել էր բազմոցին՝ շրջապատված ազահորին լսող ուկնդիրներով: Նա պատմեց զարմանալի արկածի պատմությունը, մտացածին մանրամասնություններ ավելացնելով այն զեղեցկացնելու համար: Վերջում պատմեց, թե ինչպես նա թողեց Բեքիին և գնաց հետախուզության, թե ինչպես անցավ ևրկու միջանցք, ինչքան որ թելը կարող էր հասնել, թե ինչպես գնաց մի երրորդով՝ ամբողջ թելի երկարությամբ և ետ գտնալու վրա էր, երբ հանկարծ շատ հեռավոր մի շող նկատեց, որ նման էր ցերեկային լույսի, թե ինչպես թողեց թելը և շտապեց դեպի այն, ինչպես զլուխն ու ուտերը դուրս հանեց մի փոքր անցքից և տեսավ լայն Միսսիսին՝ հոսելիս:

Եվ եթե այդ բոլորը պատահեր գիշերը, նա չէր տեսնի ցերեկվա լույսի շողը և այդ անցքը ավելի չէր հետախուզի: Պատմեց, թե ինչպես վերադարձավ Բեքիի մոտ՝ ուրախ լուրը տալու, և թե ինչպես աղջիկն ասաց, որ այդպիսի բաներով ավելի շտանջի իրեն, որովհետև հոգնած է և գիտե, որ մահանալու է և ուզում է մահանալ: Թոմը նկարագրեց, թե ինչպես համոզեց նրան, և թե ինչպես Բեքին ուրախությունից քիչ մնաց մեռներ, երբ հասավ այն տեղը և տեսավ ցերեկվա լույսի կապույտ շողը. թե ինչպես ինքը դուրս եկավ, հետո օդնեց Բեքիին, որ դուրս գա, ինչպես նստեցին այդ տեղ և ուրախությունից լաց եղան, թե ինչպես մարդկանցով լեցուն մի նավակ էր անցնում, և Թոմը ձայն տվեց նրան:

ու պատմեց իրենց վիճակը, ասաց, որ քաղցից մեռնում են, ինչպես այդ մարդիկ սկզբում չհավատացին այդ դարմանալի պատմութեանը, որովհետև նրանք ասացին. «դուք քարանձավի անցքից հինդ մղոն ներքևում եք», հետո նավակ վերցրին նրանց, մի սուն տարան, ընթրիք տվեցին, երկու կամ երեք ժամ հանգստացրին և հետո բերեցին:

Լուսաբացից առաջ դատավոր Թեչըրին և նրա հետ շնացած մի քանի մարդկանց քարանձավից հանեցին այն թոկերի օգնութեամբ, որոնցով կապված էին նրանք, և հայտնեցին ուրախալի նորութեանը:

Քարանձավում անցկացրած երեք օրվա շարժարանքն ու քաղցածութեանը միանգամից շնացան: Այդ շուտով զգացին Թոմն ու Բեքին: Ամբողջ շորեքշաբթին և հինգշաբթին նրանք մնացին անկողնում և գնալով իրենք իրենց ավելի հոգնած ու ավելի հյուժված էին զոտ: Թոմը մի փոքր ոտքի կանգնեց հինգշաբթի օրը, ուրբաթ օրը քաղաք դուրս եկավ և միայն շաբաթ օրը նախկինի պես իրեն լավ զգաց: Բայց Բեյին մինչև շաբաթ օրը սենյակից դուրս չեկավ. նա նման էր մանր հիվանդութեան անցկացրած մարդու:

Թոմն իմացավ Հեքի հիվանդութեան մասին և ուրբաթ օրը գնաց ընկերոջը տեսնելու, բայց շթողեցին հիվանդի մոտ: Նրան զա չհաջողվեց նաև շաբաթ և կիրակի օրերը: Հետո ամեն օր թույլ տվեցին, բայց զգուշացրին, որ իր արկածի մասին չպատմի և հուզող բաներից չխոսի: Այրի Դուզլասը կտտում էր նրանց կողքին և հսկում: Տանը Թոմը լսեց Քարսիի բլրի դեպքի մասին, ինչպես նաև այն, որ ցնցոտիներով մարդու մարմինը գտնվել էր նավահանգստի մոտ: Հավանաբար փախուստի ժամանակ խեղդվել էր:

Քարանձավից ազատվելուց երկու շաբաթ հետո Թոմը կարիք գնաց Հեքին այցելելու, որը մինչ այդ լավ կազդուրվել էր և կարող էր գրուցել ու իրեն հետաքրքրող որոշ բաներ լսել: Դատավոր Թեչըրի տունը Թոմի ճանապարհի վրա էր և նա գնաց Բեքիին տեսնելու: Դատավորն ու նրա ընկերներն սիրով թոմին խոսեցնել, և մեկը կատակով հարցրեց, թե լի ապամ նորից քարանձավ գնալ: Թոմը պատասխանեց, թե ոչ, և թե իր համար ոչ մի նշանակություն չունի:

Դատավորն ասաց.

— Քեզ նման ուրիշներն էլ կան, թո՛մ, չեմ կասկածում: Քայց մենք այդ մասին մտածել ենք: Այլևս ոչ ոք այդ քարանձավում չի կորչի:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մեծ դուռը երկաթով փակել եմ ավել երկու շաբաթ առաջ և երեք փակով փակել: Բանալիներն էլ ինձ մոտ են:

Թումը սալանի նման սպիտակեց:

— Քեզ ի՞նչ պատահեց, տղա: Է՛, այստեղ եկեք, մի բաժակ ջուր տվեք:— Ջուրը բերեցին և թո՛մի երեսին ցանեցին:

— Ահա՛, հիմա լավ ես Քեզ ի՞նչ պատահեց, թո՛մ:

— Օ՛, պարոն դատավոր, Հնդկացի Ջոն քարանձավում է:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Հինգ ռուբլի ընթացքում լուրը տարածվեց, և մարդկանցով լեցուն տասնյակ նավակներ ճանապարհ ընկան դեպի Մակ-Գուդալի բարանձավը: Գետանցանավը, ուղևորներով լեցուն, շուտով հետևեց դրանց: Թո՛մ Սոյերը դատավոր Թեչերին տանող նավակի մեջ էր: Երբ քարանձավի դուռը բացվեց, կիսախավարում տեսան մի վշտալի պատկեր. Հնդկացի Ջոն փոված էր գետնին՝ մեռած, դեմքը դուռն ճեղքին կպցրած, կարծես ազահ հայացքը մինչև վերջին պահը հառած լիներ դրսի լույսին և ազատ աշխարհի ուրախությանը: Թո՛մն զգացվեց, որովհետև փորձով պիտեր, թե ինչքան է տանջվել այդ թշվառը: Նա խղճաց, բայց միևնույն ժամանակ զգաց ապահովություն ու թեթևություն և միայն այժմ հասկացավ, թե ինչ ծանրություն և մշտական վախ էր նրստել սրտի վրա այն օրվանից, երբ ձայնը բարձրացրել էր այս արյունարբու շարագործի դեմ:

Հնդկացի Ջոյի կեռ դանակն ընկած էր կողքին, երկու կտոր եղած: Նա դուռն ներքևի տախտակը տաշել էր երկար, բայց ապարդյուն, որովհետև դրսից անցքը փակում էր բնական ժայռը, որի վրա դանակը ոչ մի ազդեցություն գործել չէր կարող: Միակ վնասը դանակին էր հասել: Եթե նույնիսկ բարը չխանգարեր, այդ աշխատանքը դարձյալ ապարդյուն

էր լինելու, որովհետև ամբողջ տախտակի կտրվելու զեպ-
քում իսկ Հնդկացի Ջոն իր մարմինը չէր կարողանա դուրս տա-
կով անցկացնել, և նա այդ գիտեր: Նա փայտը կտրել
էր պարզապես որևէ բան անելու, ձանձրալի, մաշող ժամա-
նակն սպանելու, իր կարողութիւնները որևէ կերպ գործա-
դրելու համար: Սովորաբար, քարանձափի առաջին նախա-
սենյակի ճեղքերում մոմի բազմաթիւ կտորներ էին լինում՝
տուրիստների կողմից թողնված, այժմ դրանցից ոչ մեկը
չկար: Բանտարկյալը փնտրել ու կերել էր դրանք: Նա փոր-
ձել էր նաև մի քանի շղջիկ բռնել: Դրանք էլ կերել էր, թող-
նելով միայն ոսկորները: Թշվառը սովամահ էր եղել: Մո-
տակա մի վայրում դարերի ընթացքում դանադազորեն գոյա-
նում էր մի ստալակմիտ, գոյանում էր վերևի ստալակտիտից
կաթող ջրերից: Բանտարկյալը ստալակմիտը ջարդել էր և
վրան տեղավորել մի քար, դրա կենտրոնում մի փոքր փոս
էր արել, հավաքելու համար թանկագին կաթիլները, որ
ժամացույցի կանոնավորութեամբ քսան րոպեն մեկ կաթում
էին, քանչորս ժամում կաղմելով շատ փոքր քանակութիւն:
Այդ կաթիլը կաթում էր, երբ բուրգերը նոր էին, երբ Տրոյան
ընկավ, երբ Հոտմի հիմքերը դրվեցին, երբ Քրիստոսը խաչվեց,
երբ Ուիլյամ Աշխարհակալը ստեղծում էր Բրիտանական
կայսրութիւնը, երբ Կոլումբոսը ճանապարհ էր ընկնում, երբ
Լեքսինգտոնի մոտ ճակատամարտի լուրերը «նորութիւն»
էին: Այն կաթում է այժմ, այն պիտի շարունակի կաթել, երբ
լուրը այս բաները պիտի խորասուզվեն պատմութեան և
որագիցիայի խորքերում, կուլ գնան մոռացութեան խավար
գիշերվա մեջ: Մի՞թե ամեն ինչ նպատակ և միսիա ունի:
Արդո՞ք այս կաթիլը հինգ հազար տարի շարունակեց կաթել,
որպեսզի բավարարի այս մարդկային արարածի կարիքները
և արդո՞ք կատարելու մի ուրիշ նպատակ ունի տասը հազար
տարի հետո: Ինչևէ: Այդ օրվանից անցել են բազմաթիւ տա-

1 Այստեղ թվարկում են հին և նոր պատմութեան մի քանի զեպեր-
ընթացի անկումը (XII դ. մ. թ. ա.), Հոտմի հիմնադրումը (753 թ. մ. ա.),
Լեքսինգտոնի հայտնագործումը Կոլումբոսի կողմից (1492 թ.) և այլն, Լեք-
սինգտոնի ճակատամարտը (Լեքսինգտոն քաղաքի մոտ, Ամերիկայում)
և այլն մարտական ընդհարումն էր ամերիկացիների և անգլիացիների
միջև անկախութեան համար (1775 թ.):

րիններ, երբ դժբախտ խառնածինը ջարդեց քարի ծայրը՝ պահելու համար անգին կաթիլը, բայց մինչև այսօր տուրխառնները ամենից երկար դիտում են այդ սրտառուչ բարը և դանդաղ կաթող ջուրը, երբ պայիս են Մակ-Դուգալի քարանձավի հրաշքները դիտելու: Հնդկացի Ջոյի բաժակը քարանձավի հրաշալիքների մեջ տուտչիններից է: Նույնիսկ «Լկադինի պալատը» չի կարող մրցել դրա հետ:

Հնդկացի Ջոն թաղվեց բարանձավի մուտքի մոտ: Նավակներով ու սալերով յոթ մղոն հեռավորությամբ քաղաքից, բոլոր ֆերմաններից և բնակավայրերից մարդիկ խոժեցին այգտեղ: Նրանք բերել էին իրենց հրեխաններին, ամեն տեսակի ուտելիքներ և հետո խոստովանում էին, որ նույնքան լավ ժամանակ անցկացրին թաղման ժամանակ, ինչքան լավ կարող էին անցկացնել խառնածինի կախաղանի ժամանակ:

Թաղումը կանխեց մի գործի հետագա ծավալումը. նահանգի կառավարչին ուղարկվեցին խնդրագրեր՝ Հնդկացի Ջոյին ներելու մասին: Գիմումը շատերն էին ստորագրել: Բազմաթիվ արցունքոտ և բուռն միտինգներ տեղի ունեցան: Երիտասարդ կանանց կոմիտեն որոշեց խորունկ վշտով ու սև հագած գնալ կառավարչի մոտ, խնդրել, որ նա ներողամիտ լինի և իր պարտականությունը ստնատակ տա: Ենթադրում էին, որ Հնդկացի Ջոն ավանից հինգ հոգու է սպանել, բայց ի՞նչ արած: Եթե նույնիսկ դա սատանան ինքը լիներ, կգտնվեին բազմաթիվ թուլակամներ, որոնք կստորագրեին ներման դիմումի տակ և արցունքն աչքերին կգնային կառավարչի սիրտը մեղմելու:

Թաղման հաջորդ առավոտյան Թումը Հեքին տարավ առանձին մի տեղ՝ հետը կարևոր դրույց ունենալու: Մինչ այդ Հեքը ունևեցուց և այրի Դուգլասից ամեն ինչ իմացել էր Թոմի արկածի մասին, բայց Թոմն ասաց, որ կա մի բան, որի մասին լռել է: Հենց այդ մասին էլ ուզում է այժմ խոսել: Հեքի գնալը տխրեց: Նա ասաց.

— Գիտեմ, թե դա ինչ է: Դու երկրորդ համարը գնացիր, բայց վիսկիից բացի ոչ մի բան չդտար: Ոչ ոք ինձ չասաց, թե դու էիր, բայց ես պարզապես զլխի ընկա, որ դու պետք է եղած լինես, երբ լսեցի վիսկիի այդ գործի մասին: Իմացու նակ, որ փողը շես գտել, որովհետև ինչ-որ ձևով ինձ կզղտ-

ների և կայատմերի, թեկուզ ոչ որի ոչինչ չէիր ստում: Թո՛մ,
ևս միշտ զգացել եմ, որ մենք երբեք չէինք կարողանալու այդ
բանի տերը դառնալ:

— Ի՞նչ, Հեք, ես այդ հյուրանոցի ավրոջ մասին երբեք
չեմ խոսել: Չե՞ս հիշում, որ նրա հյուրանոցը լավ վիճակում
էր այն շաբաթ օրը, երբ ես պիկնիկի ղնացի: Չե՞ս հիշում,
որ դու պետք է այդ գիշեր հսկեիր:

— Ա՛խ, այո, ինձ թվում է, թե մի տարի է անցել: Դա
հենց նույն գիշերն էր, որ ես հետեկցի Հնդկացի Ջոյին մինչև
այրու սունը:

— Հեռեցի՞ր:

— Այո, բայց այդ մասին լռիր: Ես կարծում եմ, որ
Հնդկացի Ջոն իրենից հետո թողած ընկերներ ունի: Չեմ
ուզում, որ նրանք ինձ նեղություն պատճառեն: Եթե ես չլի-
նեի, նա այժմ ողջ-առողջ Տեխասում կլիներ:

Հետո Հեքը իր ամբողջ արկածը գաղտնի պատմեց Թո-
մին, որը ուելսեցուց դրա մի մասն էր միայն լսել:

— Լավ,— ասաց Հեքը նորից վերագառնալով զլիսավոր
խնդրին,— ես կարծում եմ, որ համար երկուսի վիսկին զըտ-
նողը գտավ նաև փողը: Բոլոր ղեպքերում այն մեզ համար
կորած է, Թո՛մ:

— Հեք, այդ փողը երբեք երկրորդ համարում չի եղել:

— Ի՞նչ,— Հեքը լրջությամբ զննեց ընկերոջ ղեմքը:—
Թո՛մ, նորից դաե՞լ ես այդ փողի հետքը:

— Հեք, փողը քարանձավում է:

Հեքի աչքերը փայլեցին:

— Կրկնիր, Թո՛մ:

— Փողը քարանձավում է:

— Թո՛մ, այժմ երգվիր, ասա «հնդկացու ազնիվ խոսք»: Կա-
տարկո՞ւմ ես, թե լուրջ ես ասում:

— Լուրջ, Հեք, լուրջ, ինչքան կյանքումս երբեք չեմ եղել:
Կոս՞ս ինձ հետ և կօգնե՞ս փողը գտնելու:

Անշուշտ կգամ, կգամ, եթե կարողանանք մտնել և
չկորչել:

Հեք, մենք այդ կարող ենք անել առանց ամենափոքր
չէ՞ փտանգի:

Օտտ լավ: Ինչի՞ց ես ենթադրում, որ փողը...

— Հէք, դու պարզապէս սպասիր, մինչև այնտեղ հասնենք: Եթէ չգտնենք, ես համաձայն եմ քեզ տալ իմ թըմբուկը և ամեն ինչ, որ աշխարհում ունեմ: Կտամ, երդվում եմ:

— Շատ լավ, համաձայնեցինք: Ե՛րբ ենք գնալու:

— Հենց հիմա, եթէ կուզես: Քեզ բավական ուժե՞ղ ես ղզում:

— Քարանձավը հետու է: Մի բանի օր է, որ քաջի եմ կանգնել և մի մղոնից ավելի բայլել չեմ կարող: Թո՞ւմ, ինձ այդպէս է թվում:

— Այստեղից այնտեղ ճանապարհը հինգ մղոն է ուրիշների համար, Հէք: Մի կարճ ճանապարհ կա, որ բացի ինձնից ուրիշ ոչ ոք չգիտե: Հէք, ես քեզ նավակով ուղիղ այնտեղ կտանեմ: Գնալիս և վերադարձին ես կթիւովարեմ: Դու նույնիսկ զլուխդ շուռ մի տուր:

— Հենց հիմա, անմիջապէս ճանապարհ ընկնենք, Թո՞ւմ:

— Շատ լավ: Մեզ հարկավոր է մի քիչ հաց, միս, մեր ծխամորճները, մեկ կամ երկու փոքր տոպրակ, մեկ կամ երկու օգապարիկի թել և ապա այդ նոր հնարած բանից, որ լուցկի են կոչում: Երբ այնտեղ էի, այնպէս էի ուզում դրանցից ունենալ:

Կեսօրից քիչ անց տղաները մի քաղաքացուց վերադարձնելու պայմանով վերցրին նրա նավակը և անմիջապէս ճանապարհ ընկան: Երբ «քարանձավի անցքից» մի քանի մղոն ներքև էին, Թո՞մն ասաց.

— Տեսնո՞ւմ ես այս թերթիւները, քարանձավից մինչև այստեղ հարթ և ուղիղ է երևում, ոչ տներ, ոչ ծառեր, միանման թփեր են: Բայց տեսնո՞ւմ ես, այնտեղ, որտեղ հողը փոլ է եկել, սպիտակին է տալիս: Դա իմ նշաններից մեկն է: Այժմ ցամաք պիտի իջնենք:

Նրանք ափ դուրս եկան:

— Այժմ, Հէք, քո կանգնած տեղից կարո՞ղ ես զտնել այն անցքը, որտեղից ես դուրս եկա: Փորձիր, կարո՞ղ ես զտնել:

Հէքը փորձեց. ոչինչ չգտավ: Թո՞մը հպարտությամբ մտավ խիտ թփերի մեջ և ասաց.

— Ահա, նայիր, Հէք: Սա սմենապահով անցքն է ամբողջ այս երկրում: Դու այդ մասին ոչ ոքի մի ասա:

Ես միշտ ուզել եմ ավագակ դառնալ և այսպիսի մի տեղի կարիքն եմ պահանջել, բայց չեմ կարողացել գտնել: Այժմ մենք դա ունենք և այդ մասին պիտի լուենք: Այնտեղ կթողնենք միայն Ձո Հարպրրին և Բեն Ռոջերսին, որովհետև պետք է ավագակախումբ ունենալ, թե չէ ինչի՞ նման կլինի: Թոմ Սոյերի ավագակախումբը: Հրաշալի է հնչում, չէ՞, Հեք:

— Այո, Թոմ, հրաշալի է: Եվ ո՞ւմ պիտի թալանենք:

— Օ՛հ, համարյա բոլորին: Ունեոր մարդկանց, Ընդհանրապես ձեն այդպես է:

— Եվ սպանենք նրանց:

— Ոչ, ոչ միշտ: Կպահենք քարանձավում, մինչև փրկա-
չին վճարեն:

— Ի՞նչ բան է փրկագինը:

— Փող: Կստիպենք նրանց, որ ինչքան կարող են հավաքեն իրենց բարեկամներից. եթե չտան, մի տարի պահելուց հետո կսպանենք: Ընդհանուր ձեն այդ է: Այո, կանանց շենք սպանի: Կրանտարկենք, բայց շենք սպանի: Նրանք միշտ գեղեցիկ են լինում, հարուստ և սարսափելի վախեցած: Կվերցնենք ժամացույցները և մյուս զարդերը, բայց միշտ նրանց առաջ գլխարկներս կհանենք ու քաղաքավարի կլինենք: Գողերից ավելի քաղաքավարի մարդիկ չկան: Կարող ես ուզածդ գրքում կարգալ: Հետո կանայք կսիրահարվեն մեզ և քարանձավում մեկ կամ երկու շաբաթ մնալով, կդադարեն լաց լինելուց, ու դրանից հետո, ստիպես էլ, շեն հեռանա: Իթե դուրս էլ վռնդես, կվերադառնան: Այդպես է գրված բոլոր գրքերում:

— Իսկապես հրաշալի բան է, Թոմ: Իմ կարծիքով դա ծովահեն լինելուց լավ է:

— Այո, որոշ իմաստով լավ է, որովհետև մոտ է տանը, կրկեսին և առհասարակ ուրիշ բաների:

Մինչ այդ ամեն ինչ պատրաստ էր, և տղաները՝ Թոմի առաջնորդութամբ, անցքից ներս մտան: Հասան միջանցքի ծայրը, ամրացրին իրենց թելի կծիկները և առաջ շարժվե-
ին: Մի քանի բայլ գնալուց հետո հասան աղբյուրին, և Թո-
մ, ն ամբողջ մարմնով սարսուռաց: Նա Հեքին ցույց տվեց կրով
սլափին ամրացված մոմի մնացորդը և նկարագրեց, թե ինչ-

պես ինքն ու Բեքին դիտել էին բոցի պայքարն ու հանդ-
չելը:

Տղաներն սկսեցին շշնջալ, որովհետև այդ տեղի լուսթյու-
նքն ու խավարը ճնշում էին նրանց: Շարունակեցին ճանա-
պարհը, շուտով մտան Թոմի մյուս միջանցքը և հասան
«Թռչելու տեղին»: Մոմերի լույսով պարզեցին, որ դա, իրա-
կանում, ոչ թե անդունդ էր, այլ քսանից-երեսուն քայլ բարձ-
րությամբ կավե գահավեժ վայրէջք: Թոմը շշնջաց.

— Այժմ քեզ մի բան եմ ցույց տալու, Հեք:

Նա իր մոմը բարձրացրեց և ասաց.

— Նայիր անկյունից այն կողմ, ինչքան կարող ես: Տես-
նո՞ւմ ես: Վերևի մեծ ժայտի վրա՝ մոմի ծխով է արված:

— Թոմ, խաչ է:

— Իսկ այժմ ո՞րն է երկրորդ համարը «խաչի տակ», հը՞:
Ճիշտ այդտեղ տեսա Հնդկացի Զոյի՞ն՝ մոմը ձեռքին, Հեք:

Հեքը որոշ ժամանակ նայեց խորհրդավոր նշանին և հե-
տո դողացող ձայնով ասաց.

— Թոմ, հեռանանք այստեղից:

— Ի՞նչ, գանձը թողնե՞նք:

— Այո, թողնենք: Հնդկացի Զոյի սուրվականը շրջակայ-
քում է, վստահ եմ:

— Ոչ, այդպես չէ, Հեք, այդպես չէ: Նա այնտեղ է լի-
նում, որտեղ մահացել է, քարանձավի մուտքի մոտ, հեռ-
վում, այստեղից հինգ մղոն հեռու:

— Ոչ, Թոմ, նա կթափառի փողի մոտ: Ծա գիտեմ, թե
ինչպիսիք են ուրվականները, դու ինքդ էլ գիտես:

Թոմն սկսեց վախենալ, որ Հեքը իրավացի է: Երկմտանք
տիրեց: Բայց հանկարծ մի միտք ծագեց Թոմի գլխում:

— Լսիր, Հեք, հիմարների պես ենք վարվում: Հնդկացի
Զոյի ուրվականը չի կարող խաչ եղած տեղի շրջակայքում
լինել:

Լավ էր գտնված: Դա իր ազդեցությունը գործեց:

— Թոմ, ես այդ մասին չէի մտածել: Բայց ճիշտ ես:
Բախտավոր ենք, որ խաչը կա: Կարծում եմ, որ պետք է ցած
իջնենք և սնդուկը փնտրենք:

Առաջինը Թոմն իջավ և իջնելիս ոտնատեղերով աստի-
ճաններ շինեց կավի մեջ: Հեքը հետևեց: Փոքր քարանձավից

չորս անցքեր էին բացվում և այդտեղ մի ժայռ էր տնկված: Տղաներն ապարդյուն հետախուզեցին դրանցից երեքը: Ժայռի հիմքի մոտ եղածի մեջ տղաները գտան մի փոքր նշան, այդտեղ վերմականեր էին փռված, մի հին կաթսա էր կախված, խոզապուխտի կաշի էր ընկած և երկու կամ երեք հավի լավ կրծած կմախք: Բայց փողի սնդուկը չկար: Տղաներն այդտեղ որոնեցին նորից ու նորից, բայց ապարդյուն: Թոմն ասաց.

— Նա ասաց խաշի տակ: Լավ, սա մոտավորապես ժայռի տակն է: Չի կարող ժայռի տակ լինել, որովհետև ժայռն ամուր նստած է գետնին:

Նրանք մի անգամ էլ ամեն տեղ փնտրեցին և հետո հուսահատված նստեցին: Հեքը մի հնար գտնել չէր կարողանում: Քիչ հետո Թոմն ասաց.

— Այստեղ նայիր, Հեք, ոտնահետքեր և կավի վրա մոմի կաթիլներ են երևում այս ժայռի մի կողմում, բայց ոչ մյուս կողմում: Դա ինչի՞ համար է: Գրաղ կգամ, որ փողը ժայռի տակն է: Կավը փորելու եմ:

— Դա վատ նշան չէ, Թոմ,— ասաց Հեքն աշխուժանալով:

Թոմը «Սոտլո» մականիչի դանակը հանեց և չորս մատնաչափ չէր փորել, երբ տախտակի կպավ:

— Հեք, հե՛յ, լսո՞ւմ ես:

Հեքն սկսեց ինքն էլ մատներով փորել: Շուտով մի քանի տախտակի հանդիպեցին: Դրանք ծածկում էին մի բնական անցք, որ ժայռի տակն էր գնում: Թոմը գլուխը մացրեց և մոմը երկարեց ինչքան կարող էր ու ասաց, որ չի կարողանում մինչև ծայրը տեսնել: Նա առաջարկեց հետախուզել: Կուչ եկավ և առաջ շարժվեց: Նեղ անցքը դանդաղ իջնում էր: Ուսումնասիրելով նախ դեպի աջ, հետո՝ ձախ. Հեքը կրնկակոխ հետևում էր: Թոմը մի կարճ անկյունից թեքվեց և շուտով բացականչեց.

— Աստված իմ, Հեք, այստեղ նայիր:

Դա անկասկած զանձի սնդուկն էր, որ զբաղեցնում էր այդ փոքր քարանձավը: Կողքին կային վառողի մի դատարկ արկղ, կաշվե չատյանների մեջ դրած երկու հրացան, եր-

կու կամ Լրեք զույգ հին մոկասին, մի կաշվե գոտի և այլ անպետք իրեր, որոնք լավ թրջվել էին կաթող ջրից:

— Վերջապես գտանք,— ասաց Հեքը ձեռքով խառնելով խունացած փողերը,— Թում, մենք հարուստ ենք:

— Հեք, ես միշտ հավատում էի, որ կգտնենք: Հավատալը շատ լավ է, իսկ այժմ ունենք: Կսիր, այլևս այստեղ ժամանակ չկորցնենք, արի դուրս հանենք: Փորձեմ, տեսնեմ, կարո՞ղ եմ սնդուկը բարձրացնել:

Սնդուկը մոտ հիսուն ֆունտ ծանրություն ուներ: Թումը կարող էր դժվարությամբ բարձրացնել, բայց տանել չէր կարող:

— Ես այդպես էլ կարծում էի,— ասաց նա:— Այն օրը ուրվականների տնից նրանք այնպես էին տանում, որ զգացվում էր ծանրությունը: Ես դա նկատեցի: Լավ արեցի, որ փոքր տուպակներ բերի:

Շուտով փողը տուպակների մեջ էր, և տղաները դրանք դուրս բերին խաշավոր ժայռի մոտ:

— Այժմ հրացանները և մյուս իրերը բերենք,— ասաց Հեքը:

— Ոչ, Հեք, դրանք թող այդտեղ: Դրանք հենց այն բաներն են, որոնց կարիքը կզգանք, երբ ավազակություն սկսենք: Մենք դրանք այստեղ կպահենք. այստեղ կանենք նաև մեր օրգիաները: Օրգիաների համար հրաշալի, հարմար տեղ է:

— Ի՞նչ բան են օրգիաները:

— Չգիտեմ: Բայց գողերը միշտ օրգիաներ են ունենում և անշուշտ մենք ևս պետք է ունենանք: Հեք, այստեղ շատ երկար մնացինք: Ես կարծում եմ, որ արդեն ուշ է: Նաև սոված եմ: Մենք կուտենք և կխմենք նավակում:

Տղաները շուտով մացառուաներից դուրս եկան, զգուշությամբ նայեցին իրենց շուրջը: Ափը դատարկ գտնելով, արագ մտան նավակ և սկսեցին ուտել, ապա՝ խմել: Արևը դեպի հորիզոնը թեքվեց: Նրանք ճանապարհ ընկան: Թումը թիավարում էր ցամաքի մոտով և ուրախ շատախոսում Հեքի հետ: Մթնելուց քիչ հետո ափ դուրս եկան:

— Այժմ, Հեք,— ասաց Թումը,— փողը կպահենք այրու մարագի տանիքում: Առավոտյան կգամ, կհաշվենք և կբա-

ժանհնր: Հետո մարագում մի ապահով տեղ կգտնենք: Այժմ դու այստեղ նստիր և հսկիր, իսկ ես վաղեմ և Ռեննի Քեյլըրի ձեռքի սայլակը բերեմ: Շուտ կվերադառնամ:

Նա անհայտացավ և շուտով վերադարձավ սայլակով: Երկու փոքր տոպրակները դրեցին սայլակի վրա, ծածկեցին մի քանի ցնցոտիներով և բեռը քաշելով ճանապարհ ընկան: Հասնելով ծեր ուելսեցու տանը, տղաները կանգ առան հանգստանալու: Երբ պատրաստվում էին ճանապարհ ընկնել, ուելսեցին դուրս եկավ, կանչեց.

— Հեյ, ո՞վ կա այդտեղ:

— Հեքը և Քոմ Սոյերը:

— Հիանալի է: Ինձ հետ եկեք, սղանք, դուք բուրդին սպասել եք տալիս: Դե, շտապեցեք, առաջ անցեք: Սայլակը ես կքաշեմ: Վայ, այնքան էլ թեթև չէ: Խնչ կա մեզը, աղյուանե՞ր, թե հին երկաթ:

— Հին երկաթ,— ասաց Քոմը:

— Այդպես էլ ենթադրեցի: Այս քաղաքի տղաները ավելի շատ շարշարվում և ավելի շատ ժամանակ են կորցնում հին երկաթ հավաքելով, որի արժեքը վնց սենթ է ձուլարարում, քան կանոնավոր աշխատանք կատարելով, որի համար կրկնակի կստանան: Բայց դա մարդկային բնավորություն է: Շտապեցեք, շտապեցեք:

Տղաներն ուզեցին իմանալ, թե ինչո՞ւ են աշխատում:

— Ոչինչ, կիմանաք, երբ այրի Դուզլասի տունը հասնեք: Հեքը, սակայն, երկյուղով նորից հարցրեց, որովհետև նա վաղուց սովորել էր անտեղի կերպով մեղադրվելուն:

— Միստր Ջոնս, մենք ոչ մի վատ բան չենք արել:

Ուելսեցին ծիծաղեց:

— Չգիտեմ, Հեք, չգիտեմ, տղաս: Այդ մասին ոչինչ չգիտեմ: Դու և այրին մի՞թե լավ բարեկամներ չեք:

— Այո: Բուրդ դեպքերում նա ինձ համար լավ բարեկամ է եղել:

— Այդ դեպքում էլ ինչո՞ւ ես վախենում:

Հեքը մտքում գեռ չէր պատասխանել այդ հարցին, երբ Կրան Քոմի հետ հրեցին միսիս Դուզլասի հյուրասենյակը: Միստր Ջոնսը սայլակը թողեց դռան մոտ և նրանց հետևեց:

Հյուրասենյակը պայծառ լուսավորված էր, և ավանի բո-

լոր հայտանի մարդիկ այգտեղ էին: Թեչրըները այգտեղ էին, ինչպես նաև Հարպըրները, Ռոջերսները, մորաքույր Պոլին, Սիզը, Մերին, քարոզիչը, խմբագիրը և շատ ուրիշներ, բուլորն էլ իրենց լավագույն զգեստները հագած: Այլին աղաներին ընդունեց այնպիսի սիրով, ինչպես կարելի էր ընդունել նման տեսք ունեցող արարածներին: Նրանք ծածկված էին մոմի յուղով և կրով: Մորաքույր Պոլին ամոթից կարմրեց, հոնքերը կիտեց և Թոմին նայելով՝ զլուխն օրորեց: Բոլոր զեպրերում ոչ ոք սպաների շափ իրեն վատ չզգաց: Միտար Զոնան ասաց.

— Թոմը դեռևս տանը չէր, և ես նրան փնտրելու փորձ չարեցի, բայց նրան գտա իմ դռան առաջ և շտապ բերեցի:

— Եվ շատ ճիշտ արեցիր,— ասաց այլին,— ինձ հետ եկեք, աղաներ:

Նրանց ննջարան տարավ և ասաց.

— Այժմ լվացվեք և հագնվեք: Ահա երկու նոր հագուստ, շապիկներ, գուլպաներ, ամեն ինչ լավ է: Դրանք Հեքինն են: Եւ, ոչ, շնորհակալություն մի հայտնի, Հեք, Գիտար Զոնար գնեց մեկը, իսկ մյուսը՝ ես: Երկուսիդ վրայով է: Հագնվեցեք, ներքև եկեք, երբ պատրաստ լինեք:

Նա դուրս եկավ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՎՆԳԵՐՈՐԴ

Հեքն ասաց.

— Թոմ, կարող ենք ներքև սողալ, եթե մի պարան զրտաներ: Լուսամուտը գետնից բարձր չէ:

— Դատարկ խոսք. ինչո՞ւ ես ուզում փախչել:

— Դե, ես սովոր չեմ այսպիսի հասարակության: Չեմ կարող տանել: Ես ներքև չեմ գնա, Թոմ:

— Ուշադրություն մի դարձրու, մեծ բան չէ: Ես բոլորովին չեմ մտահոգվում: Քո մասին կմտածեմ:

Երևաց Սիզը:

— Թոմ,— ասաց նա,— ամբողջ կեսօրից հետո մորաքույրը քեզ էր սպասում: Մերին քո կիրակնօրյա զգեստը

պատրաստեց, և բոլորը քեզ համար անհանգստանում էին ևս իր, շորերիդ վրա կավ ու ճարպ կա:

— Այժմ, միստր Սիդի, քո սեփական գործերի մասին մտածիր: Բայց, այնուամենայնիվ, այս բոլորը ինչի՞ համար է:

— Այրու երեկոններից մեկն է, որ նա միշտ կազմակերպում է: Այս անգամ ուելսեցու և նրա որդիների պատվին է, որոնք նրան փրկել էին այն նշանավոր գիշերը: Լսիր, ես կարող եմ կարևոր բան ասել, եթե ուզում ես իմանալ:

— Ասա, ի՞նչ է:

— Մերուկ Ջոնսը փորձելու է ինչ-որ բանով զարմացնել մարդկանց, ես այդ մասին իմացա և մորաքրոջը որպիսի գաղտնիք այսօր ասացի: Կարծում եմ, որ դա այժմ գաղտնիք չէ: Ամեն մարդ գիտե, այրին նույնպես, թեև ձևացնում է, թե անտեղյակ է: Միստր Ջոնսը շատ էր ուզում, որ Հեքլը այստեղ լինի. առանց Հեքի նրա մեծ գաղտնիքից բան չէր ստացվի, հասկանո՞ւմ ես:

— Ի՞նչ գաղտնիք, Սիդ:

— Վերաբերում է Հեքին, որը հեռակել է գողերին մինչև այրու տունը: Վստահ եմ, որ միստր Ջոնսը երևակայում է բոլորին զարմացնել, բայց գրազ կգամ, որ շատ տափակ բան է ստացվելու:

Սիդը շատ գոհ քրքջաց:

— Սի՛դ, այդ դո՞ւ ես բոլորին պատմել:

— Կարևոր չէ, թե ով է պատմել: Մեկը պատմել է, և դա բավական է:

— Սիդ, այս քաղաքում միայն մեկը կա, որ կարող է այդքան ստոր բան անել: Եվ դա դու ես: Եթե Հեքի տեղը լինեիր, անմիջապես քաղաք կփախչեիր և ոչ ոքի չէիր սպասի գողերի մասին: Դու միայն ստոր գործեր կարող ես անել և չես կարող տանել, որ ուրիշներին գովեն լավ վարմունքի համար: Ահա, ստացիր և շնորհակալություն մի հայտնիք, ինչպես այրին է ասում:— Եվ Թոմը Սիդի ականջը քաշելով, ոտքով խփելով, նրան մինչև դուռը տարավ:— Այժմ գնա և եթե համարձակվում ես, պատմիր մորաքրոջը: Վաղը դրա համար էլ կստանաս:

Մի քանի ըոպե անց այրու հյուրերը ընթրիքի սեղանի

շուրջն էին: Տասնյակ երեխաներ, նույն սենյակում, նստել էին մի փոքր սեղանի առաջ՝ օրվա և այդ երկրի սովորութեան համաձայն: Հարմար պահին միտոր Զոնսը հակիրճ ճառ ասաց, որով շնորհակալություն հայտնեց իրեն և իր տղաներին ցույց տրված պատվի համար, բայց, ասաց նա, կա մեկը, որի համեստությունը...

Եվ այն, և այնու Այդ արկածի մեջ Հեքին վերաբերող գաղտնիքը նա բացեց ծայրահեղ թատերայնությամբ, բայց քանի որ դա բոլորի իմացած հայտնագործությունն էր, տպավորությունն այնպես ազմկալից ու ուժեղ շեղավ, ինչպես կարող էր լինել այլ հանդամանքներում: Այնուամենայնիվ, այրին բավական հաջող զարմացած ձևացավ և շատ գովեստներ ու շնորհակալություն հայտնեց Հեքին: Վերջինս համարյա մոռացավ իր նոր հազուատների և բոլորի ուշադրության թիրախը լինելու անհարմարությունը:

Այրին ասաց, որ ինքը որոշել է Հեքի համար օթևան ստեղծել իր հարկի տակ, կրթության տալ, իսկ այնուհետև փող տրամադրել մի համեստ գործ սկսելու համար: Այստեղ արդեն առիթն էր, որ Թոմը հանդես գար նա ասաց.

— Հեքը այդ փողի կարիքը չունի: Հեքը հարուստ է:

Միայն քարեկրթության խստությունը հավաքվածներին պահեց, որպեսզի ծիծաղով չընդունեին այդ կատակը: Բայց լռությունն էլ մի քիչ անհարմար ստացվեց: Թոմը խզեց այդ լռությունը.

— Հեքը փող ունի: Գուցե դուք չեք հավատում, բայց նա շատ փող ունի: Կարիք չկա ժպտալու. ես կարող եմ ցույց տալ: Մի բռայն սպասեցեք:

Թոմը պուրս վազեց: Ներկաներն իրար նայեցին տարակուսանքով և հետաքրքրությամբ, իսկ Հեքին՝ հարցական, որի լեզուն կապված էր:

— Սիդ, ի՞նչ է պատահել Թոմին, — ասաց մորաբույր Պոլին, — նա... ասներ, նրանից ղլուխ հանել հնարավոր չէ: Ես երբեք...

Թոմը ներս մտավ տոպրակների ծանրության տակ կքած, և մորաբույր Պոլին շկարողացավ իր նախադասությունն ավարտել: Թոմը դեղին ոսկիների կույտը թափեց սեղանին և ասաց.

— Ահա, ասում էի ձեզ: Դրա կեսը Հեքին է պատկանում, կեսը՝ ինձ:

Այդ տեսարանից բոլորի շունչը կտրվեց: Բոլորը նայում էին: Մի պահ ոչ ոք չխոսեց: Հետո բոլորը միաձայն բացատրություն պահանջեցին: Թոմն ասաց, որ կարող էր բացատրել: Այդպես էլ արեց: Նրա պատմությունը երկար էր, բայց լեցուն այրող հետաքրքրությամբ: Բոլորը հմայված լսում էին, և ոչ ոք չէր համարձակվում դրա հրաշալի ընթացքն ընդհատել: Ավարտվելուց հետո միտքը Զոնսն ասաց.

— Ես կարծում էի, որ այս առթիվ մի փոքր անակնկալ էի պատրաստել, բայց դա այժմ ոչ մի բանի նման չէ, խոստովանում եմ:

Փողը հաշվեցին: Տասներկու հազարից մի փոքր ավելի էր: Դա ավելի շատ էր, քան ներկաների միանգամից տեսած որևէ գումարը, թեև մի քանի մարդ կավաժքի ձևով ավելի շատ դրամ ունեին:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ

Ընթերցողը կարող է վստահ լինել, որ Թոմի և Հեքի անակնկալ բախտը մեծ իրարանցում առաջացրեց Սանկտ-Պետերբուրգ փոքրիկ քաղաքում: Այդպիսի մի մեծ գումար, այն էլ կանխիկ, թվում էր համարյա անհավատալի: Այդ մասին խոսում էին, դատողություններ անում, տղաներին փառաբանում, մինչև այդ անառողջ հուզմունքից քաղաքացիներից ոմանց դատողությունը խախտվեց: Սանկտ-Պետերբուրգի և շրջակա գյուղերի բոլոր «ուրվականները» տները տակն ու վրա արվեցին տախտակ առ տախտակ, դրանց հիմքերը փորվեցին և ամբողջությամբ խուզարկվեցին՝ պահված գանձը գտնելու հույսով: Եվ ոչ միայն երեխաները, այլև հասուն մարդիկ, որոնցից ոմանք բավականին լրջախոհ էին, ոչ երպրողներ: Որտեղ Թոմն ու Հեքը երևում էին, նրանց հարգանքով էին ընդունում, հիանում, մատնացույց անում: Տղաները լին կարող հիշել, որ իրենց խոսքերը առաջ որևէ կշիռ ունենալին, բայց այժմ նրանց ասածները արժեք ունեին և կրկրնվում էին: Նրանց կատարած յուրաքանչյուր արարքը թվում

էր անանձնահատուկ և օրինակելի Տղաները փաստորեն կորցրել էին հասարակ բաներ անելու և ստելու ուժը: Ավելին, նրանց անցյալի կյանքից հիշում էին բաներ, որոնք կրում էին զարմանալի ինքնատիրություն նշաններ: Տեղական լրացիքը տպագրեց աղաների կենսագրությունը:

Այբի Գուզլասը Հէթի փոփոք վեց տոկոսով բանկ դրեց, մորաքույր Պուլի խնդրանքով Թոմի բաժինը նույն ձևով անօրինեց դատավոր Թեչըրը: Տղաներից յուրաքանչյուրն աշժմ պարզապէս հսկայական եկամուտ ուներ: Ամեն լի օրվա համար մի դոլար, իսկ կիրակի օրվա համար՝ կես դոլար: Գասնքան էր, ինչքան հասնում էր բահանային, ոչ, ավելի ճիշտ, ոչնչքան էր, ինչքան խոստացված էր, բայց այդքանը նա չէր կարող ստանալ: Այդ հին պարզ ժամանակներում մի դոլարը և մի քառորդը բավական էր բնակարանի, ասրելու, երեխային դպրոց ուղարկելու, ինչպէս նաև մաքուր հագցնելու համար:

Գատավոր Թեչըրը մեծ կարծիք ուներ Թոմի մասին: Նա ստում էր, որ սովորական ոչ մի տղա չէր կարողանա իր գտերը քարանձավից դուրս բերել: Երբ Բեքին հորը գաղանի սոսաց, թէ ինչպէս Թոմն իր փոխարեն ծեծ էր կերել դարձուցում, գատավորը նկատելի կերպով զոջացվեց: Եվ երբ Բեքին հորը խնդրեց, որ այդ մեծ սախ համար Թոմի հետ խիստ շվարվի, քանի որ դրանով տղան պատիժը հեռացրել և իր վրա էր կենտրոնացրել, գատավորը հիացմունքով հայտարարեց, թէ դա աղնիվ և մեծահոգի սուտ է, մի սուտ, որի համար արժէ գլուխը բարձր պահել, պատմության մեջ քայլել: Զորք Վաշինգտոնի՝ հետ ուսուսի: Այդ ասելիս, Բեքին թվաց, որ հայրը երբեք այդպէս բարձրահասակ չէր եղել, ինչպէս աշժմ, երբ քայլում էր սենյակում և ոտքերով դոմբում հատակը: Նա անմիջապէս դուրս եկավ և այդ բոլորը Թոմին պատմեց:

Գատավոր Թեչըրը հույս ուներ, թէ մի օր Թոմին կուեսնի

1 Զորք Վաշինգտոն (1732—1799)— Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին պրեզիդենտը: Բոլոր ամերիկյան զարոյցական գրքերի մեջ նա ներկայացվում է որպէս աշխարհի ամենաբարձրամիտ մարդկանցից մէկը:

իրավարան կամ մեծ գինւորական դարձած: Նա խոստացած հետեւել, որ Քոմմն ընդունվի Ազգային գինւորական տկաղեմիա, իսկ այնուհետև սովորի երկրի իրավարանական լավագույն դպրոցում, որպեսզի պատրաստ լինի այդ երկու ասպարեզներէց որևէ մեկին կամ երկուսին էլ:

Հեք Տիիննի հարստությունն ու այրի Դուղլասի հովանավորությունը նրան մտցրին հասարակության մեջ, ոչ, քաշեցին, ներս հրեցին, և սղաչի տառապանքները համարյա անտանելի դարձան: Այրու սպասուհիները նրան մաքուր ու կտկիկ էին պահում, մազերը հարդարված ու սանրված, քնեցնում էին գարշելիորեն մաքուր անկողնում, ուր ոչ մի բիծ չկար, որ նա, իբրև վաղեմի ընկերոջ, կրծքին սեղմեր: Նա պարտավոր էր դանակով և պատառաքաղով ուտել, պարտավոր էր անձեռոցիկ օգտագործել, բաժակ և աման, պարտավոր էր դիրք կարդալ, եկեղեցի գնալ, պարտավոր էր այնպես մաքուր խոսել, որ խոսքը մնում էր քերանում: Որ կողմը շուռ էր գալիս, քաղաքակրթության արդելքներն ու շղթաները փակում էին նրան, կապում ձեռքերն ու ոտքերը:

Նա քաջաբար տարավ իր դժբախտությունները Լրեք շաբաթ և մի օր չքացավ: Քառասունութ ժամ այրին մեծ վշտով փնտրեց նրան: Հասարակությունը մեծապես հուզված էր. նրան փնտրեցին բլրի վրա և հովիտներում, գետում փնտրեցին մարմինը: Երբորդ օրվա առաւոտյան Քոմ Սոյելը գնաց նրան որոնելու հին սպանդանոցի ետևում գտնվող դատարկ տակառներում և դրանցից մեկի մեջ գտավ փախրստականին: Հեքն այնտեղ էր գիշերում: Նա հենց նոր էր նախաճաշել, կերել էր ինչ-որ տեղից զողացած թերմացք և աչժմ հանդիստ պառկած՝ ծխամոյճ էր քաշում: Կեղտոտ էր, զզոզված մաղերով, հին ցնցոտիներով, որոնք տղաչին հրաշալի տեսք էին տալիս. աղատ ու երջանիկ էր. Քոմն ընկերոջը տակառից դուրս քաշեց, հայտնեց, թե ինչ անհանդատություն է պատճառել մարդկանց: Ստիպեց գնալ: Հեքի զեմքը կորցրեց իր անվրդով գոհունակությունը և տխուր տեսք ստացավ: Նա ասաց.

— Այդ մասին մի խոսիր, Քոմ: Փորձեցի, և բան դուրս չեկավ: Բան դուրս չեկավ, Քոմ: Դա ինձ համար չէ. ես դրան սովոր չեմ: Այրին բարի է իմ նկատմամբ և սիրալիր, բայց

տանել չեմ կարող նրա կարգ ու կանոնը: Ինձ ստիպում է ամեն առավոտ նույն ժամին վեր կենալ, ստիպում է լվացվել: Մազերս այնքան սանրեցին, որ գլխիս վրա էլ մազ չմընաց: Թույլ չի տալիս ցախատանք քնել, ստիպված եմ հագնել այն անիծյալ հագուստները, որոնց մեջ խեղդվում եմ. կարծես դրանց միջով ոչ մի օդ չի անցնում, դրանք այնքան գեղեցիկ են, որ չեմ կարող հստել, պառկել, թավալ գալ: Ինձ թվում է, մի տարի է, ինչ չեմ թավալվել: Ստիպում են, որ եկեղեցի գնամ, բրանեմ ու բրտնեմ: Ատում եմ այդ քարոզները: Այնտեղ չեմ կարող ճանճ բռնել, չեմ կարող ծխախոտ ծամել: Ստիպված եմ ամբողջ կիրակի օրը կոշիկ հագնել: Այրին ուտում է զանգով, քնում է զանգով, վեր է կենում զանգով: Ամեն ինչ այնպես սարսափելի կանոնավոր է, որ դիմանալ չեմ կարող:

— Ախր բոլորը նույնն են անում, Հեք:

— Թո՛մ, դա ի՞մ բանը չէ: Բոլորն ուրիշ, ես ուրիշ. չեմ դիմանում: Սարսափելի է կապված լինելը: Ուտելիքը հեշտ ու հանգիստ է ձեռք բերվում: Ես այդ ձևով ուտելուց ոչ մի հաճույք չեմ ստանում: Պարտավոր եմ թույլտվություն խնդրել ձուկ որսալու համար, պարտավոր եմ թույլտվություն խընդրել լողանալու համար. ամեն ինչի համար թույլտվություն պետք է խնդրեմ: Պարտավոր եմ այնպես քաղաքավարի խոսել, որ այլևս խոսել չեմ ուզում: Ստիպված ամեն օր բարձրանում եմ ձեղնահարկ, մի քիչ հայհոյում, որ բերանիս համն զգամ: Թե չէ կմեռնեմ, Թո՛մ: Այրին չի թողնում, որ ծխեմ, չի թողնում հորանջեմ, չի թողնում բարձր խոսեմ, չի թողնում մարդկանց առաջ ծմբտկամ ու բորվեմ:— Ապա Հեքն առանձնապես վիրավորված ու վշտով շարունակեց.— Դրողը տանի, ամբողջ ժամանակ ազոթում է: Ես այդպիսի կին չեմ տեսել, ստիպված էի փախչել, Թո՛մ, ստիպված էի: Մյուս կողմից շուտով դպրոցը բացվելու է, և ես ստիպված պիտի լինեմ գնալ, իսկ դրան արդեն չեմ դիմանա, Թո՛մ: Լսիր, Թո՛մ, հարուստ լինելը այնքան էլ լավ բան չէ, ինչպես երևում է: Դա պարզապես նեղություն է, մտահոգություն, քրտինք, քրտինք և մեռած լինելու ցանկություն: Իսկ այս հագուստները ինձ հարմար են, այս տակառը հարմար է, և ես դրանցից այլևս չեմ բաժանվի: Թո՛մ, ես այս անախոր-

ժությունների մեջ չէի ընկնի, եթե այդ փողը շունենայի թում, իմ բաժինն էլ դու վերցրու և երբեմն-երբեմն ինձ մի տասսենթանոց տուր, ոչ հաճախ. ես ոչ մի արժեք չեմ տալիս այն բանին, որ դժվարությամբ շես ձեռք բերում: Գնա և այրուն իմ կողմից խնդրիր, որ ինձ հանգիստ թողնի:

— Է՛հ, Հեք, դու գիտես, որ ես չեմ կարող քո փողը վերցնել. դա ազնիվ վարմունք չի լինի, բացի այդ, եթե դու մի փոքր էլ փորձես, դիմանաս, այդ կյանքը կսկսի քեզ դուր գալ:

— Դո՛ւր գալ... այո, ինչպես կարող է դուր գալ վառվող վառարանի վրա նստելը: Ոչ, թում, ես չեմ ուզում հարուստ լինել և ապրել այդ անիծյալ տներում: Ծա սիրում եմ անտառներ, գետ, տակառներ և դրանցից չեմ բաժանվի: Բայց, սատանան տանի, հիմա, երբ ավազակության համար և՛ հրացան ունենք, և՛ քարանձավ, և՛ սմեն ինչ, հանկարծ այդ հիմարությունը մեջտեղ եկավ և ամեն ինչ փչացրեց:

Թումն օգտվեց հարմար առիթից.

— Լսիր, Հեք, հարուստ լինելը ինձ ավագակ դառնալուց ևտ չի պահի:

— Հը՞, դու այդ ճի՞շտ ես ասում, թում:

— Այնքան ճիշտ, ինչքան այստեղ լինելիս է: Բայց, Հեք, մենք չենք կարող քեզ ավազակախումբ ընդունել, եթե վատ հազած լինես:

Հեքի ուրախությունը մարեց:

— Ձե՞ք կարող ընդունել, թում: Հապա ինչպե՞ս ծովահենն ընդունեցիր:

— Այո, սա ուրիշ բան է: Ավազակը ծովահենից ավելի բարձր է: Դա ընդունված բան է: Մի շարք երկրներում նրանք ազնվական շատ բարձր աստիճաններ ունեն. դուքսեր և նման բաներ են:

— Բայց, թում, չէ՞ որ դու միշտ ինձ բարեկամ ես եղելի: Կսկսեք է դուրս անես, չէ՞, թում: Դու այդ շես անի, չէ՞, թում:

— Հեք, ես այդ չեմ ուղենա և այժմ էլ չեմ ուզում, բայց մարդիկ ի՞նչ կմտածեն: Նրանք կասեն. «Ֆի, թում Սոյերի սովազակախումբ, բավական ցածր մարդիկ կան նրա մեջ»: Նրանք քեզ նկատի կունենան, Հեք: Դա քեզ դուր չի գա, ոչ էլ ինձ:

Հեքը որոշ ժամանակ լուռ մնաց. նրա ներսում պայքար էր տեղի ունենում: Ի վերջո նա ասաց.

— Լավ, եթե խոստանաս ինձ թույլ տալ, որ միանամ ավազակախմբին, կվերադառնամ այրու մոտ և մի ամիս կփորձեմ հարմարվել: Գուցե հաջողվի դիմանալ:

— Շատ լավ, Հեք, դա արդեն լավ է: Դու արի, սիրելիս, դիմե՛ք, իսկ ես այրուն կասեմ, որ մի քիչ պակաս խիստ լինի:

— Կասե՞ս, Թոմ, իսկապես կասե՞ս: Լավ է: Եթե որոշ հարցերում մի քիչ մեկով լինի: Ես թաքուն կծխեմ և թաքուն կհայհոյեմ, գուցե դիմանամ կամ պայթեմ: Ե՞րբ ես ավազակախումբը հավաքելու և կողոպուտար սկսելու:

— Անմիջապես: Տղաներին գուցե այսօր հավաքենք և այս գիշեր իսկ անենք առաջին արարողությունը:

— Ի՞նչը:

— Առաջին արարողությունը:

— Դա ի՞նչ բան է:

— Երգվելու ենք, որ իրար թե ու թիկունք ենք լինելու և ավազակախմբի գաղտնիքները երբեք չենք հայտնելու, եթե նույնիսկ մեզ կտոր-կտոր անեն, իսկ եթե մեկը խմբի անդամներից մեկին վիրավորի, մենք նրան ամբողջ ընտանիքով կսպանենք:

— Դա հրաշալի է, դա շատ հրաշալի է, Թոմ, հավատա ինձ:

— Այո, հրաշալի է: Երգումը պետք է կատարվի կեսգիշերին, ամենաթաքուն, ամենահամար տեղում: Ուրվականներով լցված մի վայր լավագույնը կլինի, բայց բոլոր այդ տեղերը այժմ տակնուվրջա են արված:

— Բոլոր գեպքերում, կեսգիշերին լավ է, Թոմ:

— Այո, այդպես է: Եվ երգումը պետք է կատարվի գերեզմանի վրա ու ստորագրված լինի արյունով:

— Դա արդեն գործ է: Լաիր, դա ծովահենությունից միլիոն անգամ լավ է: Ես այրու մոտ կմնամ մինչև հոգիս դուրս գա, Թոմ, եթե կարգին ավազակ դառնամ, և բոլորը խոսեն իմ մասին: Վստահ եմ, որ այրին կհպարտանա ինձ իր տանը ապագտան տալու համար:

ՎԵՐՉԱԲԱՆ

Այսպէս է ավարտվում այս պատմութիւնը: Լինելով հատկապէս մի տղայի կենսագրութիւն, այստեղ պետք է կանգ առնի: Շարունակվելու դեպքում կղառնա տղամարդու կենսագրութիւն: Երբ մեկը վեպ է գրում հասուն մարդկանց մասին, նա գիտե, թե որտեղ պիտի ավարտվի, այսինքն՝, ամուսնութեամբ, բայց երբ գրում է երեխաների մասին, պետք է ավարտի այնտեղ, որտեղ ավելի հարմար է:

Այս գրքի կերպարներից շատերը դեռևս ապրում են երջանիկ և հաջողակ: Մի օր գուցե հարմար թվա գրել մեծահասակների պատմութիւնը և տեսնել՝ ինչպիսի տղամարդիկ ու կանայք դարձան նրանք: Դրա համար էլ խոհեմ վարված կլինեմ, եթե նրանց այդ երջանիկ կյանքը առայժմ չսպառնում: